Մաև
333

11 999
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ՀԱԿՈԲ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

ԵՂԻՇԷԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՆԱՆՑ

ԸՍՏ

ԱՆՁԵՌԱՅԵԱՅՆ ՕՐԻՆԱԿԻ

ՏՓԽԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՄԲ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.

1879

Լ.Տ-331

Ի Հայրապետութեան Տեառն Տեառն ԳԷ-ՈՐԳԱՅ Դ. Սրբազնագոյն կաթուղիկոսի Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարքի համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան մայր եկեղեցւոյ Ս. կաթուղիկէ Իջմիածնի.

Գ-333

Հրատարակեալ ի կեդրոնական Գրավաճառանոցէ։

Дозволено цензурою. Тифлисъ, 1 декабря 1878 г.

ԶԵԿՈՒՑՈՒՄՆ

Եղիշէի սրբոյ վարդապետին մերոյ չնաշխարհիկն Պատմութիւն Նահատակութեան Վարդանանց ի վերայ մերոյս ազգի և եկեղեցւոյ՝ մի է ի հոյակապ հնութեանցն նշխարելոց մեզ ի հինգերորդ դարէ նախնեացն մատենագրութեան։

Այս երկասիրութիւն ականատես պատմագրին՝ իւրովն հոգելից յօրինուածով, գեղեցկահիւս ոճով, յստակ հայկաբանութեամբ և եռանդուն աշխուժիւք, ոգեպարար իմն ճարակ է մտաց և սրտի ամենայն առն Հայոց աստուածասիրի և հայրենասիրի, և մանկտւոյն մերոյ դաստիարակութեանն մանաւանդ ախորժահամ և յոյժ ցանկալի։ Այսր իսկ աղագաւ իրաւամբ համեմատեալ գտանի սա յոմանց Քսենոփոնտեայ հելլենացւոյ քաղցրաբանութեանն զուգահաւասար, յայլոց Յուլեայ Կեսարու հռովմայեցւոյ կորովաբան պատմագրութեանն, և յայլոց ևս Ֆենելոնի գաղղիացւոյ յստակախօսութեան նմանատիպ։ Որում քաջ խելամտեալ մերոցն բանասիրաց՝ իբր ի հարիւրոց ամաց հետէ և այսր բազում անգամ ի բազում տեղիս հրատարակեալ են զսա տպագրութեամբ,

ի Բիւզանդիոն ասեմ և ի Պետերբուրգ, ի Վենետիկ և ի Թէոդոսիա։

Եւ քանզի ոչ ըստ չափու պիտոյից և կարօտութեան ազգայնոցն մերոց ուսումնարանաց գիւրագիւտ և գիւրագին ընծային օրինակք մատենկանս, մանաւանդ ի Ռուսաստան աշխարհիս, փոյթ և ջան յանձինս բերաք հրատարակել զսա և աստէն ի Տփխեաց քաղաքիս։ Եւ առաջնորդ ի սոյն ընտրեալ կալաք զտպագրեալն երբեմն ի Թէոդոսիա՝ ըստ Անձնացեաց անուանեալ օրինակին, միայն ի յայտնի կամ կասկածելի վրիպակաց տպագրութեանն այնորիկ խոյս տալով։

Կամ էր մեզ և պարզաբանութիւնս ինչ հակիրճս ի ստորեւ իջիցն գրոշմել՝ առ ի դիւրահաս գործելոյ համբակաց զբառս ինչ և զբանս բնագրին, մանաւանդ զպարսկականն և մթինս. սակայն լաւ վարկաք ի ժամուս վասն թոյ զայդ աշխատութիւն մեկնաբանութեան ի ջանասիրութիւն վարժապետացն առնել ապաստան. որոց այժմէն աւետաւորեմք զմօտալուտ հրատարակումն այնպիսւոյ ընդարձակ աշխատութեան զոր պատրաստեալ է քաջահմուտ ոմն լեզուիս մերոյ օրինաց և պարսիկ բարբառոյ և զբաղեալ դեռ ևս հնախօսութեանց։

ԳԱԲՐԻԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵԱՆ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ՀԱԿՈԲ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

ՎԱՍՆ

ՎԱՐԴԱՆԱՅ

ԵՒ

ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

ԴԱՒԹԻ ԵՐԻՑՈՒ ՄԱՄԻԿՈՆԻ ՀԱՅՑԵԱԼ

Բանն զոր պատուիրեցեր՝ արարի, ով քաջ. վասն Հայոց պատերազմին հրամայեցեր, յորում բազումք առաքինացան քան զսակաւս:

Ահա նշանագրեցի յայս եւթն յեղանակս,

Առաջին՝ զժամանակն:

Երկրորդ՝ զիրացն պատահումն յիշխանէն արեւելից:

Երրորդ՝ զՄիաբանութիւն ուխտին եկեղեցւոյ:

Չորրորդ՝ զերկպառակութիւն ոմանց բաժանելոց ի նմին ուխտէ։

Հինգերորդ՝ զյարձակումն արեւելեայ։

Վեցերորդ՝ զընդդիմանալն Հայոց պատերազմաւ։

Եւթներորդ՝ զյերկարումն իրացն խռովութեան։

Յայսմ յեւթն գլուխս կարգադրեալ եդեալ ծայրալիր պարապմամբ զսկիզբն եւ զմիջոցն եւ զկատարածն, զի հանապազորդ ընթեռնուցուս, լսելով զառաքինեացն զքաջութիւն, եւ զյետս կացելոցն զվատթարութիւն. ոչ յանձին կարօտութիւն երկրաւոր առատ զխոստութեանդ լրման, այլ յայցելութիւն երկնաւոր տնտեսութեանն՝ որ մատակարարէ յառաջգիտութեամբ զհատուցմունս երկոցունց կողմանցն, որ երեւելեօքս զաներեւոյթսն զուշակէ։

Այլ դու, ով մեծ ի գիտութեանն Աստուծոյ, առ ի՞նչ արդեւք հրամայեսցես քան եթէ հրամայեցիս լուացունացն։ Որպէս երեւի ինձ եւ այնոցիկ որ դեգերեցին յիմաստասիրութիւն՝ երկնաւոր սիրոյ է ի քեզ այս նշանակ, եւ ոչ երկրաւոր փա-

ռասիրութեան. քանզի եւ առաջին իսկ ոմանք ի քաջ պատմագրացն. «Զուգութիւն է մայր բարեաց, անզուգութիւն ծնող չարեաց»։

Որպէս եւ մեր իսկ հայեցեալ ի սուրբ սէր քոյոյ հրամանիդ՝ ոչ ինչ դանդաղեալ վեհերեցաք հայելով ի մեր տգիտութիւնս։ Քանզի բազում ինչ է սրբութիւն՝ ատոր լինել անօրութեան, որպէս աղօթք՝ գիտութեան, եւ սէր սուրբ՝ միաբան օգնիչ։

Զոր եւ մեր ընդ հրամանին քում ընկալեալ՝ յօժարութեամբ ձեռնարկեցաք զայս ինչ, որ է մխիթարութիւն սիրելեաց եւ յոյս յուսացելոց, քաջալերութիւն քաջաց, կամակարութեամբ յարձակեալ ի վերայ մահուան, առաջոյ տեսանելով զզօրագլուխն յաղթութեան, որ ոչ ումեք ոտնհար լինի թշնամութեամբ, այլ ամենեցուն ցուցանէ զիւր անպարտելի զօրութիւնն։ Եւ ահա ո՛ ոք կամեսցի ընդունել իբրեւ զնահատակ առաքինի։ Եւ քանզի բազմադիմի է նահատակութեանդ անուն, եւ նա բազմադիմի շնորհս բաշխեաց ամենեցուն. զոր եւ մեծ իսկ քան

զամենայն՝ զսէր սուրբ յաննենգ մտաց գիտեմք։

Այս պարզութիւն զվերնոյն բերէ զնմանութիւն. զոր և մեր ի քեզ տեսեալ, մտացաք զմեր բնութիւնս։ Եւ ահա մերաբերեմք ընդ քեզ ճախրելով, և իբրև բարձրաթռիչս եղեալ՝ զամենայն վնասակար մրրկածին օդովքդ անցանիցեմք, ծծելով փոքր ի շատէ յանապական վերին օդոյն՝ առնուցումք զգիտութիւն ի փրկութիւն անձանց և ի փառս ամենայաղթ եկեղեցւոյ։ Ուստի և բազում սուրբ պաշտօնեայքն զուարթութեամբ կատարեցին զսպաս վիճակին իւրեանց, ի փառս Հօրն բոլորեցուն. ուր ընդ նմին սուրբ Երրորդութիւն ցնծացեալ բերկրիցի յանտրտմական յիւրում էութեանն։

ԱՌԱՋԻՆ ՅԵՂԱՆԱԿ

ԺԱՄԱՆԱԿՔՆ

Արդ որովհետև ընկալաք զհրաման պատուիրանի յաննախանձ քոյոց բարուց բնութեանդ, ընկրոցուք ուստի արժան է սկսանել. Թէպէտ և ոչ յօժարիցեմք զթշուառութիւն մերոյ ազգիս ողբալ։ Ահա ոչ ըստ կամաց արտօսրալիր ողբովք ճառագրեմք զբազում հարուածսն՝ յորում պատահեցաք և մեք իսկ ականատեսք լինելով։

Քանզի ի բառնալ ազգին Արշակունեաց, տիրեցին աշխարհիս Հայոց ազգն Սասանայ պարսկի, որ վարէր զեւր իշխանութիւնն օրինօք մոգուցն. և բազում անգամ մարտընչէր ընդ այնոսիկ՝ որ ոչ ընդ նովին օրինօքն՝ մնանէին, սկիզբն արարեալ յամաց Արշակայ արքայի որդւոյն Տիրանայ, և կը-

ռուէր մինչև ցամն վեցերորդ Արտաշիսի արքայի Հայոց, որդւոյն Վռամշապհոյ։ Եւ իբրև զնա ևս մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն. զի թէպէտ և զանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի։ Վասն որոյ և աստուածպաշտութիւնն բարձրագլուխ կամակարութեամբ երևելի լինէր յաշխարհին Հայոց, ի սկզբանց տէրութեանն Տրդատայ արքայից արքայի մինչև ցամն երկրորդ Յազկերտի արքայից արքայի՝ որդւոյ Վռամայ՝ զոր եգիտ առաջնոյ իւր գործակից, և զամենայն մթերեալ թոյնսն թափեաց ի բաց, և ելից զնա իբրև զպատականդարան դեղեալ նետիւք։ Եւ սկսաւ եղջիւր ածել անօրէնութեամբ, գոռոզանայր, և գոռալով հող հանէր ընդ չորս կողմանս երկրի, և թշնամի և հակառակորդ երևեցուցանէր իւր զհաւատացեալսն ի Քրիստոս, և նեղեալ տագնապէր անխաղաղասէր կենօք։

Քանզի յոյժ սիրելի էր նմա խռովութիւն, արիւնհեղութիւն, վասն այնորիկ յանձն իւր տարաբերէր, եթէ յո՞ թափե-

ցից զդառնութիւն թիւնից, կամ ո՞ր բացատրեցից զբազմութիւն նետիցն։ Եւ առյոյժ յիմարութեանն իբրև զգազան մի կատաղի յարձակեցաւ ի վերայ աշխարհին Յունաց. եհար մինչ ի քաղաքն Մծբին, և բազում գաւառս Հոռոմոց աւերեաց ասպատակաւ, և զամենայն եկեղեցիս հրձիգ արար. կուտեաց զաւար և զգերի, և ահաբեկ արար զամենայն զօրս աշխարհին։

Իսկ երանելին Թէոդոս կայսր՝ քանզի խաղաղասէր էր ի Քրիստոս, ոչ կամեցաւ ելանել ընդ առաջ պատերազմաւ. այլ այր մի Անատոլ անուն, որ էր նորա սպարապետ արևելից, առաքեաց առ նա բազում գանձիւք։ Եւ արք պարսիկք, որք փախուցեալ էին վասն քրիստոնէութեան և էին ի քաղաքի կայսեր, կալաւ և ետ ի ձեռս նորա։ Եւ զամենայն զոր ինչ ասաց ի ժամանակին՝ կատարեաց ըստ կամաց նորա, և արգել զնա ի բազում բարկութենէն, և դարձոյց անդրէն յիւր քաղաքն Տիզբոն։

Եւ իբրև ետես անօրէն իշխանն եթէ յաջողեցաւ չարութիւնն նորա, սկսաւ այլ ևս խորհուրդ յաւելուլ, իբր ոք զի ի հուր բորբոքեալ յաւելով բազում նիւթս փայ-

տից: Քանզի ուստի սակաւ մի կասկածոտն էր՝ անտի աներկիւղ հաստատեցաւ. վասն այնորիկ դրդուեցոյց զբազումս ի սուրբ ուխտէն քրիստոնէից, էր՝ որ բանիւք սպառնալեօք, էր՝ զոր կապանօք և տանջանօք, և էր՝ զոր չարաչար մահուամբ վախճանէր: Ցափշտակութիւն առնէր ընչից և արարոց, և մեծաւ անարգանօք տանջէր զամենեսեան: Եւ իբրև ետես՝ եթէ վայրատեալ ցրուեցան ի բազում կողմանս, ի խորհուրդ կոչէր զպաշտօնեայս ճախակողմանն՝ որք կապեալ էին ի կռապաշտութեան անլուծանելի հանգուցիւք, վառեալք և ջեռեալք իբրև զհնոց առ այրել զուխտ սուրբ եկեղեցւոյ:

Քանզի էին իսկ այնպիսիքն բնակեալ ի կեանս իւրեանց իբրև ի թանձրամած խաւարի, և ոգիքն արգելեալք ի մարմնի իբրև զկենդանի ի գերեզմանի, յորս ամենևին չծագէ նշոյլ սուրբ լուսոյն Քրիստոսի: Նա և արջք օրհասականք ընդ վախճանել շնչոյն հզօրագոյնս կռուին. յորոց և խմատունքն տեղի տուեալ փախչին ի նոցանէ: Այսպիսի իմն եկեալ հասեալ է վախճան տէրութեանն. եթէ հարկանին՝ չզգան, և

եթէ հարկանեն՝ չիմանան. և իբրև ոչ գտանի արտաքին թշնամի, ընդ անձինս իւրեանց մարտ եդեալ կռուին: Ի դէպ իսկ ելանէ բան մարգարէին ի վերայ նոցա. «Այր, ասէ, առ քաղցի իւրում շրջեսցի և կերիցէ զկէս անձին իւրոյ»: Նման ամին և Տէրն ինքնին ասէ. «Ամենայն տուն և թագաւորութիւն՝ որ յանձն իւր բաժանի, ոչ կարէ կալ հաստատուն»:

Արդ զի՞ կոծիս, զի՞ մրցիս, զի՞ այրիս, զի՞ բորբոքիս, զի՞ ոչ շիջանիս. զի՞ կոչես ի խորհուրդ զայնոսիկ՝ որոց զոգիսն ձեր ի ձէնջ քաղեալ՝ հանեալ է զանապականդ յապականութիւն, և զապականելի մարմինդ զէշաքարշ արարեալ իբրև զաղբ մեռելոտի ի բաց ընկեցեալ: Ապաքէն զայդ կամիս՝ զի ծածկեսցի խորհուրդն ամբարշտութեան. տեսջիր յորժամ յայտնեսցի, ապա գիտասցես զելս կատարածի դորա:

Ասեն մոգքն. «Արքայ քաջ, աստուածքն ետուն քեզ զտէրութիւնդ և զյաղթութիւն. և ոչ ինչ կարօտին նոքա մարմնաւոր մեծութեան. բայց եթէ ի մի օրէնս դարձուցանես զամենայն ազգս և ազինս՝ որ են ի տէրութեան քում. յայնժամ և

աշխարհն Յունաց հնազանդեալ մնցէ ընդ օրինօք քովք: Արդ զբանս զայսոսիկ վաղվաղակի կատարեա դու, արքայ. զօր գումարեա և զունդ կազմեա, խաղա գնա դու յաշխարհն Թուշանաց. և զամենայն ազգս ժողովեա և անցո ընդ Պահ դուռն ի ներքս. և դու անդէն արա քեզ բնակութիւն: Յորժամ արգելուս և փակես զամենեսեան ի հեռաւոր օտարութեան, կատարելն խորհուրդք կամաց քոց. և որպէս երեւիս մեզ ի գենիս մերում՝ տիրես դու և երկրին Թուշանաց, և ցոյնք իսկ ոչ եղանեն ընդ քո իշխանութիւնդ: Բայց միայն զաղանդ քրիստոնէից բարձ ի միջոյ»:

Հաճոյ Թուեցաւ խորհուրդն Թագաւորին և մեծամեծացն, որ էին ի նմին բանի. հրովարտակս գրէր, սնդաղեսպանս արձակէր յամենայն տեղիս տէրութեան իւրոյ: Եւ այս է պատճէն հրովարտակին.

«Առ ամենայն ազգս տէրութեան իմոյ Արեաց և անարեաց, բազմասցի ի ձեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ. դուք ողջ լերուք, և մեք մեզէն ողջ եմք դիցն օգնականութեամբ:

«Առանց զձեզ ինչ աշխատ առնելոյ խաղացաք գնացաք յերկիրն Յունաց, և առանց գործոյ պատերազմի սիրով մարդասիրութեամբ նուաճեցաք զամենայն երկիրն մեզ ի ծառայութիւն: Դուք զբարի զմտաւ ածէք, և անպատ լերուք յուրախութեան. բայց բան զայս կատարեցէք վաղվաղակի, զոր ասեմքս:

«Մեք ի մտի եդաք անվրէպ խորհրդովք խաղալ գնալ յաշխարհն արևելից, աստուածոցն օգնականութեամբ դարձուցանել ի մեզ զտէրութիւնն Քուշանաց. դուք իբրև զհրովարտակս զայս տեսանէք՝ անխափան վաղվաղակի այր և ձի գումարեցէք առաջի քան զիս, յանդիման լերուք ինձ յԱպար աշխարհին»:

Ըստ այսմ պատճէնի հրովարտակ եհաս յաշխարհն Հայոց, ի Վրաց և յԱղուանից և ի Լփնաց, ի Ծաւդէից և Կորդուաց, յԱղձնեաց և բազում այլ տեղեաց հեռաւորաց, որոց ոչ էին օրէնք երթալ զայն ճանապարհ յառաջ ժամանակաւ: Գունդ կազմէր ի Հայոց մեծաց զազատ և զազատորդի, և յարքունի տա-

նէ զաստանիկ մարդիկ. ըստ նմին օրինակի ի Վրաց և յԱղուանից և յաշխարհէն Լփնաց, և որ այլ ևս՝ ի կողմանց կողմանց հարաւոյ մերձ ի սահմանս Տաճկաստանի և ի Հռոմոց աշխարհն և ի Կորդուաց և ի Գը-դացն և ի Ծաւդէիցն և յԱրզնարզըն, որք էին ամենեքեան հաւատացեալք ի մի կաթողիկէ առաքելական եկեղեցի:

Եւ անմեղութեամբ ոչ գիտացեալ զերկդիմի միտս Թագաւորին՝ խաղացին գնացին յիւրաքանչիւր աշխարհաց լրջմտութեամբ և անտրտում խնդութեամբ և ուրախաէր խորհրդովք, կատարեալ զպաս զինուորութեան աներկբայ վաստակովք: Բարձին ևս ընդ իւրեանս սուրբ կտակարանս բազում պաշտօնէիւք և բազմազգոյն քահանայիւք: Բայց հրաման տուեալ աշխարհի՝ ոչ իբրև յանկարծութիւն կենաց, այլ իբրև ի մեծաբուժ վախճանի, յանձն առնելով միմեանց զոգիս և զմարմինս: Զի թէպէտ և խորհուրդ Թագաւորին չէր յայտնեալ նոցա, սակայն կարծիք խմտի էին ամենեցուն. մանաւանդ իբրև բեկեալ տեսին զզօրութիւնն Յունաց առաջի նորա՝ յոյժ հարեալ խոցեցան ի խորհուրդս իւրեանց:

Բայց քանզի պատուիրանապահք էին սուրբ կտակարանացն Աստուծոյ, հանապազ յիշէին զպատուիրեալն ի Պաւղոսէ, եթէ «Ծառայք, հնազանդ լերուք տերանց ձերոց մարմնաւորաց. մի սուտակապաս և առ աչս աչառելով. այլ սրտի մտօք ծառայել իբրև Աստուծոյ և մի՛ իբրև մարդկան. քանզի ի Տեառնէ է հատուցումն վաստակոց ձերոց»:

Եւ ամենայնիւ այսու բարեմտութեամբ յուղարկեալք յաշխարհէ և յանձն եղեալք սուրբ Հոգւոյն, յանդիման լինէին փութով կատարեալ զհրամանն, և զամենայն արարեալ ըստ կամաց նորա: Յոյժ ուրախ լինէր Թագաւորն, իբր այն եթէ կատարեցան կամք կարծեաց նորա. և ահա առնէր ընդ նոսա զայն ինչ զոր պաշտօնեայքն ամբարշտութեան նորա խրատեցին:

Արդ իբրև ետես Թագաւորն զամենայն կազմութիւն և զբազմութիւն գնդի բարբարոսաց, որք սրտի մտօք եկեալ էին ի վաստակ արքունի, առաւելապէս ուրախ եղև առաջի մեծամեծացն և ամենայն բազմութեան զօրաց իւրոց: Ի վերին երեսս Թաքուցանէր զկամս մտացն իւրոց, և ա-

կամաց առաւելապէս պարգեւէր զնոսա: Խաղաց գնաց միանգամայն ի վերայ տէրութեանն Հոնաց աշխարհին, զոր Քուշանսն անուանեն, և զերկեամ մի կռուեալ՝ ոչ ինչ կարաց ազդել նոցա: Ապա արձակեաց զմարզիկսն յիւրաքանչիւր տեղիս, և զայլսն ի նոցա տեղիս փոխանակ առ իւր կոչեաց նովին պատրաստութեամբ: Եւ այսպէս ամ յամէ սովորութիւն կարգեաց, և իւր անդէն քաղաք բնակութեան շինեաց. սկսեալ ի չորրորդ ամէ տէրութեանն իւրոյ մինչև յամն մետասաներորդ թագաւորութեանն:

Եւ իբրև եւս եթէ հաստատուն կացին Հոռոմք յուխտին իւրեանց զոր եդին ընդ նմա, և դադարեցին Խայլնդուրք ելանել ընդ պահակն Ճորայ, և յամենայն կողմանց խաղաղութեամբ բնակեաց աշխարհ նորա, և ինքն ևս էարկ զթագաւորն Հոնաց, քանզի աւերեաց զբազում գաւառս նորա, աւետաւորս առաքեաց ընդ ամենայն տորուշանս աշխարհին իւրոյ. ցըլուք սպիտակօք և գիսաւոր նոխազօք առատացոյց զզոհս կրակին, և խիստ թանձրացոյց անդադարութեամբ զպաշտօն պղծութեանն իւրոյ. պատկօք և պատուովք

մեծարեաց զբազումս ի մոգաց և զբազմագոյնս ի մոգպետաց: Նա և հրաման յափշտակել զքրիստոնէից զինչս և զստացուածըս, որք էին ի մէջ Պարսկաց աշխարհին:

Եւ այսպէս հպարտացեալ բարձրացաւ միտս իւր, ի վեր քան զմարդկային բնութիւն ընդվզեալ ամպարտաւանէր, ոչ միայն յիրս մարմնական պատերազմացն, այլ մեծ ումն զինքն կարծէր քան զբնութիւն հայրենի կարգին. վասն այնորիկ կեղծաւորութեամբ թագուցանէր զինքն ըստ կարծեացն, և որպէս երևէր իմաստնոցն՝ յանմահից իմն կարգի դնէր զինքն: Եւ յոյժ էր ցասուցեալ ընդ անուանն Քրիստոսի, յորժամ լսէր թէ տանջեցաւ, խաչեցաւ, մեռաւ և թաղեցաւ:

Եւ իբրև այսպէս օր ըստ օրէ ի սոյն միտս ցնորեալ դանդաչէր, մի ոմն մանկագոյն ի նախարարացն Հայոց ընդդէմ բանս եդ և ասէ. «Արքայ քաջ, դու ուստի՞ գիտես զայդպիսի բանս խօսել զՏեառնէ»: Նա պատասխանի թագաւորն և ասէ. «Իմ իսկ առաջի ընթերցան զգիրս մոլորութեանն ձերոյ»: Նա պատասխանի անդրէն պատանին և ասէ. «Ընդէ՞ր, արքայ, ցայդ վայր

միայն ետուր ընթեռնուլ. այլ յառաջ ես մատո զկարդացումն, և լսես անդ զյարութիւնն, զյայտնութիւնն առ բազումս, զվերացումն յերկինս, զնստելն ընդ աջմէ Հօր, զխոստումն երկրորդ գալստեան՝ զՀրաշակերտ յարութիւնն առնելով բոլորեցունց. զՀամառօտ հատուցմունս արդար դատաստանին»: Երբև լուաւ զայս Թագաւորն, ի խոր խոցեալ՝ վէր ի վերոյ ծիծաղեցաւ և ասէ. «Ամենայն այդ խաբէութիւն է»: Եւ պատասխանի զինուորն Քրիստոսի և ասէ. «Եթէ հաւատարիմ են քեզ մարմնաւոր չարչարանք նորա, հաւատարմագոյն ևս լիցի քեզ երկրորդ ահաւոր գալուստն նորա»:

Եւ զայս լսելով Թագաւորին՝ բորբոքեցաւ իբրև զհուր հնոցին ի Բաբիլոնի, մինչ և իւրքն իսկ անդէն դեռ ևս իբրև զԲաղդէացիսն այրեցեալ լինէին:

Յայնժամ զբոլոր բարկութիւն սրտմտութեանն եհեղ յայրն երանելի՝ որում անուն էր Գարեգին: Կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք զերկեամ մի տուաւ ի չարչարանս, և հանեալ ի բաց զտէրութիւնն ի նմանէ՝ ընդունէր զվճիռ մահու:

ԵՐԿՐՈՐԴ ՑԵՂԱՆԱԿ

ԻՐԱՑՆ ՊԱՏԱՀՈՒՄՆ

ՅԻՇԽԱՆԷՆ ԱՐԵՒՄԼԻՑ

Որոց ոգիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն՝ յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյ. յամենայն հողմոյ շարժի և յամենայն թանէ խռովի, և յամենայն իրաց դողայ. երազադէտ է այնպիսին ի կեանս իւրում, և յանգիտս կորուսան յուզարկի ի մահուան իւրում: Որպէս և ասաց ոմն ի հնոցն, մահ ոչ խմացեալ՝ մահ է, մահ խմացեալ՝ անմահութիւն է: Որ զմահ ոչ գիտէ՝ երկնչի ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ՝ ոչ երկնչի ի նմանէ:

Եւ այս ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումնութենէ: Կոյր զրկի ի ճառագայթից արեգական, և ագիտութիւն

333

ԳՐԱՏՈՒՆ ԶԱՆՐԱՑԻՆ ...

զրկի ի կատարեալ կենաց: Լաւ է կոյր ա-
չօք քան կոյր մտօք: Որպէս մեծ է հոգի
քան զմարմին՝ այսպէս մեծ է տեսանողու-
թիւն մտաց քան զմարմնոց:

Եթէ ոք կարի առաւելեալ իցէ աշ-
խարհական մեծութեամբ, և մտօքն աղ-
քատագոյն, այնպիսին ողորմելի է քան ըզ-
բազումս. որպէս և տեսանեմք իսկ՝ ոչ
միայն ի չափաւոր մարդիկ՝ այլ և յոր
մեծն է քան զամենայն: Թագաւոր եթէ ոչ
ունի զիմաստութիւն աթոռակից իւր, ոչ
կարէ ի վիճակին իւրում վայելուչ գոլ: Իսկ
եթէ առ մարմնաւորս այսպէս, որչափ ևս
առաւել առ հոգևորսն:

Բոլոր մարմնոյս հոգի է կենդանութիւն,
իսկ մարմնոյ և հոգւոյ միտք են կառավար.
և որպէս առ մի մարդ՝ այսպէս առ բոլոր
աշխարհս: Թագաւոր ոչ զիւր միայն տացէ
պարտիս, այլ և որոց եղև պատճառք ի կո-
րուստ:

Բայց մեք թէպէտ և ոչ ունիմք հրա-
ման բամբասել զիշխանսն, բայց և ոչ գո-
վողք կարեմք լինել այնմիկ՝ որ աստուա-
ծամերժն լինիցի: Այլ զանցս իրացն պատ-
մեմք որ ի նմանէ ընդ սուրբ եկեղեցւոյն է-

անց, և ոչ զանգաղեմ. ոչ բամբասանէր
մտօք, այլ ճշմարտութեամբ զելս իրացն
ասելով ոչ լռեցից: Ոչ ի կարծ ընդոստու-
ցեալ, և ոչ ի լուր զարթուցեալ. այլ ևս
ինքնին անձամբ անդէն ի տեղւոջն պատա-
հեցի և տեսի և լուայ զձայն բարբառոյ յան-
դըգնաբար խօսելով. իբրև զհողմ սաստիկ՝
զի բախիցէ զծով մեծ, այնպէս շարժէր
և տատանէր զամենայն բազմութիւն զօ-
րացն իւրոց: Եւ հանդէս առնէր ամենայն
ուսմանց, և անդ ածէր զմոգութիւն և
զքաղդէութիւն և զամենայն ուսմանս աշ-
խարհին իւրոյ: Արկանէր ի ներքս և զքրիս-
տոնէութիւն կեղծաւորութեամբ, և ասէր
զայրացեալ մտօք. «Հարցէք, քննեցէք, տե-
սէք. թող որ լաւն է ընտրեալ կալցուք»:
Եւ փութայր որ ինչ ի մտին էր՝ զի վաղ-
վաղակի կատարեսցի:

Իսկ ի կողմանց կողմանց քրիստոնեայքն
որ ի զօրուն էին՝ իմացան զխորհուրդն որ
ծածուկ վառեալ բորբոքէր, և կամէր
հրդեհել զերկիրս և զպաշտօն առհասա-
րակ: Ջեռան և նոքա անծախական հրով,
և սաստկապէս պատրաստեցան առ փոր-
ձութիւն զաղտնի մեքենայիցն:

Սկսան այնուհետեւ բարձր բարբառով, սաղմոսիւք եւ երգովք հոգեւորօք եւ մեծապայծառ վարդապետութեամբ յայտ յանդիման մեծի բանակին զպաշտօնն ցուցանել, եւ աներկիւղ առանց զանգիտելոյ՝ ո՛ք եւ երթայր առ նոսա ուսուցանէին կամակար: Եւ Տէր յաջողէր նոցա նշանօք եւ արուեստիւք. քանզի բազում հիւանդք ընդունէին զբժշկութիւն ի հեթանոսական զօրուն:

Իսկ անօրէն իշխանն իբրեւ գիտաց եթէ յայտնեցաւ խորամանկութիւն խորհրդոյն, եւ պատրաստեալ հուրն՝ մինչեւ ուրուք ի նա փչեալ՝ վառումն նորա յայտնի խմացաւ երկիւղածացն Աստուծոյ, սկսաւ ծածուկ նենգիւք խօսել զմիտս իւրոյ չարութեանն. եւ անբժշկական վէրս յոգիս եւ ի մարմինս տեսանէր:

Մերթ շանթէր զալարէր իբրեւ զօձ թունաւոր, մերթ պորղէր գոչէր իբրեւ զառիւծ գայրացեալ. գելոյր եւ տապալէր երկդիմի մտօք. զխորհուրդս կամացն կամէր կատարել: Քանզի ձեռն արկանել եւ ունել ոչ կարէր, — վասն զի ոչ էին համագունդ ի միում վայրի առ նմա, — սկսաւ այնուհետեւ

յառաջ կոչել զկրտսերս յաւագաց եւ զանարգս ի պատուականաց եւ զտգէտս ի գիտնոց եւ զանարիս ի քաջ արանց. եւ զի՞ մի մի թուեցից, այլ զամենայն արժանաւորսն յետս տանէր. մինչ եւ զհայր եւ զորդի քակէր ի միմեանց:

Եւ թէպէտ ընդամենայն ազգս առնէր զանկարգութիւնս զայս, առաւել ընդ Հայոց աշխարհին մարտնչէր. քանզի տեսանէր զնոսա ջերմագոյնս յաստուածպաշտութեան. մանաւանդ որք էին յազգէ նախարարացն Հայոց, եւ անմեղութեամբ ունէին զսուրբ քարոզութիւն առաքելոցն եւ զմարգարէից: Պատրէր զոմանս ի նոցանէ ոսկեով եւ արծաթով, եւ զբազումս այլով եւս առատ պարգեւօք. իսկ զոմանս ագարակօք եւ մեծամեծ գեղօք, զոմանս պատուովք եւ իշխանութեամբք մեծամեծօք: Եւ այլ եւս սնոտի յոյս ոգւոց առաջի դնէր. եւ այսպէս հրապուրէր եւ յորդորէր հանապազ. «Եթէ միայն, ասէ, զօրէնս մոգութեան յանձին կալջիք, եւ զձեր մոլորութիւնդ սրտի մտօք դարձուցանիցէք ի ճշմարտութիւն երեւելի մերոյ դիւցազնական օրինացս, ի մեծութիւնս եւ յաւագութիւնս հասու-

ցից հաւատար խմբ սիրելի նախարարացն, նա առաւել ևս զանցուցիցն։ Եւ այսպէս կեղծաւորութեամբ խոնարհեցուցանէր զինքն առ ամենեսեան, խօսելով ընդ նոսա ի պատճառս սիրոյ, զի խորամանկութեամբ որսալ մարթասցէ զնոսա ըստ առաջին խորհրդականացն խրատուց։ Եւ զայս առնէր սկսեալ ի չորրորդ ամէն մինչև ի մետասաներորդ ամն իւրոյ տէրութեան։

Եւ իբրև ետես եթէ ոչինչ յարգեցաւ ծածուկ հնարագիտութիւնն, այլ ընդդէմն յոլովագոյն գործէին — քանզի տեսանէր զքրիստոնէութիւն՝ որ օր քան զօր յորդեալ տարածանէր ընդ ամենայն կողմանս հեռաւոր ճանապարհին ընդ որ ինքն անցանէր, — սկսաւ հաշել և մաշել և հառաչելով յոգւոց հանել։ Յայտնեաց ակամայ զծածուկ խորհուրդն. ետ հրաման բարձր բարբառով և ասէ. «Ամենայն ազգ և լեզուք՝ որ են ընդ իմով իշխանութեամբ՝ դադարեսցեն յիւրաքանչիւր մոլոր օրինաց, և միայն եկեսցեն յերկրպագութիւն արեգական, զոհս մատուցանելով և աստուած անուանելով, և սպաս ունելով կրակի. և ի վերայ այսր ամենայնի և զմն-

զութեան օրէնս կատարելով, մի՛ ինչ ամենևին պակաս առնիցեն»։

Զայս ասելով քարոզ կարդայր ի մեծի կարաւանին, և պատուէր սաստիկ ի վերայ դնէր ամենեցուն. և դեսպանս տոխպաւ արձակէր յամենայն ազգս հեռաւորս, զնոյն պատուէր հրամանի առ ամենեսեան արկանէր։

Արդ ի սկզբան երկոտասաներորդ ամի թագաւորութեան իւրոյ՝ զունդ գումարէր անհամար բազմութեամբ, յարձակեալ հասանէր յերկիրն Թետաղական։

Զայս տեսեալ թագաւորին Քուշանաց՝ ոչ հանդուրժէր ընդ առաջ ելանել նորա պատերազմաւ. այլ խոյս տուեալ ի կողմանս ամուր անապատին, թագստեամբ ապրէր հանդերձ ամենայն զօրօքն իւրովք։ Իսկ սա ասպատակ արձակէր գաւառաց, տեղեաց, վայրաց. առնոյր զբազում բերդս և զքաղաքս, և կուտէր զգերին, զաւ և զապուռ և զաւար, ածէր հասուցանէր յերկիր իւրոյ տէրութեանն։ Եւ անդ այնուհետև յընդունայն եղեալ ի նոյն խորհուրդս՝ հաստատէր ի կարծիս մոլորութեան, ասելով յպաշտօնեայս ամբարշտութեանն. «Զի՞նչ հատուցուք մեք աստ-

ուածոցն փոխարէնս այս մեծի յաղթու-
թեանն՝ որ ոչ ոք կարաց ելանել ընդդէմ
մեր պատերազմաւ»:

Յայնմ ժամանակի առ հասարակ
մոգք և քաղդեայ.ք բարձին զձայնս իւր-
եանց միաբան և ասեն. «Աստուածքն որ
ետուն քեզ զտէրութիւն և զյաղթու-
թիւն ի վերայ թշնամեաց քոց, ոչ ինչ կա-
րօտ են խնդրել ի.քէն յերևելի պատուա-
կանացս, այլ զի բարձցես զամենայն ուս-
մունս մոլորութեան մարդկան, և ի մի դար-
ձուսցես օրէնս զրադաշտական պատուի-
րանին»:

Հաճոյ թուէր բանն առաջի թագաւո-
րին և ամենայն մեծամեծացն, մանաւանդ
որ էին առաջակայք օրինացն: Խորհուրդ
ի մէջ առեալ յաղթէր խրատն:

Անդէն ի ներքոյ Պահ գրանն արգելոյր
զազատութիւն այրուձիոյն Հայոց և ըզ-
Վրաց և զԱղուանից, և զամենեցուն՝ որ
էին հաւատացեալ ի սուրբ աւետարանն
Քրիստոսի: Եւ հրաման սաստիկ դռնա-
պանացն առնէին, եթէ որ յարևելս առ
մեզ գայցէ՝ թողցեն, իսկ յարևելից յա-
րևմուտս անանց լիցի ճանապարհ:

Եւ իբրև արգել և փակեաց զնոսա
յամուր և յանել դառաշլին, — և յի-
րաւի ասացի ամուր և անել, քանզի չէք
անդ տեղի փախստի և թաքստի, վասն զի
շուրջանակի թշնամիք են բնակեալ —, յայ-
նըմ ժամանակի ձեռն արկանէր ի նոսա,
մեծաւ չարչարանօք և պէսպէս տանջա-
նօք վատթարէր զհաւատս ի նոցանէ, և
ստիպէր ուրանալ զճշմարիտն Աստուած,
և խոստովանել զերևելի տարերս: Իսկ զօ-
րականքն առ հասարակ գնդեցին խորհըր-
դով, քաջապէս զօրութեամբ միաբան ա-
ղաղակէին և ասէին. «Վկայ են մեզ եր-
կինք և երկիր, ոչ երբէ.ք հեղգացեալ եմք
յարքունի վաստակս, և ոչ խառնեալ վա-
տութիւն ընդ արութիւն քաջութեան.
ի զուր և անօրէն հարուածքս ի վերայ
մեր»:

Եւ բազմանայր գոչումն աղաղակի նո-
ցա, մինչև ինքնին թագաւորն ականա-
տես լինէր իրացն յանդիմանութեան, և
անդէն վաղվաղակի երդմամբ հաստատէր
և ասէր. «Ոչ թողացուցից ձեզ, մինչև
կատարեսջիք զամենայն կամս հրամանաց
իմոց»:

Եւ ահա իշխանութիւն առեալ չարա-
չար սպասաւորացն, զչորս զինուորսն ի
բուն աւագացն մատուցին ի փորձութիւնս
տանջանաց: Եւ զառաջեաւ դատեալ բա-
զում հարուածովք, նովին կապանօք ան-
ցուցին ի տեղիս արգելանին: Իսկ այլոցն խա-
բէութեամբ առ ժամանակ մի թողութիւն
արարեալ, և զամենայն վնասուն պատ-
ճառս արկանէր զկապելովքն. և զայս առ-
նէր սատանայական խրատուն:

Իսկ յետ երկոտասան աւուր հրաման
տայր ընթրիս գործել առատութեամբ և
աւելի քան զաւուրց սովորութիւն, և կո-
չէր զբազումս ի զինուորական քրիստոնէ-
իցն: Եւ ի ժամ զահու պատրաստութեան
զիւրաքանչիւր տեղի շնորհէր նոցա զբազ-
մականսն. և սիրով խոնարհութեամբ խօ-
սէր ընդ նոսա ըստ առաջնում կարգին,
զի թերևս հաւանեսցին ուտել զմիս զո-
հեալ, զոր ոչ էր երբէք օրէն ուտել քրիս-
տոնէից: Իբրև ոչ կալան յանձին ամենե-
քին, ոչ ինչ կարէր առնելեաց, այլ հրամայ-
եաց մատուցանել նոցա զսովորական կե-
րակուրն, և առնել զինեօքն յաւելոյր
ի տաճարին զխրախութիւն:

Եւ անտի իբրև ի դուրս ելին ի սրահն
արքունի, արգելին զոմանս ի նոցանէ ձեռս
յետս կապելով, և զխանջանունան կնքելով.
և զգուշութեամբ պահէին՝ էր որ զեր-
կուս աւուրս, և էր որ զերիս: Բազում և
այլ ևս յանարժան հարուածս չարչարէին,
զոր ոչ ընդ գրով իսկ արժանի համարե-
ցաք արկանել: Եւ զոմանս ի նոցանէ ընդ
քարշ վարէին յօտարութիւն յազնուական
պատուոյն անարգեալ:

Եւ զունդս զունդս դարձեալ զումա-
րէին ի նոցանէ յերկիր հեռաստան՝ յա-
մուրս անապատին՝ ի մարտ պատերազմի
թշնամեացն արքայի. և բազմաց իսկ ան-
դէն հասանէր վախճան մահու սրով: Եւ
զամենեցունց զկարգեալ թոշակսն նուազե-
ցուցանէին, և քաղցիւ և ծարաւով տա-
ռապեցուցանէին զնոսա, և ձմերոցի տե-
ղիս դժնեայ վայրսն հրամայէին նոցա. և
անարգս և վատթարս յաչս ամենեցուն
զնոսա ցուցանէին:

Իսկ նոքա առ սէրն Քրիստոսի յոյժ
խնդութեամբ ընդունէին զամենայն չար-
չարանսն վասն մեծի յուսոյն որ առա-
ջոյ պատրաստեալն կայ պատուիրանապահ

համբերողացն։ Որչափ չարութեամբ զանարգութիւնն բազմացուցանէր, նոքա ևս քան զևս զօրանային ի սէրն Քրիստոսի. մանաւանդ զի բազումք ի նոցանէ զգիրս սուրբս ուսեալ էին ի մանկութենէ, այնու զանձինս մխիթարէին և զընկերսն քաջալերէին, և աշխարայ զպաշտօնն ունէին և բազմացուցանէին։

Վասն որոյ և բազումք ի հեթանոսաց՝ որոց հեշտ և ցանկալի ձայնքն թուէին, քաջալերէին զնոսա, և առէին բանս մխիթարութեան, իբրև եթէ լաւ լիցէ մարդոյ մահու չափ ճգնել՝ քան յայդպիսի օրինաց ուրանալ։

Բայց սակայն թէպէտ և նոքա առ սէրն Քրիստոսի յոյժ զուարթութեամբ խնդային ըստ ներքին մարդոյն, արտաքին տեսիլն կարի ողորմ էր յօտարութեանն։ Այսպիսի պատուական զինուորութիւն հասեալ էր ի չարաշուք անարգութիւն, և հայրենի ազատութիւնն չարաչար կայր ի ծառայութեան մարդախոշոշ բռնաւորին, որ և ըստ հեթանոսաց օրէնս անցանէր արիւնհեղութեամբ, և ամենևին չկարծէր՝ թէ գուցէ այսր ամենայնի վրէժխնդիր յերկնից։

Նա և ոչ զերկրաւոր վաստակս ուրուք յիշէր. և որ մեծն քան զամենայն է ըստ մարմնաւոր կարգի, քանզի գոյին ոմանք ի նախարարացն Հայոց՝ որոց զեղբարս նորա սնուցեալ էր մայրենի կաթամբն իւրեանց, առաւել քան զամենեսեան զնոսա զատէր։

Եւ յայսր ամենայնի վերայ այլ ևս չարութիւն խորամանկեաց։ Զմի ոմն ի հաւատարիմ ծառայիցն իւրոց ի գործ առաքէր յերկիրն Հայոց՝ որում անունն էր Դենշապուհ. որ եկեալ հասեալ հրամանաւ արքունի, զողջոյն բերեալ զմեծ թագաւորին, և խաղաղասէր կեղծաւորութեամբ աշխարհագիր առնելով ամենայն երկիրն Հայոց ի թողութիւն հարկաց և ի թեթևութիւն ծանրութեան այրուձիոյն։ Թէպէտ և ի վերին երեսս կեղծաւորէր, այլ ի ներքոյ խորհուրդք չարագոյն ցուցանէին։

Առաջին, զազատութիւն եկեղեցւոյ արկանէր ի ծառայութիւն։

Երկրորդ, միայնակեաց քրիստոնեայք որ բնակեալ էին ի վանորայս, ընդ նովին աշխարհագրով էարկ։

Երրորդ, զհարկ աշխարհին տուեալ ծանրացոյց:

Չորրորդ, զնախարարեանն բանսարկութեամբ արկ ընդ միմեանս, և յամենայն տան արար խռովութիւն:

Եւ զայս ամենայն առնէր՝ զի թերևս զմիաբանութիւնն քակտեսցէ, և զուխտ եկեղեցւոյն ցրուեսցէ, և զմիայնակեացն փախուսցէ, և զշինականսն վատնեսցէ. և առ յոյժ աղքատութեանն՝ ակամայ զիմեսցեն յօրէնս մոգուց:

Եւ ևս չարագոյն հինգերորդն. քանզի որ հազարապետն էր աշխարհին՝ իբրև զհայր վերակացու համարեալ էր աշխարհականացն քրիստոնէից. զրգռեաց յարոյց զամբաստանութիւն ի վերայ նորա, և հանեալ զնա ի գործոյն՝ փոխանակ նորա պարսիկ ած յաշխարհն, և միւս ևս մոգպետ դատաւոր աշխարհին, զի զեկեղեցւոյ փառս աղաւաղեսցեն:

Բայց սակայն թէպէտ և ամենայն գործքըս այս դժնեայ էին, չև էր ուրուք ձեռն արկեալ յայտնի յեկեղեցին. վասն այնորիկ և ոչ ոք ընդդիմացաւ նմա, թէպէտ և էր ծանրութիւն հարկացն: Քանզի ուր արժան էր առնուլ հարիւր դահեկան, նոյնչափ կրկնէին և առնուին. սոյնպէս և եպիսկոպոսաց և երիցանց դնէին, ոչ միայն շինաց՝ այլ և աւերակաց: Նա բնաւ ո՞վ իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մաքսից և սակից, բաժից և հասից, լերանց և դաշտաց և մայրեաց: Ոչ ըստ արքունի արժանաւորութեանն առնուին, այլ հինաբար յափշտակելով, մինչև ինքեանք իսկ մեծապէս զարմանային՝ թէ ուստի այս ամենայն գանձ ելանէ՝ զիա՞րդ շէն կայցէ աշխարհն Հայաստանեայց:

Եւ իբրև տեսին՝ թէ այսու ամենայնիւ չկարացաք ձանձրացուցանել, յայնժամ յայտնապէս հրաման ետուն մոգաց և մոգպետաց նամակ մի գրել ըստ ձախողակի գինին իւրեանց: Եւ է պատճէն նամակին այս.

«ՄԻՀՐՆԵՐՍԵՀ ՎԶՈՒՐԿ, հրամանատար Երան և Աներան, Հայոց մեծաց ողջոյն շատ»:

«Դուք գիտասջիք, ամենայն մարդ՝ որ բնակեալ է ի ներքոյ երկնի, և ոչ ունի զօրէնս դենի մազդեզն, նա խուլ է և կոյր,

և դիւաց հարամանոյ խաբեալ:

«Քանզի մինչ չև էին երկինք և երկիր, Զրուան մեծն աստուած յաշտ առնէր ըզհազար ամ՝ և ասէր. «Թերևս լիցի իմ որդի Որմիզդ անուն, արասցէ զերկին և զերկիր»: Եւ յղացաւ երկուս յորովայնի. մի վասն յաշտ առնելոյ՝ և զմեւսն ևս ի թերևսն ասելոյ: Իբրև գիտաց, եթէ երկու են յորովայնին, «Որ վաղ եկեսցէ, ասէ, նմա տաց զթագաւորութիւնս»:

«Իսկ որ էր ի թերահաւատութենէն յղացեալ՝ պատառեաց զորովայնն և ել ի դուրս: Ասէ ցնա Զրուան. «Ո՞վ ես դու»: Ասէ. «Որդին քո եմ Որմիզդ»: Ասէ ցնա Զրուան. «Իմ որդին լուսաւոր է և անուշահոտ, դու խաւարային ես և չարասէր»: Եւ իբրև կարի դառնապէս ելաց, ետ ցնա զթագաւորութիւնն հազար ամ:

«Իբրև ծնաւ զմեւս ևս որդի, անուանեաց զնա Որմիզդ. եհան զթագաւորութիւն յԱրհմնէ, և ետ ցՈրմիզդն, և ասէ ցնա. «Ցայժմ ես քեզ յաշտ արարի, արդ դու ինձ արա»: Եւ Որմիզդ արար զերկինս և զերկիր. իսկ Արհմն ընդդէմ չար գործեաց:

«Եւ այսպէս բաժանին արարածքս. հրեշտակք՝ Որմզդի են, իսկ դեւքն Արհմնոյն. և ամենայն բարիք որ յերկնից և այսր լինին՝ Որմզդի են, և ամենայն վնասք որ անտի և այսր գործին՝ զայն Արհմն արար: Սոյնպէս յերկրիս որ ինչ բարի է՝ զայն Որմիզդն արար, և որ ոչինչ բարի՝ զայն Արհմն արար. որպէս զմարդ՝ Որմիզդ արար. և զախտս և զհիւանդութիւնս և զմահ՝ Արհմն արար: Եւ ամենայն թշուառութիւնք և պատահարք որ լինին, և պատերազմունք դառնութեան, չարին մասին արարածք են. իսկ յաջողութիւն և տէրութիւնք և փառք և պատիւք և առողջութիւնք մարմնոյ, գեղեցկութիւնք դիմաց և ճարտարութիւնք բանից և երկայնակեցութիւնք ամաց, այդ ի բարւոյն առնուն զգոյացութիւն. և ամենայն որ ոչ այդպէս է՝ ի նա չարի մասն խառնեալ է:

«Եւ ամենայն մարդիկ մոլորեալ են որ ասեն՝ եթէ «Զմահ Աստուած արար, և չար և բարի ի նմանէ լինին»: Մանաւանդ որպէս քրիստոնեայք ասեն՝ թէ «Աստուած նախանձոտ է. վասն թզի միոյ ուտելոյ ի ծառոյն՝ Աստուած զմահ արար, և զմարդն

արկ ընդ այնու պատուհասիւ»: Զայդպիսի նախանձ և ոչ մարդ առ մարդ ունի, թող թէ Աստուած առ մարդիկ. զի որ զայս առէ՝ նա խուլ է և կոյր, և ի դիւաց հրամանոյ խաբեալ:

«Դարձեալ միւս ևս այլ մոլորութիւն. «Աստուած որ զերկինս և զերկիր արար՝ եղեւ, ասեն, և ի կնոջէ ումեմնէ ծնաւ՝ որում անուն էր Մարիամ, և առն նորա Յովսէփ». այլ ճշմարտութեամբ՝ բանթուքակայ ուրումն եղեալ նա որդի յանկարգ խառնակութենէ: Եւ զհետ այսպիսի մարգոյ մոլորեալ են բազումք.

«Եթէ աշխարհն հոռոմոց առ յոյժ յիմարութեան տգիտաբար մոլորեալ են և զրկեալ ի կատարեալ դենէս մերմէ, յանձանց պայմանեն զվնասն իւրեանց. դուք ևս ընդէ՞ր զհետ նոցա մոլորութեանն ցնորիք: Այլ զոր օրէնս տէրս ձեր ունի՝ զնոյն և դուք կալարուք. մանաւանդ զի և առաջի Աստուծոյ վասն ձեր համարս ունիմք տալ:

«Մի հաւատայք առաջնորդացն ձերոց՝ զոր Նածրացիսդ անուանէք. քանզի յոյժ են խաբեբայք. զոր բանիւք ուսուցանեն՝ գործովք ոչ առնուն յանձն: «Միս ուտել,

ասեն, ոչ են մեղք», և ինքեանք ուտել ոչ կամին. «Կին առնել արժան է», բայց ինքեանք և հայել ի նա ոչ կամին. «Կարասի որ ժողովէ, ասեն, մեղք են յոյժ», բայց զաղքատութիւն առաւել քան զյոյժ գովեն: Յարգեն զթշուառութիւն, և պարտեն զյաջողուածս. ծաղր առնեն զանուն բախտի, և զվատաւորութիւն յոյժ պայմանեն. սիրեն զանշքութիւն հանդերձից, և յարգեն զանարգս քան զպատուականս. գովեն զմահ՝ և պարսաւեն զկեանս. անարգեն զծնունդս մարդոյ, և գովեն զանորդութիւն: Եւ եթէ լսէք դոցա և ի կանայս ոչ մերձենայք, աշխարհիդ վախճան վաղվաղակի հասանէ:

«Այլ ես ոչ կամեցայ զամենայն ըստ մասանց ընդ գրով արկանել առ ձեզ. զի բազում այլ ինչ է զոր խօսին դոքա: Որ չարագո՞յն ևս է քան զոր գրեցաքդ, զԱստուած ի խաչ ելեալ ի մարդկանէ քարոզեն, և զնոյն մեռեալ և թաղեալ, և ապա յարուցեալ և վերացեալ յերկինս: Ո՞չ ապա ձեզէն իսկ արժան էր անդէն դատաստան առնել վասն այդպիսի անարժան ուսմանց: Դեւք որ չարք են՝ ոչ ըմբռ-

նքն և տանջէն ի մարդկանէ, թող թէ Աստուած արարիչ ամենայն արարածոց. զոր ձեզ ամօթ է ասել, և մեզ կարի անհաւատալի բանք:

«Արդ երկու իրք կան առաջի ձեր. կամ արարէք բան առ բան նամակիս պատասխանի, և կամ արիք ի Դուռն եկայք, և յանդիման լերուք մեծի հրապարակին»:

ԱՆՈՒԱՆՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑՆ

որք պատասխանեցին նամակին.

ՅՈՎՍԷՓ եպիսկոպոս Այրարատայ.
ՍԱՀԱԿ եպիսկոպոս Տարօնոյ.
ՄԵԼԻՏԷ եպիսկոպոս Մանազկերտոյ.
ԵԶՆԻԿ եպիսկոպոս Բագրեւանդայ,
ՍՈՒՐՄԱԿ եպիսկոպոս Բզնունեաց.
ՏԱՃԱՏ եպիսկոպոս Տայոց.
ԹԱԹԻԿ եպիսկոպոս Բասենոյ.
ՔԱՍՈՒՆ եպիսկոպոս Տուրուբերանոյ.
ԵՐԵՄԻԱ եպիսկոպոս Մարդաստանի.
ԵՒՂԱԼԻ եպիսկոպոս Մարդոյ աղւոյ.
ԱՆԱՆԻԱ եպիսկոպոս Սիւնեաց.
ՄՈՒՇԷ եպիսկոպոս Արծրունեաց.

ՍԱՀԱԿ եպիսկոպոս Ռշտունեաց.
ԲԱՍԻԼ եպիսկոպոս Մոկաց.
ԳԱԴ եպիսկոպոս Վանանդայ.
ԵՂԻՇԷ եպիսկոպոս Ամատունեաց.
ԵՂԲԱՅՐ եպիսկոպոս Անձեւացեաց.
ԵՐԵՄԻԱ եպիսկոպոս Ապահունեաց:

Այս ամենայն եպիսկոպոսք և բազում քորեպիսկոպոսք և սրբազան երիցունք ի տեղեաց տեղեաց հանդերձ սուրբ ուխտիւ եկեղեցւոյ՝ միաբանք և միահաւանք, միահամուռ ժողովեալք ի Թագաւորանիստ քաղաքն յԱրտաշատ, համաձայնութեամբ մեծամեծ նախարարացն և ամենայն բազմութեամբ աշխարհին արարին նամակին պատասխանի:

«ՅՈՎՍԷՓ ԵՊԻՍԿՈՊՈՍ»

համօրէն ամենայն միաբանելովքս ի մեծամեծաց մինչև ցփոքունս, Միհրներսեհի մեծի հազարապետի Արեաց և Անարեաց՝ բազում խաղաղասէր մտօք բազմասցի ողջոյն առ քեզ և ամենայն մեծի սպահից Արեաց»

«Ի նախնեաց անտի սովորութիւն աստուածատուր պատուիրանաւ՝ աղօթս առ-

նել ի վերայ կենաց Թագաւորի, և անձանձրոյթ խնդրել յԱստուծոյ վասն երկայն ժամանակաց դորա, զի խաղաղութեամբ վարեսցէ զտիեզերական իշխանութիւնդ զոր աւանդեալ է դմա յԱստուծոյ. զի ի դորա յերկար խաղաղութեանն և մեք առողջութեամբ և աստուածպաշտութեամբ կատարեսցուք զկեանս մեր,

Վասն նամակին զոր քո ի մեր աշխարհըս տուեալ էր, յառաջ ժամանակաւ մի ոմն ի մոգպետաց, որ կատարելագոյն էր ի դենիդ ձերում, և դուք առաւել քան ըզբնութիւն մարդկան ի վեր համարէիք զնա, հաւատաց նա յԱստուած կենդանի յարարիչն երկնի և երկրի, և բան առ բան եղոյծ և խմացոյց ձեզ զօրէնս ձեր: Եւ իբրև ոչ կարացին բանիւ զդէմ ունել նորա, քարկոծեալ մեռաւ յՈրմզդէ արքայէ: Եւ եթէ հաւատարիմ համարիցիս զմեր բանս ըսել, ի բազում տեղիս այդր աշխարհիդ ձերոյ գտանիցին զիրք նորա. ընթերցիր, այտի տեղեկանաս:

«Այլ վասն օրինացս մերոց, ոչ ինչ աներևոյթ են, և ոչ յանկեան ուրեք աշխարհի քարոզի. այլ համատարած ընդ

ամենայն երկիր, ընդ ծով և ընդ ցամաք և ընդ կղզիս. ոչ միայն ընդ արևմուտս, այլ և ընդ արևելս, այլ և ընդ հիւսիս և ընդ հարաւ և ի միջոցս լի է հոծութեամբ: Ոչ ի մարդ ապաստան՝ եթէ վերակացուաւ տարածեսցի ընդ աշխարհս. այլ ինքն յինքենէ ունի զհաստատութիւն: Ոչ առ այլովք վանթարօքն մեհ երևի, այլ ի վերուստ յերկնուստ ունի զանսուտ օրէնըսդրութիւնն. ոչ միջնորդաւ, զի մի է Աստուած, և չիք այլ ոք բաց ի նմանէ, ոչ երիցագոյն և ոչ կրտսերագոյն:

«Ոչ սկիզբն առեալ յումեքէ լինել Աստուած, այլ ինքն ինքեամբ մշտնջենաւոր. ոչ ի տեղւոջ ուրեք, այլ ինքն ինքեան տեղի. ոչ ի ժամանակի իմիք, այլ ժամանակք ի նմանէ գոյացան. ոչ միայն քան զերկինս երիցագոյն, այլ և քան զկարծիս մտաց մարդկան և հրեշտակաց: Ոչ ձևանայ ի տեսիլ տարրեղէն, և ոչ անկանի ընդ տեսլեամբ ական. և ոչ միայն ձեռին չզննի, այլ և ոչ ընդ միտս ուրուք հարկանի, ոչ միայն ընդ մարմնականացս՝ այլ և ընդ անմարմին հրեշտակացն. բայց եթէ ինքն կամի, իւրոց արժանաւորացն մտաց իմանի,

այլ ոչ աչաց տեսանի, և մնաց՝ ոչ երկբաւորացս, այլ որ յԱստուած են Հաւատացեալ ճշմարտին:

«Եւ անուն նորա Արարիչ երկնի և երկրի. իսկ յառաջ քան զերկին և զերկիր, որպէս ինքնագոյ՝ ինքնանուն է: Ինքն անժամանակ է, իսկ արարածոցս յորժամ կամեցաւ՝ սկիզբն արար լինելոյ, ոչ յընչէ՝ այլ յոչընչէ. զի ինչ՝ նա միայն է, և այլս ամենայն ի նմանէ ընչացաւ: Ոչ եթէ իբրև յետոյ իմացաւ և արար, այլ մինչ չև արարեալ էր նորա՝ ի կանուխ գիտութեանն իւրում տեսանէր զարարածս. որպէս և այժմ մինչ չև է գործեալ մարդոյ բարի ինչ կամ չար, Աստուծոյ յայտնի է անգործք մարդկան: Սոյնպէս և յայնժամ մինչ չև էր, ոչ խառն ի խառն ինչ ճանաչէր զանեղսն, այլ կարգեալ և յարմարեալ կային առաջի նորա իւրաքանչիւր մասանցն տեսակք. իսկ մարդկան և հրեշտակաց՝ և տեսակքն և որ ի տեսակին լինելոց էին:

«Եւ քանզի արարող զօրութիւն է, ոչ կարէր խափանել զնորա բարերարութիւնն՝ մեր չարութիւնս. որպէս և եղև իսկ, և

ունիմք դատաւոր զաջն արարիչ: Ջեռք որ զերկինս և զերկիր հաստատեցին՝ նոյն և տախտակս քարեղէնս փորագրեցին եւ ետուն մեզ զպրութիւն՝ որ ունի զօրէնս խաղաղականս եւ փրկականս. զի գիտասցուք զմի Աստուած արարիչ երեւելեաց եւ աներեւութից. ոչ այլ եւ այլ, իբր թէ ոմն բարի եւ ոմն չար, այլ մի եւ նոյն համակ բարի:

«Բայց եթէ թուիցի քեզ չար ինչ զալ յարարածս Աստուծոյ, ասա համարձակ, զի թերևս ուսցիս զճշմարիտն բարի: Զդևս չար ասացեր. գոն և դևք բարի՝ զոր և դուք և մեք հրեշտակս անուանեմք. եթէ կամին՝ և դևք բարի լինին, և եթէ կամին՝ և հրեշտակք չար լինին: Այդ և ի մարդիկ երևի, և առաւել ի միոյ հօր որդիս. է որ հնազանդ և հպատակ է հօրն, և է որ չարագոյն քան զսատանայ: Նա և ինքն իսկ մարդն առանձին յերկուս բաժանեալ տեսանի, երբեմն չար՝ և երբեմն բարի. և որ բարին էր՝ նոյն և չարացաւ, դէպ եղև զի դարձեալ անդրէն ի բարին շրջեցաւ, և բնութիւն մի է:

«Բայց այն որ ասեն, եթէ վասն թը-

զայ միոյ մահ տրար Աստուած, վատթարագոյն է պատառ մի մազաղաթ քան ըզթուղ. ապա եթէ բան թագաւորին նըկարի ի նմա՝ ո պատուէ զնա՝ մահու ընդունի զպատուհաս: Իսկ արդ չար արժա՞ն է ասել թագաւորին. քաւ, ես ոչ ասեմ, այլ խրատ ի գործ արկեալ և զայլս ուսուցանեմ: Յայնժամ էր Աստուած նախանձոտ՝ թէ չէր պատուիրեալ չուտել ի ծառոյ անտի. ապա եթէ յառաջագոյն զգուշացաւ, զգութ ընական սիրոյն իւրոյ յայտնեաց ի նմա: Իսկ արհամարհելով մարդ՝ ընկալաւ զպատիժս մահուն:

«Բայց այն զոր ասացեր՝ եթէ Աստուած ի կնոջէ ծնաւ, յայդմ չէր արժան քեզ խորշել և փախչել. զի ահաւասիկ Արհմն և Որմիզդ ի հօրէ ծնան և ոչ ի մօրէ. որում եթէ քաջ միտ դնես, և ոչ դու յանձն առնուս: Եւ մեւս ևս այլ ծանրագոյն քան զայդ, Միհր աստուած ի կնոջէ ծնաւ, եթէ ոք ընդ իւրում ծնողին անկցի:

«Այլ սակաւիկ մի եթէ ի բաց թողացուցանէիր զփքումն տէրութեանդ, և ընկերաբար գայիր ի պայքար, գիտեմ զի իբ-

րև այլովք ամենայնիւ յոյժ իմաստուն ես, և վասն ծննդեան Տեառն մերոյ ի սուրբ կուսէն՝ ոչ անարգանութիւն համարէիր, այլ առաւել քան զարարչութիւնն յոչընչէ զաշխարհս՝ մեծագոյն զվերջին փրկութիւնն իմանայիր, ազատութեան մարդոյն զյանցաւորութիւնն դնէիր, և բարերարութեանըն Աստուծոյ՝ զազատութիւնն ի ծառայութենէ:

«Քանզի յորժամ լսես եթէ յոչընչէ արար Աստուած զամենայն աշխարհս, բանիւ ծնունդ իմասջիր զարարածս: Իսկ քանզի Աստուած որ զայս մեծ մարմին առանց չարչարանաց ծնաւ, ապաքէն իբրև զհայր գութ ունի ընդ սմա: Զի որ ինքն անապական է և զարարածս առանց ապականութեան ծնաւ. իսկ սա կամօք զըլորեալ ապականեցաւ, և անձամբ ևս ոչ կարէր կանգնել կալ ի վերայ ոտից: Վասըն զի էր ի հողոյ, անձամբ անձին արարեալ՝ անդրէն ի նոյն բնութիւն դարձաւ. և իբրև ոչ եթէ յօտար զօրութենէ չարի ինչ ընկալաւ ուրուք զպատիժս պատուհասին, այլ ի յիւրմէ հեղգութենէն չլսել բարերար պատուիրանին, խրատեցաւ ծա-

ապական մասնն մահուամբ զոր կրեաց յանձն իւր:

«Արդ եթէ զմահ չար աստուածն արար, զի՞նչ գոյացութիւն երեւի մահու ի միջի. եւ ո՛չ ինչ:—Բայց զբարի Աստուծոյ զարարածն խանգարեաց—: Եթէ այդ այդպէս է՝ նմա եւ բարի իսկ առնել ոչ մարթի, այլ կիսագործ ապականացու: Եւ որոյ աստուծոյ արարածքն ապականելիք են եւ եղծանելիք՝ նմա անեղծ Աստուած չմարթի առնել: Տե՛ս ո՛ն անմտք թողէք զյիմարութեան բարբանջմունս:

«Միոյ աշխարհի երկու դեհապետք ոչ լինին, եւ ոչ միոյ արարածոյ երկու աստուածք: Եթէ ժպրհեսցին եւ լինիցին երկու թագաւորք միոյ աշխարհի, աշխարհն եղծանի եւ թագաւորութիւնքն խանգարին:

«Աշխարհս նիւթեղէն է, եւ նիւթքս որիշ որիշ են եւ ընդ միմեանս հակառակ. մի է արարիչ հակառակորդացս՝ որ ածէ զսոսա ի սիրելութիւն հաւանութեամբ. որպէս մալեալ կակղէ զջերմութիւն հրոյն՝ օդոյս հովութեամբ, եւ զապառումն բըր-տութիւն օդոյն՝ հրոյն եռանդմամբ. այն-

պէս եւ զմանրամաղ փոշեացեալ հողս՝ ջուրոյն խոնաւութեամբ զանգանէ, իսկ զ՚իվայր ծորելի բնութիւն ջրոյն՝ սալայատակ տրամացուցեալ հողոյն կափմամբ:

«Զի եթէ միաբանէին տարերքս, դուցէ ոք ի կարծմանց եւ Աստուած անապական զսոսա կարծէր, եւ թողեալ զարարիչըն՝ արարածոյս զերկրպագութիւն մատուցանէր. վասն այնորիկ որ արար զսա՝ ըզդուշացաւ յառաջագոյն, զի հայեցեալ մարդիկ ի յանդիմանութիւն ապականացու տարերացս՝ անապական միայն զկառավար սորա խմասցեն, զմի եւ ոչ զերկուս. զնոյն արարիչ չորեքկին նիւթոյս՝ յորմէ ամենայնքս ծննդագործին հրամանաւ արարողին իւրեանց:

«Եւ շրջագայութեամբք չորեք յեղանակք կատարեալ գործեն զտարեւոր սպասաւորութիւնն. եւ չորքեան հային կամաց ակնարկելոյ արարչին իւրեանց, եւ անզգայութեամբ լծեալ են ի գործ հարկաւորութեանն, չյափշտակելով զկարգ պատուոյն ի միմեանց:

«Եւ ահա պարզաբան լուսաւորութիւն՝ զիւրատար ի յականջս ամենեցուն:

«Զի այն որ հուրն է գոյացութեամբ և զօրութեամբ խառնեալ է յերկսն ևս մասունս. երբև զի գտանի ջերմութիւնն յոլովագոյն ի քարինս և յերկաթս, և սակաւագոյն ի յօդ և ի ջուր, և ինքն առանձին ուրեք ոչ երևի: Իսկ ջրոյ բնութիւն գոյ առանձինն, գոյ և ի խառնուածն երից ևս մասանց, յոլովագոյն ի հողաբոյս և սակաւագոյն ի յօդ և ի հուր: Իսկ օդն թափանցանց է ընդ հուրն և ընդ ջուր, և ի ձեռն ջրոյն ընդ կերակուրս աճեցականս:

«Եւ այսպէս խառնեալ են տարերքս այս, և գոյացեալ երբև զմի մարմին, և ոչ կորուսեալ զիւրաքանչիւր բնութիւնս, և ոչ երբէք զկայան առեալ հակառակութեամբ, հայելով ի մի իշխանն յանխառնն՝ որ զխառնուածս յարմարեալ կազմէ առ ի բնակութիւն կենդանեաց ամենեցուն, և տևողութիւն յարակայութեան բոլոր աշխարհիս:

«Իսկ եթէ առ անբան աշխարհս այսպէս հոգ տանի Աստուած, որչափ ևս առաւել առ բանաւոր աշխարհն՝ մարդն:

«Զոր և ձեր ամե քաջ յիմաստնոցն ա-

տաց, եթէ Միհրն աստուած մայրածին էր ի մարդկանէ, և Թագաւոր աստուածագաւակ է, և համհարզ քաջ եւթներորդաց աստուածոց: Եւ եթէ հաւատալ արժան է առասպելաբանութեանդ — զոր դուք և գործովք իսկ կատարեալ ցուցանէք ի դենիդ ձերում — մեք ոչ ևս առասպելացն հաւատամք, այլ աշակերտք եմք մեծին Մովսիսի մարգարէին՝ ընդ որում Աստուած խօսեցաւ ի մորենւոջն և ի Սինէ, և դէմ յանդիման օրէնս գրեաց և ետ ցնա. և ծանոյց զնիւթեղէն աշխարհս երբև զարարածս, և զիւր աննիւթ էութիւնն՝ արարիչ նիւթոցս յոչընչէ. և զերկիրս երկրաւորօքս և զերկինս երկնաւորօք եցոյց նմա՝ զի գործք ձեռաց նորա են: Բնակիչք երկնի՝ հրեշտակք, և բնակիչք երկրի՝ մարդիկ. բանաւոր՝ մարդ և հրեշտակ միայն, և Աստուած ի վեր քան զերկինս և զերկիր:

«Եւ ամենայն արարածք անբանութեամբ կատարեն զհրամանս պատուիրանի նորա, և ոչ երբէք անցանեն ըստ եդեալ սահմանն իւրեանց. բայց մարդ և հրեշտակ ազատ թողեալ ի կամս անձին, քանզի մտաւորք են, եթէ կայցեն ի հրամանի նորա,

անմահք են և որդիք Աստուծոյ: Զբոլոր արարածս տուեալ է ի ծառայութիւն, զերկիրըս՝ մարդկան, և զերկինս՝ հրեշտակաց. ապա եթէ ստունգանիցեն և անցանիցեն զպատուիրանս, զընդդէմն գործեսցեն Աստուծոյ, յիւրաքանչիւր պատուոյն զանարգանս ընկալցին. զի երևեսցի տէրութիւնն անբամբաս, և յանցաւորք յանցանացն ամօթալից:

«Իսկ եթէ դու ի տգիտութեան վրիպեալ իցես, ես որ հաստատուն գիտեմ՝ ոչ կարեմ գալ զկնի քո մոլորութեանդ: Եթէ աշակերտիմ անուսումնութեանդ՝ երկոքինս յանգիւտ կորուստ մատնիմք, թերևս ես չարագոյն քան զքեզ, քանզի վըկայ ունիմ ինձ զինքնասաց ձայնն Աստուծոյ. «Ծառայ, ասէ, որ ոչ գիտէ զկամս տեառն իւրոյ, և արժանի գանի ինչ գործ գործէ, ըմպել ըմպէ գան, այլ սակաւագոյն. իսկ որ տեղեկագոյն է կամաց Թագաւորին, և յանցանէ ինչ առաջի նորա, առանց բարեխօսի բազմապատիկ տանջի»:

«Արդ աղաչեմ զքեզ և զամենեսեան որ ընդ քոյով իշխանութեամբ են. մի դու ընդ իս բազմապատիկ տանջիր, և ոչ ես ընդ քեզ սակաւագոյն. այլ ես և դու

և ամենայն բազմութիւնդ հանդերձ արի Թագաւորաւդ այնպէս աշակերտեսցուք աստուածային գրոյ՝ զի ի տանջանացն ապրեսցուք, և զզժոխս առ ոտն կոխեսցուք, և յանշէջ հրոյն զերծանիցիմք, և զարքայութիւնն ժառանգիցեմք, և անցաւոր կենօք զանանց մեծութիւնն անվախճան ունիցիմք:

«Բայց յորմէ դուդ զարհուրեալ ես՝ դիւրահաւան լեր, և փաղփաղակի աշակերտիս ճշմարտութեանն:

«Ոչ ի հրեշտակաց յանմահիցն զոդէն տամբակեալ ի բաց գնաց յերկնից, և ի մեր աշխարհս եկեալ՝ պատիր բանիւք և սուտ խոստմամբ զանլընելի յոյսն առաջի դնէր՝ իբրև տղայ մանկան՝ անփորձ և անկիրթ նորաթեք մարդոյն, ի վեր հայեցուցանելով զմիտս նորա, ուտել ի պտղոյ ծառոյն— յոր հուպն չհրամայեաց երթալ—զի լիցի աստուած: Իսկ նորա մոռացեալ զպատուիրանն Աստուծոյ, խաբեցաւ զկնի մոլար խաբէութեանն, կորոյս զոր ունէր զփառս անմահութեանն, և չեհաս երազայոյս կարծեացն: Վասն որոյ և մերժեալ ի կենաց տեղւոյն, ընկեցաւ

յապականել աշխարհս՝ յորում և դուք էք բնակեալ այժմ, և ցնորեալ մոլորիք զկնի նորին խրատուի. ոչ ևս ուտելով ի պատուիրեալ ծառոյն, այլ զարարածս աստուած ասելով, և անխօս տարերցս երկիր պագանելով, և անորովայն դիւաց կերակուր մատուցանելով, և յարարչէն բոլորեցունց ի բաց մերժելով:

«Ոչ յագի չար խրատուն, այլ կամի զի քան զինքն չարագոյնս արասցէ: Քանզի դևքն ոչ եթէ բռնաբար վարեն զոք ի կորուստ, այլ զմեղս քաղցրացուցանեն ի կամս մարդոյն, և ողոքանօք որսան զանուսմունս ի խաբէութիւն, որպէս բազում մարդիկ զընկերս իւրեանց ի գողութիւն և յաւազակութիւն: Իբր ոչ եթէ բռնի ինչ վարելով, այլ պատիր խաբէութեամբ տան գործել բազում չարիս, զոմանս ի կախարդութիւն, և զոմանս ի պոռնկութիւն, և զոմանս յանթիւ ի բազում յայլ իրս աղտեղութեան: Եւ արդար դատաւորք վրէժ առնուն մահու չափ. իբր ոչ եթէ բարի Աստուծոյ դատաւորք իցեն բարեգործ, և չարին չարագործ. զի բազում անգամ է զի ի բարի մարդկանէ չարք լինին, և յի-

տոյ ի չարագունից անտի կատարելագոյն բարիք:

«Եւ դատաւորք ստոյգ՝ որք դատին ըզչարագործս, ոչ եթէ չարք անուանին և չարչարիչք, այլ յոյժ բարիք և բարեգործք. և բնութիւն մի է, և ոչ երկու. իսկ ի միջէ անտի գործք երկուութեան երևին. ոմանց սատակիչք, և ոմանց պարգևատուք: Եւ եթէ առ մարդիկ այս պաշտի, ի ձեռն Թագաւորական վճռակին խրատուն խնամ տանել իւրում իշխանութեանն, ո՞րչափ ևս առաւել Աստուծոյ բոլոր աշխարհս, որ ընդ ամենեցուն կեանս կամի և ոչ զմահ: Եւ ահա ուր բազմացաւ յանցաւորութիւն՝ տանջեաց զամենեսեան մահուամբ. իսկ ուր եղև ունկնդրութիւն հնազանդութեան՝ շնորհեաց պարգևս անմահութեան:

«Այն է ճշմարիտ Աստուած՝ բոլորեցունց մեր արարիչ, զոր դու աներասանակ արձակ բերանով անահ աներկիւղ համարձակ հայհոյես: Թողեալ զՅիսուս Քրիստոս ըզփրկական անունն՝ Բանթաւրակայ որդի անուանես, և մարդ մոլորեցուցիչ կարծես. և զերկնաւոր փրկութիւնն ազաւաղես և

անարգեւ ի կորուստ անձին և բոլոր աշխարհիս: Զոր տալոց և հաստատելոյ ես պանծացական վեհ տանջանայն յանշէջ հուրն սպառնացեալ գեհենին, հանդերձ ամենայն գործակցօք քոյովք, առաջնովք և միջնովք և վերջնովք:

«Այլ մեք այսպէս գիտեմք զԱստուած, և ի սոյն հաւատամք ի յանկրկլեայս:

«Եւ որ արար զաշխարհս՝ նոյն եկն և ծնաւ ի սուրբ կուսէն Մարիամայ, յառաջագոյն նկատելով մարգարէիցն, առանց իրիք պատճառանաց մարմնաւոր կարգի: Որպէս յոչընչէ արար զայս մեծամարմին աշխարհս, սոյնպէս առանց իրիք մարմնական միջնորդի առ զմարմինն յանփորձ կուսէն ճշմարտիւ, և ոչ ստուերագիր երեւմամբ: Էր Աստուած ճշմարտիւ, և եղև մարդ ճշմարտիւ. ոչ ի լինելն մարդ՝ կորոյս զաստուածութիւնն, և ոչ ի կալ մնալն Աստուած՝ աղաւաղեաց զմարդկութիւնն, այլ նոյն և մի:

«Այլ քանզի ոչ կարէաք տեսանել զանտեսանելին և մերձենալ յանմերձենալին, եկն եմուտ ընդ մերով մարդկութեամբ, զի և մեք մտցուք ընդ նորա

աստուածութեամբն: Ոչ անարգս ինչ համարեցաւ զգենուլ զիւր ստեղծուած մարմինս, այլ մեծարեաց իբրև աստուածաստեղծ զիւր գործ: Ոչ առ սակաւ սակաւ շնորհեաց ինչ սմա զանմահութեան պատիւն՝ իբրև զանմարմին հրեշտակաց, այլ միանգամայն զբոլոր բնութիւնն մարմնով շնչով և հոգւով զգեցաւ, և միաւորեաց ընդ աստուածութեանն. միութիւն, և ոչ երկուութիւն. և այսուհետև մի գիտեմք զաստուածութիւնն, որ յառաջ էր քան զաշխարհս, նոյն և այսօր և յաւիտեան:

«Այս Յիսուս Քրիստոս՝ որ յիւր մարմինն փրկեաց զբոլոր աշխարհս, առ եկն կամօք ի մահ. և որպէս ինքն աստուածութիւնն գիտէ՝ թանձրացաւ յանարատ կուսէն, և ծնաւ և պատեցաւ ի խանձարուրս և եդաւ ի մսուր, և շարժեաց ած զմոգսն յարևելից կողմանցս յերկրպագութիւն. սնաւ իբրև զաղայ կաթամբ, աճեաց և մեծացաւ ամս երեսուն, մկրտեցաւ ի Յովհաննէ ի յամենրդուոյն ի Յորդանան գետ: Արար նշանս մեծամեծս և արուեստս ի մէջ Հրէիցն. մատնեցաւ ի

քահանայից, դատապարտեալ ի Պիղա-
տոսէ պոնտացւոյ: խաչեցաւ, մեռաւ, թա-
ղեցաւ, յարեաւ յաւուր երրորդի. երե-
ւեցաւ երկոտասան աշակերտացն և այլոց
բազմաց աւելի քան զհինգ հարիւրոցն:
Եւ շրջելով ընդ նոսա զաւուրս քառա-
սուն՝ վերացաւ յերկինս ի լեռնէն Ձիթե-
նեաց յանդիման իւրոց աշակերտացն, ել
և նստաւ ի հայրենի աթոռն: Խոստացաւ
երկրորդ անգամ գալ ահաւոր զօրու-
թեամբ յարուցանել զմեռեալս, նորոգել
զբոլոր աշխարհս, առնել դատաստան ար-
դար ի մէջ արդարոց և մեղաւորաց, տալ
պարգևս արժանաւորաց, և հատուցանել
պատիժս չարագործաց՝ որ այսմ ամենայ-
նի բարերարութեանց ոչ հաւատան:

«Յայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ
խախտել, ոչ հրեշտակք և ոչ մարդիկ,
ոչ սուր և ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամե-
նայն զինչ և են դառն հարուածք:

«Ամենայն ինչք և ստացուածք մեր ի
ձեռս քո, և մարմինք մեր առաջի քո
կան. ըստ կամաց քոց արա զինչ և կա-
միս: Եթէ սովին հաւատովք թողուս, ոչ
յերկրի այլ տէր փոխանակեմք ընդ քեզ,

և ոչ յերկինս այլ Աստուած փոխանա-
կեմք ընդ Յիսուսի Քրիստոսի, որ չէք այլ
Աստուած բաց ի նմանէ:

«Ապա եթէ յետ այսր մեծի վկայու-
թեան այլ ինչ հարցանես, ահաւասիկ կամք,
զբոլոր մարմին տուեալ ի ձեռս քո. փաղ-
փաղակի արա զինչ և կամիս: Ի քէն տան-
ջանք և ի մէնջ յանձնառութիւնք. սուր
քո՝ և պարանոցք մեր: Զի մեք ինչ լաւ
մեք քան զառաջինսն որ յայսր վկայու-
թեան վերայ եդին զինչս և զստացուա-
ծըս և զմարմինս իւրեանց:

«Զի եթէ անմահք իսկ էաք, և մարթ
էր մեզ մեռանել վասն սիրոյն Քրիստո-
սի՝ արժան էր. քանզի և նա անմահ էր,
և այնչափ սիրեաց զմեզ՝ մինչև մահ ի
յանձն էառ, զի և մեք նորա մահուամ-
բըն յաւիտենական մահուանէն ապրես-
ցուք: Եւ եթէ նա յիւր անմահութիւնն
ոչ խնայեաց, մեք զի կամօք եղաք մահ-
կանացուք, կամօք մեռցուք վասն սիրոյ
նորա, զի կամօք յանձն առցէ զմեզ յիւր
յանմահութիւնն. մեռցուք իբրև զմահ-
կանացուս. զի ընկալցի զմեր մահն իբրև
զանմահից:

«Այլ դու յայսր ամենայնի այլ զմեզ մի՛ հարցանէր. զի ոչ եթէ ընդ մարդոյ է ուխտ հաւատոյ մերոյ, եթէ պատրեցիմք իբրև զողայս. այլ անլուծութեամբ ընդ Աստուծոյ՝ որում չէք հնար քակել և ի բաց ելանել, ոչ այժմ և ոչ յապա, և ոչ յաւիտեանս, և ոչ յաւիտենից յաւիտեանս»:

Ի սմին մեծի հաւանութեան ամենայն բազմութիւնն միաբանեաց ի մեծամեծաց մինչև ցփոքունս. անսուտ երդմամբ եդին վկայութիւն՝ կենօք և մահու ի նմին կալ հաստատուն:

Եւ երբև եհաս նամակն յարքունիս՝ և ընթերցան ի մեծի խոնատանի յանդիման ամենայն բազմութեան կարաւանին, բազումք այնպիսիք էին որ երբև լուէին՝ գովէին զպատասխանիսն: Թէպէտ և երկնչէին յահէ տէրութեանն՝ սակայն ի ծածուկ առ միմեանս զնոյն վկայութիւնս գովութեանց տային. առաւել քան ընդ ճարտարաբանութիւնն՝ ընդ համարձակութիւն աներկիւղութեանն զարմանային: Եւ բազումք յահարեկելոց սկսան զլահել ընդապէս, և զնոյն շշնջիւն լսէին յամենայն շրթանց:

Իսկ չարաւէր մոգպետն հանդերձ մեծ հազարապետաւն շնչեաց չարախօսութիւն, և բորբոքեաց զթագաւորն իբրև զհուր անշիջանելի: Եւ սկսաւ կրճտել զատամունսն իբրև զօրհասական վիրաւոր. և յայտ յանդիման ձայն արկեալ ի մեծ հրապարակին, և ասէ. «Գիտեմ ես զչարութիւն բազմութեան մարդկանս՝ որ թերահաւատեն ի մերոյ օրինացս, և զկնի կախարդութեան մոլորեալ են անդարձութեամբ: Եւ իմ եղեալ է կամս՝ թէ ոչ ումեք թողացուցից ի մեծամեծ հարուածոցն՝ մինչև ակամայ ի բաց կացցեն յայնպիսի վրիպական օրինաց. եթէ ոք կարի ի մերձաւորաց լիցի, զնոյն անցս և ընդ նոսա անցուցից»:

Յայնժամ ծերն դառնացեալ բանս ի ներքս ընկէց, և ասէ ցթագաւորն. «Առ ի՞նչ է քո այդ մեծ տրտմութիւնդ. զի եթէ կայսր չկամէ ըստ քո հրամանն, և չոնք կան քեզ ի ծառայութեան, ո՞ր մարդ է յերկրի՝ եթէ կարող է ընդդէմ դառ-

նալ քում հրամանիդ: Տիրաբար հրաման
տուր ի ներքս, և ամենայն որ ինչ և առնես՝
վաղվաղակի կատարի»:

Եւ անդէն Թագաւորն ի ներքս կոչեալ
դպրապետն, հրամայէր գրել հրովարտակ.
և ոչ ևս ըստ սովորութեանն, այլ բանս
պայրագլխս իբր առ ատելիս և անպիտանս,
չյիշելով ամենևին զմեծամեծ վաստակս սի-
րաէր մարդկանն. այլ միայն կոչոյ հրաման
տուեալ յականէ, յանուանէ զարս զոր ինքն
ճանաչէր: Եւ այս անուանք են նախարարացն.
Ի տոհմէն Սիւնեաց ՎԱՍԱԿ անուն:
Ի տոհմէն Արծրունեաց ՆԵՐՇԱՊՈՒՀ անուն:
Ի տոհմէն Ռշտունեաց ԱՐՏԱԿ անուն:
Ի տոհմէն Խորխոռունեաց ԳԱԴԻՇՈՅ անուն:
Ի տոհմէն Մամիկոնէից ՎԱՐԴԱՆ անուն:
Ի տոհմէն Մոկաց ԱՐՏԱԿ անուն»
Ի տոհմէն Ապահունեաց ՄԱՆԷՃ անուն:
Ի տոհմէն Ամատունեաց ՎԱՀԱՆ անուն:
Ի տոհմէն Վահեւունեաց ԳԻՒՏ անուն:
Ի տոհմէն Անձևացեաց ՇՄԱՒՈՆ անուն:

Զայս նախարարքս յականէ յանուանէ կոչե-
ցին ի դուռն արքունի. և կէսքն առ նմա իսկ
էին ի կարաւանին, և այլքն ի կողմանց հիւ-
սիսոյ ի Հոնաց պահակին. Թողեալ էր զո-

մանս ի նախարարացն անդէն յաշխարհին
Հայոց:

Արդ Թէպէտ և ոչ համագունդ ի միոջ
վայրի դիպեցան ամենեքեան, սակայն յա-
ռաջագոյն գիտացեալ զխորհուրդս չարա-
բարոյ բռնաւորին, և զհեռաւորսն ևս իբ-
րև զմերձաւորսն ի միոջ վայրի առ մի-
մեանս համարէին:

Եւ ի ձեռն Յովսեփու մեծի եպիսկոպոսի
նոքին ուխտի հաստատեալ՝ խաղացին
գնացին յիւրաքանչիւր տեղեաց ի դուռն ար-
քունի: Եւ յոյժ փութային վասն եղբարց
և որդեաց և սիրելի դայեկասնունդ բարե-
կամացն՝ որ չարաչար կային ի մեծի նեղու-
թեանն: Վասն որոյ և նոքա զանձինս ի
մահ մատնեցին՝ ոչ ինչ զանգիտելով իբ-
րև զանարգ վատասիրտս. այլ յոյժ քա-
ջութեամբ անդէին զանձինս, զի Թերևս
կարասցեն փրկել զնոսա ի մեծամեծ հա-
րուածոյն:

Եւ իբրև հասին ի դուռն արքունի, ի
մեծի շաբաթու Զատկին յանդիման լի-
նէին Թագաւորին: Բայց Թէպէտ և տե-
սանէին զեղբարս իւրեանց ի մեծամեծ վիշ-
տս տառապանաց՝ որ վասն անուանն

Քրիստոսի ծնեալք էին ընդդալէս, ոչ ինչ տրտում եւ տխուր զերեսս ցուցանէին հրապարակին: Եւ որչափ նոքա դուարթագին երեւէին ամենեցուն՝ առաւել զարմանային չարաքէրքն:

Եւ զի օրէնք էին յառաջ ժամանակս, յորժամ ի Հայոց այրուձի ի դուռն երթայր, ի ձեռն պատուաւորի զօրագլխի ուրուք, այր ընդ առաջ յղէր, եւ հարցանէր զողջոյն եւ զխաղաղութիւն Հայոց աշխարհին, եւ երկիցս եւ երիցս անգամ զնոյն առնէր. եւ զհանդէս զնոցին իւրքնին տեսանէր թագաւորն եւ յառաջ քան զգործ պատերազմին հասանել զգալն իւր առ նա՝ մեծ ի շնորհակալութեան համարէր, եւ առաջի աթոռակցացն իւրոց եւ ամենայն մեծամեծացն՝ զօրութիւն մատուցանէր ամենեցուն, եւ մեծէր զնախնեացն զխոստակս, եւ զառն առն քաջութիւն պատմէր նոցա:

Իսկ այն օր ոչ մի ինչ յայսցանէ, ամենեւին ինչ ոչ մեծեաց. այլ իբրեւ ըզչարագէտ մի ոչ դադարէր յուզել եւ շարժել զբուք ձմեռայնոյ: Որպէս եւ նմանեալ իսկ էր ծովածուփ ալէկոծ խռովութեան, ոչ զուգնաքեայ վեր ի վերոյ, այլ անդատին

յանդնդոց բարձրանայր փրփրեալ կուտակեալ, եւ վիշապաձայն որոտալով, զազանաբար գոչելով առ հասարակ դողդուցանէր զտիեզերական իշխանութիւնն, որպէս թէ փլեալ տարածանիցի համատարած ամենայն ի վերայ լերանց, խորոց եւ ձորոց՝ ապականել միանգամայն զլայնութիւն դաշտացն վայելչութեան:

Մռնչելով բարբառ արձակեալ ասէ. «Երդուեալ իմ յարեգակն, ի մեծն աստուած — որ ճառագայթիւքն իւրովք լուսաւորէ զամենայն տիեզերս, եւ ջերմութեամբն կենդանածնէ զամենայն գոյացեալսն — եթէ ոչ վաղիւ ընդ առաւօտն, ընդ երեւումն աքանչելոյն, ընդ իս զվերաքանչիր ծունր նմա ոչ կրկնեսջիք՝ խոստովանելով զնա աստուած, ոչ ինչ թողացուցից ձեզ՝ զամենայն անգթութիւնս չարչարանացն ի վերայ ածելով, մինչեւ ակամայ կատարիցէք զկամս հրամանաց իմոց»:

Իսկ հաւատացեալքն հաստատեալք ի Քրիստոս՝ ոչ ի սառնամանեաց ձմերայնոյն հողմնայնին, եւ ոչ ի սաստիկ խորշակին ջեռնուին, եւ ոչ յահագին ձայնէն սաստկին, եւ ոչ ի սպառնալեաց տանջանացն

Քրիստոսի ծնեալք էին սնդապէս, ոչ ինչ տրտում եւ տխուր զերեսս ցուցանէին Հրապարակին: Եւ որչափ նոքա դուարթագին երեւէին ամենեցուն՝ առաւել զարմանային չարչարիչքն:

Եւ զի օրէնք էին յառաջ ժամանակաւ, յորժամ ի Հայոց այրուձի ի դուռն երթայր, ի ձեռն պատուաւորի զօրագլխի ուրուք, այր ընդ առաջ յղէր, եւ հարցանէր զողջոյն եւ զխաղաղութիւն Հայոց աշխարհին, եւ երկիցս եւ երիցս անգամ զնոյն առնէր. և զհանդէս զնդին ինքնին տեսանէր թագաւորն եւ յառաջ քան զգործ պատերազմին հասանել զգալն իւր առ նա՝ մեծի շնորհակալութեան համարէր, եւ առաջի աթոռակացն իւրոց եւ ամենայն մեծամեծացն՝ գովութիւն մատուցանէր ամենեցուն, եւ յիշէր զնախնեացն զվաստակս, եւ զառն առն քաջութիւն պատմէր նոցա:

Իսկ այն օր ոչ մի ինչ յայտնեաց, ամենեւին ինչ ոչ յիշեաց. այլ իբրեւ ըզչարագէ մի ոչ դադարէր յուզել եւ շարժել զռուք ձմերայնոյ: Որպէս և նմանեալ իսկ էր ծովածուփ ալէկոծ խռովութեան, ոչ զուգնաքեայ վեր ի վերոյ, այլ անդստին

յանդնդոց բարձրանայր փրփրեալ կուտակեալ, եւ վիշապաձայն որոտալով, գազանաբար գոչելով առ հասարակ, դող ցուցանէր զոխեղերական իշխանութիւնն, որպէս թէ փլեալ տարածանիցի համատարած ամենայն ի վերայ լերանց, խորոց եւ ձորոց՝ ապականել միանգամայն զլայնութիւն դաշտայն վայելչութեան:

Մանչելով բարբառ արձակեալ և ասէ. «Երդուեալ իմ յարեգակն, ի մեծն աստուած — որ ճառագայթիւքն իւրովք լուսաւորէ զամենայն տիեզերս, եւ ջերմութեամբն կենդանածնէ զամենայն գոյացեալսն — եթէ ոչ վաղիւ ընդ առաւօտս, ընդ երեւումն աքանչելւոյն, ընդ իս զիւրաքանչիւր ծունր նմա ոչ կրկնեսջիք՝ խոստովանելով զնա աստուած, ոչ ինչ թողացուցից ձեզ՝ զամենայն նեղութիւնս չարչարանացն ի վերայ ածելով, մինչեւ ակամայ կատարիցէք զկամս հրամանաց իմոց»:

Իսկ հաւատացեալքն հաստատեալք ի Քրիստոս՝ ոչ ի սառնամանեաց ձմերայնոյն հովանային, և ոչ ի սաստիկ խորշակին ջեռնուին, և ոչ յահագին ձայնէն սարսէին, և ոչ ի սպառնալեաց տանջանացն

զանգիտէին. այլ ի վեր հայեցեալք զզօրութիւնն Քրիստոսի յօգնութիւն նկեալ տեսանէին. և զուարթագին դիմօք և համեստ բանիւք յառաջ մատուցեալ՝ տային պատասխանի թագաւորին.

«Խնդրեմք ի քէն, արքայ քաջ, ունկն դիր սակաւ բանից մերոց, և քաղցրութեամբ լուիցես զոր ասելոց եմք:

«Քանզի յիշեցուցանեմք քեզ զժամանակն Շապհոյ արքայից արքայի, որ էր հայր հաւուն քո Յազկերտի. և ետ նմա Աստուած զերկիրն Հայոց ի ժառանգութիւն տուեալ օրինօք որով և մեք իսկ վարիմք այժմ, և հարքն մեր և հարք հարցըն մերոց կային նմա ի ծառայութեան վաստակս, և սիրով կատարէին զամենայն հրաման բանի նորա, և բազում անգամ ի նմանէ մեծապարգևք ելանէին: Եւ յայնց ժամանակաց մինչև ի քո հայրենի աթոռդ՝ և մեք զնոյն ծառայութիւն ծառայեցաք. բայց թերևս քեզ լաւագոյն քան զառաջնոցն»:

Զայս ասելով ցուցանէին զքաջութիւն արութեանցն լաւագոյն քան զառաջնոյն ըստ զինուորութեան կարգի: Իսկ զմոլից և

զնակից, և որ այլ ևս էին հարկ աշխարհին, բազմագոյն քան առ հարբն նորա երթայր յարքունիս:

«Նա և ի սուրբ եկեղեցւոյն, որ էր ազատ ի Քրիստոս ըստ կարգի նախնեացն մերոց ի սկզբանէ, և դու ընդ հարկաւ եդիր. և մեք առ սէր քոյոյ տէրութեանդ ոչ ինչ ընդդիմացաք քեզ: Արդ վասն է՞ր յուզեալ իցէ ցասումնս այս ի վերայ մեր. ասա դու մեզ զպատճառս վնասուն. եթէ օրէ՞նքն մեր պատճառք իցեն անվաստակ լինելոյ առաջի քո»:

Իսկ չարադեն լի ամենայն նենգութեամբ՝ զերեսս ի մի կոյս դարձուցեալ և ասէ. «Վնաս համարիմ ընդունել ի գանձ արքունի զհարկս աշխարհին ձերոյ, և անօգուտ զքաջութիւն արութեան ձերոյ. քանզի աղխտաբար մոլորեալ էք ի ճշմարիտ օրինացս մերոց, և զաստուածս անարգէք և զկրակ սպանանէք և զջուրս պղծէք, և զմեռեալս ի հող թաղելով զերկիր ապականէք, և քրտիկար չառնելով ուժ տայք Հարամանոյ. և որ մեծ քան զամենայն՝ զի հանապազ ի կանայս ոչ մերձենայք. և մեծապէս լինի գլուխ խըն-

գութիւն, չխրատելով ձեր և չպահելով
զամենայն կարգս մոգաց: Տեսանեմ զձեզ
իբրև զխաշինս ցրուեալս և փարատեալս
յանապատի, և յոյժ զեղջ է մտաց իմոց՝ թէ
գուցէ աստուածքն բարկացեալ վասն ձեր՝
ի մէնջ վրէժս առնուցուն: Այլ դուք եթէ
կամիք կեալ և կեցուցանել զանձինս ձեր,
և մեծարանօք անդրէն յուղարկել, զոր
առաջի վաղն վաղվաղակի կատարեցէք»:

Յայնժամ երանելի նախարարքն առ
հասարակ զձայնս իւրեանց բարձին և ա-
սեն յանդիման ամենեցուն. «Մի՛ դու, ար-
քայ, և մի՛ զայդ այլ ևս առ մեզ ասեր.
քանզի ոչ է եկեղեցի շինուած մարդոյ, և
ոչ տուրք արեգական, որպէս դուդ այլ ընդ
այլոյ կարծես՝ թէ աստուած իցէ. ոչ մի-
այն զի աստուած չէ, այլ և կենդանի չէ:
Այլ եկեղեցիք ոչ են պարգևք թագաւո-
րաց, և ոչ արուեստ ճարտարութեանց, և
ոչ գիւտք իմաստնոց, և ոչ աւար քա-
ջութեան զինուորաց, և ոչ պատիր խա-
բէութիւնք դիւաց. նա և ընաւ իսկ ա-
մենևին զինչ և ասասցես յերկրաւորացս,
կամ ի վեհից կամ ի փառթարաց, ընա-
ւորեք եկեղեցի ի նոցանէ ոչ գոցի: Այլ

շնորհք են մեծին Աստուծոյ, ոչ միում
ումեք ի մարդկանէ տուեալ, այլ ամենայն
բանաւոր ազգաց որք վիճակեալք են ի բնա-
կութիւն ի ներքոյ արեգականս: Հիմունք
նորա եղեալ են ի վերայ հաստատուն վիմի.
ոչ ներքինք շարժել կարեն, և ոչ վերինք
դրդուեցուցանել: Եւ զոր երկինք և երկիր
ոչ դողացուցանէ՝ մի՛ ոք ի մարդկանէ խը-
րոխտացի յաղթել նմա: Զա՛յս, որով
օրինակաւ զինչ կամիս առնել՝ կատարեա.
պատրաստ եմք ամենեքեան առ ամենայն
մեքենայս հարուածոցն տանջանաց զոր ըն-
պառնացար. ոչ միայն ի չարչարել՝ այլ և
ի մեռանել: Եւ եթէ դարձեալ ևս զնոյն
բանս հարցանես՝ ի միջէ միջէ լուիցես
առաւել քան զդոյն պատասխանիս:

Յայնժամ դառնացեալ քան զլեղի թա-
գաւորն՝ փլուզանէր անդէն ի փորին զծով
կամաւոր մաղձոյն իւրոյ. և ընդ քիթսն և
ընդ բերանն առ հասարակ զոլոշն ջերմա-
խառն ելանէր, իբրև ի սաստիկ հնոցէ
ծուխ թանձրացեալ: Եւ առ չհանդար-
ժել սրտին իւրոյ՝ կոտորէր զզօրութիւնս
մարմնոյն, և ծակոտէր զբազմամեթեր անձն
խորհրդոյն, ցրուէր և փանէր զամենայն

խորհումն նենգութեան: Եւ զոր ոչ երբէք կամէր իւրոց սիրելեացն յայտնել՝ ակամայ առաջի ծառայիցն Քրիստոսի մերկանայր և դնէր զամենայն կարգաւ:

Երեքկնէր և չորեքկնէր զսնոտա երդումն յարեգակն, և ասէր այսպէս. «Ոչ կարէք ուրել զանխար ամուրս իմ, և ոչ որում ցանկացեալդ էք՝ փաղփաղուկ տամ դառնել ձեզ. այլ զամենեսեան զձեզ և որ ի գնդիս են՝ չարաչար կապանօք ի Սագաստան տամ անցուցանել ընդ անճանապարհ տեղիս, որ և բազումք ի ձէնջ ի խորշակէ յերթալն սատակեսցին, և մնացեալքն անկցին ի բերդս ամուրս և ի բանդս անելս: Եւ ի ձեր աշխարհն առաքեցից զօրս անթիւս հանդերձ փղօք, և զկին և զորդիս ի Խուժաստան տամ խաղացուցանել. և զեկեղեցիս, և զոր անուանէք վկայարանս՝ քակեցից, քանդեցից և յապականութիւն դարձուցից. և եթէ ոք ընդդէմ դարձեալ գացէ՝ կոխան եղեալ գազանաց անողորմ մեռանիցի: Եւ զամենայն սասցեալս արարից և կատարեցից առ մնացորդս աշխարհին»:

Եւ փաղփաղակի հրամայէր զպատուա-

կան նախարարսն հանել մեծաւ անարգանօք յերեսաց իւրոց. և զզուշութեամբ հրաման տուեալ դահճապետին՝ առանց կապանաց յիւրաքանչիւր վանս պահել, և ինքն զառածեալ անդրէն դառնայր անմխիթար տրտմութեամբ յօթևանսն անկանէր:

Իսկ հաւատացեալքն ճշմարտութեամբ ի Քրիստոս՝ ոչ ինչ երկմտութեամբ թերահաւատէին յառաջին խրատուէ սուրբ վարդապետացն իւրեանց. այլ տակաւին խընդրէին հնարս իրացն, թէ որպէս զանձինս և զսիրելիս հանցեն ի մեծ նեղութենէն: Եւ բազում անգամ ջանալով, և մեծամեծացն որ օգնականք էին նոցա ի Դրանն արքունի՝ խոստմունս մեծամեծս առաջի դնէին առ ի յոյս կարասւոյ, և ոչ ստկազանձս առ ժամայն ծախէին նոցա:

Եւ իբրև յամենայն կողմանց եկն փակեցաւ անել արգելան նոցա, յայնժամ զխորհուրդն Աբրահամու ի մէջ առեալ՝ աղաղակէին և ասէին ի սիրտս իւրեանց. «Ամենեցուն մեր նուիրեալ և եդեալ զեղբարս և զորդիս և զամենայն սիրելիս ընդ կապանօք իբրև զՍահակ ի վերայ սուրբ

սեպհնոյն, ընկալ, Տէր, զկամաւոր պատարագս մեր, և մի՛ տար զեկեղեցի քո յայպն կատականաց անօրէն իշխանիս այսորիկ»:

Մի ոմն ներքինի ի խորհրդակցացն արքայի ի ծածուկ ունէր զանքակ սէրն ի Քրիստոս—քանզի մկրտեալ իսկ էր յաւազանն կենդանի—և մեծապէս հոգ տանէր հնարից կենաց փչացելոցն: Եւ իբրև ստուգեաց ճշմարտիւ, եթէ զոր բազում սպառնացաւ թագաւորն չարիս՝ զամենայն կամի անցուցանել ընդ աշխարհն Հայոց, թէպէտ և ոչ ամենեցուն՝ այլ սակաւուց ի նոցանէ խրատ ետ և ուսոյց ելս հնարից, զի առ անգամ մի ի նեղութենէ անտի զանձինս ապրեցուսցեն:

Եւ մինչդեռ զունդ կազմէին՝ որ զնոսա շկօթակ արասցեն յանդարձ օտարութիւն—որպէս զբազում նախարարսն ի Վրաց աշխարհէն տարեալ—ի նմին ժամանակի դուժկան հասանէր ի կողմանցն Քուշանաց՝ եթէ զունդ հասաւ ի թշնամեացն, որ ելին աւերեցին զգաւառս բազումս արքունի: Եւ այս լինէր մեծ օգնականութիւն նոցա յերկնից: Եւ անօրէնն ճեպեալ տագնապէր զայրուձին յառաջ արձակեալ, և

ինքն փութայր ստիպաւ զհետ երթալ. և ի խոր խոցեալ ի խորհուրդն՝ ցրուէր զառաջին հաստատուն երդումն:

Իսկ երկեւղածացն Տեառն զայս տեսեալ՝ մեծաւ յուսով աղօթելով ասէին միաբան. «Դու Տէր ամենայնի, որ գիտես զծածկեալս սրտից մարդկան, և յայտնի են առաջի քո ամենայն աներևոյթք խորհրդոց, և ոչ ինչ խնդրես վկայութիւն յերևելեաց. որպէս զի և զանգործս մեր տեսին աչք քո. արդ առաջի քո հեղումք զխնդրուածս մեր: Ընկալ, Տէր, զծածկութիւն աղօթից մերոց, և կատարեա զմեզ ի հաճոյս պատուիրանաց քոց, զի ամաչեսցէ չարն որ խրոխտացեալ մարտնչի ընդ մեզ իշխանութեամբ անօրինին: Ցրուեա, Տէր, զկամակոր խորհուրդս նենգաւորին, և խափանեսցես զկամս ամբարշտութեան նորա, և դարձո զմեզ խաղաղութեամբ խորհրդոցն անդրէն ի սուրբ եկեղեցին. զի մի՛ յանկարծակի յափշտակեալ աւերեսցի չարաչար ի թշնամեաց»:

Եւ անձամբք իւրեանց զայս ուխտ եդեալ անքակութեամբ ընդ Աստուծոյ, զի հաստատուն կացցեն ըստ առաջին խորհըր-

դոյն, պատգամ ի ներքս յղէին զնոյն խրատուն իւրեանց, իբր թէ կատարեսցին կամք անօրէնութեան նորա:

Զայն իբրև լուաւ Թագաւորն՝ յոյժ ցնծացեալ բերկրեցաւ, կարծեցեալ զգիւտ հասանել նմա յօգնականութիւն, շրջեալ և աւերեալ զհաստատուն խորհուրդս ծառայիցն Աստուծոյ. զի ահա մատուցանեն երկրպագութիւն արեգական, պատուեալ զնա զոհիւք և ամենայն օրինօք մոլութեանն:

Եւ զայն ոչ կարաց իմանալ ցնորեալն՝ եթէ անստուեր լոյսն արեգականն արդարութեան ապաւէր և մաշէր զխաւարային խորհուրդս նորա, և եղծեալ ապականէին ամենայն խեղաթիւր կամք նորա: Եւ կուրացեալ ի ճշմարտին յայտնութենէ՝ ոչ ինչ իմացաւ զպատրանս խաբէութեանն որով վրիպեցն: Հեղոյր արկանէր առաջի նոցա զպարգևս երկրաւորս, և վերստին ամենեցուն զպատիւս և զգահս նորոգէր, յառաջ մատուցանելով և երևելի առնելով ընդ ամենայն տիեզերական իշխանութիւնն: Եւ անբաւ առատութեամբ ազարակս և աւանս միում միում նոցա յարքունուստ

շնորհէր. սիրելիս և բարեկամս կարդայր զնոսա, և առ հպարտ յանդգնութեան մտացն կամակորութեան՝ կարծէր եթէ փոխանակեսցէ ճշմարտութիւնն ընդ ստութեան:

Եւ զայս արարեալ, բազում պրուձի գումարէր ընդ նոսա, և ի մոգուցն ոչ սակաւս, աւելի քան զեւթն հարիւր վարդապետս յղէր ընդ նոսա, և զմեծ ոմն իշխան մոգպետ կացուցանէր ի վերայ նոցա: Խոնարհէր և աղաչէր պատուիրելով, թէ մինչ ես ի պատերազմէս դարձեալ գայցեմ խաղաղութեամբ, ձեր արարեալ և կատարեալ իցէ զամենայն ըստ կամաց իմոց: Եւ այսպէս շքով և պատուով առաջնորդէր նոցա զերկայնութիւն ճանապարհին անդրէն յերկիրն Հայոց: Եւ ինքն աւետիս խնդալիս առաքէր յատրուշանս բազում, գրէր և ցուցանէր մոգաց և մոգպետաց և ամենայն մեծամեծաց կողմանց կողմանց աշխարհաց՝ որպէս զիցն օգնականութեամբ զգործ քաջութեան իմոյ յառաջ մատուցեալ:

Իսկ խոհեմականքն այնուհետև յարուցեալ յիւրաքանչիւր խաւարային դարա-

նաց՝ խղճ լինէին վաղվաղակի զհրամանն կատարել. ձայն արարեալ յաշխարհս հեռաւորս՝ միանգամայն խաղալ գնալ յերկիրն արեւմտից: Եւ մինչ չեւ հասեալ էին ի մեծ յաշխարհն Հայոց, փայտ ընկենուին եւ վիճակս արկանէին, թէ ո՛ր լեզու որում դասու հասցէ յաշակերտութիւն: Զի առհասարակ հրաման առեալ էր յարքունուստ, որպէս Հայոց աշխարհին՝ նոյնպէս եւ Վրաց եւ Աղուանից եւ Լփնաց, Աղձնեաց եւ Կորդուաց եւ Ծօդէից եւ Դասան եւ որ այլ եւս ուրեք ուրեք ի ծածուկ յիշխանութեանն Պարսից ունէին զքրիստոնէութիւն:

Եւ անզգայ յարձակմամբ յաւարի առնուլ փութային զգանձս սուրբ եկեղեցեացն. եւ իբրեւ զդեւս այնուհետեւ առ միմեանս հասանէին: Եւ լինէր դունդ զօրաց բազմաց, եւ չարասէրն սատանայ իբրեւ զօրավար ի մէջ նոցա երեւէր, եւ անդադար յորդորելով զամենեսեան ճեպեալ փութացուցանէր: Կէտ եդեալ զժամանակն՝ զամիսն վեցերորդ, տագնապէին եւ ստիպէին արքունի հրամանաւ:

«Մինչեւ ի Նաւասարդէ ի Նաւասարդ, ամէ, յամենայն տեղիս՝ որ իցեն ընդ իշխանութեամբ թագաւորին մեծի, բարձցին կարգք եկեղեցւոյ, փակեսցին եւ կնքեսցին դրունք սուրբ տաճարացն, զրով համարով առցին նուիրեալ սպասքն յարքունիս, լռեսցեն ձայնք սաղմոսացն եւ դադարեսցեն ընթերցուածք անսուտ մարգարէիցն: Քահանայք մի՛ իշխեսցեն ի տունս իւրեանց ուսուցանել զժողովուրդս, եւ հաւատացեալքն ի Քրիստոս՝ արք եւ կանայք, որ բնակեալ են յիւրաքանչիւր մենանոցս, փոխեսցեն զհանդերձս իւրեանց ըստ աշխարհական կարգաց:

«Դարձեալ եւ կանայք նախարարացն կալցին զուսումն վարդապետութեան մոգացն: Ուստերք եւ դստերք ազատաց եւ շինականաց՝ կրթեսցին ի հրապարակս նոցուն մոգաց: Կարճեսցին եւ արգելցին օրէնք սուրբ ամուսնութեան զոր ունէին ի նախնեաց ըստ կարգի քրիստոնէութեանն. այլ փոխանակ ընդ կնոջ միոյ՝ բազում կանայս արասցեն. զի աճեսցեն բազմասցին ազգք Հայոց: Դստերք՝ հարանց լինիցին, եւ քորք՝ եղբարց. մարք մի՛ ելցեն յորդւոց, այլ եւ թոռունք ելցեն յանկողինս հաւուց:

«Պատրուճակք մի՛ մեռցին անյաղ, եթէ յօղեաց լիցէ և եթէ յայծեաց և եթէ յարջառոց և եթէ ի հաւուց և եթէ ի խոզաց: Հայսք առանց փանդամի մի՛ զանգցին. ծիրտք և քակորք ի կրակ մի՛ նկեսցեն. ձեռք առանց գումիզոյ մի՛ լուասցին. ընջրիք և աղուէսք և նապաստակք մի՛ մեռցին: Օձք և մողէսք, գորտք և մրջմունք, և որ այլ ևս խառնամինդոր բազմածձիք են՝ մի՛ կացցեն. այլ վաղ թուով համարով ի մէջ բերցին ըստ արքունի չափոյն: Եւ որ այլ ևս ինչ սպասք իցեն, կամ զոհից կամ սպանդից, ըստ տօնական կարգին՝ տարևոր թուականին, և ըստ կապճաթիւ մոխրաչափ կարգին:

«Զայս ամենայն որ ասացաք՝ առ ժամանակ մի մինչև ի գլուխ տարւոյ կատարեսցեն ամենեքեան. և զայլն ամենայն առ յապա պատրաստեսցեն»:

Իսկ զայս ամենայն հրաման պատուիրանաց առեալ մոգացն և մոգպետաց, զտիւ և զգիշեր փութային հասանել յաշխարհն Հայոց. և առ յոյժ խնդութեանն ոչ երբէք յագէին երկայնութեամբ ճանապարհին:

ԵՐՐՈՐԴ ՑԵՂԱՆԱԿ

ՎԱՍՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ

Թէպէտ և ոչ իցեմք բաւական ասել զամենայն չարիսն որ անցին անդէն ի կարաւանին ընդ զունդն Հայոց, սակայն և ոչ լռել կամիմք ծածկելով զվիշտս նեղութեանն. այլ ասասցուք փոքր ի շատէ, զի ձայնակիցք լիցուք այնոցիկ որք դառնապէս զմեզն ողբայցեն. զի և դու իբրև լուիցես՝ ոչ սակաւ արտասուս հեղուցուս ի վերայ ազգին թշուառութեան:

Զի ահա անդէն ի մեծ բանակին Պարսից՝ յազգաց ազգաց որք էին հաւատացեալ ի սուրբ աւետարանն Քրիստոսի, իբրև տեսին զչար յանձնառութիւնն Հայոց,

յայժ հարան ի միտս իւրեանց, և կործանեցան անկան ի վերայ դիմաց իւրեանց: Բազումք ի նոցանէ թաղծեալ ի սուգ ծանրութեան, հարեալ յոգիս և դառնացեալ յարտասուս, եկին և յանդիմանեցին ըզնախարարեանն, և յայժ գործեցին զուխտ քահանայութեանն:

Զգուշէին զամենեսեան և ասէին. «Զի՞ առնիցէք զսուրբ կտակարանսդ, և կամ յո՞ տանիցիք զպաս տէրունեան սեղանոյն. մոռանայցէ՞ք արդեւք զհոգեւոր օրհնութիւնսդ, և կամ լռեալ դադարիցէ՞ք ի մարգարէական ձայնիցդ: Կափուցէք զաչս յընթերցուածոյ, և խցէ՞ք զականջս ի լսելոյ. միթէ զմնացդ անմոռացութիւն ո՞չ յիշիցէք: Զի՞նչ առնիցէք զպատուիրեալն ի Տեառնէ. «Որ ուրասցի զիս առաջի մարդկան՝ յուրաստ եղէց և ես առաջի Հօր իմոյ որ յերկինս է, և հրեշտակաց սրբոց»:

«Վարդապետք էիք առաքելական քարոզութեանդ. արդ աշակե՞րտք լինիցիք մոլար խաբէութեանն: Ուսուցիչք էիք ճըշմարտութեանն, արդ ուսուցանիցէ՞ք զպատիր խաբէութիւն մոգաց: Քարոզք էիք արարչական զօրութեանն, արդ զտարերս

աստուա՞ծս խոստովանիք: Յանդիմանիչք էիք ստութեան, արդ և քան զսուտ ստագո՞յնք լինիցիք: Ի հուր և ի հողի էիք մկրտեալք, արդ ի մոխիր և յաճի՞ւն թաթաւիցիք. կենդանի մարմնով և անմահ արեամբ էիք սնեալ, արդ ի ճենճե՞ր զոհից և ի շարաւս աղտեղի՞ս մրճոտիցիք: Տաճար էիք Հոգւոյն սրբոյ, արդ զդահարան դիւա՞ց լինիցիք. քրիստոսազգեացք էիք ի մանկութենէ, արդ մերկացեալք ի փառացն՝ զիւաբար արեգակա՞ն կաքաւիցէք:

«Ժառանգ էիք արքայութեանն, արդ անձամբ զանձինս արարէք ժառանգ գեհենին: Նոցա է պատրաստեալ հուրն անշէջ, ընդէ՞ր դուք ընդ նոսա այրեցեալ տոչորիցիք. նոցա պատրաստ որդն անմահ, իսկ արդ դո՞ւք պատարիցէք զմարմինս ձեր նմա ի կերակուր. խաւարն արտաքին նոցա թանձրացեալ պահի, դուք լուսազգեստք՝ ընդէ՞ր յուղարկիցայք ընդ նոսա ի նոյն խաւար: Նոցա էր փորեալ զխորխորատն, դուք ընդէ՞ր լցէք յառաջագոյն. նոքա ի վաղնջուց հետէ էին իսկ կուրացեալք, դուք զի՞արդ զկնի կուրացն կուրացարուք: Ո՞րք ուսանիցիք զապականթիւ անուանս աստուածոցն նոցա,

այն որ չէք ուրեք ի միջի և ոչ մի: Թեթևացեալք ի ծանր բեռանց՝ անձամբ անձին առէք բեռն ծանրութեան. ապատեալք ի մանկութենէ՝ չարաչար մտէք յանազատելի ծառայութիւնն:

«Եթէ գիտէիք և երևէր ձեզ յայտնի, սուգ առեալ երկինք ի վերայ ձեր, և Թաղծեցաւ երկիր ի ներքոյ ոտից ձերոց: Հրեշտակք ի վերուստ են ձեզ բարկացեալք, և ի յերկրէս մարտիրոսքն են ձեզ ցասուցեալք: Ողորմի՛մ ողորմիմ սիրելեաց ձերոց, և բազում անգամ ողորմիմ անձանց ձերոց: Զի Թէ մարդոյ փրկեալ էր զձեզ ի ծառայութենէ, և դուք անձամբ զանձինս այլում ի ծառայութիւն արկանէիք, ի մեծ բարկութիւն բրդէիք զառաջին տէրն ձեր. իսկ արդ զի՞նչ առնիցէք զաստուածաստատ հրամանն. «Ես եմ Աստուած, և չիք այլ ոք բաց յինէն, և ոչ ղնի իմ այլ ոք լիցի Աստուած. Աստուած նախանձոտ եմ ես, հատուցանեմ զմեղս հարց յորդիս մինչև յեւԹն դարս»: Իսկ եԹէ որդիքն արդարք՝ վասն հարցն մեղաց ընդունին զպատուհասն, իսկ յորժամ ինքեանք որդիքն իսկ մեղիցեն, ո՞չ ահա մի-

անգամայն զանձանց և զհարց տայցեն ի միասին:

«Դուք էիք մեր ամուր պարիսպ ապաւանի. յորժամ աստի վտանգ հասանէր՝ առ ձեզ յանդորր եղանէաք. արդ մեծ ամուրդ այդ հիմն ի վեր տապալեցաւ: Դուք էիք մեր պարծանս առ Թշնամիսն ճշմարտուԹեան, արդ դուք էք մեր նախատինք առ նոյն Թշնամիս: Ցայժմ վասն ձերոյ ճշմարիտ հաւատոցն և ի մեզ փոքր ի շատէ խնայէին. և արդ ի պատճառս ձեր և զմեզ անողորմ դատին: Ոչ միայն զանձանց դատաստան տալոց էք առաջի ահեղ ատենին Աստուծոյ, այլ և բազմաց ամենեցուն՝ որ ի ձեր պատճառս և զնոսա ևս չարչարեսցեն»:

Զայս և առաւել քան զայն խօսեցան ընդ մեծամեծս աւագանւոյն, և յաւելին ցաւս ի վերայ ցաւոց: Ցայտնել և ցուցանել նոցա զխորհուրդն ոչ կամէին, լռել և չառնել պատասխանի անհնար էր. հեղձամղձուկ եղեալ մեծապէս յարտասուս հարկանէին: Ընդ նոսին դառնացեալ լըսողք և տեսողք յանմխիԹար սուգ լինէին ամենեքեան:

Յայնմ ժամանակի քահանայքն որ անդէն ի զօրուն էին, առ չժուժալ սրտիցն բարկութեան՝ քակեալ որոշեցան ի նախարարացն և յամենայն բազմութենէն. և զմի ոմն դեսպան ձիով առաքեցին փութապէս յաշխարհն Հայոց: Գոյժ ի բերան առեալ և զօձիս պատառեալ, հասեալ ի ժողովս եպիսկոպոսացն, մեծապէս յարտասուս հարեալ, կայր և պատմէր զամենայն անցս չարչարանացն. այլ ոչ յայտնէր նոցա զծածկութիւն խորհրդոցն:

Յայնմ ժամանակի սփռեցան եպիսկոպոսքն յիւրաքանչիւր իշխանութիւնս, և առաքեցին զքորեպիսկոպոսս ի գեօղս և յագարակս և ի բազում ամուրս լեռնային գաւառացն: Դրդեցին ժողովեցին զբազմութիւն արանց և կանանց, շինականաց և ազատաց, զքահանայից և զմենակեցաց. խրատ եդին, պնդեցին և արարին զամենեսեան զինուորս Քրիստոսի:

Եւ յառաջին բան խորհրդին այս հաստատեցաւ. «Ձեռն եղբօր հարազատի ի մերձաւոր իւր լիցի՝ որ անցեալ իցէ ըստ ուխտ պատուիրանին Աստուծոյ. և մի՛ խնայեսցէ հայր յորդի, և մի՛ ակն առնուցու որդի հօր պատուոյն: Կին կռուեսցի ընդ առն ամուսնոյ, և ծառայ դարձցի ընդդէմ տեառն իւրոյ: Օրէնք աստուածային կացցեն թագաւոր ի վերայ ամենայնի, և ի նմին օրինաց ընկալցին յանցաւորք զպատիժս դատապարտութեան»:

Եւ իբրև այս այսպէս հաստատեցաւ կարգեցաւ, երևեցան ամենեքեան զինեալք և սաղաւարտեալք, սուր ընդ մէջ և վահան ի ձեռին՝ ոչ միայն արանց քաջաց, այլ և կանանց առնականաց:

Իսկ գունդն Հայոց ամենայն օգնականօքն հանդերձ և մեծաւ բազմութեամբ՝ յամսեանն չորրորդի եկին հասին յաշխարհն Հայոց, ի գիւղաքաղաք մի մեծ՝ որում անուն էր Անգղ: Բանակեցան, բոլորեցան, զետեղեցան, և յամենայն կողմանց անդր ժողովեցան, և էին անթիւ բազմութիւն:

Եւ եղև յետ աւուրց քսան և հնգից, մոգպետն ինքնին մոգօքն հանդերձ հասանէր մեծաւ զօրութեամբ՝ քակել զդրունս եկեղեցեաց յաւուր միաշաբաթուն. զվերջ առնուլ կամէր զառաջարկութեան գործոյն: Իսկ սուրբն Ղեւոնդ երէց միաբանութեամբ առաջին խորհրդակցօքն և բազում

ուխտին ի տեղւոջ անդ պատրաստական դիպեցաւ, ոչ ետ թոյլ: Թէպէտ և ոչ էր տեղեկագոյն մնաց ամենեցուն նախարարացն, և ոչ զօրութեան ուժոյ մոգպետին, ոչ ինչ եկաց մնաց ամենայն եպիսկոպոսացն, և ոչ առ սակաւ մի համբեր անօրէն իշխանին թողացուցանել. այլ բազում աղմուկ աղաղակի զօրացն և մոգաց հասուցանէր: Քանզի վիրգս ի ձեռն առեալ՝ զկառափունս մոգացն և մոգպետին ջարդեցին. փախստական յիւրաքանչիւր վանս արկանէին, և ինքեանք զպաշտօնն բարձրացուցեալ յեկեղեցւոջն՝ զտէրունական կանոնն կատարէին, մինչև յերեկոյն միաշաբաթին անդադար լինելով:

Եւ յետ այսր տագնապի խռովութեան՝ յամենայն կողմանց յաշխարհէն Հայոց բազմութիւն արանց և կանանց ի տեղին հասանէին: Եւ անդ էր տեսանել զմեծ աղէտ տարակուսին. ոմանք զգերարտօսր արձակելով իբր յողբերականց հոսէին յաչաց իւրեանց. այլք բարձրաձայն աղաղակաւ՝ իբր այն թէ զերկինս դողացուցանէին, իսկ կէսքն խիզախելով և ի գէնս ընթանալով՝ զմահ քան զկեանս ընտրէին:

Իսկ ոմանք ի սուրբ ուխտէ եկեղեցւոյն՝ զաւետարանն ի ձեռն առեալ, աղօթիւք առ Աստուած կարդային. և այլք ըղձանային զպատառումն երկրին՝ զի անձանց լիցի գերեզման: Եւ այսպէս շտապ տագնապի ի վերայ մոգպետին հասուցանէին: Բազում անգամ աղաչէր զօգնականսն իւր, զի ի մահուանէ կարասցեն զնա ապրեցուցանել, և ողջանդամ անդէն յարքունիս հասուցանել:

Այլ վասն գործոյն յոր եկեալն էր՝ ըստիպէր զնոսա և ասէր. «Թող զրեմ և ցուցանեմ մեծ թագաւորին, զի ի բաց թողացուցանէ զայսպիսի իրաց առաջարկութիւն. զի եթէ և ինքեանք աստուածքըն եկեսցեն յօգնութիւն, չէ հնար օրինացս մոգութեան ի Հայս առնուլ զհաստատութիւն. որպէս զփորձ առի զմիաբանութեան ուխտին եկեղեցւոյ: Զի թէ էին զօրք աշխարհիս մոգք, ոչ ինչ խնայէին սոքա ի նոսա սատակմամբ՝ ոչ միայն զարտաքինսն, այլ և յեղբարս և յորդիս և յամենայն մերձաւորս իւրեանց, նաև ոչ յանձինս իւրեանց: Մարդք որ ոչ ի կապանաց զանգիտեն, և ոչ ի տանջանաց երկնչին, և ոչ ի ստացուածոց պատ-

կամքն, և որ յետին չար է քան զամենայն չարիս՝ զմահ քան զկեանս ընտրեն, ո՞վ է որ կարէ նոցա դիմակաց լինել:

«Լուեալ իսկ իմ էր ի նախնեաց մերոց, եթէ յաւուրս Շապհոյ արքայից արքայի, իբրև սկսաւ ուսումն այդ աճել և բազմանալ և լնուլ զամենայն երկիրն Պարսից, և ևս անդր յարևելս հասանել, որ վարդապետքն էին օրինացն մերոց՝ յորդորեցին զԹագաւորն, զի մի՛ ընդ ամենեսին բարձցին օրէնք մոգութեան յաշխարհէն. նա հրաման սաստիկ զի լռեալ դադարեսցէ քրիստոնէութիւն: Եւ որչափ նա կամեցաւ արգելուլ, եւս քան զեւս աճեցին և բազմացան, և հասին մինչև յաշխարհն Քուշանաց, և անտի ի հարաւակողմն մինչև ի Հնդիկս տարածեցան:

«Եւ այնպէս աներկեւղ և համարձակք էին յաշխարհին Պարսից, մինչև յամենայն քաղաքս աշխարհին եկեղեցի շինեցին՝ որ զանցուցանէր պայծառութեամբ զԹագաւորական արքունեօքն: Շինէին և վկայարանս իւրն անուանեալս, և զնոյն զարդ եկեղեցեաց զարդարէին, և յամենայն տեղիս յաւանս և յանապատս միայնանոցս

շինէին: Եւ իբրև ոչ ինչ երևէր յայտնի օգնութիւն ուստեք, աճելով աճէին և բազմանալով բազմանային, և մարմնաւոր մեծութեամբք մեծանային: Զպատճառս հարստութեանն մեք ինչ ոչ գիտէաք. բայց այսչափ ինչ ճշգրտիւ իմանայաք՝ զի ախեզերք ամենայն զկնի ուսմանց նոցա գնային:

«Թէպէտ և արկ ի նոսա Թագաւորն զձեռն իւր խստութեամբ, և զբազում կալաւ և չարչարեաց ի նոցանէ, և զեւս բազում մահուամբ սատակեաց, դառնացաւ և ձանձրացաւ յանձն իւր, և զնոսա ոչ կարաց նուազեցուցանել ի բազմութենէն: Դարձեալ Թէպէտ փակեաց և կնքեաց զդրունս եկեղեցեացն ընդ ամենայն աշխարհն Պարսից, նոքա զամենայն տուն եկեղեցի արարին, և յամենայն տեղւոջ զնքեանց օրէնսն կատարէին: Եւ զանձինս իւրաքանչիւր վկայարանս համարէին, և լաւագոյն զշինուածս մարդկեղէնս քան ըզհողեղէնսն հաշուէին: Սուրբ ապանոցացն ըթեցան, և նոցա պարտոցքն ոչ ձանձրացան. աւարառուք ստացուածոց նոցա աշխատեցան, և աւարն օր քան զօր աճեցեալ բազմացաւ: Տրտմեալ էր Թագա-

ւորն, և յոյժ դառնացեալ դահիճքն բարկութեան։ Իսկ նոքա արթունք և զուարթունք, և խնդալից ընդունէին զամենայն հարուածս տանջանացն, և սիրով տանէին զամենայն յափշտակութիւն ընչից իւրեանց։

«Իբրև ետես Թագաւորն եթէ զառհ տուեալ դիմեցին ի մահ Իբրև խաշինք սուրբք յաղն երկնաւոր, արգել և կարճեաց ի նոցանէ զհարուածս տանջանացն. և հրաման ետ մոգաց և մոգպետացն, զի մի՛ ամենևին ոք խուեսցէ զնոսա, այլ հաստատեալ կացցեն աներկիւղութեամբ յիւրաքանչիւր ուսմունս, մոգն և զանդիկն և հրեայն և քրիստոնեայն, և որ այլ բազում կեշտք են ի կողմանս կողմանս աշխարհին Պարսից. Եւ ապա առ երկիրն ըդխաղաղութիւն հաստատութեամբ, և լռեալ դադարեցին ամենայն խռովութիւնք յուզմանց։ Քանզի ընդ մերոյ աշխարհին շարժման՝ և արևմուտք ևս մեծապէս շարժեցան, և ամենայն տաճկաստան ընդ նոսին խռովեցան։

«Զայն ահա ի լսելոյ գիտեմք. բայց այս որ ես ինձէն աչօք տեսի, Թուի ինձ՝ թէ մեծագոյն ևս լինի քան զառաջինն։ Արդ

դու որ մարզպանդ ես աշխարհիս, պարտ է քեզ փոյթ յանձին ունել, գրել և ցուցանել յարքունիս զմիաբանութիւն բռնութեանս, որպէս աներկիւղութեամբ առ ոչինչ համարեցան զհրամանս արքունի։ Եւ եթէ չէր մեր աճապարեալ և ի փախուստ դարձեալ, միում ի մէնջ ոչ տային ապրել։ Եւ եթէ անզէն մարդիկ այսպէս բռնացան, եթէ յանկարծ զինուորս ևս ընդ ինքեանս միաբանեցուցանեն, ո՞ կարիցէ կալ առաջի դոցա յանդուգն յարձակմանդ։

«Եւ ահա անտեղեակ էի անքակ ուխտի եկեղեցւոյդ ի միմեանց. զի ա՛յլ է զոր լսէ մարդ, և այլ է զոր տեսանէ հաստատուն իւրովք աչօք։ Դու որ ի մանկութենէ յայդմ օրէնս սնեալ էիր, և ճշմարտեալ գիտէիր զպնդութիւն մարդկանդ, եթէ առանց բազում արեան հեղլոյ դոքա մեզ ոչ տան ձեռն արկանել յեկեղեցիսդ, ընդէ՞ր ոչ զայդ ամենայն հաւաստեաւ յանդիման չասացեր Թագաւորին։ Քանզի ամենայն նախարարացն աւագ դու էիր, և զբոլոր աշխարհս քեզ յանձն արարեալ էր մարզպանութեամբ. ընդէ՞ր ոչ մեծա-

պէս հոգ տարար յանձն քո: Զի յայլ ժամս իմաստուն էիր՝ և ես գիտէի. զայս ոչ իմաստութեամբ գործեցեր: Ապա թէ ոչ, յայտ է եթէ և դու ի նոցա բանի ես, և քոյով խորհրդով անցուցին զայս անցս ընդ իս և ընդ զօրս:

«Արդ եթէ այդ այդպէս է, և քեզ կամք չէ ունել զմոգութիւն, մի՛ ինչ պատկառեր դու երկիւղիւ յարքայէ. ես գրեմ և ցուցանեմ ի դուռն մովպետան մովպետի և դերանդարձապետի և մեծ հազարապետին, զի ածցեն զարքայ ի հաւանութիւն, որպէս զի ի բաց թողացուսցէ զառաջին հրամանին, և ի կամս մարդկան ապաստան արասցեն, զի առ սակաւ սակաւ ընդելցին ընդ օրէնս մոգութեան. զի որք կալցին սիրով երևեսցին կատարել զհրամանս արքունի: Քանզի մարդ է աշխարհս, գուցէ յորժամ զվնաս ինչ նոցա առնիցեն, և ինքեանք ցրուեալ վտանեսցին յօտարութիւն: Իսկ յորժամ աշխարհս թափուր լինիցի ի մարդկանէս, յայնժամ և քեզ գլխովին մեծապէս զվնաս հասանէ յարքունուստ»:

Ետ պատասխանի մարզպանն մոգպետին, և ասէ. «Ամենայն բանք խրատուդ զոր ասացեր՝ ճշմարիտ են. բայց զառաջինն զոր չիմացաք՝ տեսեր, և մեծապէս զղջացաք այժմ: Բայց դու արդ զոր ասեմ արա, և բարիոք թուեսցի քեզ. սակաւիկ մի երկայնամիտ լեր և զխորհուրդս քո արգել ի բազմաց. բայց արանց՝ որոց ես ասեմ՝ նոցա յայտնեա, մինչև ես ինձ ոյժ ժողովեցից՝ զօր ի թիկունս ածելոյ, և զուխտ եկեղեցւոյդ թերևս կարացից երկփեղկել: Եւ եթէ զայդ այդպէս արարից, գիտեմ ապա թէ և զհրամանն արքունի կարող եմ կատարել»:

Եւ անդէն հրոս հանեալ ի Սիւնեաց աշխարհէն, զիւր գունդն ստուարագոյն ի թիկունս օգնականութեան մոգաց և մոգպետին: Եւ ապա սկսաւ ասել. «Աղէ դու անգամ մի հրովարտակ ի դուռն տուր վասն այրուձիոյն որ յԱղուանն է տասն հազար, զի ի ձմերոց ի Հայս եկեսցեն. և յորժամ զնոսա ի ձեռին ունիցիմք՝ չիք ոք որ եղծանել կարէ զհրամանն արքունի»:

Պատասխանի ետ մոգպետն և ասէ ցմարզպանն. «Այդ խորհուրդ դարձեալ ի-

մոց բանիցս ընդդէմ է. քանզի մեք յոր-
ժամ բռնութեամբ կռուեսցուք ընդ աշ-
խարհիս, աշխարհս ի բաց քանդի, և մեք
ի պատուհասէ չապրիմք, անձանց վնաս, և
արքունի մեծապէս զեանս:

Եւ ոչ ինչ կամեցաւ ամենևին ունկն
դնել նմա մարզպանն, զի սրտի մտօք կա-
լեալ էր զպարսկական օրէնսն: Սկսաւ այնու-
հետև պատրել զոմանս կարասեաւ և զո-
մանս ողոքական բանիւք. զռամիկն ամե-
նայն՝ ահեղ բանիւք սպառնացեալ սրտա-
թափ առնէր: Հանապազորդ առատա-
ցոյց զռոճիկսն տաճարին. և յերկարէր
զնուագսն ուրախութեան, մաշելով զեր-
կայնութիւն գիշերացն յերգս արբեցու-
թեան և ի կաքաւս լկտութեան. քաղց-
րացուցանէր ոմանց զկարգս երաժշտական
և զերգս հեթանոսականս. մեծապէս զո-
վութիւն մատուցանէր օրինաց թագաւո-
րին: Բերեալ էր և յարքունուստ բազմու-
թիւն կարասւոյ, և միում միում կաշառ
գաղտ խթէր ի պատճառս պարգևի և պա-
տուոյ. և բազում նենգութեամբ զանմեղ
մարդիկ հրապուրէր և յինքն արկանէր:

Իսկ զայս ամենայն իբրև տեսին սուրբ

եպիսկոպոսունքն, եւ քաջ դրդեալ յոր-
դորեցան ի նոյն միաբանութիւն. և հնա-
րագէտ իմաստութեամբ ընդ երկուս բա-
ժանեցին զբանակն: Մանաւանդ իբրև հաս-
տատեալ գիտացին ի միտս իւրեանց՝ եթէ
անօրէն իշխանն Սիւնեաց զօրհասական
վէրսն ի յոգին ընկալեալ էր, խորշեցան
մերժեցան և ի բաց փախեան ի նմանէ:

Խորհուրդ արարեալ ի գիշերի միում
ամենայն ուխտին բազմութեամբ, կոչեցին
և զպարապետն զօրաց ի խորհուրդն. հար-
ցին և քննեցին և ի վերայ հասին մտացն
անշարժութեան, որոյ ոչ և առ սակաւ մի
թերացեալ էր ի սիրոյն Քրիստոսի: Եւ միա-
բան աղօթս արարեալ ի վերայ նորա,
վերստին ընկալան զնա յառաքինութիւն:
Եւ նովաւ որսացեալ զբազումս ի նոյն միա-
բանութիւն՝ որք ոչ էին քակեալ յա-
ռաջին միաբանութենէն, եկին և ժողո-
վեցան գունդ զօրաց բազմաց: Եւ եւս ա-
ռաւել հեռագոյն գտան ի մոգացն և ի
մոգպետէն և յանօրինէն Վասակայ:

Իսկ նա այնչափ յիմարեցոյց և տփշե-
ցոյց զմիտս մոգպետին, մինչև չետ նմա
իմանալ զելս իրացն: Սկսաւ բաշխել մոգս

ի տունս նախարարացն և մեծամեծ ռո-ճիկս կարգել, զոհել պատրուճակս, և բռնաբար կնքաւոր մարդկանն տալ ուտել միս յաղածոյ, և երկիր պագանել արե-գականն: Իբրև սկսաւ բազմանալ ընդ ա-մենայն աշխարհն այնպիսի պղծագործ խառնակութիւն, յանդգնեցան և ևս կա-նայք փշտիպանացն յաւուր կիւրակէի ան-ցուցանել զճրագունս եկեղեցւոյն և պա-տառել զհանդերձս հաւատաւոր կանանցն:

Զայս գուժկան ազդէր իբրև ուսէին միա-բան սուրբ եպիսկոպոսունքն, զաւետարանն ի ձեռն առեալ հասին և անկան առանց հարցանելոյ ի վանս սպարապետին, ուր ժո-ղովեալ էին զօրքն Հայոց:

Համբարձին զձայնս իւրեանց և ասեն. «Աղաչեմք զձեզ զամենեսեան սուրբ աւե-տարանաւս. եթէ ձերով խորհրդովս գործէ զայն անօրէնութեան չարիս մարզպանն և մոգպետն, նախ զմեր պարանոցս հատէք, և ապա յեկեղեցին ձեռնարկեցէք: Ապա թէ առանց ձեր կամաց նոքա զայն չարն գործեն, այսօր խնդրեսցի վրէժ այդ ի նոցանէ»:

Իսկ որք էին ի ներքս ի վանս սպարա-

պետին՝ յոտն կացին, միաբան համբարձին զձայնս իւրեանց առ Աստուած և ասեն. «Դու Տէր սրտագէտ ամենեցուն, ոչ ինչ պիտի քեզ վկայութիւն ի մարդկանէ. եթէ խոտորեալ իցեմք ի քէն սրտի մտօք, զայն դու ինքնին քաջ գիտես. այսօր իսկ գա-տեա զմեզ ըստ մեղաց մերոց. ապա եթէ հաստատուն կամք յուխտի սուրբ աւետա-րանիս, դու Տէր լեր մեր օգնական այսօր, և տուր զթշնամին ճշմարտութեան ի ձեռս մեր, զի արասցուք ընդ նոսա ըստ կամաց քոց սրբոց»:

Զայս իբրև ասացին, ամենեքեան զգ-լուխ զգետնի հարկանէին, և ողջունեցան յաւետարանէն և յեպիսկոպոսացն:

Իսկ մի ոմն ի նախարարացն որ անդր դիմեցաւ, էր ի նոցա խորհրդի, և ոչ միա-բանեաց ընդ նոսա ի մեծ վկայութիւնն. և անդէն առ ժամայն ի նոցունց ի տեղւոջն քարկոծեցաւ, և ահ մեծ անկաւ ի վերայ ամենեցուն:

Յայնժամ ամենեքեան ի նախանձ բար-կութեան բրդեցան, մինչև ամենայն տե-սողացն երկեամունքն դողային, որք առ ոչ ինչ համարեցան զպարգևս արքունի, և

առ ոտն հարին զհրամանն ահագին: Ընթացան փողփողակք ի գէնս իւրեանց, փառեցան կազմեցան զգիշերն ամենայն, և ընդ ծագել արեգականն զգունդն յերիս մասունս բաժանեալ ի բանակն արկանէին: Գունդն առաջին յարևելից կուսէ, և գունդն երկրորդ յարևմտից կողմանէ, և գունդն երրորդ ի հիւսիսոյ կողմանէ, շուրջանակի ի մէջ առեալ փակեցին զելագմութիւն բանակին. և զբազումս կոտորեցին, և զևս բազմագոյնս կապեցին զերևելի մարդիկ, և արկին ի բերդս ամուրս ընդ իւրեանց իշխանութեամբ: Եւ զառ և զկապուտ զաւար բանակին ի մի վայր ժողովեալ պահէին իւր հրամանաւ արքունի:

Իսկ զմարզպանն ձերբակալ արարեալ, և միաբանէր ընդ նոսա երդմամբ՝ հաստատուն կալ յուխտին, զղջանայր զառաջին քակումն ի նոցանէ: Անկանէր ապաշխարութեամբ յոտս սուրբ եպիսկոպոսացն, և աղաչէր խաղաղապատելով զի մի՛ մերժեալ ընկեսցի առ ի նոցանէ: Երդնէր և երկնչէր զանսուտ երդումն առաջի բազմութեանն ի սուրբ աւետարանն, գրէր և կնքէր զերդումն և կապէր զաւետարանէն.

և աղաչէր՝ զի յԱստուծոյ խնդրեսցի վրէժխնդրութիւն, և մի՛ նոքա մարդկաբար սատակեսցեն զնա:

Իսկ նոքա թէպէտ և հաստատեալ գիտէին զնենգութիւն կեղծաւորութեանն նորա, և եթէ խաբէութեամբ դառնայ անդրէն ի հին մոլորութիւնն, ոչ ինչ փոյթ առնէին ձեռն արկանել ի նա վասն առաջին յանցանացն, այլ սուրբ աւետարանին թողին ի դատապարտութիւն:

Իսկ որք եկեալ էին յաւարի առնուլ զսուրբ զանձն եկեղեցւոյն, ակամայ եղին զանձինս և զաւար իւրեանց առաջի սուրբ եպիսկոպոսացն և ամենայն զօրացն. և եղծեալ ապականեցաւ հրաման թագաւորին: Եւ յաջողեալք զօրութեամբն Աստուծոյ՝ աղաղակէին և ասէին գոհանալով արք և կանայք և ամենայն ռամիկ բազմութիւնն. «Պատրաստ եմք ի հալածանս և ի մահ և յամենայն նեղութիւնս և ի չարչարանս վասն սուրբ եկեղեցեաց զոր աւանդեցին հարքն մեր առաջինք՝ զօրութեամբ զալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով վերստին ծնաք ի մի յոյս հաւատոցն մկրտութեամբ ի Քրիստոս Յիսուս, ըստ նմին նմանութեան

կամիմք չարչարանօք և արեամբ նորոգել զանձինս: Բանզի հայր մեր զսուրբ աւետարանն գլխեմք, և մայր՝ զառաքելական եկեղեցի կաթողիկէ. մի՛ ոք չար անջրպետ ի մէջ անկեալ՝ զմեզ քակեսցէ ի սմանէ»:

Ոչ երբէք այնուհետև առաւել տէրն քան զծառայ, և ոչ ազատ փափկացեալ քան զգեղջուկ վշտացեալ, և ոչ ոք քան զոք նուազեալ յարութենէ: Մի սիրտ յօժարութեան ամենեցուն արանց և կանանց, ծերոց և տղայոց և ամենայն միաբանելոց ի Քրիստոս: Բանզի առ հասարակ զմի զինուորութիւն զինուորեցան, և զմի ազան զրահս հաւատոց պատուիրանին Քրիստոսի. միով գօտեաւ ճշմարտութեան պնդեցին զմէջս արք և կանայք:

Ընկեցեալ կայր այնուհետև ոսկի, և ոչ ոք առնոյր իւր առանձինն արծաթ, և արհամարհեալ առանց ագահութեան, անարգեալ պատուական հանդերձք առ ի զարդս մեծարանաց: Նա՝ իւրաքանչիւր ստացուածք ոչ ինչ համարէին յաչս իւրեանց ստացողին: Տեսանէին զանձինս իւրեանց իբրև զմեռեալ դիակունս, և զիւրաքանչիւր գերեզմանս ինքեանք փորէին, և

կեանք իւրեանց ի մահ համարեալ էին, և մահ իւրեանց անշուշտ կեանք:

Բայց այս բարբառ ստէպ ստէպ ընթանայր. «Քաջութեամբ միայն մեռցուք, զանուն և զոգիս ևեթ ժառանգեսցուք, զի կենդանի էցէ ի մեզ Քրիստոս, որում դիւրին է միւսանգամ նորոգել զմեզ ի հողոյ և զամենայն զյառաջագոյն ընկեցեալսն, և հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց»:

Զայս և առաւել քան զսոյնս խօսելով, և մխիթարելով զանձինս և զմիմեանս, դարձեալ միւսանգամ զինուորքն պատրաստեցին զզէնս իւրեանց, և աղօթականքն անդադար լինէին յաղօթս իւրեանց, և պահողքըն ճգնէին ի պահս իւրեանց: Զայնք պաշտօնէին ի տուէ և ի գիշերի անհատ էին ի սուրբ սաղմոսն. ընթերցուածք աստուածային կըտակարանացն ոչ երբէք առնուին դադարումն յամենայն ժամ. սոյնպէս, և մեկնիչքն ի մխիթարութիւն երկնաւոր վարդապետութեանն:

Յայնմ ժամանակի դարձեալ յարձակեցան ի վերայ բերդիցն և աւանաց, զոր ունէին Պարսիկքն ի տեղիս տեղիս, յամրոցս աշխարհին. տապալէին քանդէին

զընտանութիւնս նոցա։ Առաջին զմեծն Արտաշատ հանդերձ աւանօք իւրովք. և առնուին զանմատոյց ամուրսն, զԳառնի քաղաքըն, զԱնին, զԱրտագերս, և զաւանս իւրեանց. զԵրկայնորդան և զԱրհնին, և զաւանս իւրեանց. զԲարձրաբերդն, զԽորանիստն, զԾրխանիստն, զանկասկածելի Ողականն, և ընդ նոսա և զաւանս իւրեանց. զԱրփանեալն, զՎանն աւան, ընդ նմին և զաւանսն իւր. զԳոռեայն և զԿապոյտն, զԸրոտն և զՎասակաշատն։

Զամենեսին զայս իւրաքանչիւր գեղիւք և ագարակօք, զօրօք և զօրագլխօք ի նմին ամի առեալ տապալեցին, և ի գերութիւն վարեցին զարս և զկանայս ընչիւք և ստացուածովք, հանդերձ պատուական զանձիւք և նոցին սպասուք։ Տապալէին քանդէին զշինուածս նոցա, և այրէին կիզուին զտունս պաշտօնարկի և պաշտաման կրակի։ Սրբէին զպղծութիւն կռապաշտութեանցն, և առնուին զկահ և զկազմածս ատրուշանացն, բերէին և դնէին ի սուրբ եկեղեցւոջն, և ի ձեռն սուրբ քահանայիցն նւիրէին ի պաս տէրունական սեղանոյն։ Եւ փոխանակ մնոտի պաշտամանցն, զոր տա-

պալեցին յամենայն տեղիս հեթանոսացն, զփրկական խաչն Քրիստոսի կանգնէին. զամենասուրբ սեղանն ուղղէին, և զկենդանարար խորհուրդն կատարէին սրբութեամբ. պաշտօնեայս և քահանայս ի տեղւոջն կացուցանէին։ Յուսով հաստատեալ խնդայր ամենայն երկիրն առ հասարակ։

Եւ մինչդեռ յայսմ մեծի առաքինութեան կատարեալ գործէին զգործ նահատակութեանն, երևէր իմն ի վերայ ամենեցուն աստուածային շնորհք. քանզի առանց հրամանի ի զօրացն Հայոց, յարևելից կողմանէ աշխարհին, յարձակեցան ոմանք յԱտրպատական աշխարհն, և ի տեղիս տեղիս բազում վնաս արարին՝ առնլով և աւերելով և քանդելով զբազում ատրուշանս։

Իսկ որ ի մեծ ամուրսն անկանէին՝ խաչանշան արարեալ՝ ի վերայ զօրուն յարձակէին. որ և երկու մեծամեծ բերդացըն պարիսպքն առանց ուրուք մերձենալոյ անկեալ կործանեցան. մինչև ամենայն բնակչաց երկրին զահի հարեալ ի մեծ նշանէն, ինքեանք ինքեանց ձեռօք զկրակատունս այրէին. ուրանալով զօրէնս մո-

գութեանն՝ խոստովանէին ի սուրբ աւետարանն:

Եւ այլ մեծամեծ աջողութիւնք կատարէին ի ձեռն զօրականին. քանզի ուր ոչ էր ակնկալութիւն եթէ զանուն Աստուծոյ ոք յիշեսցէ՝ արհաւիրք մեծ անկանէին ի վերայ նոցա, և ամենայն մարդ պատմէր ընկերի իւրում տեսիլս նորս և զարմանալիս: Սոյնպէս և աստեղք ի յերկինս երևէին յոյժ լուսաւոր պայծառացեալ, զոր ոչ ունէին յառաջին բնութեանն: Եւ ամենայն տղայք աշխարհին իբրև զարս պատերազմողս խիզախէին:

Եւ ահա յետ աւուրց բազմաց եկն եհաս հազարապետն Աղուանից սուրբ եպիսկոպոսաւ աշխարհին, մեծաւ տագնապաւ փութացուցանէր զզօրսն ասելով. «Գունդն Պարսից որ էր ի կողմանս աշխարհին Հոնաց՝ դարձաւ այսրէն, եկն եմուտ յաշխարհս մեր. և բազում եւս և այլ այրուձի որ ի դրանէ եկն: Եւ թող զայս ամենայն, այլ և երեք հարիւր մօգ վարդապետ ածեալ ընդ իւրեանս, պատուակոեցին զաշխարհն, եւ զմանս ոմանս յինքեանս արկին, և կամէին յեկեղեցին ձեռն ար-

կանել. և հրամանաւ թագաւորին ստիպէին զամենեսեան և ասէին. «Եթէ կամօք յանձն առնուք զօրէնսն, պարգևս և պատիւս գտանէք ի նմանէ, և թողութիւն հարկացն յարքունուստ լիցի ձեզ. ապա թէ կամօք չառնէք, հրաման ունիմք ի գեօղս և ի քաղաքս շինել ատրուշանս, և զվռամական կրակն ի ներքս դնել, և կացուցանել մոգս և մոգպետս օրէնսդիր ամենայն աշխարհիդ: Եւ եթէ ստամբակեալ ոք ընդդէմ դարձցի, ինքն մահու պատուհաս ընդունի, և կին և որդիք այնպիսւոյն անաշխարհիկ եղեալ՝ յարքունիս երթիցեն»:

Իսկ գունդն Հայոց իբրև լուաւ զայս զոյժ դառնութեան, ոչ ինչ թուլացեալ լքան ի քաջութենէն. այլ դարձեալ համագունդ ժողով լինէր ամենայն աշխարհին վասն գուժաբեր հրեշտակացն որ հասին առ նոսա: Եւ միաբան քաջալերս տուեալ՝ արձակեցին զնոսա, զի առ ժամանակ մի պատիր խաբէութեամբ զնոսա կալցեն, զի խափանեսցեն ի չար կամացն՝ չձեռնարկել ի սուրբ ուխտ եկեղեցւոյն իւրեանց. և զօրութեամբն Աստուծոյ խորհուրդ ի

մէջ առեալ՝ իւրեանց հնարիւք ևս խորհըրդէին:

Յայնմ ժամանակի զմի ոմն ի մեծ նախարարացն ի տոհմէն Գնունեաց՝ Ատոմ, ճեպով առաքեցին յերկիրն արևմտից, ցուցանել զայս ամենայն խորհուրդ չարիմաց թագաւորին արևելից, միանգամայն և պատմել զիւրեանց քաջութիւն արութեանցն —զոր գործովք կատարեցին՝ առ ոտն հարկանելով զհրամանն ահեղ, և մեծապէս սատակումն ի վերայ մոգացն հասուցանելով—խնդրել ի նմանէ օգնականութիւն սատարութեան, և եթէ նա կամեսցի՝ նմա իսկ մտանել ի ծառայութիւն:

Եւ այս է պատճէն հրովարտակին զոր գրեցին առ Թէոդոս կայսր.

«ՅՈՎՍԷՓ եպիսկոպոս բազում եպիսկոպոսակցօք խմբովք և ամենայն զօրօք Հայոց, Վասակ մարզպան և Ներշապուհ Ռըմբոսեան հանդերձ Սպարապետաւս Վարդանաւ և ամենայն մեծամեծ նախարարօքս, առ մեծանունդ Թէոդոս կայսր, բազմասցի ողջոյն մեր առ քեզ և ամենայն զօրաց քոց, որ խաղաղասէր մարդասիրութեամբ

ձերով տիրէք ծովու և ցամաքի, և չիք ոք յերկրաւորացս՝ որ ձերում անարգել տէրութեանդ ընդդէմ դառնայցէ:

«Որպէս մեք իսկ ունիմք զանսուտ յիշատակարանսն զառաքինի նախնեացն ձերոց, ունելով զԵւրոպէ՝ անցին և տիրեցին և Ասիացւոց կողմանցն ի սահմանացն Սերայ մինչև ի կողմանս Գադերոնի, և ոչ ոք գտաւ ստամբակեալ և ելանել ընդ ձեռն նոցա:

«Եւ յայնչափ մեծ իշխանութեան՝ Դաստակերտ մեծ և օրհնեալ զՀայոց աշխարհս անուանէին: Վասն որոյ և նախնին մեր Տրդատիոս յիշելով զառաջին սէրն ձեր, որ ի տղայութեան փախուցեալ ի հայրասպան մարդախողխող հօրեղբարցն իւրոց՝ այրեալ սնաւ յերկրին Յունաց, և ի ձէնջ թագաւորեալ տիրէր հայրենի աշխարհին, սոյնպէս և զհաւատսն որ ի Քրիստոս՝ ընկալեալ ի սուրբ եպիսկոպոսէն Հռովմայ, լուսաւորեաց զխաւարային կողմանս հիւսիսոյ. զոր և այժմ կամին ի մէնջ կորզել հանել խաւարասէր որդիքն արևելից:

«Եւ մեք ի ձեր քաջութիւն արութեանըդ լիզակեալ, էր ինչ որ ընդդէմ դա-

ձայք նոցա հրամանացն, և բազում այն է որ արդ առաջի պատրաստեալ եմք: Ընտրեցայք զմահ աստուածպաշտութեամբ քան զկեանս ուրացութեամբ. եթէ դուք ևս ի ձեռն առջիք զմեզ, ահա կրկին կենաց դիպեցաք, և ոչ մի անգամ մահու: Եւ եթէ սակաւիկ մի հեզգայք, գուցէ բազում և այլ աշխարհաց հասանիցէ տապ բոցոյ սորա:

Եւ իբրև յանդիման եղեն մեծի թագաւորին, և ընթերցան զգիր պաղատանաց Հայոց աշխարհին և զյիշատակարանս նախնեացն, բազում մատեանք ի մէջ եկեալ ընթերցան՝ որ զնոյն ուխտ հաստատութեան ի ներքս գտանէին:

Եւ մինչդեռ երանելին Թէոդոս հարցանէր զամենայն սինկղիտոսն, և հնարս իրացն կամէր գտանել խաղաղութեամբ, և հոգ տանէր մեծաւ յօժարութեամբ՝ զի մի՛ եկեղեցիքն արևելից յափշտակեսցին յանօրէն հեթանոսացն, ի նմին ժամանակի անդէն վաղվաղակի հասանէր վախճան կատարածի կենաց նորա, և կարի չար խափանումն լինէր գործոյն օգնականութեան:

Եւ թագաւորէ փոխանակ նորա Մարկիանոս կայսր, և ի ձեռն վատթար արանց խրատտուացն իւրոց ծառայից, Անատոլեայ՝ որ ապարապետն էր, և Փղորենտիոս ասորի, երկոքեան անարգք և վատթար արանց, միանգամայն և անաստուածք, ի նոցա բանս եկեալ թագաւորն, ոչ կամէր անսալ միաբան ուխտին Հայոց, որ ամենայն ուժովն իւրեանց ընդդէմ կացեալ էին չարութեանն հեթանոսաց: Իսկ անարիս այս լաւ համարէր պահել զուխտն հեթանոսաց վասն մարմնական խաղաղութեան՝ քան պատերազմակից լինել ուխտին քրիստոնէութեան: Վասն այսորիկ փութացաւ արձակեաց դեսպանս առ թագաւորն Պարսից զնոյն Փղորենտիոսն, և եմուտ ընդ նմա յուխտ հաստատութեան՝ ձեռնթափ լինել ի զօրացն Հայոց զօրու և զէնու և ամենայն օգնականութեամբ:

Եւ իբրև այսպէս հաստատեցաւ, և հատաւ օգնականութիւն յուսոյ նոցա ի մարդկանէ, դարձեալ սուրբ եպիսկոպոսքն քաջալերել սկսան զանձինս և զօրսն Հայոց: Թէպէտ և հայէին յիւրեանց սակաւութիւնն և յերկոցունց թագաւորացն միաբանութիւն, ոչ ինչ վատասրտեալ դո-

զայլն, այլ ըստ առաջին ուխտին խիզախէին և ասէին. «Պատրաստ եմք ի սպանանել և ի մեռանել. դիւրին է Աստուծոյ սակաւուք զբազմաց գործ գործել, և անարգօք զմեծամեծ իրս կատարել»:

Թէպէտ և ոչ ունէին թագաւոր առաջնորդ, և ոչ արտաքուստ օգնական զօք յօտարաց, սակայն անձանց առաքինութեամբ և սուրբ վարդապետացն մխիթարութեամբ՝ համագունդ ամենայն նախարարքն զօրօքն իւրեանց յիւրաքանչիւր տանէ ի մի վայր գային հասանէին փաղփաղկի. բազում և այլ այրուձի՝ որ յարքունի տանէ անտի էր:

Եւ զամենայն զօրսն յերիս գունդս բաժանեցին:

Զգունդն առաջին տային ցՆերշապուհ Ռմբոսեան, և գումարէին զնա պահապան աշխարհին, մերձ ի սահմանս Ատրպատական աշխարհին:

Եւ զգունդն երկրորդ տային ի ձեռն Վարդանայ զօրավարին Հայոց՝ անցանել ընդ սահմանս Վրաց ի վերայ մարզպանին Ճորայ, որ եկեալ էր աւերել զեկեղեցիսն Աղուանից:

Իսկ զգունդն երրորդ տային ի ձեռս Վասակայ իշխանին Սիւնեաց, որ ոչ և բաց կացեալ էր յուխտէն հեթանոսաց ընդ ներքին խորհրդոցն իւրոց:

Ընտրեաց և առ նա ընդ իւր՝ զորս գիտէր զթուլութիւն հաւատոց նոցա.
Զիշխանն Բագրատունեաց զօրօք իւրովք:
Զիշխանն Խորխոռունեաց զօրօք իւրովք:
Զիշխանն Ապահունեաց զօրօք իւրովք:
Զիշխանն Վահեւունեաց զօրօքն իւրովք:
Զիշխանն Պալունեաց զօրօքն իւրովք:
Զիշխանն Գաբեղենից զօրօք իւրովք:
Զիշխանն Ուրծայ զօրօքն իւրովք:

Եւ զայլ բազում զօրս յարքունի տանէն արկ յինքն, և զնեպուհս ոմանս յայլմէ տոհմէ: Եւ խորամանկ խաբէութեամբ դարանամուտ լինէր յամուրս իւրոյ աշխարհին, ի պատճառս կեղծաւորութեան՝ եթէ ընդ ճապուկ անդր անցանէ ի վերայ գնդին Պարսից՝ հալածական առնել յաշխարհէն Աղուանից:

Իսկ նա յամրածածուկ հաւաղոյէն ծեպով դեսպանս արձակէր առ գունդն Պարսից. «Ահա աւադիկ քակեցի զմիաբանութիւն ուխտին Հայոց, և ընդ երիս կող-

մանս գունդս գունդս քակեալ բաժանեցի. Զգունդն առաջին հնազանդեցուցի ի կողմանս Հերայ և Զարևանդայ. և գունդս երկրորդ ընդ խմով ձեռամբ է, որոց ոչ ինչ տամ վնաս առնել զօրաց արքունի: Եւ զայլ ամենայն որ այր կռուոյ յաշխարհի աստ գտանէր՝ ցանեցի ցրուեցի ընդ ամենայն միջոցս աշխարհիս: Բայց զգունդն երրորդ արարի ընդ Վարդանայ յԱղուանս՝ սակաւաձեռն և ոչ բազմաթիւ: Ե՛լ համարձակ ընդ առաջ նորա, և մի՛ զանգիտեր ամենևին տալ պատերազմ. գիտեմ զի ի պարտութիւն մատնեսցին առաջի քոյոյ մեծի զօրութեանդ»:

Զայս գրեաց և եդոյց մարզպանին՝ որում անունն էր Սեբուխտ: Իսկ նա իբրև լուաւ զայս ամենայն զքաջալերս ի Վասակայ, և ստուգեալ հաստատեաց ի միտս իւր՝ եթէ սակաւաձեռն գնդաւ գայ սպարապետն Հայոց ի վերայ նորա, ոչ եկաց մնաց ի կողմանս ծորոյ. այլ կուտեաց զամենայն բազմութիւն զօրու իւրոյ, և փութանակի անցանէր ընդ մեծ գետն Կուր անուն. և պատահէր նմա մերձ ի սահմանս Վրաց հանդէպ Խաղխաղ քաղաքի,

որ ձմերոց էր թագաւորացն Աղուանից: Անցանէր բուանդակէր ամենայն զօրօք իւրովք. ռազմ արարեալ զբոլոր մեծութիւն դաշտին ի ներքս փակէր. զինեալք և վառեալք ամենայն պատրաստութեամբ ի մարտ պատերազմի ընդդէմ գնդին Հայոց:

Իսկ քաջն Վարդան և ամենայն զօրքն որ ընդ նմա էին՝ իբրև տեսին զբազմութիւն պատրաստութեան գնդին հեթանոսաց, հայեցան և յիւրեանց սակաւութիւնն. Թէպէտ և կարի յոյժ նուազունք էին քան զնոսա, ոչ ինչ զանգիտեցին առ ի յոյժ բազմութենէն, այլ հասարակ միաբան համբարձին յերկինս զձեռս իւրեանց, աղաղակէին և ասէին.

«Դատեա, Տէր, զայնոսիկ որք դատին զմեզ. մարտիր ընդ այնոսիկ որ մարտնչին ընդ մեզ. զինու և ասպարաւ քով օգնեա մեզ: Շարժեա և դողացո զգունդագունդ բազմութիւն անօրինացս. ցրուեա և վատնեա զչար միաբանութիւն թշնամեաց քոց առաջի քոյոյ փրկական մեծի նշանիս, և տուր ի ձեռն սակաւուցս զքաջութիւն յաղթութեան ի վերայ անհնարին բազմութեանս: Ոչ ի պարծանս մնոտի

փառասիրութեան անօգուտ վաստակոյ ինչ աղաչեմք, կամ յագահութիւն ընչասիրութեան զանցաւոր մեծութիւն կալտելոյ, այլ զի ծանիցեն և գիտասցեն ամենեքեան այնոքիկ որ ոչն հնազանդին սուրբ աւետարանին քարոզութեան, եթէ դու ես Տէր կենաց և մահու, և ի ձեռն քո է յաղթութիւն և պարտութիւն: Եւ մեք պատրաստ եմք ի մեռանել վասն քո սիրոյդ. և եթէ սպանանել ես հասանէ վնաս, ոչ եթէ մեզ ինչ, այլ ճըշմարտութեանն եղիցուք վրէժխնդիրք»:

Եւ զայս ասելով խումբ արարեալ յարձակէին, և զաջ թեւն բեկեալ՝ զձախոյ կողմանն արկեալ, որոյ ճարակ զամենեսեան տային ընդ երեսս դաշտին, և փախստական առնէին մինչև յամուր տեղիս մայրեացն առ խորագոյն դարիւքն Լոփնաս գետոյ: Ուր ընդդէմ դարձեալ Թագաւորազանց ոմանց Բաղասական արքայի, ընկեցին զոմն ի ձիոյ ի նախարարացն Հայոց. ի գնդէն Գիմաքսենից զՄուշ սպանին, և զԳաղրիկ վիրաւորեցին:

Յայնմ տեղւոջ դէտ ակն ի վեր ամբառնայր Արշաւիր Արշարունի, գոչէր առիւ-

ծաբար և յարձակէր վարազաբար, հարկանէր և սատակէր զՎուրկն քաջ զեղբայր Թագաւորին Լփնաց. և զբազում համհարզս նորին ընդ նմին սատակէր: Եւ այնպէս ամենեքեան առհասարակ այր զախոյեան իւր յերկիր կործանէր: Եւ առ յոյժ յանդուգն յարձակմանն՝ յոլովագոյն այն էր զոր գետամոյնս առնէին քան զանկեալսն սրոյ ի ցամաքի: Եւ ի բազմութենէ դիականցն անկելոց՝ յատակ ջուրք գետոյն յարիւն դառնային, և ոչ գտանէր ոք ամենեւին ի նոցանէ ապրեալ և թագուցեալ յանտառախիտ մայրիս դաշտացն: Բայց մի ոմն ի զօրականէ Թշնամեացն՝ զենու հանդերձ ելեալ ի նիւս երիվարին անցանէր ընդ մեծ գետն, մազապուր պրծեալ ի պատերազմէն՝ գոյժ տանէր ի մնացեալ բուն բանակն, որք փախստական անկանէին ի մեծ շահաստանն:

Յայնմ ժամանակի զօրքն Հայոց կատարելով զմեծ գործ պատերազմին՝ ի դիակապուտս դառնային, ժողովէին զբազում աւար բանակին, և կողոպտէին զանկեալ դիակունսն. և կուտէին բազում արծաթ և ոսկի, զզէնս և զզարդս զարի արանց և զքաջ երիվարաց:

Դարձեալ յարձակէին ոչ սակաւ քաջութեամբ ի վերայ բերդիցն և քաղաքաց զոր ունէին Պարսիկքն յաշխարհին Աղուանից, հզօրապէս մարտնչելով և այրելով զամուրս արգելանաց նոցա, և զերամս երամս մոգացն — զոր պատրաստական ածեալ աշխարհին դայթակղութիւն — ուր և գտանէին յամուրս ամուրս վայրացն, սրոյ ճարակ տուեալ՝ դնէին դէշ թռչնոց երկնից և գազանաց երկրի: Սրբէին զտեղիսն յամենայն պղծագործ զոհիցն, և փրկեալ ազատէին զեկեղեցիսն յանհնարին նեղութենէն:

Եւ բազումք ի նախարարացն Աղուանից և յամենայն շինականացն, որք վասն անուանն Աստուծոյ ցրուեալ և փախնեալ էին յամուրս լերանց Կապկոհի, իբրև տեսին զաջողութիւն գործոյն զոր կատարէր Աստուած ի ձեռն գնդին Հայոց, գային ժողովէին և նոքա, և խառնէին ի զօրս նոցա. և միաբանք և հաւասարք կցորդք լինէին գործոյն նահատակութեան: Խաղային գնային այնուհետև ի վերայ պահակին Հոնաց, զոր ունէին բռնութեամբ Պարսիկքն. առնուին քանդէին զպահակն, և կոտո-

րէին զզօրսն որ ի ներքս բնակեալ էին, և զդուռնն տային ի ձեռն Վահանայ՝ որ էր յազգէ թագաւորացն Աղուանից: Եւ յայսր ամենայն քաջութեան վերայ ոչ ոք անկեալ վիրաւորեցաւ ամենևին ի նոցանէ, բայց ի միոյ երանելւոյ որ կատարեցաւ նահատակութեամբ ի մեծ պատերազմին:

Եւ անդէն ի նմին տեղւոջ զայրն որում զդուռնն յանձն արարին՝ զնոյն դեսպան արձակեցին յաշխարհն Հոնաց, և ի բազում յայլ ազգս բարբարոսաց որ համագործք էին Հոնաց աշխարհին, բանս դնել ընդ նոսա և ուխտ հաստատել՝ անքակութեամբ ունել զմիաբանութիւնն: Իսկ նոքա իբրև զայն ամենայն լուան, փութապէս փաղփաղակի հասանէին ի տեղին, և ականատեսք լինէին գործոյն յաղթութեան: Եւ ոչ ինչ յապաղեցին երդմամբ յուխտ մտանել ըստ կարգի իւրեանց օրինաց. յանձն առին և զերդումն քրիստոնէից՝ պահել ընդ նոսա հաստատութեամբ զմիաբանութիւն:

Իսկ իբրև զայս կատարեցին և արարին իւրեանց մեծապէս հաստատութիւն, և զեռ անդէն ի տեղւոջն զետեղեալ էին խաղաղութեամբ, զուժկան հասանէր յաշ-

խարհէն Հայոց, զմնակատ հարեալ և զօձիս պատառեալ վասն ապստամբին Վասակայ. «յետ կացեալ յուխտէն քրիստոնէութեան և աւերեալ զբազում տեղիս Հայոց աշխարհին, մանաւանդ զձմերոցս արքունի, որ կայանք զօրացն էին, զԳառնին և զԵրամայիս և զԴրասխանակերտն զմեծ Դաստակերտն, զՎարդանաշատն և զամուրն Օշական, զՓառախոտն, զՍարդեանսն, զՑոլակերտն աւան և զբերդն Արմաւրի, զԿուաշն աւան, զԱրուճն, զԱշնակն և զամենայն տուն Արագածու, և զնահանգն Արտաշատու և զԱրտաշատն ինքնին զխովլին, և զամենայն գեւղս և զաւանս որ շուրջ զնովաւ էին, առեալ աւերեալ և հրձիգ արարեալ, և զամենեցուն ձեր զընտանիս փախուցեալ մերժեալ յիւրաքանչիւր բնակութենէ: Ձեռն արկեալ և ի սուրբ եկեղեցիսն, տարեալ և զսուրբ սպաս եկեղեցւոյն սեղանոյ. գերի վարեալ զընտանիս քահանայից, և զնոսին կապեալ և եդեալ ի բանդի. և ինքն սփռեալ տարածեալ ապստամբ աւերէ զերկիրն ամենայն: Եւ զունդն որ էր ի կողմանս Ատրպատականի՝ ոչ ժամանեաց ձեռն

տալ ի միջոյ աշխարհին: Եւ զօրքն որ անդ մնացեալ էին՝ խոյս տուեալ յանօրինէն մերժեցան յեզր աշխարհին, և դեռ պահեն ընդ ձեզ զուխտ միաբանութեան սիրոյն Քրիստոսի: Բայց այն որ ընդ նմայն էին՝ են ոմանք որ փախեան յիւրաքանչիւր տեղիս, և բազումք այն են որ զհետ մոլորեցան նորա ամբարշտութեանն»:

Զու արարեալ ի տեղւոջէ անտի՝ դառնալ անդրէն յաշխարհն Հայոց մեծաւ ստիպով և բազում աւարաւ և անչափ մեծութեամբ, և անսպառ ուրախութեամբ երգս իբերան առեալ և ասէին ձայնիւ. «Խոստովան եղերուք Տեառն, զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա. ո՛ եհար զազգս մեծամեծս և սպան զիշխանս հզօրս, զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա»: Եւ զայս սաղմոս երգելով մինչև ի վախճան կատարեալ աղօթիւք փառատրութիւն սուրբ Երրորդութեանն մատուցանէին: Անդ յանձանձէր ածէր զօրավարն զկաց և զմնաց զօրականին առաջապահօք և վերջապահօք, կողմնապահօք ողջ և առողջ հասուցեալ յաւուրս երեսուն մերձ ի սահմանս հայրենի աշխարհին:

Այդ եղեւ ուրացեալն Վասակայ և իշխանացն որ ընդ նմա էին՝ քաջութիւն նահատակութեան գնդին Վարդանայ յաշխարհին Աղուանից, և միաբանութիւնն ևս հոնաց: Մինչչև յանդիման եղեալ էին միմեանց, զգիշեր մի օգնական գտեալ նորա՝ փախստեայ անկանէր յամուրս իւրոյ աշխարհին, և այնպէս տագնապաւ մերժեցաւ. զգերի և զաւարն զոր առեալ էր յԱյրարատ գաւառէ, ակամայ զիւրն ևս ի վերայ եթող և փախեաւ:

Եւ քանզի ժամանակ ձմերայնւոյ հասեալ էր, և զուռճնկա՝ թշնամեաց գնդին հարեալ էր, ոչ կարէր զմիով տեղեաւ համագունդ զօրսն զարմանել. այլ սփռէր տարածանէր ընդ գաւառս գաւառս աշխարհին առ ի հանգիստ ձմերոցի: Պատուէր հրամանի տայր պատրաստական լինել կազմութեամբ առ ժամանակ գարնայնոյն: Եւ զսակաւս ի գնդէն յաւագ նախարարացն գործակից իւր թողեալ, բնանայր ի վերայ՝ ունելով զթագաւորանիստ տեղիսն:

Եւ զունդս զունդս արձակէր յաշխարհն Սիւնեաց, առնոյր և աւերէր զբազում

գաւառս. և այնպէս ի նեղ արկանէր զնա և զամենայն զօրսն որ ընդ նմա էին, զի զեչս և զձիս մեռելոտի առ սովոյն վտանգի անխտիր ուտէին: Եւ բազում հարուածս հասուցանէին ի վերայ ուրացելոցն. մինչև ժողով սուրբ եպիսկոպոսացն և ամենայն ուխտ քահանայութեանն զառնապէս արտասուս իջուցանէին ի վերայ չարաչար վշտացելոցն, որ բոկ և հետի վարէին զարս և զկանայս փափկասունս, և բազում տղայք զքարի հարեալ ընկեցան յանցս ճանապարհաց:

Իբրև այս ամենայն աջողութիւն լինէր երկնաղածայն Աստուծոյ, ամենայն եպիսկոպոսունք և երիցունք պատուէր հրամանի տուեալ աշխարհին, զողջոյն ամիսն Քաղոց պահօք և աղօթիւք առնել խնդրուածս առ Աստուած, և զտօն պատերազմացն յաղթութեան խառնել ի սուրբ տօն յայտնութեանն Քրիստոսի, զի անխափան կացցէ մեծ յիշատակարանս այս ընդ աստուածային անանց տօնին:

Եւ զսոյն զայս ամենայն այցելութիւնս Աստուծոյ որ ի վերայ աշխարհին Հայոց մեծապէս երևեցաւ՝ գրեցին սուրբ եպիսկո-

պտուղքն և ետուն տանել յաշխարհն Յունաց ի մեծ քաղաքն առ սուրբ ուխտ եկեղեցւոյն. զի և նոքա աղօթս առնելով խնդրեսցեն յԱստուծոյ, որպէս սկսաքս՝ ի նմին և կատարեսցուք:

Եւ զոմն յառաջին կապելոցն Պարսկաց լուծեալ և ածեալ զառաջեաւ նախարարացն, խօսէին ընդ նմա և ցուցանէին զամենայն վնասն որ եղև, կամ աշխարհացն աւերել, կամ զօրացն արքունի հարկանել, և կամ որ այլ իրք առաջի լինելոց էին: Եւ իբրև զայս ամենայն բովանդակ ցուցին նմա, միաբան լինէր ամբաստանութիւն երկոցունց կողմանցն՝ առաքինեացն և յետս կացելոց. որպէս զուր և տարապարտուց նեղեցան ի հայրենի օրինացն յետս կալ, և զխաբէութիւն ապստամբին Վասակայ, որպէս Հայոց բանիւ խաբեաց զԹագաւորն, յանձն առնուլ զմոգութիւն. իբրև չէր ուրուք ընդ նմա բանս եդեալ, նա յանձնէ սուտակապաս լինէր:

Իբրև լուաւ զայս ամենայն իմացուցին, արձակեցին զնա հրեշտակութեամբ յաղերս ապաքանութեան և ի հնարս հայթայթանաց, թերևս կարասցեն զեղբարս իւրեանց ի նեղութենէն գողանալ:

Այլ առ նա՝ անօրէնն Վասակայ զուժկանքն յառաջագոյն հասեալ էին, պատմել զաղէտս տարակուսանացն զոր անցուցեալ էր ընդ զօրսն արքունի. և ամենայն ամբաստանութիւնն ի սուրբ ուխտ եկեղեցւոյն կրթեալ էր: Քանզի այն իսկ կամք էին անօրինին՝ եթէ զմիաբանութիւն եպիսկոպոսացն քակեսցէ ի նախարարացն. և զայս ոչ էր տեղեկացեալ տակաւին, եթէ հոգի և մարմին բաժանիցին առ ժամանակ մի՝ գոյ տեսանել ի բնութեանս, այլ որ սիրովն Աստուծոյ յուխտ մտեալ է՝ այսմ անհնար է լինել:

Արդ կրթեալ այրն ի տեղի ձմերոցին, պատմեաց զայս ամենայն յականջս Թագաւորին, շարժեալ դողացոյց, որ և յամենայն զօրութենէն պակասեալ դատա. մանաւանդ զի յարևելից պատերազմէն կորակոր և ոչ բարձրագլուխ էր դարձեալ: Իբրև ստուգեալ հաստատեաց ի վերջին հրեշտակէն որ եհաս առ նա, զամենայն վնաս զիւր գործոցն զխորհրդակցօքն արկանէր: Եւ անդէն չիջանէր ի բազմարոց բորբոքմանէն. քանզի խցաւ բերան չար խրատուցն որ անդադար յորդորէին զնա

ի գործ դառնութեան: Խոնարհեցաւ ի բարձրը հպարտութենէն, և զվայրենացեալ սիրտն դարձոյց ի մարդկային բնութիւն. հայեցաւ և ետես զինքն լի տկարութեամբ. գիտաց եթէ զամենայն զոր կամի առնել՝ ոչ կարէ կատարել. վասն այնորիկ և դադարեաց յանդունդն յարձակմանէն, և լռեցոյց զմոլեգնոտաբար զոչումն:

Եւ որ մեծաձայն բարբառով որոտայր, և ևս ահագին հրամանօքն զհեռաւորս և զմերձաւորս դողացուցանէր, սկսաւ քաղցր և աղերս բանիւք խօսել ընդ ամենեսեան և ասել. «Զի՞նչ ինչ վնաս գործեալ է իմ, և կամ զո՞ր յանցս յանցուցեալ կամ առ ազգս կամ առ լեզուս կամ առ անձն իւրաքանչիւր: Ո՞չ ահա բազում ուսմունք են յաշխարհիս Արեաց, և իւրաքանչիւր պաշտմունք յայտնի են. ո՞ երբէք նեղեաց պնդեաց դարձուցանել ի մի օրէնս միութեան. մանաւանդ վասն օրինաց քրիստոնէութեանն, որպէս հաստատուն և ճշմարիտ կացեալ են յիւրեանց դենին, նոյնպէս և առ մեզ լաւագոյն քան զամենայն կեշտսն նոքա երևեալ են: Եւ բիծ իսկ ոչ կարէ ոք գտնել ընտրեալ օրի-

նաց նոցա. այլ զոյգ և հաւասար համարիմ դենիս մազդեզանց, որպէս և յարգեալ իսկ էին նոքա առ նախնեօքն մերովք, զոր ես ինձէն իսկ յիշեմ առ հարբն իմով որ նստէր ի մեծ գահոյս յայսմ:

«Յորժամ սկսաւ անդաձել և քննել զամենայն ուսմունս և հաստատութեամբ ի վերայ եհաս, առաւել վեհ գտանէր զօրէնս քրիստոնէից քան զամենեցուն. վասն այսորիկ մեծարեալք եղանէին ի Դրան արքունի, և առատաձեռն պարգևօք երահք լինէին ի նմանէ, և համարձակութեամբ շրջէին ընդ ամենայն երկիր: Նա և որ գլխաւորքն էին քրիստոնէից, զոր և եպիսկոպոս անուանեն, ընծայից և պատարագաց արժանիս առնէր զնոսա՝ իբր հաւատարիմ ոստիկանս: Յանձն առնէր նոցա զհեռաւոր մարզսն, և ոչ երբէք սխալ լինէր ի մեծամեծ իրացն արքունի:

«Եւ դուք զմի զայն երբէք ոչ յիշեցէք, այլ հանապազօր ձանձրացուցէք զլսելիս իմ, խօսելով զնոցանէ զամենայն չարութիւն: Տեսէք զի ետուք գործել ինձ զոր ինչ ոչ կամէի, և եղեն վնասք մեծամեծք ի սահմանսն ի մէջ երկուց անհաշտ

թշնամեաց: Եւ մեք դեռ ի հեռաւոր ճանապարհի, և ոչ մի ինչ գործ ի պատերազմիս ի գլուխ երթեալ, և դուք աստէն ի միում տանս յարուցէք ի վերայ պատերազմ՝ որոյ չարագոյն ևս լինելոց է կատարածն իւր քան զարտաքին թշնամեացն»:

Զայս ամենայն և առաւել քան զայն խօսէր ընդ ամենայն աւագանին, և զվնաս յանցանացն արկանէր զմոգպետաւն և զմոգօքն: Եւ ամենայն վզուրկքն և պատուական նախարարք — որ նստէին յատենին և ունկն դնէին յեղյեղուկ լեզուի նորա — ամաչեցեալ կորանային և ընդ երկիր պշնուին, և զգլուխ ի վեր ոչ կարէին համբառնալ:

Բայց սակաւք ի նոցանէ զմիտս հաճելով առէին զայս. «Այո, արքայ քաջ, արքայից արքայ, այդ այդպէս է որպէս ասացերդ, և արդ կարես զամենայն ուղղութեամբ նուաճել. չիք ինչ այն որ ըստ քո կամաց արտաքս կարէ ելանել. զի տուեալ է քեզ աստուածոցն, զի զամենայն զոր և կամիս՝ կարես առնել: Մի՛ նեղեալ տագնապիր յանձն քո և հարկաներ զմիտս մեր ամենեցուն. թերևս և դիւր լիցին հնարք

իրացն կատարածի: Երկայնամիտ լեր, և համբերութեամբ թողացո մարդկանդ անդրէն զքրիստոնէութիւն, և դոքօք զատամբակսն ածցես ի հաւանութիւն»:

Հաճոյ թուեցան բանքն առաջի թագաւորին. և անդէն փաղփաղակի կոչէր զառաջեաւ յամենայն ազգացն որ ունէին զքրիստոնէութիւնն, որ ի զօրու նորա էին, և բռնաբար արգելեալ էր զնոսա, զի մի՛ ոք իշխան լիցի յանդիման պաշտել զԱստուած: Քանզի որ ընդդէմ կացին՝ չարչարեաց և արգել ի նոցանէ զյայտնի պաշտօնն, և ոմանց ոմանց ակամայ երկիր ետ պագանել արեգական, և նստոյց ի սուգ տրտմութեան զամենայն զօրականսն. Իսկ այն օր հրամայէր անդրէն համարձակութեամբ ըստ առաջին կարգին հաստատուն կալ յօրէնս քրիստոնէութեանն: Իսկ որք յանցաւորքն էին՝ ոչ կամէին փաղփաղակի առանց մեծի ապաշխարութեանն դալ և խառնել ի կարգ քրիստոնէութեան, հրամայէր թագաւորն զի բռնի կալցին և տարցեն յեկեղեցին իւրեանց: Եւ երիցանցն համարձակէր, որպէս զկարգ և զկրօնսն՝ ըստ կարգին իւրեանց

արանցեն։ Եւ զհաստեալ ռոճիկն կար-
գէր անդրէն իւրաքանչիւր, և զարգելեալ
բազմամեան ի նոցանէ՝ ի տեղի հրամայէր
մատուցանել, և հանապազորդ յարքունիս
մտանել ոչ արգելոյր զնոսա. և զամենայն
որ զկարգ և կարգեալ էին յառաջագոյն՝
անդրէն յօրինէր։ Խոնարհէր և խօսէր ընդ
նոսա սիրով ըստ առաջին սովորութեանն։

Եւ իբրև զայս ամենայն արար և կար-
գեաց, յանդիման նոցա թողութեան հը-
րովարտակս առաքէր ընդ ամենայն երկիր
իշխանութեան տէրութեան իւրոյ վասն
քրիստոնէից.

«Եթէ ի կապանս ոք կայցէ, արքունի
հրամանաւ արձակեալ լիցի. և եթէ ինչք
ուրուք յափշտակեալ իցեն, դարձցին անդ-
րէն։ Նոյնպէս և երկիրք, եթէ հայրենիք,
եթէ պարգևականք և եթէ քաղաքագիւղք,
և հանեալ ուրուք իցէ, հրամայեցաք զի
դարձցին»։

Եւ իբրև այսմ ամենայնի զնոսա տե-
ղեակ առնէր, խնդրէր ի նոցանէ վկայու-
թիւն հաւատարմութեան յերկիրն Հայոց,
և երդմամբ յուխտ մտանէր առաջի նոցա՝
հաստատութեամբ ամենայն մեծամեծաց

իւրոց, եթէ «Ոչ ինչ յիշեցից ամենևին
զքէն վրիժուցն խնդրելոյ։ Որպէս ունէիք
յառաջ ճշմարտութեամբ զօրէնս ձեր,
այսուհետև առաւել կալարուք. բայց մի-
այն ի ծառայութենէ մերմէ մի՛ ելանէք»։

Զայս ամենայն գրէր և ցուցանէր յեր-
կրին Հայոց և ի բազում յայլ աշխար-
հըս՝ որ ունէին զօրէնս քրիստոնէու-
թեան. և ինքն զաղտ խորամանկեալ փու-
թացեալ դեսպանս առաքէր առ Մարկիա-
նոս կայսր։ Եւ իբրև ստուգեալ ճշմար-
տեաց՝ եթէ Հոռոմք ի բաց կացին ձեռնտու
լինել քրիստոնէութեանն ոչ զօրու օգնա-
կանութեամբ և ոչ այլ իրօք, դարձեալ
անդրէն ի նոյն յառաջին կարծիս մոլորու-
թեանն շրջեցաւ։ Զանյաջողութիւն իրացն
ի ձեռն իւրոց պաշտօնէիցն համարէր. և
այնպէս ածէր զմտաւ՝ եթէ ըստ առաջին
կարծեացն կատարեցից զամենայն։

Իսկ Հայք թէպէտ և ընկալան զգիրն
խաբէբայ ողոքանաց թագաւորին, որ ի վե-
րոյ ունէր զաւետիս կենաց և ի ներքոյ ըղ-
դառնութիւն մահու, զարմացեալ էին ընդ
թերի խորհուրդն. ասէին ցմիմեանս.
«Բանի՛ լիրբ է խորամանկ խաբէութիւն

նորա, զի երկնից և երկրից զփորձ առեալ կշտամբեցաւ և ոչ ամաչէ: Եւ տեղեակ եղեալ մերոյ անքակ միաբանութեանս, տակաւին լքի և լնի. զհետ մտեալ՝ կամի զմեզ լքուցանել:

«Իսկ հաւատացո՞ւք անհաստատ հրամանի նորա. զօ՞ր բարեգործութիւն տեսաք առ ամենայն եկեղեցիս որ են յաշխարհին Պարսից: Զի որ ինքն իւր չար է, այլում բարի ոչ կարէ լինել. և որ ինքն ընդ խաւար գնայ, այլում ոչ առաջնորդէ ճշմարտութեան լուսով: Որպէս զի չէք յանիրաւութենէ արդարութիւն, այսպէս և ոչ ի ստութենէ ճշմարտութիւն, սոյնպէս և ի խռովասէր մտաց՝ ակնկալութիւն խաղաղութեան:

«Այլ մեք ապրեալքս զօրութեամբն Աստուծոյ, և հաստատեալք հաւատովքն ի յոյսն Քրիստոսի, որ եկն և եառ ի սուրբ կուսէն զմարմին մերոյ բնութեանս, և միացեալ անքաժանելի աստուածութեամբն՝ ընկալաւ զչարչարանս մերոյ մեղաց ի յիւր մարմինն, և նովին խաչեցաւ և թաղեցաւ և յարուցեալ երևեցաւ բազմաց, և վերացաւ յանդիման աշակերտացն առ Հայր

իւր, և նստաւ ընդ աջմէ զօրութեանն, զայն հաւատամք Աստուած ճշմարիտ, և նմին ակն ունիմք, որ փառօք Հօր և զօրութեամբ գայ յարուցանել զամենայն ննջեցեալս, և նորոգել զհնութիւն արարածոց, առնել համառօտս յաւիտենից ի մէջ արդարոց և մեղաւորաց:

«Ոչ պատրիմք իբրև զտղայ, և ոչ մոլորիմք իբրև զանտեղեակս, և ոչ խաբիմք իբրև զտգէտս, այլ պատրաստ եմք ամենայն փորձութեանց: Եւ աղաչեմք զԱստուած, և անդադար խնդրեմք ի բազում ողորմութենէ նորա, զի յորում սկսաք՝ ի նմին և կատարեսցուք քաջութեամբ, և ոչ վատութեամբ: Զի արդ արևելք և արևմուտք գիտացին զձեր աստուածամարտ լինել, և զմեզ ի զուր սպանանել ի վերայ ամենայն վաստակոցն մերոց: Վկայեն մեզ երկինք երկնաւորօք և երկիր երկրաւորօք, եթէ չեմք ինչ մեղուցեալ ի միտս մեր անգամ. և ի վերայ պարգևաց և բարիս առնելոյ մեզ՝ զճշմարիտ կեանս կամիք հանել ի մէնջ, որում չէք հնար, և այլ մի՛ լիցի:

«Իսկ արդ հաւատացո՞ւք անարժան բերանոյ նորա, որ ստիպէր չարաչար յուրա-

ցութիւն, և այսօր առանց մի ինչ բա-
րիս գործելոյ լինիցի՞ նա քարոզիչ աւե-
տեաց: Եւ որ հայհոյէրն զՔրիստոս, և
ուրացուցանէր ի նմանէ զհաւատացեալս,
այսօր ակամայ խոստովանութեանն ոչ կա-
րեմք վաղվաղակի յանձն առնուլ: Եւ որ
երդնոյրն ի սնոտի պաշտամունս իւրոյ մո-
լորութեանն՝ անցուցանել զամենայն չար-
չարանս ընդ պաշտօնեայս եկեղեցւոյ, արդ
եկեալ դողանալով զոհութիւն մատու-
ցանէ, և այնու կամի զամենայն չարու-
թիւն իւր ի մէջ հեղուլ: Ոչ այդմ հա-
ւատամք, և ոչ զսուտ հրամանդ յանձն
առնումք»:

Իսկ նա իբրև գիտաց՝ եթէ ոչ կա-
րեմ քակել զհաստատութիւն միաբանե-
լոցն, յայնժամ քակեաց յինքենէ զծերն
լի դառնութեամբ, յորում հանդուցեալ
էր սատանայ զօրութեամբ իւրով, և բա-
զում գործեալ էր նորա նախճիրս. որոյ
կերակուր կամաց իւրոց էր ի մանկութենէ
անարատ մարմին սրբոց, և ըմպելի անյա-
գութեան նորին՝ արիւն անմեղացն: Յա-
ւելոյր եւս ի վերայ չարութեան նորա և
զիւր մահաբեր հրամանն՝ գունդս գունդս

ՑԵՂԱՆԱԿ

յամենայն աշխարհայն գումարէր ընդ
նմա, և բազում երամակս փղաց յղէր
ընդ նմա:

Հասեալ մերձ ի սահմանս Հայոց՝ մնա-
նէր ի քաղաքն Փայտակարան, և զզօրսն
ամենայն սփռէր տարածանէր շուրջ ըզ-
քաղաքաւն առ ի զգուշութիւն պատրաս-
տութեան իւրոյ չարահնար խորհրդոյն:
Եւ յամուր որջն մտեալ հին վիշապն չա-
րաթոյն, և բազում կեղծաւորութեամբ
զինքն թաքուցանելով յանհրկիւղութիւն,
հեռաւորացն ահագին ձայնիւ սաստէր, և
ի մերձաւորսն իբրև զօձ սողալով փչէր:
Սա էր իշխան և հրամանատար ամենայն
տէրութեանն Պարսից, որում անուն էր
Միհրներսեհ. և չէր ոք ամենևին՝ որ իշ-
խէր ըստ ձեռն նորա ելանել: Եւ ոչ միայն
մեծամեծք և փոքունք, այլ և ինքն թա-
գաւորն հրամանի բերանոյ նորա անսայր.
որոյ և ձախող իրացն իսկ բուռն հարեալ
էր նորա:

ՉՈՐՐՈՐԴ ՑԵՂԱՆԱԿ

ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹԻՒՆ ԲԱԺԱՆԵԼՈՑՆ

Ի ՍՈՒՐԲ ՈՒԽՏԷՆ

Մինչև ցայս վայր ոչ ինչ կարի զանգիտէի պատմել զհարուածս ազգիս մերոյ՝ որ յարտաքին թշնամեացն ճշմարտութեան չարաչար յարեան ի վերայ մեր. որք սակաւագոյնք հարին զմեզ, և յոլովագոյնք հարեալ գտան ի մէնջ, քանզի դեռ ևս միաբանք և հաւասարք էաք: Թէպէտ և ոմանք ի ծածուկ ունէին զերկմտութիւն նենգութեանն, սակայն յաչս արտաքնոցն ահաւոր երևէր միաբանութիւնն. որպէս յերկուս և յերիս տեղիս ոչ կարացին կալ առաջի:

Արդ յայսմ հետէ և անդր, ուր սպըրդեալ անկանի երկպառակութիւն ի ներքըս, ընդ քակել միաբանութեանն՝ և երկ-

նաւոր առաքինութիւնն հեռանայ. և անձնընտիրք լինելով՝ յոյժ բազմանայ լալումն ողբոյս: Քանզի հատեալ անկան անդամքն՝ որ յառաջագոյն առուն սուրբ մարմնոյս էին, վասն որոյ դառնայ մարդ յարտասուս առաջի մերձակայ դիականն. եւս առաւել նոր դառնութեամբ ի վերայ այնորիկ որ յոգի և մարմին առ հասարակ դիականանայ: Եւ եթէ ի վերայ միոյ անձին այսպէս, որչափ ևս առաւել ի վերայ ողջոյն ազգի միոջ:

Այլ յայսմ տեղւոջ ոչ միայն ի վերայ միոյ ազգի է ողբումս մեր, այլ ի վերայ ազգաց և աշխարհաց. զոր և յառաջ մատուցեալ ասացից ըստ կարգի, թէպէտ և ոչ խնդութեան մօք: Ահա ակամայ նշանագրեմ զբազումս որ կորեան ի ճշմարիտ կենացն իւրեանց, և պատճառք եղեն և այլոց բազմաց կորստեանն, ոմանց՝ երևելեացս միայն, և այլոց՝ երևելեաց և աներևութից: Եւ այն՝ եւս չար է քան զամենայն. դուռն՝ զոր բացին կորստեան՝ Աստուծոյ միայն կարողութիւն է փակել զնա. այլ ըստ մարդկան սահման՝ ահա անցեալ է հնար:

Այս անօրէն Միհրներսեհ, քանզի յառաջագոյն ստուգեալ գիտէր զամբարշտութիւնն Վասակայ, և յայնմ ժամանակի ևս յղէր և կոչէր զնա առ ինքն: Որպէս նորա իսկ յառաջագոյն զատեալ և որոշեալ էր ի միաբանութենէն Հայոց, եկն և յանդիման եղև. և ստուգէր զիւր հաւատարմութիւնն և զՀայոց անկրաւ ապստամբութիւնն: Ցուցեալ և պատմեաց ևս առաւելաբանութեամբ զոր ինչ ոչ էր գործեալ Հայոց, և կամէր ընտանեբար ընդ միտ մտանել անօրինին:

Բայց նա թէպէտ և ի ներքոյ յոյժ դարովէր զնա, այլ արտաքին դիմօք մեծարեաց, և եդ առաջի նորա զմեծամեծ պարգևս երկրաւորս: Եւ խոստացաւ նմա իշխանութիւն աւելի քան զոր ունէրն, և հայեցոյց զնա ի կարծիս սնոտիս՝ որ ի վեր էր քան զիւր տէրութիւնն. իբր թէ անկ իցէ նմա հասանել մինչ ի թագաւորական վիճակն. բայց միայն հնարս իրացն խորհրդեսցէ, թէ որպէս քակեսցի միաբանութիւն ուխտին Հայոց, և թագաւորին կամքն կատարեսցին յաշխարհին:

Եւ իբրև յանձն էառ զամենայն ինչ

երթալ զկնի կամաց նորա, գիտաց և ծերն զառանցեալ եթէ թմրեալ և ցնորեալ և քակեալ է ի հաստատութենէ միաբանելոցն. յոյժ մխիթարեցաւ ի միտս իւր տրտմեալս, և ած զմտաւ՝ թէ և զամենեսեան այսպէս կարիցեմք որսալ յանգիւտ կորուստ:

Եւ իւրոյ հնարագիտութեանն տայր զանխմտութիւն առնն. և այնմ ոչ էր տեղեակ՝ թէ նա իւրովի զիւր անձն զատեալ և որոշեալ է ի սուրբ եկեղեցւոյն, հեռացեալ և օտարացեալ ի սիրոյն Քրիստոսի:

Քանզի մոռացօնք եղեն նմա զպատուէր Որդւոյն Աստուծոյ, և ոչ յիշեաց զքարոզութիւն սուրբ աւետարանին. և ոչ ի սպառնալեացն զանգիտեաց, և ոչ յաւետիսն մխիթարեցաւ: Ուրացաւ զաւազանն որ յղացաւ զնա, և ոչ յիշեաց զընկալուչ սուրբ Հոգւոյն որ ծնաւ զնա: Անարգեաց զմարմինն պատուական՝ որով սրբեցաւն, և առ ոտն եհար զարիւնն կենդանի՝ որով և քաւեցաւն ի մեղաց: Ջնջեաց զգիր որդեգրութեանն, և իւրովք ձեռօք խորտակեաց զհաստատուն կնիք մատանւոյն: Ել ի թուոյ երանելեացն, և ապստամբեցոյց ընդ իւր զբազումս:

Զեւն արկ կամակորութեամբ և եմուտ յորդեգրութիւն դիւապաշտութեանն, և եդև ամսն չարին, և ելից զնա սատանայ ամենայն խորամանկութեամբ: Ի ձեռն էառ իբրև զվահան, և ապա զնա իբրև զզրահս, և եդև իբր զինուոր կատարեալ կամաց նորա: Մարտեաւ հնարիւք ընդ իմաստունս, և յոյժ խորագիտութեամբ ընդ գիտունս, յայտնի ընդ անմեղս, և ի ծածուկ ընդ խորհրդականս. ձեռն էարկ և եհան զբազում ի գնդէն Քրիստոսի, և խառնեաց ի գունդս դիւաց: Եւ ի բազում յայլ տեղիս գողաբար սողեցաւ և եմուտ իբրև գօձ ի մէջ ամրացելոցն. և խրամ հատեալ յափշտակեաց և էառ և եհան յայտնութեամբ զբազումս յազատաց և զբազմագոյնս ի շինականաց, և զայլ ոմանս յանուանեալ քահանայից:

Որոց անուանքն են այս՝ գործակցաց նորա.

Իշխանն Ռշտունեաց՝ Արտակ անուն.
Իշխանն Խորխոռունեաց՝ Գադիշոյ անուն.
Իշխանն Վահեւունեաց՝ Գիւտ անուն.
Իշխանն Բագրատունեաց՝ Տիրոց անուն.
Իշխանն Ապահունեաց՝ Մանէճ անուն.

Իշխանն Գաբեղենից՝ Արտէն անուն.
Իշխանն Ակէոյ՝ Ընջուղ անուն.
Իշխանն Ուրծայ՝ Ներսեհ անուն.
Իշխանն մեւս ևս Պալունեաց՝ Վարազշապուհ անուն.
Սեպուհ մի Ամատունեաց Մանէն անուն.
Բազում և այլ ազատ մարդիկ, որ Ոստանիկն անուանեն՝ յարքունի տանէ:

Եւ բովանդակ զի էր բոլոր աշխարհն ապստամբեցեալ յուրացութիւն, ոչ միայն ըստ աշխարհիկ բազմութեանն, այլ և զբազումս յուխտէ եկեղեցւոյն. մանաւանդ սուտ երիցամբքն՝ որով գործէր զչարիսն. երէց մի Ջանգակ անուն, երէց մի Պետրոս անուն, սարկաւագ մի Սահակ անուն. զորս յղէր առ անմեղ մարդիկ, խաբէր և պատրէր. սուրբ աւետարանաւն երդնուին և ասէին, եթէ «Ի թագաւորէն շնորհեսցի ամենեցուն քրիստոնէութիւնդ»: Եւ այսպէս խորամանկութեամբ հանէին զբազումս ի սուրբ միաբանութենէն, ածէին և խառնէին ի գունդս ուրացողացն:

Եւ ժողովեաց զամենայն զայթակղութիւն, և արար գունդ զօրաց բազմաց. գրեաց և եցոյց զբազումս ի նոցանէ յա-

կանէ յանուանէ մեծ հազարապետին, և զիւր քաջութիւն արութեանն, մեծապէս պարծելով՝ որպէս աշակերտեալ ի մորութիւն խաբէութեան, և բաժանեալս և երկցեալս երկեցոյց զզօրսն Հայոց:

Եւ երբ և այս ամենայն չարիք յաջողեցան նմա, քակեաց և զմիաբանութիւն աշխարհին Վրաց ի Հայոց, և Աղուանից ոչ ետ յառաջ խաղալ. և զաշխարհն Աղձնեաց ըստ նմին իսկ օրինակի յետս կալաւ: Գրեաց հրովարտակ և աշխարհին Յունաց, ցուցանելով նոցա այլ ընդ այլոյ ստութեամբ, առ այր մի, որոյ Վասակ անուն էր, յայնց Մամիկոնէնից՝ որ կան ի ծառայութեան Յունաց: Եւ ի թշուառութեան ժամանակին այրն այն սպարապետ էր սորին Հայոց, և հաւատարիմ զօրացն Հոռոմոց ի սահմանին Պարսից, և արտաքոյ էր օրինացն Աստուծոյ գործովք իւրովք: Եգիտ այս Վասակ զայն Վասակ իւր գործակից ի մեծամեծ չարիսն՝ յոր միաբանեցին երկոքեանն:

Գրէր նա և ցուցանէր հանապազորդ, իբր թէ ամենայն Հայք զկնի իւր միաբանեցին. Եւ զնոյն գիր մեծաւ զգուշութեամբ ներքին Վասակն տայր տանել ի Թագաւորանիստ քաղաքն կայսեր. մինչև զնուրբ եպիսկոպոսացն զմիտս ևս ուծացոյց ի նոցանէ, և զամենայն զօրսն Յունաց յերկրպայս արար յուխտէն:

Մանաւանդ զի ի ձեռն սուտ քահանայից պատրէր և խաբէր իբրև ճշմարիտ մարդովք. աւետարան հանդերձ խաչիւ տայր տանել, և զիւր զամենայն սատանայական ստութիւնն նոքօք ծածկէր: Գնէր զենքն յաստուածպաշտութեան կարգի, և զամենայն կողմ ուրացելոցն. առաւել զենքն հաւատէր հաստատուն քան զամենայն զօրսն Հայոց. երդնոյր և հաստատէր, ես և զամենայն հրամանս թողութեան յարքունուստ ցուցանէր:

Այն էին և կամք Յունաց աշխարհին, ընել զայն ախորժութեամբ. այլ ի ձեռն նորա առաւել ևս ի նոյն յեղեալ տապալեցան:

Սոյնպէս առնէր և ընդ ամենայն կողմանս ամրականաց աշխարհին, ի Տմորիսն և ի Կորդիսն, յԱրցախ և յԱղուանսն, ի Վիրս և յաշխարհն Խաղտեաց. յղէր պընդէր՝ զի ապնջականութեան ոք արժանի մի՛ արասցէ:

Եւ ըստ մեծի չարութեան նորա առաւել ևս ժամանակն երեր նմա զյաջողութիւն իրացն. զի ամենեքին արտաքուստ օգնական ոք ոչ գտաւ զնդին Հայոց, բայ յայնց Հոնաց՝ որոց բանս եղեալ էր: Սակայն և վասն նոցա կուտեաց զբազում պրուձին Արեաց, արգել և փակեաց ըզդրունս ելի նոցա. քանզի ոչ տայր դադար ամենևին Թագաւորին Պարսից, այլ յղէր և կոչէր զզունդս բազումս ի պահակն Ճորայ և զՎրաց աշխարհին բովանդակ զումարէր, զզօրսն Լփնաց և զծղբաց, և զԿատն, զԳաւն և զԳուգարն և զԽորսանն և զՀեծմնատակն, զՓասխն և զՓոսխն և զՓիւքուան և զամենայն զօրսն Թաւասպարանն, զլեռնայինն և զդաշտայինն, և զամենայն ամրակողմն լերանցն: Էր զոր կարասեաւ, մեծաւ պարգևօք և առատաձեռն բաշխելով զգանձսն արքունի, և էր զոր հրամանաւ Թագաւորին սաստիւ տագնապէր:

Զայս ամենայն լրբե արար և կատարեաց ըստ հրամանի Թագաւորին, որ ըստ օրէ գրէր և ցուցանէր մեծ հազարապետին Պարսից, որ զօղեալ և թաքուցեալ

էր ի քաղաքն Փայտակարան: Համարձակեցաւ այնուհետև և նա ցուցանել զինքն բազում ազգաց. էր որոց ահ արկանէր, և էր որոց սիրով պարգևս բաշխէր: Կոչէր առ ինքն զՎասակ, և որք ընդ նմա իշխանքն ամենեքեան, բազում պարգևս շնորհէր նոցա յարքունուստ, և զօրացն որ ի նորա բանի էին: Տարեալ էր զառաջեաւ և զուրացեալ երիցունսն. ցուցանէր, հաստատէր և յայտ առնէր, եթէ ուժօք որասցայց զնոսա՝ քակել ի միաբան ուխտէն: Իսկ հազարապետն իբրև զայն լսէր՝ յոյժ շնորհակալ լինէր երիցանցն, և յոյս առաջի դնէր նոցա. «Եթէ լիցի մեր յաղթութիւնդ զայլոց քահանայից կեանս դոցա շնորհեցից, և զմեծ վաստակ դոցա ցուցից Թագաւորին»:

Եւ այսպէս շարժեաց և շփոթեաց զաշխարհն Հայոց, մինչև զբազում եղբարս հարազատս քակեաց ի միմեանց. ոչ եթող միաբան զհայր և զորդի, և ի մէջ խաղաղութեան արար խռովութիւն:

Եւ անդէն իսկ յիւրում աշխարհին եղբօրորդիք երկու էին նորա ի սուրբ ուխտին առաքինութեան. զրկեաց և եցոյց վա-

սըն նոցա յարքունիս, և էառ իշխանութիւն ի վերայ կենաց նոցա, մերժեաց և եհան զնոսա յաշխարհէն, զի մի այլ դարձցին անդրէն: Հալածեաց և փախոյց զամենայն միայնակեացս աշխարհին, որք հայհոյէին զանդարձ ամբարշտութիւն նորա: Արար և կատարեաց զամենայն չարիսն ընդդէմ ճշմարտութեանն. և զոր ինչ ոչ գիտէին անօրէն հեթանոսքն՝ իմացուցանէր նոցա, և վասն ուխտին քրիստոնէութեան՝ եթէ որպէս հնարիւք կարասցէ բառնալ յաշխարհէն Հայոց:

Զայս ամենայն չարիս իբրև ետես ի նմա Միհրներսեհ, քան յանձն իւր՝ առաւել ի նա էր յուսացեալ: Հարցանէր և ստուգէր՝ թէ քանի՛ այր կայ ի Հայոց աշխարհին ի գնդին Վարդանայ ընդ ամենայն բազմութիւնն: Իբրև լուաւ ի նմանէ՝ թէ աւելի քան զվաթսուն հազար են, խնդրէր ևս տեղեկութիւն վասն իւրաքանչիւր անձին քաջութեան, և կամ քանի՛ այն որք իցեն որ սպառազէնքն իցեն, և կամ քանի այն որք իցեն որ մերկ առանց զինու աղեղնաւորք իցեն. սոյնպէս և վասն վահանաւոր հետևակացն:

Եւ իբրև լուաւ զթիւ համարոյ բազմութեանն, առաւել ևս փութացաւ ուսանել՝ թէ քանի՛ք իցեն պարագլուխք քաջ նահատակացն, զի երիս ընդ միոյ պատրաստեսցէ առ մի մի ի նոցանէ. թող զայլն ամենայն: Այլ և դրօշից անգամ իւրաքանչիւրոց տեղեկանայր ի նմանէ. և թէ քանի՛ գունդ զզօրսն բաժանիցեն, և ո՛ր ոք ի նոցանէ առաջինք լինիցին, և ո՛ր զօրագլուխ յորմէ՛ կողմանէ յառաջ մատանիցէ, և զինչ անուանք իւրաքանչիւր համհարզացն իցեն, և քանի՛ փողահարք ի մէջ գնդին ձայնիցեն: Դակի՞շ գործիցեն աղեղունք, եթէ արձակ բանակեսցին. ճակատ առ ճակա՞տ գործիցեն, եթէ համագունդ ընդ մի տեղի դրդիցեն: Ո՛ ոք ի նոցանէ յերկրպագս կայցէ, և կամ ո՛ ոք ի նոցանէ զանձն ի մահ դնելով զուն գործիցէ:

Եւ իբրև զայս ամենայն տեղեկացաւ ի նմանէ, կոչէր զամենայն զօրագլխեանն, պատուէր հրամանի տայր ամենեցուն յանդիման նորա, զի խրատու նորա լուիցեն ամենեքեան: Եւ զամենայն զօրսն զօրագլխօքն հանդերձ յանձն առնէր առն միում

յաւազացն՝ որում անուն էր Մուշկան Նիսալաւուրտ:

Եւ ինքն խաղայր անդէն գնայր յերկիրն արեւելից. և յանդիման եղեալ մեծի թագաւորին, պատմէր զամենայն անցս իրացն, զիւր հնարաւոր իմաստութիւնն և զվատակայ խաբեբայ պատրանս հայթայթանացն. որպէս զառաջինն զիւր զամբարըշտութիւնն կամեցաւ ծածկել այնու՝ զի քակեալ երկպառակեաց զգունդն հայոց:

Իբրև լուաւ զայս ամենայն թագաւորն ի բերանոյ մեծ հազարապետին, դառնացաւ յանձն իւր, և ասէ անսուտ երդմամբ. «Եթէ ապրեսցի անօրէնն այն ի մեծ պատերազմէն, մեծաւ անարգանօք տամ ըմպել նմա զդաժակն դառնութեան մահու»:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ

ՅԱՐՁԱԿՈՒՄՆ ԱՐԵՒԵԼԵԱՑ

Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր. և այնպէս աներկեւղս առնէ ըզմարդիկն՝ իբրև զանմարմին զօրս հրեշտակաց. որպէս անդստին ի սկզբանէ է տեսանել զլազումն բազում անգամ ի բազում տեղիս: Մարդիկ, որ սիրովն Աստուծոյ իբրև զինու վառեալք էին, ոչ ինչ խնայեցին զանգխանելով իբրև զանարի՝ զօրով վատասիրտք, կամ ի մահ անձանց, կամ յափշտակութիւն ընչից, կամ ի խողխողումն սիրելեաց, կամ ի գերութիւն ընտանեաց, ելանել ի հայրենի երկրէն և անկանել ի ստրկութիւն յօտարութեան. առոչինչ համարեցան զայս ամենայն անցս չարչարանացն. այլ միայն միաբան կալ ընդ

Աստուծոյ, զի ի նմանէ միայն մի՛ գերի ելցեն. և ամենայն երևելի մեծութեանս գնա բաւական համարեցան՝ ընտրեալ ի միտս իւրեանց: Եւ զուրացութիւնն մեռելութիւն վարկանէին, և զմահ վասն Աստուծոյ՝ անանց կենդանութիւն, և ծառայել յերկրի՝ ազատութիւն կենաց իւրեանց, և ընկենուլ զանձինս յօտարութիւն՝ ընդ Աստուծոյ գիւտից,

Որպէս յայժմ ժամանակի տեսաք աչօք մերովք, զի զնոյն նահատակութիւն նահատակեցաւ և աշխարհս Հայոց:

Քանզի իբրև ետես մեծն Վարդան զերկպառակութիւն աշխարհին իւրոյ, ոչ ինչ թերահաւատութեամբ զանգիտեաց: Թէպէտ և սուգեալ գլխաց զբազմաց այլոց ևս զերկմտութիւն՝ որ դեռ ևս ընդ նմա միաբանեալք էին, քաջալերեաց յանձն իւր և քաջալերեաց զզօրսն իւր. քանզի ինքն իսկ բռնացեալ ունէր զթագաւորանիստ տեղին միաբանութեամբ նախարարացն, որ ոչ քակեցան ի սուրբ ուխտէն: Հրաման տուեալ ամենայն զօրացն ժողովել յԱրտաշատ քաղաք, փոխանակ յետս կացելոցն որ ելին

զհետ իշխանին Սիւնեաց, զեղբարս կամ զորդիս կամ զեղբարցն որդիս ի տեղի նոցա մատուցանէր, և զիւրաքանչիւր զօրս տայր նոցա, զի դեռևս ինքն ունէր զամենայն աշխարհն:

Եւ փութով ամենեքեան ի տեղի պատերազմին եկեալ հասանէին իւրաքանչիւր զօրօք և ամենայն պատրաստութեամբ, նոքա և որ բուռնքն հաստատուն կացեալ էին ի տեղւոջն.

Ներշապուհ Արծրունի,
Եւ Խորէն Խորխոռունի,
Եւ ինքն Սպարապետն,
Եւ Արտակ Պալունի,
Եւ Վահան Ամատունի,
Եւ զունդն Վահեւունեաց,
Եւ Թաթուլ Դիմաքսեան,
Եւ Արշաւիր Արշարունի,
Եւ Շմաւոն Անձաւացի,
Եւ Տաճատ Գնթունի,
Եւ Ատոմ Գնունի,
Եւ Խոսրով Գաբեղեան,
Եւ Կարէն Սահառունի,
Եւ Հմայեակ Դիմաքսեան,
Եւ միւս ևս այլ Դիմաքսեան Գազրիկ,

Եւ Ներսեհ Քաջբերունի,
Եւ Փարսման Մանդակունի,
Եւ Արսէն Ընծայացի,
Եւ Այրուկ Սլկունի,
Եւ Վրէն Տաշրացի,
Եւ Ապրսամ Արծրունեացն,
Եւ Շահխոռապեան արքունի,
Եւ Խուրս Սրուանձտեաց,
Եւ Քողեանքն և Ակէացիքն և Տրպատունիքն, և զօրքն Ռըշտունեաց, և ամենայն գործակալքն արքունի իւրաքանչիւր զօրօքն հանդերձ:

Սոքա ամենեքեան համագունդք հասանէին ի գործ պատերազմին ի դաշտն Արտազու, և լինէր հանդէս համարուն վաթսուն և վեց հազար այր ընդ հեծեալ և ընդ հետևակ:

Եկին ընդ նոսա սուրբքն Յովսէփ և Ղևոնդ երէց, և բազում և այլ քահանայք, և ևս բազմագոյն պաշտօնեայք: Քանզի ոչ ինչ զանգիտեցին և նոքա գալ ընդ նոսին ի գործ պատերազմին. զի ոչ եթէ մարմնական համարէին զկռիւն, այլ հոգևոր առաքինութեան. ցանկային մահակից լինել քաջ նահատակացն:

Սկսաւ սպարապետն խօսել միաբանութեամբ նախարարացն ընդ զօրսն և ասէ.

«Ի բազում պատերազմունս մտեալ է իմ և ձեր ընդ իս. է ուրեք զի քաջապէս յաղթեցաք թշնամեացն, և է ուրեք զի նոքա մեզ յաղթեցին. և բազում այն է որ յաղթող գտեալ եմք և ոչ յաղթեալք: Եւ միանգամայն այն ամենայն էին մարմնոյ պարծանք. քանզի հրամանաւ անցաւոր թագաւորին մարտնչէաք: Որ փախչէր՝ վատանուն յաշխարհի երևէր, և անողորմ մահ ի նմանէ գտանէր. իսկ որ քաջութեամբ յառաջ մատչէր՝ քաջ անուն ազգի ժառանգէր, և պարգևս մեծամեծս յանցաւոր և ի մահկանացու թագաւորէն ընդունէր: Եւ մեք իսկ աւասիկ յիւրաքանչիւր մարմինս ունիմք վէրս և սպիս բազումս. և բազում այն քաջութիւն իցէ՝ վասն որոյ առեալ իցէ և պարգևս մեծամեծս: Անարգ և անօգուտ զքաջութիւնսն համարիմ, և առ ոչինչ զպարգևսն բազումս. վասն զի ամենեքեան խափանելոց են:

«Իսկ արդ եթէ վասն մահկանացու հրամանատուին զայն արութիւնս կատա-

րեալք, որչափ ևս առաւել վասն անմահ
թագաւորին մերոյ, որ տէրն է կենդանեաց
և մեռելոց, և դատելոց է զամենայն մարդ
ըստ գործոց իւրոց: Ապաքէն եթէ կարի
շատ յառաջ մատուցեալ ծերացայց, սա-
կայն ելանելոց եմք ի մարմնոյ աստի, զի
մտցուք առ Աստուած կենդանի, որ ոչ ևս
ելանիցեմք ի նմանէ:

«Արդ աղաչեմ զձեզ, ով քաջ նիզա-
կակիցք իմ. մանաւանդ զի բազումք ի ձէնջ
լաւագոյնք էք քան զիս արութեամբ, և
գահու ի վեր ըստ հայրենի պատուոյն.
բայց յորժամ ձերով կամօք և յօժարու-
թեամբ առաջնորդ և զօրագլուխ ձեզ կա-
ցուցէք, հեշտ և բաղձալի թուեսցին բանք
իմ ի լսելիս մեծամեծաց և ի փոքունց: Մի՛
երկուցեալ զանգիտեսցուք ի բազմութենէ
հեթանոսացն, և մի՛ յահագին սրոյ առն
մահկանացուի զթիկունս դարձուսցուք. զի
եթէ տացէ Տէր յաղթութիւն ի ձեռս մեր,
սատակեսցուք զզօրութիւն նոցա, զի բար-
ձրասցի կողմն ճշմարտութեան. և եթէ
հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ
մահուամբ պատերազմիս, ընկալցուք խըն-
դութեամբ սրտիւ. բայց միայն յարու-

թիւնս քաջութեան՝ վատութիւն մի՛ խառ-
նեսցուք:

«Մանաւանդ զի անմոռաց է ինձ, յիշե-
լով զիմ և զոմանց ի ձէնջ, ի ժամանա-
կին՝ զի զանօրէնն Իշխան խաբեցաք պատ-
րեցաք իբրև զմանուկ մի տղայ անպիտան.
իբր այն եթէ ի վերին երեսս զկամս նորա
ամբարշտութեանն կատարեցաք. բայց ի
ծածուկ զխորհուրդս Տէր ինքնին վկայէ
մեզ, որպէս անքակ կացեալ եմք ի նմանէ:
Զոր և դուք ինքնին իսկ գիտէք, վասն
սիրելեաց մերոց որ ի մեծի նեղութեան էին՝
հնարս խնդրեաք վասն յանդորր հանելոյ.
զի նոքօք հանդերձ մարտ եդեալ կռուես-
ցուք ընդ անօրէն Իշխանին վասն հայրենի
աստուածատուր օրինացն: Եւ իբրև նոցա
ոչ ինչ կարացաք օգնել, անհնար լիցի
այս՝ եթէ վասն մարմնաւոր սիրոյ զԱս-
տուած ընդ մարդկան փոխանակիցեմք:

«Իսկ արդ յերկուս և յերիս կռիւս
Տէր ինքնին մեծաւ զօրութեամբ օգնեաց
մեզ, որպէս զի զանուն քաջութեան ժա-
ռանգեցաք, և զզօրսն արքունի չարաչար
հարաք, և զմոգսն անողորմ սատակեցաք,
և զպղծութիւն կռապաշտութեանն ի տե-

ղեաց տեղեաց սրբեցաք, զանօրէն հրաման թագաւորին եղծաք ապականեցաք, զխռովութիւն ծովուն ցածուցաք, լեառնացեալ ալիքն դաշտացան, բարձրացեալ փրփուրն ապառեցաւ, գազանացեալ սրտմտութիւնն դադարեաց: Որ ի վերայ ամպոց որոտայր, նկուն եղեալ՝ քան զավորական բնութիւնն ի վայր գտաւ՝ ընդ մեզ խօսելով: Որ բանիւ հրամանաւ կամէր կատարել զչարութիւնն իւր ի վերայ սուրբ եկեղեցւոյ, արդ աղեղամբ և նիզակաւ և սրով կռուի: Որ երբեմն զհանդերձ կարծէր ունել մեզ զքրիստոնէութիւնն, արդ երբեմն զզօն ի մարմնոյ՝ չկարէ շրջել, թերևս և ոչ այլ կարասցէ մինչև ի կատարած: Քանզի հիմունք սորա հաստատութեամբ եղեալ են ի վերայ վիմին անշարժութեան, ոչ ի վերայ երկրի, այլ ի վեր յերկինս, ուր ոչ անձրևք իջանեն և ոչ հողմք շնչեն և ոչ հեղեղք յարուցանեն: Եւ մեք թէպէտ և մարմնով յերկրի եմք, այլ հաւատով յերկինս եմք շինեալ, ուր ոչ ոք կարէ հասանել յանձեռագործ շինուածն Քրիստոսի:

«Հաստատուն կացէք յանշուշտ զօրա~

գլուխն մեր, որ ոչ երբէք մոռասցի զգործս նահատակութեան ձերոյ: Ո՛վ քաջք, մեզ այս մեծապէս է՝ զոր կատարեաց Աստուած ի ձեռն մերոյ բնութեանս, յորում և զօրութիւնն Աստուծոյ մեծապէս երևի: Զի եթէ զայս կատարելով ի վերայ աստուածային օրինացն՝ պարծանս անձանց ժառանգեցաք, և զքաջ անուն ազգատոհմին մերոյ թողաք եկեղեցւոյ, և վարձուց ակնկալութիւն ի Տեառնէ է՝ որ պահի իւրաքանչիւր ումեք ի մէնջ ըստ սրտին յօժարութեան և ըստ գործոց առաջարկութեան, որչափ ևս առաւել եթէ մեք մեռանիցիմք ի վերայ մեծի վկայութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում և երկնաւորքն են ցանկացեալ, եթէ գոյր հնար: Եւ զի այս պարգևք ոչ ամենեցուն է անկ, այլ որում պատրաստի ի բարերար Տեառնէն, և մեզ այս ոչ եթէ յարդար գործոց ինչ պատահեաց, այլ յաննախանձ պարգևատուէն. որպէս և ասէ իսկ ի սուրբ կտակարանին. «Ուր առաւել եղեն մեղքն, անդէն առաւելան շնորհքն Աստուծոյ»:

«Եւ մեզ կարի քաջ ի դէպ եկանէ

հրաման պատասխանւոյս այսորիկ. որպէս
և առաւելապէս երևեցաք մարդկան ամ-
բարշտեալք, կրկին առաւելապէս երևես-
ցուք արդարացեալք մարդկան և հրեշտա-
կաց և Հօրն ամենեցուն: Զի որ օր լուան
ապաքէն զմէնջ մարդիկ ի գործ ամբարշ-
տութեանն, արտասուս բազում հեղան ի
սուրբ եկեղեցւոջն, և ևս բազմագոյն ի մէջ
սիրելեացն մերոց: Նա և ընկերք մեր սրով
սրտմտեալ սպառնային մեզ, և մահ դա-
նութեան ի վերայ հասուցանել կամէին. և
ծառայքն մեր սարտուցեալ փախչէին ի
մէնջ: Եւ հեռաւորաց, որոց լուեալ էր
զանուն քրիստոնէութեան մերոյ, քանզի
ոչ էին տեղեակ խորհրդոյն մերոյ, ողբս ի
բերան առեալ անդադար աշխարէին զմեզ,
և անգիտութեամբ հայհոյութիւնս բա-
զումս խօսէին զմէնջ: Եւ որ մեծն քան
զամենայն ասացից. ոչ միայն մարդիկ յերկ-
րի՝ այլ և հրեշտակք յերկնից զերեսս ի-
րեանց դարձուցին ի մէնջ, զի մի՛ տխուր
զխմօք հայեսցին ի մեզ:

«Եւ ահա եկն եհաս ժամանակ, զի զա-
մենայն զկեղծ անուն ի մէնջ ի բաց բարձ-
ցուք: Յայնժամ իբրև զթախծեալ սգաւոր՝

յոգի և մարմին էաք տրտմեալք, այսօր
զուարթացեալ և զգաստացեալք յերկո-
սեան առ հասարակ եմք լուացեալք. քանզի
և զՏէրն բարերար ընդ մեզ տեսանեմք
յառաջնորդութիւն. չէ մեր մարդ զօրա-
վար, այլ զօրագլուխն ամենայն մարտիրո-
սաց: Երկեւղ՝ թերահաւատութեան է նշա-
նակ. զթերահաւատութիւն մեք ի մէնջ
վաղ մերժեցաք, ընդ նմին և երկեւղն փա-
խիցէ ի մտաց և ի խորհրդոց մերոց»:

Զայս ամենայն առաքինի զօրավարն խօ-
սեցաւ ընդ ամենայն բազմութեանն. զուար-
ճեալ և զմի մի ի նոցանէ քաջալերէր ի
ծածուկ և սրտապնդէր, և զամենայն պա-
կասութիւն աղքատութեան լնոյր: Որոյ ոչ
ինչ գոյր զօրականին՝ յանձնէ և յընկերաց մա-
տուցանէր. որոյ զէն չէր՝ զէն պատրաստէր. և
որում հանդերձ պիտոյ էր՝ հանդերձ ըզ-
գեցուցանէր, և որում երիվար՝ երիվար
տայր: Եւ առատ ոսկւոք ուրախ առնէր
զամենեսեան, և զուարթագին զէնքն ցու-
ցանէր ամենեցուն: Եւ ըստ պատերազմա-
կան կարգին՝ զքաջ արանց զյիշատակա-
րանս հանապազ երկրորդէր առաջի նոցա.

զի և ինքն խոկ տեղեակ էր ի մանկութենէ
խորմէ սուրբ կտակարանաց: Զոր և ի ձեռն
առեալ զքաջ նկարագիրն Մակաբայեցւոց
ընթեռնոյր ի լսելիս ամենեցուն, և յոր-
դառատ բանիւք զելս իւրացն խմացուցանէր
նոցա, որպէս մարտուցեալ կռուեցան ի վե-
րայ աստուածատուր օրինացն ընդդէմ Թա-
գաւորին Անտիոքացւոց: Զի թէպէտ և ի
նմին կատարեցան մահուամբ, սակայն ա-
նուն քաջութեան եկաց մինչև ցայսօր ժա-
մանակի, ոչ միայն յերկրի՝ այլ և անմա-
ռաց յերկինս: Նա և զայն յուշ առնէր
զօրականին, որպէս ազգատոհմն Մատա-
թեայ քակտեալ բաժանեցան ի միութենէ
նորա, դարձան ի հրաման Թագաւորին, շի-
նեցին մեհեանս, մատուցին զոհս պղծու-
թեան, խոտորեցան յԱստուծոյ, և ընկա-
լան զպատիժս պատուհասի մահուան ի
սուրբ միաբանելոյն. իսկ Մատաթի և որք
ընդ նմայն էին՝ ոչ ինչ լքեալ թուլացան,
այլ ևս առաւելապէս պնդեցան, և ձեռ-
նամուխ եղեն ի գործ պատերազմին բա-
զում ժամանակս: Զայս ասէր, և անդէն ի դաշ-
տին զտեղի առեալ՝ զզօրսն գետեղէր, և յամե-
նայն կողմանց տակաւ զպրուձին կազմէր:

Իսկ յետ ոչ բազում աւուրց զօրա-
գլուխն Պարսից խաղայր գայր ամենայն
հեթանոսական բազմութեամբն. և եկեալ
հասանէր յաշխարհն Հայոց ի Հեր և ի
Զարեւանդ գաւառ: Եւ անդէն զտեղի ա-
ռեալ նորա ի գաւառին՝ բանակ բոլորէր,
փոս հատանէր, պատնէշ կանգնէր, շեր-
տաւոր փակէր, ամրացուցանէր իբրև զքա-
ղաք ամենայն պատրաստութեամբ: Գունդ
բազում հատանէր ի զօրաց նորա, ասպա-
տակաւ արշաւէր, յաւարի առնուլ կամէր
զգաւառս բազումս:

Զայն իբրև լուան զօրքն Հայոց, սե-
պուհ մի յազգէն Ամատունեաց Առանձար
անուն ընտրեցին յամենայն զօրականէն՝ լի
իմաստութեամբ և քաջութեամբ: Ել ընդ
առաջ նորա հազարօք երկու, հար սա-
տակեաց զբազմութիւն գնդին, և զմնա-
ցեալսն ի նոցանէ անդրէն փախստական ի
բանակն արկանէր: Եւ ինքն ողջանդամ
այսրէն դառնայր, և լինէր տօն ուրախու-
թեան մեծ յաւուրն յայնմիկ զօրացն
Հայոց:

Դարձեալ միւսանգամ ուրացեալն Վա-
սակ անդրէն ի հնարս հայթայթանաց

մնանէր ըստ առաջին կեղծաւորութեանն իւրոյ. շրջեցաւ ի ձեռն սուտ երիցանցն՝ զոր յառաջագոյն ասացաք, նոքօք հրամանաւ արքունի ի պատգամաւորութիւն խօսէր, և երդմամբ հաստատէր զքրիստոնէութիւնն անդրէն ունել:

Եւ զայս արարեալ զբազում աւուրս՝ ոչ կարաց զմիաբանութիւնն քակել, մանաւանդ զսուրբ ուխտ եկեղեցւոյն, որ ոչ էր հեռացեալ ի զօրականէն:

Որպէս երանելի երէցն Ղեւոնդ հրաման առեալ ի սուրբ ընկերացն՝ ի մեծէն Յովսէփայ և յամենայն մեծամեծացն, ի քահանայիցն և ի զօրագլխացն, եբաց զբերան իւր և ասէ բարձր բարբառով առաջի հրեշտակացն.

«Յիշեցէք ամենեքեան զհարսն զառաջինս, որ յառաջ քան զծագումն Որդւոյն Աստուծոյ յիւրաքանչիւր ժամանակս:

«Քանզի իբրև մերժեաց և ընկէց զմեզ չարն յաստուածային տեղւոյն, գտաք մեք անկեալք ընդ անողորմ դատաստանօք ըստ մեղացն յանցաւորութեանն, որ ի կամս ազատութեան մերոյ գործեցաք զանարժանս,

և զարարչական զօրութիւնն շարժեցաք ի վերայ մեր ի ցասումն բարկութեան, և զողորմած դատաւորն յուզեցաք վրէժ առնուլ անաչառութեամբ յարարածոցս. մինչև հրաման առեալ երկնային ծովուն հեղուլ ի վերայ ցամաքիս, և հաստատուն յատակք երկրիս ծակոտեալ՝ ընդդէմ զհակառակսն գործեցին: Վերինք և ներքինք եղեն մեզ գործիք տանջանաց՝ առանց բարեխօսի վրէժ առնուլ յանցանաց մերոց:

«Ապաքէն արդարն Նոյ միայն գտաւ կատարեալ յազգի մարդկութեանս, որ ցածոյց զսրտմտութիւն բարկութեան տեառնեան ցասմանն, և եղև սկիզբն առաջարկութեան առ աճումն բազմութեան մարդկային ազգիս: Դարձեալ և Աբրահամ ի փորձութեանն իւրում գտաւ առաքինի, և զընկալեալ պարգևսն յԱստուծոյ՝ ինքեան ձեռօք փոխ անդրէն նմին մատուցանէր. վասն այսորիկ և յառաջս ընկալաւ զնա Աստուած, զի ի նմա տպաւորեալ տեսանէր զաներևոյթ գալուստ Որդւոյն Աստուծոյ, և զմբռնումն անմբռնելւոյն և զգենումն անմահին, որ իւրով մահուամբն խափանեաց զիշխանութիւն մահու: Եւ եթէ մահուամբ

մահ մեռանել, մի՛ երկիցուք մահակիցք լինել Քրիստոսի. զի ընդ որում մեք մեռանիմք, ընդ նմին և կենդանանամք:

«Յիշեցէք, առաքինիք, զմեծն Մովսէս, որ մինչև հասեալ էր յարութեան հասակին՝ խորհուրդ սուրբ նահատակութեանն ի նախ տղայութեանն երևէր նմա. և տուն Թագաւորին Եգիպտացւոց ի ծառայութիւն մատնէր նմա, և ակամայ դայեկութեամբ սնուցանէր զնա. և ի ժամ փրկելոյ զժողովուրդն ի նեղութենէն՝ միջնորդ եղև երկնի և երկրի, միանգամայն և աստուած անուանեցաւ ի վերայ Եգիպտացւոցն: Քանզի ուր գտաւ սուրբ խորհուրդն զօրացեալ՝ անձամբ իւրով վրէժ առնոյր յԵգիպտացւոցն. իսկ ուր աստուածային յայտնութիւնն ի վերայ նորա լինէր, ի ձեռն գաւազանին գործէր զմեծամեծ սքանչելիսն: Եւ վասն սուրբ նախանձուն զոր ունէր՝ եհար զԵգիպտացին և ընդաւազեաց. վասն որոյ զմեծ անուն դնէր նմա, և առաջնորդ ժողովրդեանն զնա կացուցանէր: Եւ բազում այն է որ հեղմամբ արեամբն արդարացաւ, և անուանեցաւ մեծ քան զամենայն մարգարէս. ոչ միայն զարտաքին Թշնամիսն

կոտորելով, այլ և զազգատոհմն որ փոխանակեցին զԱստուած ընդ որթուն յանապատին:

«Եւ եթէ նա ի հեռուստ այնպիսի վրէժ խնդրէր զաղտեան Որդւոյն Աստուծոյ, մեք որ ականատեսք եղաք, և մեծապէս վայելեցաք յերկնաւոր պարգևսն շնորհաց նորա, ևս առաւել պարտիմք վրէժխնդիր լինել մահու Ճշմարտութեանս: Որ եդ մահուամբ զանձն իւր ի վերայ մեղաց մերոց, արդարացոյց զմեզ յանհնարին դատապարտութենէն, զիցուք և մեք զանձինս մեր մահուամբ ի վերայ անմահ զօրութեանն, զի մի՛ նուազք քան զվրէժխնդրողսն առաջինս գտանիցիմք:

«Յիշեցէք զմեծ քահանայն Փենեհէզ, որ սպանմամբ երարձ զպղծութիւնն ի ժամ պատերազմին, և ազգէ յազգ երդմամբ հաստատեաց զքահանայութիւնն: Մի՛ մոռանայք և զսուրբ մարգարէն զԵղիա, որ ոչ կարէր հանդարտել հայել ի կռապաշտութիւնն Աքաբու. և արդար նախանձուն իւրոյ զութ հարիւրսն ինքեան ձեռօք սատակեաց, և զերկուս յիսունսն անշէջ հրոյն մատուցանէր լուցկիս. և զաստուածային

վրէժս խնդրելով՝ անըմբռնելի և ահագին կառօքն յերկրէ ի յերկինս վերացաւ: Դուք՝ եւս մեծի մասին վիճակի հասեալ էք. զի ոչ ևս կառք առաքին ձեզ ի վերացումն, այլ ինքնին Տէրն կառաց և երկվարաց հզօր զօրութեամբ և սրբովք հրեշտակօք ընդ առաջ եկեալ՝ ձեզ իւրաքանչիւր թևս բուսուցանէ. զի նորա ուղեկիցք լինիցիք և նմին քաղաքակիցք:

«Եւ այլ զի՞նչ ևս երկրորդեսցից առաջի ձերոյ քաջ նահատակութեանդ. զի քան զիս տեղեկագոյնք և հմուտք էք սուրբ կտակարանացն: Դաւիթ ի մանկութեան ժամանակին քարիւ կործանեաց զմեծ բլուրն մարդն, և ոչ ինչ զանգիտեաց յահագին սրոյ հսկային. ցրուեաց զգունդս այլազգեացն, և ապրեցոյց զզօրսն ի մահուանէ, և զժողովուրդսն ի գերութենէ. և եղև անդրանիկ թագաւորացն իսրայելի, և անուանեցաւ հայր Որդւոյն Աստուծոյ: Նա անուանեցաւ առ ի պէտս ժամանակին, և դուք ճշմարիտ ծնեալք ի սուրբ Հոգւոյն՝ որդիք էք Աստուծոյ և ժառանգակիցք Քրիստոսի: Մի՛ ոք զձեր բաժինն ի ձէնջ հատանիցէ, և զձեզ օտարախորթս արարեալ՝ տարաբաժին հանիցէ:

«Յիշեցէք զամենայն զօրավարսն զառաջինս իսրայելի, զՅեսու, զԳեդէոն, զՅեփթայեա և զայլս ամենեսեան, որք ճշմարիտ հաւատովք էին, հարին կոտորեցին զզօրսն հեթանոսաց, և սրբեցին զերկիրն ի պիղծ կռապաշտութենէն: Եւ վասն հաստատուն արդարագործութեանն՝ որ ոչ ինչ երկմտեցին ի խորհուրդս իւրեանց, արեգակն և լուսին առանց ականջաց լուան և կատարեցին զբան հրամանի նոցա. ծով և գետք ճանապարհ գործեցին առաջի նոցա ըստ ոչ սովորութեան: Եւ բարձրացեալ պարիսպք քաղաքին Երիքովի ձայնիւ փողով անկեալ կործանեցան ի վրէժխնդրութիւն օրինացն արդարութեան: Եւ այլքն ամենայն՝ որ ըստ հաւատոյ քաջութիւնս կատարեցին ի դարս իւրաքանչիւր, զովեցան ի մարդկանէ և արդարացան յԱստուծոյ:

«Ապաքէն նոյն Տէր է ի սկզբանէ և մինչեւ ցայսօր և առ յապա, և յաւիտենից յաւիտեանս, և անդր քան զամենայն յաւիտեանս: Ոչ նորոգի, զի ոչ հնանայ. ոչ մանկանայ, զի ոչ ծերանայ. ոչ փոփոխի անյեղեղուկ բնութիւնն Աստուծոյ. որպէս և ինքն ասէր բերանով սուրբ մարգարէիցն.

«Ես եմ, ես եմ, ես նոյն եմ ի սկզբանէ մինչև յաւիտեան. ոչ տամ զփառս իմ այլում՝ և ոչ զքաջութիւնս իմ դրօշելոց»:

«Զայս գիտելով, եղբարք, մի՛ թուլութեամբ լքանիցիմք, այլ պնդութեամբ սրտիւ և հաստատուն հաւատովք կամակար յարձակեսցուք ի վերայ թշնամեացն՝ որ յարուցեալ գան ի վերայ մեր: Մեր յոյսն մեզ կրկին երևի. եթէ մեռանիմք՝ կեանք, և եթէ մեռուցանեմք՝ մեզ նոյն կեանք առաջի կան: Յիշեսցուք զբանն Առաքելոյ, որ ասէ, թէ «փոխանակ ուրախութեան որ նմա առաջի կայր՝ յանձն էառ զհամբերութիւն մահու, և մահու խաչի. վասն այսորիկ և Աստուած զնա առաւել բարձրացոյց, և ետ նմա անուն՝ որ ի վեր է քան զամենայն անուն. զի յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց»:

«Եւ քանզի որ ճշմարտութեամբ միացեալ է ընդ Որդւոյն Աստուծոյ, հոգւոյն աչօք տեսանէ զաներևոյթ յատակ լոյսն ճառագայթից իմանալի արեգական, որ յամենայն ժամ և յամենայն օր գեր ի վերոյ

ծագեալ երևի ամենեցուն. և որքան տեսիլ և որքան հայեացս անպղտոր յստակութեամբ ձգտեցուցանէ զհայեցուածս, և թափանցանց եղեալ ընդ երկինս՝ յանմատոյց տեսիլն մերձեցուցանէ, և կորովութեամբ կշռէ զերկրպագութիւն զերից հաստուածոցն միաւոր զօրութեան: Եւ արդ որ ընդ Աստուծոյ աստիճանն ոտնփոխ եղեալ իցէ, և բարձրութեամբ յարքունիսն հասեալ, և զամենայն մեծութիւն բովանդակ տեսեալ, նա միայն է որ ժառանգէ զանանց ուրախութիւնն և զանտրտմական մխիթարութիւնն:

«Մի՛, տեարք իմ պատուականք, մի՛ յետ այսչափ ի բարձունս վերանալոյ՝ այսրէն յերկիր անկեալ թաւալիցիմք, այլ զտեղի առեալ անդրէն ի բարձրութեանն հաստատեսցուք: Թէպէտ և հայեսցուք ի ստորին կողմ երկրիս, տեսանեմք զսա լի ամենայն ապականութեամբ և անսուրբ պղծութեամբք: Քանզի զի՞նչ աղէտք տարակուսի են որ ոչ գործին յերկրայինս ախտաբերս. թշուառութիւնք աղքատաց և անթիւ չարչարանք նոցուն, աղցաւոր ծանրութիւնք հարկահանաց, գգուանք և

կափանք ի բռնաւոր ընկերակցաց, քաղց և ծարաւ ըստ կարօտութեան բնութեանս: Սառնամանիք ձմերայնոյ և խորշակք ամարայնւոյ, հիւանդութիւնք տարաժամք և ախտք մահաբերք հանապազ տանջեն զմարդիկ. երկեւղ արտաքնոյ, արհաւիրք ի ներքնոյ անդադար ի վերայ հասանեն. ցանկան մահու յառաջ քան զժամանակն, և ոչ գտանեն. և բազումք են որ փորեն և խնդրեն, և խնդալից լինին յորժամ գտանեն: Իսկ որ թուին մեզ եթէ յաջողեալ իցեն ի մեծութեան և փափկանան ուրախութեամբ ի պակասելի կեանս, մեծամբտեալ հպարտանան յանցաւոր մասունս աշխարհիս, նոքա են որ կուրացեալ են ի ճըշմարիտ կենացն: Իսկ արդ զի՞նչ այն չարիք իցեն որ ի նոսա ոչ գործիցին. ընդ մեծութիւն խառնեալ է յափշտակութիւն ընչից աղքատաց, ընդ սուրբ ամուսնութիւնն դէճ պղծութիւն: Յորս փայլեանն՝ անընտրութեամբ, նոցուն երկրպագութիւնս իբրև Աստուծոյ մատուցանեն, մոլորեալք ի ճշմարիտ կենացն:

«Ո՞չ ահա ամենայն աշխարհս՝ արարչին բոլորեցուն է գոյացութիւն. և զոր

նոքայն պաշտեն և պատուեն՝ ապաքէն ի սմին նիւթոյ է մասն. Իսկ արդ մասունքն մասանց կան ի ծառայութիւն: Զի եթէ մի մասն աշխարհիս ապականացու է, հարկ է թէ և ամենայն մասունքն ընդ նմին ապականին: Նա և ի մասանց անտի՝ պարտ է թէ և ընտրութիւնք երևեսցին. Իսկ արդ որ լաւ է՝ յայտնի է ամենեցուն, և որ գիտեն իմանալ՝ նա է ընտիր ի մասանցն: Ապա թէ այդ այդպէս է, քան զամենայն պաշտամունս հեթանոսաց որում երկիր պագանեն՝ երկրպագուքն են առաւելեալք քան զանբան տարերսն՝ որոց չարաչար կան ի ծառայութեան. և զկն Աստուած որ ի մարդ կերպարանեցաւ՝ չպաշտեն, այլ արարածոյ տանեն երկրպագութիւն. որոց մեղաց չէք քաւութիւն յարդար ատենին:

«Ո՛ն անդր ի բաց թողցուք զխաւարային խորհուրդս մոլորեալցն. նզկեալս և ողորմելիս քան զամենայն մարդիկ զնոսա համարեսցուք. մանաւանդ զի կամօք են կուրացեալք և ոչ ի հարկէ, և ոչ երբէք գտցեն զճանապարհն ճշմարտութեան: Այլ մեր բացահայեաց աչօք տեսեալ զԼոյսն

երկնաւոր, մի պատահեսցէ մեզ խաւարն արտաքին: Զի դուք էիք ի խաւարի, եկն առ նոսա լոյսն ճշմարիտ. կուրացեալք փոխեցան ի կենացն: Իսկ որք ընկալայքդ հաւատովք՝ որդիք էք և ոչ օտարախորթք, սիրելիք և ոչ թշնամիք, բաժանորդք և ժառանգորդք վերին իմանալի քաղաքին:

«Անդ է առաջնորդ փրկութեան մերոյ. առ քաջութեամբ նահատակեցաւ, և զնոյն ուսոյց ամենայն նիզակակից գործակցաց իւրոց Առաքելոց. ընդ որս և դուք էք այսօր կրկին երևեալ, օրհնեալք հաւատովք ընդդէմ աներևոյթ թշնամւոյն, պատենազէն զրահիւք դէմ ընդ դէմ ընկերակից սատանայական գործոյն: Եւ եթէ այսպէս և եթէ այնպէս, զերկոսեան կողմանս ի պարտութիւն մատնէք, որպէս և Տէրն ինքնին արար աշխարհի. թուեցաւ թէ մեռաւ, այլ նա յայնժամ տարաւ զկատարեալ նահատակ առաքինութեանն. զախոյեանն ընկէց, զպատերազմն եհար, զթշնամւոյն զրուեաց, զաւարն ժողովեաց, զգերիսն դարձոյց, զպարգևսն բաշխեաց ամենայն սիրելեաց իւրոց ի ձեռն իւրաքանչիւր առաքինութեանց:

«Գիտէք դուք ամենեքեան. յառաջ ժամանակաւ հասեալ ձեր ի գործ պատերազմի, թէպէտ և էր ձեր սովորութիւն՝ քահանայից հանապազորդել ի մէջ բանակին, ի ժամ ճակատուցն յանձնեալ ձեզ ի նոցանէ աղօթիւք՝ յամուր տեղւոջ ուրեք թողուլք զնոսա. իսկ այսօր եպիսկոպոսք և երիցունք և սարկաւագունք, սաղմոսերգողք և դպրակարգացք իւրաքանչիւր կարգեալ կանոնաւ՝ իբր վառեալք զինու և պատրաստեալք ի պատերազմ, կամին ընդ ձեզ յարձակել հարկանել զթշնամիսն ճշմարտութեան: Եւ եթէ մեռանել ևս հասանէ ի նոցանէ, սակայն և յայնմանէ ոչ են զանգիտելոց. քանզի լաւագոյն զմեռանելն կամին քան զմեռուցանելն:

«Որպէս զի կրկին աչս տացեալ ունիցին. հաւատոյ աչօք զքարկոծանս մարգարէիցն տեսանեն, և մարմնոյ աչօք զքաջութիւն ձերոյ նահատակութեանդ: Մանաւանդ թէ ի ձեզ զերկոսեան իսկ տեսանեմք. քանզի և դուք իսկ տեսանէք ըզչարչարանս սուրբ առաքելոցն և զպատմունս զամենայն քաջ մարտիրոսացն, որոց մահուամբն հաստատեցաւ սուրբ եկեղեցի,

և հեղումն արեան իւրեանց եղև ի պարծանս վերնոցն և ներքնոց: Արդ մինչև ի գալուստն երկրորդ՝ նոյն նահատակութիւն կատարի չարչարանօք առաքինեացն և ընտրելոց նահատակաց՝ յորոց միջի և դուք էք հանդիսացեալ այսօր, և հրաւիրեալ ի լուսաւորչացն ձեր սրբոց հասանել ի գունդս նոցա և ժառանգորդս խոստացելոցն լինել անանց բարութեանց ի Քրիստոսէ Յիսուսէ, որ է օրհնեալ յաւիտեանս»:

Յայս վայր խօսեցաւ ի գիշերին յայնմիկ սուրբ երէցն Ղևոնդ, և փառաւորելով կատարեաց զԱմէնն ասելով: Եւ անդէն ուղղեալ զամենասուրբ խորհուրդն կատարեցին. ուղղեցին և աւազան, և եթէ գոյր ոք երախայ ի բազմութեան զօրուն՝ զգիշերն ամենայն մկրտեցին. և ընդ առաւօտս սուրբ օրինացն հաղորդեցան, և այնպէս լուսազգեստ եղեն՝ որպէս ի տերունեան մեծի սուրբ զատկին:

Եւ մեծաւ զուարճութեամբ և յոյժ խնդութեամբ աղաղակեաց ամենայն բազմութիւն զօրացն և ասեն. «Հաւասարեսցէ մահ մեր ընդ մահու արդարոցն, և հե-

ղումն արեան մերոյ ընդ արեան սուրբ մարտիրոսացն. և հաճեսցի Աստուած կամաւոր պատարագաւս, և մի՛ տացէ զեկեղեցի իւր ի ձեռս հեթանոսաց»:

ՎԵՑԵՐՈՐԴ ՑԵՂԱՆԱԿ

ՊԱՏԵՐԱԶՄՆ ՀԱՅՈՑ

Յետ այսորիկ իբրեւ ետես զօրավար զնդին Պարսից՝ եթէ հատան պատգամաւորքն ի միջոյ խաբել զնոսա, եւ բարձաւ յոյս ակնկալութեան իւրոյ ցրուել զնոսա յանքակ միաբանութենէն, յայնմ ժամանակի յառաջ կոչէր զանօրէնն Վասակ եւ զամենայն ուրացեալ իշխանսն, որ էին ընդ նմա յաշխարհէն Հայոց. հարցանէր զնոսա, եւ ուսանէր ի նոցանէ զհնարագիտութիւն յաղթութեան: Եւ իբրեւ հասեալ տեղեկացաւ զառն առն իւրաքանչիւր քաջութիւնս, կոչէր եւ զբազումս ի զօրագլխացն՝ որ էին ընդ իւրով ձեռամբ, եւ հրամայէր ածել զառաջեաւ զերամակս փղացն, եւ ի գունդս գունդս զգազանսն բաժանէր, եւ առ մի մի փիղ երեք հազար սպառազէնք, թող զայլ զօրս ամենայն:

Խօսէր եւ ընդ մեծամեծսն արքունի հրամանաւ եւ ասէր. «Յիշեցէք այր իւրաքանչիւր զպատուէր մեծի թագաւորին, եւ դի՛ք առաջի զանուն քաջութեան. ընտրեցէ՛ք զմահ քան զկեանս վատութեամբ: Մի՛ մոռանայք զեւղն եւ զպսակն եւ զուռսն եւ զառատաձեռն պարգեւսն՝ որ շնորհի ձեզ յարքունուստ: Տեարք էք իւրաքանչիւր գաւառաց, եւ ունիք իշխանութիւն բազում. դուք ձեզէն գիտէք զքաջութիւն աշխարհին Հայոց, եւ զառն առն իւրաքանչիւր նահատակութիւն արութեան զփորձ առեալ ճանաչէք. գուցէ ձեր ի պարտութիւն մատնեալ՝ կենդանեաւ վրիպիցիք ի մեծ կենացն զոր ունիցիք: Յիշեցէք զկին եւ զորդիս ձեր, յիշեցէք զսիրելի բարեկամս ձեր. գուցէ ոտնհար լինիցիք յարտաքին թշնամեացն եւ ողբակիցք ի ներքին սիրելեացն»:

Նա եւ յուշ եւս առնէր նոցա զբազում ընկերակիցս փախուցեալս, որք թէպէտ եւ ի պատերազմէն ապրեցան, սրով ընկալան զվճիռ մահուն իւրեանց. ուստերք եւ դստերք եւ ամենայն ընտանիք իւրեանց յանաշխարհիկս գրեցան, եւ ամե-

նայն հայրենի գաւառք հատան ի նոցանէ։

Զայս ասէր, և առաւել քան զայն աստկացուցանէր զհրամանն արքունի։ Կարգէր կազմէր զզօրսն ամենայն, և տարածանէր երկայնէր զճակատն յերկայնութիւն դաշտին մեծի։ Եւ իւրաքանչիւր զազանացն յաջմէ և յահեկէ զերեքհազարեան սպառազէնս պատրաստէր, և զընտիր ընտիր նահատակացն շուրջ զերեաւ գումարէր. և այսպէս ամրացուցանէր զգունդն Մատեան իբրև պաշտարակ մի հզօր և կամ իբրև զբերդ մի անմատոյց։ Նշանս բաշխէր, դրօշս արձակէր, և ի ձայն մեծի փողոյն պատրաստ հրամայէր լինել։ Իսկ զգունդն զԱպարհացին, և զԿատիշացն և զՀոնաց և զԳեղաց, և զայլս ևս ամենայն զընտիր ընտիր զօրուն մարդիկ ի մի վայր ժողովէր, և հրաման պատուիրանի տայր ընդ աջմէ կողմանէ գնդին իւրոյ պատրաստ լինել ընդդէմ Հայոց զօրավարին։

Իսկ արին Վարդան յառաջ մատուցեալ և զաւագանին հարցանէր, և միաբան ամենեցուն խրատու զզօրագլուխսն կարգէր այսպէս։

Զգունդն առաջին տայր ի ձեռն իշխանին Արծրունեաց, և նիզակակից նմա ընդ մեծ իշխանն Մոկաց. և զայլ ամենայն նախարարեան համհարզս երկոցունցն, և զամենայն բազմութիւն գնդին Թևս աստի և անտի կազմէր նոցա։

Եւ զգունդն երկրորդ տայր ի ձեռն Խորենայ Խորխոռունեաց, և նիզակակից նըմա զԸնծայինն և զՆերսեհ Քաջբերունի։

Եւ զգունդն երրորդ մատուցանէր ի ձեռն Թաթլոյ Վանանդեցւոց, և նիզակակից նմա հրամայէր զՏաճատ Գնթունի, և զբազումս ի քաջ արանց աստի և անտի ի Թևս նոցա։

Յանձն իւր առնոյր զգունդն չորրորդ, և նիզակակից իւր զքաջն Արշաւիր և ըզհարազատ եղբայր իւր զՀամազասպեան։

Կարգէր և կազմէր զճակատն յորդորելով ընդ ամենայն երեսս դաշտին դէմ յանդիման Արեաց գնդին, առ ափն Տղմուտ գետոյն։

Եւ իբրև այս այսպէս պատրաստեցան, երկոքեան կողմանքն լի սրտմտութեամբ և մեծաւ բարկութեամբ զայրանային, և զազանացեալ զօրութեամբ յիրեարս յար-

ձակէին երկոքեան. և ամբոխ աղաղակին երկոցունց կողմանց՝ իբրև ի մէջ ամպոց շփոթելոց՝ ճայթմունս գործէր, և հնչումըն ձայնից զքարանձաւս լերանցն շարժէր: Ի բազմութենէ սաղաւարտիցն և ի փայլիւն պատենազէն վառելոցն իբրև նըշոյլք ճառագայթից արեգական հատանէին: Նա և ի բազում սուսերացն շողալ, և ի ճօճել բազմախուռն նիզակացն իբրև յերկնուստ ահագին հրաձգութիւնք եռային: Քանզի ո՞վ իսկ է բաւական ասել զմեծամեծ տագնապ ահաւոր ձայնիցն, որպէս կոփիւնք վահանաւորացն և ճայթմունք լարից աղեղանցն զլսելիս ամենեցուն առ հասարակ խլացուցանէին:

Անդ էր տեսանել շտապ մեծի տագնապին և զաղէտս անբաւ տարակուսանացն երկոցունց կողմանցն, առ ի յանդուգն յարձակմանէն զմիմեանս բախելով. քանզի թանձրամիտքն յիմարէին և վատասիրտքն լքանէին, քաջքն խիզախէին և նահատակքն գոչէին: Եւ խումբ արարեալ ամենայն բազմութեանն՝ զգետն ի մէջ փակէին, և զանգիտեալ գունդն Պարսից ի դժուարութենէ գետոյն՝ զտեղեաւն զե-

ռալ սկսան: Իսկ գունդն Հայոց հասեալ անցանէին, ձի ի վերայ առեալ յարձակէին մեծաւ զօրութեամբ: Սաստկապէս բախեալք ընդ միմեանս, յերկոցունց կողմանց բազում վիրաւորք յերկիր անկեալ դիաթաւալ խաղային:

Յայնժամ մեծ տագնապի ի վեր հայեցաւ քաջն Վարդան, և տեսանէր զընտիր ընտիր քաջ նահատակաց Պարսից զօրուն՝ զի զձախակողմն շարժեցին զՀայոց գնդին, մեծաւ ուժով յարձակէր ի տեղին, և զաջ թեւն Պարսից գնդին բեկեալ՝ արկանէր զգազանօքն, և շրջան առեալ կոտորէր մինչև ի նոյն տեղի: Եւ այնպէս շտապ տագնապի ի վերայ հասուցանէր, մինչև գունդն Մատեան քակեալ բաժանեցան ի մեծամուր պատրաստութենէն, դեռ ևս քաջ քաջ ի փախուստ դառնային:

Ապա դէտ ակն ի վեր համբառնայր Մուշկան Նիւսալաւուրտ, քակեալ զօմանս տեսանէր ի գնդէն Հայոց, և զկնի մնացեալ ի հովիտս լերանցն: Վասն որոյ զաղաղակ բարձեալ՝ քաջալերէր շուրջ զիւրեաւ ըզզօրս Արեաց, որք զտեղի առեալ կային ընդդէմ գնդին Վարդանայ: Եւ անդէն ի

տեղւոջն երկոքին կողմանքն զպարտութիւն խոստովանէին, և առ յոյժ Թանձր անկեալ դիականց իբրև զքարակոյտս դերրկաց երևէին:

Զայն իբրև ետես Մուշկան Նիւսալաւուրտ, մնայր զաղանացն Արտաշրի, որ ի վերայ նորա նստէր ի բարձր դիտանոցին իբրև յամուր քաղաքի. և ի ձայն մեծ գալարափողոցն զեւր զունդսն ստիպէր, և յառաջամարտիկ զօրօքն զնա ի մէջ փակէր:

Իսկ կորովին Վարդան իւրովք քաջ նիզակակցօքն ոչ սակաւ նախճիրս ի տեղւոջն գործեաց, յորում տեղւոջ և ինքն իսկ արժանի եղև առնուլ զկատարեալ նահատակութեանն պսակ:

Եւ յերկարեալ գործոյ պատերազմին՝ օրն տարաժամէր, և մօտ առ երեկս կարճատէր. բազմաց օրահասք մահու հասանէին, մանաւանդ ի Թանձրութենէ դիականց մօտ առ մօտ խառացեալ իբրև ընդփայտահարս մայրաւորաց:

Անդ էր տեսանել զբեկումն նիզակացն և զխորտակումն աղեղանց. վասն այնորիկ և ոչ կարէին կալ ճշմարտիւ ի վերայ սուրբ

մարմնոյ երանելեացն. և սաստիկ խուճապ տագնապի էր կողմանցն երկոցունց անկելոց: Եւ որք մնացեալքն էին՝ վանեալք և ցրուեալք լինէին ի լեռնադաշտս՝ ամուր ձորոցն. և յորժամ պատահէին միմեանց՝ դարձեալ միւսանգամ զմիմեանս սատակէին: Եւ մինչև ի մուտս արեգականն անդադար լինէր գործ դառնութեանն:

Եւ քանզի գարնանային էր ժամանակն, ծաղկալից դաշտքն դառնային յորդահոսանս արեանց բազմաց: Մանաւանդ յորժամ տեսանէր ոք զբազմակոյտ դիականցն անկելոց, սիրտն բեկանէր և աղիքն գալարէին՝ լսել զմնչիւն խոցելոցն և զմռնչիւնս բեկելոցն, զթաւալգլոր խաղալ սողալ վիրաւորացն, զփախուստ վատացն, զթաքուստ յքելոցն, զսրտաթափումն զանարիարանցն, զճչիւն կանացեայն, զողբս սիրելեաց, զաշխարումն մերձաւորաց, զվայ և զաւաղ բարեկամացն: Քանզի ոչ եթէ կողմ էր որ յաղթեաց, և կողմ էր որ պարտեցաւ, այլ քաջք ընդ քաջս ելեալ՝ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան:

Բայց քանզի անկեալ էր մեծ սպարա-

պետն Հայոց ի պատերազմին, ոչ ոք գոյր այնուհետեւ ի մէջ գլխաւոր՝ յոր յեցեալ ժողովէին զունդն մնացելոցն։ Թէպէտ և բազում այն էր որ ապրեցան՝ քան թէ որ մեռանն, սակայն ցանեալ ցրուեցան, և հասեալ անկանէին ի տեղիս տեղիս յամուրս աշխարհին, և բռնանային ի վերայ բազում գաւառաց և բերդից, զոր և ոչ առնուլ իսկ ոք կարէր։

Եւ այս անուանք են քաջ նահատակացն՝ որ անդէն ի տեղւոջն կատարեցան.

Յազգէն Մամիկոնէից ՔԱՋՆ ՎԱՐԴԱՆ հարեւր երեսուն և երեք արամբք.

Յազգէն Խորխոռունեաց ԽՈՐԷՆՆ ԿՈՐՈՎԻ իննևտասան արամբք.

Յազգէն Պալունեաց ԱՐԻՆ ԱՐՏԱԿ յիսուն և եւթն արամբք.

Յազգէն Գնթունեաց ՋԱՐՄԱՆԱԼԻՆ ՏԱՃԱՏ իննևտասան արամբք.

Յազգէն Դիմաքսենից ԻՄԱՍՏՈՒՆՆ ՀՐԱՄԱՅԵԱԿ քսան և երկու արամբք.

Յազգէն Քաջբերունեաց ՀՐԱՇԱԿԵՐՏՆ ՆԵՐՍԵՀ եւթն արամբք.

Յազգէն Գնունեաց ՄԱՆՈՒԿՆ ՎԱՀԱՆ երիւք արամբք.

Յազգէն Ընծայնոց ԱՐԴԱՐՆ ԱՐՍԷՆ եւթն արամբք.

Յազգէն Սրուանձտայ ՅԱՌԱՋԱԴԷՄՆ ԳԱՐԵԳԻՆ երկու հարազատօքն և ութուտասն արամբք։

Այս երկերիւր ութսուն և եւթն նահատակք, ընդ ինն մեծամեծ նախարարսն անդէն ի տեղւոջն կատարեցան։ Եւ յարքունի տանէն և ի տանէն Արծրունեաց և յիւրաքանչիւր նախարարաց տանէն. թող զայս երկերիւր ութսուն և եւթնս, և այլ ևս եւթն հարեւր և քառասուն այր, որք զանուանս իւրաքանչիւր ի դպրութիւն կենաց գրեցին ի նմին աւուր ի մեծ պատերազմին։ Եւ միահամուռ լինի ամենայն հազար և երեսուն և վեց։

Իսկ ի կողմանէ ուրացելոցն և հեթանոսաց անկանէր յայնմ աւուր երեք հազար հինգ հարեւր քառասուն և չորք այր։ Ինն այր ի նոցանէ ի մեծ պատուաւորացն էր, վասն որոյ և կարի յոյժ ի խոր խոցեցաւ Մուշկան Նիւսալաւուրտ։ Մանաւանդ իբրև ետես զանհնարին հարուածն եռապատիկ զեւրոյ գնդին քան զհայոցն, բեկաւ անկաւ զօրութիւն ուժոյն իւրոյ,

և ոչ հանդարտէր կալ ի վերայ խորհրդոց մտացն. քանզի ոչ որպէս կարծէր զպատերազմն՝ կատարեցաւ: Մանաւանդ իբրև Հայեր տեսանէր զքաջութիւն անկելոց իւրոց կողմանն, և Թիւ համարոյ ևս առնէր, և իբրև այնչափ յոլով գըտանէր զիւր անկեալն քան զՀայոց զընդդէմն, ևս առաւել վասն երևելի արանցն՝ զորս յականէ յանուանէ գիտէր Թագաւորն, ի մեծ տագնապի լինէր այրն յանձն իւր: Արդարութեամբ զիրսն գրել և ցուցանել՝ ի Թագաւորէն երկնչէր. դարձեալ և Թաքուցանել ևս ոչ կարէր, քանզի ոչ ծածկէր այնպիսի մեծ կռիւ:

Եւ մինչդեռ յայսմ մտաց խորհրդի էր յանձն իւր և նեղէր ի միտս իւր, ուրացեալն Վասակ՝ որ զանձն իւր ի մէջ գազանացն Թագուցեալ ապրեցուցանէր՝ մխիթար մատուցանէր մտացն լքելոց, և ուսուցանէր նմա հնարս նենգութեամբ, Թէ որպէս կարասցէ մարտնչել ընդ ամուրն խաբէութեամբ: Երդմունս կնքէր արքունի հրամանաւ և վկայութեամբ անձին իւրոյ և խաբեբայ երիցամբքն որ ընդ նմայն էին. պատգամաւորս առնէր զնոսա, և երևեցու-

ցանէր զԹողութիւն ապստամբութեանն առ ի շինութիւն եկեղեցւոյ շնորհել անդրէն, և զամենայն կարգս անդրէն յարմարել ըստ առաջին սովորութեանն: Թէպէտ հրաման Թագաւորին հաստատութեամբ էր տուեալ—վասն զի յոյժ բեկաւ զօրութիւն նորա, որպէս զի երկոքին կողմանք նորա հարան—սակայն զօրքն Հայոց վասն նենգութեանն Վասակայ, որ բազում անգամ հասեալ էին ի վերայ ստութեան նորա, վասն այնորիկ և հրամանի Թագաւորին վաղվաղակի ոչ կարէին հաւատալ:

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ

ՅԵՐԿԱՐՈՒՄՆ ԻՐԱՑՆ ԽՌՈՎՈՒԹԵԱՆ

Արդ դարձեալ յայնժամ դրդեաց զՄուշկան Նիւսալաւուրտ և զամենայն աւագանին Արեաց. առեալ զզօրսն հասանէր ի վերայ ամրոցին՝ յոր անկեալ էին գունդ մի ի զօրացն Հայոց հանդերձ սուրբ քահանայիւքն, և մարտ եդեալ կռուէին շուրջ զբերդաւն: Եւ իբրև ոչինչ կարացին ազդել նոցա, դարձեալ յերդմունս ապաստան եղեալ, զի ուխտիւ իջուսցեն զնոսա առանց դաւ ինչ գործելոյ, և երկիցս և երիցս անգամ ետուն տանել զաւետարանն: Թէպէտ և քահանայքն յանձն առնուին զիջանելն կալ առաջի, բազումք ի զօրականացն ոչ կարէին հաւատալ սուտ ուխտին Վասակայ. քանզի սկսաւ երթալ Մուշկան Նիւսալաւուրտ զհետ չար խրատուն Վասակայ:

Մի ոմն ի քաջ զօրականէն Հայոց, որ անկեալ էր ի բերդն փախստեամբ՝ Բակ անուն, ելեալ ի պարիսպն թշնամանս դնէր անօրինին, և ցուցանէր առաջի Պարսից զօրագլխին զամենայն չարիսն զոր անցուցեալ էր նորա ընդ աշխարհն Հայոց: Զոր և բազումք լուեալ՝ արդարացուցանէին զամբաստանութիւնն, ոչ միայն ի Հայոց կողմանէն, այլ և ս առաւել զօրքն Պարսից: Սոյն այրս այս ի նմին գիշերի եւթն հարիւր արամբք ել գնաց ի բերդէ անտի, և ոչ կարացին ձեռն արկանել ի նա:

Իսկ որ ի ներքս յամրին մնացին, թէպէտ և գիտէին ճշմարտիւ զխաբեբայ երդմունս նոցա, ոչ ունէին համբար ի ներքս: Իբրև ոչ կամաւ իջեալ կացին առաջի, հրամայեաց սպանանել ի նոցանէ երկերիւր և երեքտասան այր: Աղաղակեցին ամենեքեան և ասեն. «Գոհանամք զքէն Տէր Աստուած մեր. մինչդեռ չէն են եկեղեցիք և անքակ տաճարք վկայից և միաբան սուրբ ուխտ եկեղեցւոյ և առաքինացեալ, արժանի արարեր զմեզ կոչմանդ երկնաւորի: Հաւասարեսցէ մահս մեր ընդ մահ քաջ նահատակացն, և խառնեսցի արիւնս մեր

ընդ արիւն անկեալ վիրաւորացն, և հաճեցի Տէր ընդ եկեղեցիս իւր՝ բազմութեամբ կամաւոր զուարակացն որ ելանեն ի վերայ սուրբ սեղանոյս»: Զայս ասելով ի տեղւոջն կատարեցան երկերիւրքն և երեքտասանք:

Իսկ սուրբ քահանայքն՝ որ անդ դիպեցան յամու՛րսն, երանելիքս այս Յովսէփ և Ղեւոնդ՝ բազում ընկերակցօքն իւրեանց, մատուցին և նոքա զպատարագս իւրեանց առաջի սրոյ դահճապետին, ասելով զնոյն բանս՝ զոր խօսեցան երկերիւրքն: Քանզի ոչ եթէ ակնկալութիւն ինչ էր երանելեացն ըստ մարմնաւոր կենացն, այլ իմաստութեամբ հնարս խնդրէին լինել փոխանակ ամենայն աշխարհին շինութեան: Վասն որոյ և բողոք ի Դուռն կարդային, և զամենայն ամբաստանութիւն արկանէին զանօրէնն զՎասակաւ: Զայս իբրև լուաւ Մուշկան Նիսալաւուրտ, ոչ իշխեաց ի նոսա ձեռն արկանել մահուամբ. այլ զՅովսէփ և զՂեւոնդ զան հարեալ, հրամայեաց պահել զգուշութեամբ, քանզի բողոք ի Դուռն կարդացին. իսկ զայլ քահանայսն արձակեցին յիւրաքանչիւր տեղիս, հրաման

տուեալ վասն շինութեան և խաղաղութեան աշխարհին:

Այլ մարդիկն Հայոց, որ հասեալ էին ի վերայ յեղյեղուկ հրամանաց Թագաւորին և ուրացեալ չարիմացին Վասակայ, ոչինչ հաւատային սուտ թողութեանն. այլ քաջալերէին զմիմեանս և ասէին. «Զի՞ պիտոյ է մեզ բնաւ կեանք անցաւոր աշխարհիս, և կամ ընդէ՞ր տեսանեմք զարև յետ մերոց սիրելեացն: Զի եթէ քաջ նահատակքն մեր անկան ի մեծ պատերազմին, և բազում վիրաւորք տապալեցան յարիւն յապաժոյժ ի մէջ դաշտին, և ամենեցուն մարմինքն եղեն գէշ թռչնոց և կերակուր գազանաց, և պատուական նախարարքն մեր հասին յանարգութիւն թշուառութեան, լքին զիւրաքանչիւր իշխանութիւն և են ի հալածանս նեղութեան, որ և ամենայն փափկութիւնն Հայոց եհաս ի վիշտս վըտանգի և յանհնարին աղքատութիւն, ոչ անսամք խաբեբայ հրամանացդ և անկանիմք ի ձեռս անօրէն իշխանացդ»:

Թողին այնուհետև իւրաքանչիւր ըզգեւղս և զաւանս և զագարակս: Եղին հարսունք յառագաստից և փեսայք ի սենե-

կաց, անկան ծերք յաթոռոց և տղայք ի գրկաց. երթային երիտասարդք և կուսանք և ամենայն բազմութիւն արանց և կանանց, հասեալ ունէին զամուրս անապատին և զանխառ տեղիս բազում լերանց: Լաւ համարէին զգազանաբար բնակութիւնն աստուածպաշտութեամբ ի քարանձաւս կելոյ, քան ուրացութեամբ փափկանալ յիւրաքանչիւր շինուածս: Առանց տրտնջելոյ համբերէին խոտաբուտ կերակրոցն, և ոչ յիշէին զսովորական խորտիկսն: Համարեալ էին նոցա զարափորքն իբրև զյարկս բարձրաբերձ շինուածոց, և զետնանկողինքն իբրև զնկարեալ պատշգամս:

Սաղմոսք էին նոցա մրմնջմունք երգոց, և ընթերցուածք սուրբ գրոց կատարեալ ուրախութիւնք: Ամենայն մարդ յանձն իւր եկեղեցի էր, նոյն ինքն քահանայ. մարմինք իւրաքանչիւր՝ սուրբ սեղան, և ոգիք նոցունց՝ պատարագ ընդունելի: Քանզի ոչ ոք ի նոցանէ ողբայր յուսահատութեամբ զանկեալն ի սրոյ, և ոչ ոք հեծեծելով հառաչէր ի վերայ մերձաւոր սիրելեաց իւրոց: Խնդութեամբ ընկալան զյափշտակութիւն ընչից բազմաց, և ոչ յիշէին ա-

մենեւին՝ եթէ եղեալ իցեն նոցա ստացուածք: Համբերութեամբ ճգնէին և մեծաւ առաքինութեամբ տանէին զքաջ նահատակութիւնն: Զի եթէ ոչ բացաւ աչօք տեսանէին զյոյսն խնդալից, և ոչ կարէին գործել զայնպիսի մեծ առաքինութիւն:

Քանզի բազումք յազգէ ի մեծ նախարարացն էին, և եղբարք և որդիք և դըստերք, հանդերձ ամենայն սիրելեօք իրեանց ի մէջ ամրական վայրացն, ոմանք յանկոյս երկիրն Խաղտեաց, և այլ բազումք ի կողմանս Հարաւոյ՝ յանմատոյց ամուրսն Տմորեաց, և կէսքն ի թանձրախիտ մայրիսն Արցախոյ, և այլ ոմանք անդէն ի միջոց աշխարհին բնակեցան ի վերայ բազում ամրոցացն: Եւ ամենեքին մեծաւ համբերութեամբ տանէին զբազում նեղութիւնն վասն սիրոյն Քրիստոսի, և զայս միայն աղաչելով խնդրէին յԱստուծոյ, մի՛ տեսանել նոցա զաւեր սուրբ եկեղեցեաց:

Այլ որպէս ցուցաք բազում անգամ զամբարշտին չարութիւն, յորդորէր և ստիպէր զզօրսն Պարսից ի մօտաւոր կողմանց աշխարհին, զի հրամանաւ արքունի զօր

եկեսցէ յօգնականութիւն նոցա: Եւ հասեալ բազում պրուձի յաւելոյր ի թիւ անկելոցն, և լինէր գունդ բազմութեան իբրև զառաջինն: Եւ յառաջ խաղային ի միջոց աշխարհին, մարտ եդեալ կռուէին ընդ մեծ ամուրս կապոյտ լերինն: Իսկ որ ի ներքսն էին՝ քաջութեամբ մարտուցեալ հարկանէին զբազումս ի գնդէն Պարսից, և զմնացեալսն փախստական ի բանակն արկանէին: Իսկ նոքա դարձեալ յողոքանս մատուցեալ, նուաճել խաբէութեամբ կամէին:

Իբրև ոչ ոք հաւատաց իջանել առ նոսա, զի մի մատնեսցին չարաչար ի ձեռս թշնամեացն, սակայն վասն երդմանցն հարկ եղև քահանայի մի իջանել առ նոսա, որում անունն էր Արշէն: Խօսէր ընդ նոսա յաղերս ընտանութեամբ, և ցուցանէր զանձնս փախուստ անմեղացն, արկանէր զութ առաջի ուրացելոյն Վասակայ, և պաղատելով յիշեցուցանէր նմա զառաջին կարգ ուխտին քրիստոնէութեան, զի թերևս սակաւիկ մի քաղցրասցի յանհնարին դառնութենէն: Այլ նա ոչ ինչ լուաւ և անսաց բազում բանիցն նորա, կապեաց և

խաղացոյց զերանելին և որք ընդ նմա իջեալ էին:

Մանաւանդ իբրև ետես եթէ երկթայ զօրավարն զհետ խրատու կամաց նորա, սկսաւ այնուհետև ի բազում տեղիս արձակել զասպատակաւորսն, և զոր արտաքոյ քան զամուրսն գտանէր զբազմութիւն մարդկանն՝ վարեցին ի գերութիւն. և զամբար ի ձեռն առեալ հրձիգ առնէին զբազում տեղիս:

Իսկ որք էին յամուրս Տմորեաց, իբրև լուան զայս ամենայն չարիս զոր գործեցին զօրքն արքունի, ոչինչ շահ օգտի համարէին զկալն ի մէջ ամրականացն: Քաջութեամբ ելեալ յարձակեցան օգնականութեամբ ամրականացն, և հասեալ ի մօտաւոր աշխարհն Պարսկաց, յանխնայ կոտորելով նախճիրս արեան գործէին, և զմնացեալսն գերի առեալ տանէին, և անդէն յամուրսն արկանէին, և զշինուածսն աշխարհին՝ զամբար ի ձեռն առեալ հրոյ ճարակ տային:

Դարձեալ և որք էին ի լերինս Խաղտեաց, իբրև տեսին եթէ յանդգնաբար զօրքն Պարսկաց յանկրկնելս իջանէին յա-

մուրս աշխարհին Հայոց, յարձակեցան և նոքա մեծաւ զօրութեամբ ի ձորադաւառն Տայոց: Եւ գտին անդ գունդ բազում ի զօրացն արքունի, որ գերի առնուլ կամէին զամրականս աշխարհին. դարձեալ և կարծէին ևս եթէ զանձք նախարարացն անդ իցեն, վասն այնորիկ և յանխնայ յուզէին զվայրսն:

Նա և տեսին ևս անդ ի գեւղս երկուս, որ զեկեղեցիսն այրեցեալ էր. առաւել ևս վասն այնր ի նախանձ բրդեցան բարկութեամբ: Յարձակեցան, հարան ի դիմի միմեանց, և կամակարութեամբ յաղթեալ, բեկեալ արկին զզօրութիւն գնդին Պարսից, և կոտորեցին զբազումս ի նոցանէ, և ըզմնացեալսն փախստական հանէին յաշխարհէն:

Եւ յայնչափ յանդուգն յարձակմանէն՝ միայն երանելին Հմայեակ, եղբայր սպարապետին Հայոց Վարդանայ, յանխնայ քաջութեամբ մարտուցեալ՝ կատարեցաւ նահատակութեամբ ի վերայ սուրբ ուխտին միաբանութեան: Եւ այլքն ամենայն ողջանդամ ապրեալք երթային զհետ փախըստականին:

Եւ իբրև այս այսպէս կատարեցաւ, դադարեցին զօրք Թագաւորին խառնամուխ լինել յամենայն տեղիս անխտրութեամբ, և ևս առաւել ձեռնպահ լինել յեկեղեցեացն: Դարձեալ միւսանգամ անդրէն հարցանել սկսան յարքունիսն:

Նա և որ յԱրձախայ մայրիսն անկեալքըն էին փախստականք, ոչ ինչ լուեալ դադարեցին խաղաղութեամբ. այլ հանապազ յղէին յաշխարհն Հոնաց, շարժէին և յորդորէին զզունդն Հոնաց, և յիշեցուցանէին նոցա զուխտն զոր եդեալ էր ընդ Հայս և անսուտ երդմամբ հաստատեալ: Համայ թուէր բազմաց ի նոցանէ լըսել զբանն քաղցրութեամբ: Նա և մեղադիր ևս յոյժ լինէին նոցա, եթէ ա՞ի կուիւն ընդէ՞ր ոչ եկիք պատրաստութեամբ: Եւ իբրև յառաջնումն ինչ ոչ հնարէին զմիմեանս հաւանեցուցանել, ապա գունդ բազում գումարէին՝ և անդէն յարձակեալ հատանէին ի սահմանս տէրութեանն Պարսից. և զբազում գաւառս հարեալ, բազմագոյն ևս գերի առեալ տանէին յաշխարհն իւրեանց, և յայտնի ցուցանէին Թագաւորին զմիաբանութիւն զոր ունէին ընդ գնդին Հայոց:

Իսկ իբրև այս ամենայն ազդումն հասանէր առ զօրավարն Պարսից, սրտմտեալ զայրանայր, և մեծաւ բարկութեամբ կուտէր զվնասն ի վերայ անօրինին Վասակայ. իբր թէ նա իցէ սկիզբն և առաջնորդ ամենայն չարեացն որ գործեցան: Եւ անդէն չու արարեալ գնայր, խաղայր հասանէր յաշխարհն Պարսից. գրէր և ցուցանէր յարքունիս զամենայն ստութեամբ, և զվնաս գործոյն արկանէր զուրացելովն:

Իբրև լուաւ Թագաւորն զամենայն աւեր աշխարհին, և ստուգեաց զկրս մեծի պատերազմին, բեկանէր անկանէր ի մեծ խրոխտալոյն, և լռեալ դադարէր ի հանապազորդ և ի խաբեբայ խորհրդոցն. յուզէր և քննէր զվրիպումն անհանճար գործոյն, և կամէր տեսանել՝ ասելով. «Ո՞ որ իցէ որ զիս ճշմարտութեամբ ի վերայ իրացդ հասուսցէ»: Իսկ որ էր զխտակ անօրէն գործոյն, անդէն ի Դրան արքունի, նոյն հազարապետն Միհրներսեհ, յառաջ մատուցեալ ասէ ցԹագաւորն. «Զայդ ես ասեմ քեզ, արքայ քաջ. եթէ կամիս ստուգութեամբ լսել զարդարն, որք զլխաւորք քրիստոնէիցն են ի Հայս՝ տուր կոչել,

և գան յօժարութեամբ և ասեն քեզ զամենայն արդարութեամբ»:

Յայնժամ զմի ոմն յաւագ նախարարացն՝ Ատրորմիզդ անուն, որոյ իշխանութիւնն իսկ խառն էր ընդ Հայոց աշխարհին և գործակից էր զօրավարին ի նմին պատերազմի, գրէր և յանձն առնէր նմա զաշխարհն Հայոց մարզպանութեամբ: Եւ զՄուշկան Նիւսալաւուրտ հանդերձ ամենայն մնացեալ զօրուն գումարէր յաշխարհն Աղուանից և Լփնաց և Ճղբաց և ի Հեճմատակաց և ի Թաւասպարաց և ի Խիբիոնաց, և յամենայն ամրականն՝ զորս աւերեալ էր զնդին Հոնաց վասն ուխտին Հայոց: Որպէս և յոյժ իսկ տրտմեալ էր Թագաւորն, ոչ միայն ընդ աւեր աշխարհացն և ընդ անկանելն զօրացն, այլ ևս առաւել ընդ աւերել պահակին՝ զոր ի բազում ժամանակաց հազիւ ուրեմն կարացին շինել. որ և յայնմ ժամանակի դիւրաւ առեալ քանդեցաւ, որում և չէր իսկ ակնկալութիւն շինութեան: Իսկ զՎասակ հանդերձ գլխաւոր քրիստոնէիւքն ի Դուռն հրամայեաց կոչել:

Արդ եկն եհաս մարզպանն Ատրորմիզդ

յաշխարհն Հայոց սիրով խաղաղութեամբ: Հրամանաւ արքունի կոչեաց առ ինքն զ-Սահակ սուրբ եպիսկոպոսն Ռշտունեաց, ուսանել ի նմանէ զկրացն անբաստանութիւն: Բայց թէպէտ և նորա աւերեալ էր ատրուշան մի, և բազում չարչարանօք հարեալ էր զպաշտօնեայս կրակին, ոչ ինչ զանգիտեաց գալ յատեան հրապարակին:

Դարձեալ և ի տանէն Արծրունեաց բարեպաշտօն երէց մի Մուշէ անուն, որ առաջնորդէր աշխարհին Արծրունեաց, աւերեալ էր և նորա զկրակատուն մի, և կապանօք և տանջանօք բազում չարչարանս անցուցեալ էր ընդ մոգսն. և սա ինչ ոչ զանգիտեաց, այլ կամաւ եկն և յանդիման եղև մարզպանին:

Եւ երկու ևս այլ քահանայք երանելիք, որոց անուանքն են Սամուէլ և Աբրահամ. քանզի եկեալ էր և սոցա զատրուշանն յԱրտաշատ, և յառաջագոյն ըմբռնեալ էին ի կապանս յուրացեալն Վասակայ. ածին և զնոսա յատեանն ընկերօքն:

Եւ ժողովեցին ևս ի նոյն տեղի զմեծն Յովսէփ և զՂևոնդ և զՔաջաջ և զԱր-

չէն: Եւ իբրև ուսաւ և տեղեկացաւ յամենեցունց մարզպանն, գրեաց և եցոյց յարքունիս զամենայն ճշմարտութեամբ որպէս ողորդ լուաւ ի բերանոյ նոցա:

Բայց Վասակ թէպէտ և յառաջագոյն հասեալ էր ի Դուռն, ըստ կամաց իւրոց այլ ընդ այլոյ երթեալ պատմէր զամենայն ստութեամբ, սակայն ի միտս թագաւորին ոչ կարէր զանձն արդարացուցանել. այլ պատասխանի արար նմա և ասէ. «Յորժամ քրիստոնեայքն ևս եկեսցեն՝ հասարակ լուայց յատենին»:

Իսկ զսուրբ քահանայսն՝ վասն զի կապանօք տանէին, յետ երկուց ամսոց և քսան աւուր հասանէին ի ձմերոցն արքունի: Իբրև լուաւ մեծ հազարապետն՝ եթէ ածին զնոսա ի քաղաքն, ինքնին իսկ ականատես լինէր նոցա: Բայց թէպէտ և տեղեկութեամբ լսէր ի նոցանէ զամենայն, ոչ կարէր ձեռն արկանել և չարչարել զնոսա. քանզի բազումք ի նախարարացն Հայոց դեռ ևս բռնացեալ ունէին զամուրս աշխարհին, և դեռ ևս մարզպանն յերկիւղի էր: Վասն որոյ զգուշութեամբ հրամայեաց պահել զսուրբսն, և զաշխար-

հըն հրամայէր սիրով նուաճել. վասն ո-
րոյ և ինքն իսկ շրջէր և ժողովէր և շի-
նէր ուխտիւ հաստատութեան:

Եւ եպիսկոպոսացն հրաման տայր ու-
նել զիւրաքանչիւր իշխանութիւնս, և ըստ
առաջին սովորութեանն պաշտել յայտ-
նութեամբ, և համարձակ ևս գալ ի հը-
րապարակ: Նա և ընծայից և պատարա-
գաց արժանի առնէր զառաջնաւ կոչելով:
Եւ քանզի բազում գաւառս առեալ և
աւերեալ էր զօրականին, թողուլ հրամա-
յէր զհարկս աշխարհին. և զայրուձին ևս
զարքունի թեթևացոյց առ ժամանակ մի:
Եւ միայնակեացք որք ելեալ և կորու-
սեալ էին՝ հրամայէր գալ և ունել զիւրաքան-
չիւր տեղիսն:

«Զամենայն կարգս աստուածպաշտու-
թեանն, որպէս զկարգ և ունէին յառաջ
ժամանակաւ առ նախնեօքն, նոյնպէս և
այժմ, ասէ, կալջին: Եւ եթէ ոք ի հեռի
աշխարհ ուրեք գնացեալ իցեն, ունիմ
իշխանութիւն յարքունուստ, եթէ յա-
գատոց իցեն, եթէ ի շինականաց իցեն,
եթէ յեկեղեցւոյ, զինչ կեանս և թողեալ իցէ,
եկեսցեն և կալցեն զիւրաքանչիւր զարարս»:

Զայս ասէր և երդմունս կնքէր և ա-
ռաքէր ի կողմանս կողմանս: Որ և բազումք
իսկ եկին և ժողովեցան, և կալան զիւրա-
քանչիւր կալուածս:

Նա և որ մեծն է քան զամենայն, որ
ի բռնութենէ ոք ակամայ կալեալ էր զմո-
գութիւնն, հրովարտակս առաքէր յար-
քունուստ՝ անդրէն ունել զքրիստոնէու-
թիւնն: Եւ յանդիման խօսէր թագաւորն,
որք էին ի տանն արքունի, եթէ «Որք ոչ
սիրով ունին զօրէնս դենի մազդեզն, այն-
պիսեաց և աստուածքն են ցասուցեալ, և
ես ոչ ինչ եմ շնորհակալ. և այսօր ըզ-
նոյն հրաման տամ ամենեցուն, ի կամս
մարդոյն թողեալ ըստ իւրաքանչիւր մտաց.
որպէս զինչ և կամի պաշտել՝ պաշտեսցէ.
ամենեքեան իմ ծառայք են»: Զայս ասէր,
և գրով հրաման տայր ամենայն աշխար-
հին:

Իբրև զայն լուան և տեսին բազումք՝
որ էին ցանեալ և ցրուեալք ի հեռաւոր
տեղիս, գային և ունէին զիւրաքանչիւր ա-
րարս: Իսկ նախարարքն որ էին յամուրս
աշխարհին և կամ ի հեռաւոր օտարու-
թեան, իբրև տեսին զշինութիւն երկրին,

մանաւանդ զհրեշտակացն հաստատութիւն, քաջալերեցան համարձակեցան և նոքա յանդիման լինել արքային: Վասն որոյ և պատգամ յղեցին առ մարզպան աշխարհին, զի ի Դուռն ցուցցէ զբանս նախարարացն: Իսկ նա փաղփաղուկի յարքունուստ գիր ողոքանաց և ուխտ հաստատութեան տայր տանել առ նոսա հրամանաւ արքունի: Բայց թէպէտ և զխոտէին նոքա զդաւանութիւն տէրութեանն՝ թէ՝ սուտ են յամենայնի, կամեցան չարչարակից լինել սրբոցն. զի եթէ մահ ևս առաջի կայցէ՝ ոչ ինչ զանգիտեսցեն երկիւղիւ:

Եւ զայս լուեալ Թագաւորին, ոչ կարանօք՝ այլ արձակ ուխտիւք և արձակ ձեռօք հրամայեաց առ ինքն կոչել: Ածին փաղփաղուկի զկին և զորդիս, և զինչս իւրաքանչիւր նոցուն ի ձեռս մարզպանին, և ինքեանք փութանակի գնացին ի ձմերոցն արքունի:

Եւ մինչ դեռ անդէն ի ձմերոցին էր Թագաւորն, ատեան հարցափորձի ի մէջ նոցա հրամայէր լինել: Եւ նստաւ հազարապետն՝ զի լուիցէ կողմանցն երկոցունց:

Եւ իբրև յերկարեցաւ ամբաստանութիւնն զաւուրս բազումս, պարտաւորեցաւ կողմ ուրացելոյն:

Քանզի ցուցանէին զթուղթսն՝ զոր տուեալ էր Վասակայ ամենեցուն որ ընդ նմա յուխտ ապստամբութեանն. թուղթ մի ի Վրաց աշխարհէն, և թուղթ մի յԱղուանից աշխարհէն. այնպէս և թուղթ մի յԱղձնիս, և հրովարտակ մի առ թագաւորն Յունաց, և թուղթ մի առ մեծ սպարապետն Անտիոքայ: Եւ ի բոլորեսին յայտնի թուղթսն վաւերականն մատանի Վասակայ եղեալ էր: Այնպէս խառն էր նա և ի մահ մտացն ի Ջարեհաւանի: Եւ զբազում բերդս՝ զոր հանին ի Պարսկաց, յայտ առնէին զնորա առ այն թուղթսն և զհրամանսն. քանզի նա էր մարզպան ի ժամանակին:

Որպէս և հրեշտակութեամբ իսկ զոր յղէր առ Յոյնս նախարար մի, որում անունն էր Ատոմ՝ յազգէն Գնունեաց, սա մատուցեալ յանդիմանէր զնա առաջի մեծի ատենին հրովարտակաւն իսկ զոր տուեալ էր նորա իւրով մատանեաւ:

Նա և ի մէջ իսկ բերէր զամբաստա-

նութիւն նորա Մուշկան Նիսալաւուրտ, և յայտ առնէր պատերազմակից ընկերօքն իւրովք, որ և յետ վճարելոյ պատերազմին բազում արիւն եւս հեղուլ Վասակ. Թէ որպէս սուտ երդմամբք խաբէր և իջուցանէր յամրոցաց անտի. էր զոր կոտորէր, և էր զոր գերի տանէր զծառայս և զաղախնայս արքունի: Եւ ի վերայ այսր ամենայնի մնասու, և զող եւս գտանէր հարկի աշխարհին՝ որ յարքունիսն երթայր:

Նա և յուրացեալ ընկերացն նորա բազումք էին որ յայտ արարին զչարիս նորա՝ զոր գործեալ էր ընդ աշխարհն Հայոց: Եւ ի մնացեալ մոգացն և ի փշտիպանացն՝ որք ի կապանսն ապրեալ էին և ապա ածին յարքունիս, հարցին և ցնոսա վասն նորա և ասեն. «Դուք էք ինչ տեղեակ վասն չարութեան նորա»: Նոքա պատասխանի և ասեն. «Ամենայն անցք չարչարանաց որ անցին ընդ մեզ, և բազում հարուածք որ եղեն ի զօրսն արքունի, և աւեր և գերութիւն աշխարհին Հայոց, և կորուստ հարկացն արքունի, սկիզբն և առաջնորդ չարեաց այրդ այդ եղեւ»:

Եւ մինչդեռ այս ամենայն ամբաստանութիւն զնմանէ կուտէր զայնչափ բազում աւուրս, յառաջ մատեան և իւր ազգականքն, որ եւս յառաջագոյն դատախազ լեալ էին զնմանէ առաջի արքային, սկսան կարգաւ ցուցանել և յայտ առնել, որպէս զի բարեկամացեալ էր նա ընդ Հեռանայ Հոնի միաբանութեամբ Բաղասական արքային, ի ժամանակին՝ զի կոտորեաց Հեռանն այն զզօրսն Պարսից յԱղուանս, և ապստամբ եհաս յերկիրն Յունաց, և բազում գերի և աւար խաղացոյց ի Հոռոմոց և ի Հայոց և ի Վրաց և յԱղուանից. որպէս զի ի վերայ իսկ եհաս խորհրդոցն ինքն իսկ Թագաւորն, և սպան զԲաղասականն արքայ: Եւ Վասակ մարզպան էր Հայոց ի ժամանակին, և Թշնամեացն արքունի խորհրդակից գտաւ: Ցուցին և յայտ արարին ազգականքն նորա, որպէս զի հմուտ և տեղեակ իսկ էին չար խորհրդոցն նորա. զամենայն ցուցանէին և յայտ առնէին առաջի Թագաւորին. և զայլ եւս բազմագոյն խարդախութիւնսն, որ ստութեամբ վարէր զկեանս իւր՝ ոչ միայն առ ընկերս, այլ և առ Թագաւորն ինքնին զլխովին. զի ոչ երբէք արդարութեամբ վաստակեալ էր ի մանկութենէ:

Յայնժամ ժամանակի հրաման ետ հազարապետն և ասէ. «Ածէք այսր և ի կապելոցն, որք են ի բանտի անդ»: Լուծին և ածին յերանելեացն զՍահակ եպիսկոպոս Ռշտունեաց, և զսուրբն Յովսէփ և զՂևոնդ երէց:

Եւ իբրև մերկացան ամենայն բանք առաջի նոցա, ետ պատասխանի Սահակ եպիսկոպոսն և ասէ. «Որ յայտնի ուրացեալն են ի ճշմարիտն Աստուծոյ, ոչ գիտեն զինչ գործեն և կամ զինչ խօսին. քանզի խաւարեալ է խորհուրդք նոցա. զտեարս պաշտեն սուտ պատճառանօք, և ընդ ընկերս մտանեն յուխտ ստութեան: Եւ են նոքա դարանք սատանայի, զի նոքօք իսկ կատարէ զդառնութիւն կամացն իւրոց, որպէս երևի իսկ ի դոյն յայդ Վասակ: Քանզի մինչ ունէր զանուն քրիստոնէութեան, վերին երեսօք կարծէր ծածկել և թագուցանել զամենայն չարութիւն իւր առաջի ձերոյ անգէտ տէրութեանդ, և զամենայն նենգութիւնն իւր քրիստոնէութեամբն ծածկէր: Ուստի և ձեր իսկ կարծեցեալ՝ մեծապէս պատուեցէք զդա առաւել քան զարժանն իւր: Հաւատացէք դմա

զաշխարհն վրաց. հարցէք՝ եթէ զո՞հ իցեն զդմանէ: Ետուք դմա զտէրութիւնն Սիւնեաց. լուարո՞ւք յազգականաց այտի դորա, զի՞նչ պատմեն զդմանէ: Արարէք զդա մարզպան Հայոց. զոր նախնեացն ձերոց մեծաւ աշխատութեամբ գտեալ էր, դա ի միում ամի կորոյս զերկիրն ամենայն: Տեսէ՞ք, իբրև բարձաւ ի դմանէ պատուական անունն Աստուծոյ՝ զոր ունէր ստութեամբ, մերկ երևեցաւ ամենայն չարագործութիւն դորա: Զի եթէ առ Աստուածն իւր սուտ գտաւ, առ ո՞ ոք ի մահկանացուաց ասի դա արդար գտանիցի:

«Արդ ամենայն ամբաստանութիւն՝ որ այժմ յայտնի եղև զդմանէ, ո՞չ ահա ձեր իսկ յառաջագոյն լուեալ էր. բայց յոր պէտս ծածկեցէքն՝ դուք ձեզէն իսկ քաջ գիտէք: Ինձ այսպէս թուի, եթէ սուտ յուսով դա զձեզ խնդացոյց: Այլ ոչ դուք և ոչ դա, և ոչ որ զկնի ձեր գալոցն է՝ զայն ի մեզ ոչ կարէ տեսանել: Արդ արարէք ընդ դա որպէս և կամիք. ցմեզ զի՞ հարցանէք»:

Զարմացաւ մեծ հազարապետն ընդ միտս իւր, և ի խորհուրդս իւր քննէր զա-

մենայն բանս ատենին: Քանզի հասեալ էր ի վերայ՝ եթէ յիրաւի դատապարտեցաւ այրն ըստ արժանի գործոցն իւրոց, եմուտ և եցոյց զամենայն բանս ատենին յարքունիս: Եւ իբրև լուաւ թագաւորն և ստուգեաց ի հաղորդակցէն զառնն պարտաւորութիւն, բարկացաւ յոյժ և ի խոր խոցեցաւ. բայց միայն երկայնմտութեամբ կամեցաւ հատուցանել զնա ի մեծ անարգութիւն: Լուռ եկաց աւուրս երկոտասան, մինչ ի գլուխ չոգաւ փորձիչ ամբաստանութեանն:

Եւ եղեւ յաւուր միոջ մեծի զամենայն երևելի և զպատուականսն հրամայէր յընթրիս կոչել: Կոչեցին և զուրացեալն. և նա ըստ առաջին կարգի օրինացն արքունի արկանէր զպատուական հանդերձն զոր ունէր ի թագաւորէն. կապէր և զպատիւ վարսին և զխոյրն ոսկեղէն դնէր ի վերայ, և զկռանակուռ ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք ընդ մէջ իւր ածէր, և զգինդսըն յականջսն, և զգումարտակն ի պարանոցին, զսամոյրն զթիկամբն, և զամենայն օրէնս պատուոյն զանձամբ արկեալ՝

երթայր յարքունիս. շքեղ և երևելի քան զամենեսեան երևէր բազմութեանն:

Իսկ նախարարքն որք կամօք ի Հայոց չոգան՝ անձամբ տուեալ զանձինս ի փորձութիւնն, և սուրբքն որ յառաջագոյն հասեալ էին, կապանօք ունէին զամենեսեան առ Դրանն արքունի: Իբրև տեսին զնա զարդարեալ և շքեղացեալ, և բազմամբոխ գնդաւ գայր յարքունիս, ի միտս իւրեանց սկսան այպանել և ասել. «Ո՛վ անմիտ վաճառական, զանմահ և զանանց պատիւ ետուր, և զանցաւորդ գնեցեր, զոր և զայդ ևս ընդ մօտոյ աւուրս կորուսանելոց ես»:

Եհաս և նստաւ ի ներքին դահլիճսն, որ էր հրապարակ մեծամեծացն: Արդ եկն եւ սենեկապանն յարքունուստ, հարցանէր ցնա և ասէ. «Արքայ յղեաց առ քեզ, յորմէ՞ գտեալ է քո զայդ ամենայն պատուական պատիւդ, ասա վաղվաղակի, վասն որո՞յ արդար վաստակոց»: Եւ յուշ առնէր նմա զամենայն բանս ատենին յորում դատապարտեցաւն. նա և զոր ոչ ևս անդ խօսեցաւն՝ զայն ևս յայտնէր նմա: Զի ոչ ըստ կարգի ունէր նա զտէրութիւնն Սիւնեաց

աշխարհին, այլ նենգութեամբ և քսու-
թեամբ: եւ սպանանել զհօրեղբայր իւր
զՎաղինակ, և յինքն առեալ զտէրութիւնն՝
իբրև քրմիկեար յարքունիս: Նա և այլ
եւս բազում բանիւք զաստապարանեցին զնա,
որում ամենայն աւագանին վկայ գային:
Պապանձեցաւ ամենևին, և չգտաւ բան
ճշմարիտ ի բերան նորա: Իբրև կրկնեցին և
երեքկնեցին ցուցանելով ի ներքս յարքու-
նիսն, հատաւ վճիռ մահու ի վերայ նորա:

Արդ եկն եւ դահճապետն, և մատեաւ
առաջի ամենայն մեծամեծացն, մերկեաց
ի նմանէ զպատիւն զոր ունէր յարքու-
նուստ, և զգեցոյց նմա հանդերձ մահա-
պարտի: կապեցին զոտս և զձեռս, և կա-
նանցաբար նստուցին ի ձի մատակ տարան և
ետուն յայն զընդան՝ ուր կային մահա-
պարտք ամենայն:

Իսկ նախարարքն Հայոց և սուրբ եպիս-
կոպոսքն հանդերձ երիցամբքն, թէպէտ և
էին ի մեծի պատուհասի, ոչինչ յիշէին
զնեղութիւնսն որ անցեալ էր ընդ նոսա, և
կամ որ այլ եւս ակնկալութիւն էր գալ ի
վերայ. այլ զարմացեալ էին ընդ մեծ յայտ-
նութիւնն որ եղև յԱստուծոյ: Մխիթա-

րէին զմիմեանս և ասէին. «Քաջութեամբ
պատերազմեցարք, առաւել ևս համբերու-
թեամբ ճգնեցաւք: Լուեալ է մեր ի սուրբ
հարցն մերոց՝ եթէ գլուխ ամենայն առա-
քինութեան համբերութիւն է, և իմաս-
տութիւն երկնաւոր՝ կատարեալ աստուած-
պաշտութիւն. և զայս ոչ ոք կարէ գտա-
նել առանց չարչարանաց: Իսկ չարչարանքն
յորժամ ընդերկարանայ ի վերայ՝ յայնժամ
բազմանայ վարձ հատուցմանց պարգևին:
Ապա թէ այդ այդպէս է, զայս միայն ա-
ղաչեսցուք զԱստուած՝ զի համբերել կա-
րասցուք ամենայն փորձութեանց. և Տէր
ինքնին արասցէ հնարս մերում փրկու-
թեան:

«Լուեալ է մեր զդատաստան քառա-
սուն զինուորացն Քրիստոսի, որք բազում
հարուածս տանջանաց ընկալան: Մինն ի
նոցանէ փոթացաւ ի բաղանիսն, և վրի-
պեաց ի պսակէն. իսկ երեսուն և ինն համ-
բերութեամբ կատարեցան, և հասին այնմ
աւետեացն, որում ցանկացեալն էին: Իսկ
մեր ընկերակիցն աւանիկ՝ որ յառաջագոյն
որոշեցաւ ի մէնջ, ահա եղև գործակից
սատանայի: Մինչ դեռ ոգիքն ի մարմինն են՝

ընկալաւ զառհաւատչեայ գեհենին տանջանաց, որ ոչ միայն սրբոց է ողբալի, այլ և ամենայն գազանաբարոյ մարդկան»:

Զայս ասէին, և բազում արտասուս ի վերայ կորուսելոյն հեղուին. և անդէն զերգս հոգևորս ի բերան առեալ ասէին. «Բարի է յուսալ ի Տէր քան յուսալ ի մարդիկ. բարի է յուսալ ի Տէր քան յուսալ յիշխանս. ամենայն ազինք շրջեցան զինև, և անուամբ Տեառն յաղթեցի նոցա»: Յաջալերէին զմիմեանս և ասէին. «Զայս գիտելով, եղբարք, մի՛ երկիցուք յանաստուած ազգէս հեթանոսաց, որ քան զմեղուս վատթարագոյն են ի զայրանալն իւրեանց, զի և նոցա ցասումն ի սատակումն անձանց իւրեանց լիցի, այլ մեք զանուն Տեառն կարդասցուք, և վանեսցուք զամենեսեան»:

Իսկ ուրացեալն Վասակ հայէր ի միաբանութիւն սուրբ կապելոցն, որք մեծաւ խնդութեամբ ընդունէին զչարչարանսն, և զուարթագոյն և պայծառք երևէին որպէս յառաջագոյն յարքունիսն, հայէր և կարօտէր, և ոչ ոք խառնեաց զնա ի նոսա, այլ ուրոյն նովին կապանօք պահէին: Եւ օր ըստ օրէ բերէին իբրև զգէշ ընկենուին

ի մեծ հրապարակին, ձաղէին և այպանէին, և տեսիլ ամենայն կարաւանին զնա առնէին: Կողոպտեցին հանին և ոչ ինչ թողին զոր ընդ իւրն ունէր. այնպէս ձաղեցին աղքատութեամբ, մինչ հաց մուրանային և բերէին նմա իւր ծառայքն: Եւ այնպէս սաստիկ արկին զպարտերս հարկաց աշխարհին ի վերայ տան նորա, որ մինչև զհարց և զհաւուց և զիւր արարս և զզարդս կանանց ևս ետ ի վերայ, և ետ և տուժեցաւ, և ոչ կարաց հատուցանել զպարտսն արքունի: Եւ յայն տեղի հասուցին՝ մինչև հարցանել նմա՝ «Եթէ կայցէ՞ ինչ զանձ ի գերեզմանս նախնեացն մերոց»: Եւ եթէ գտեալ էր նորա, հանէր և տայր ընդ իւր և ընդ ընտանեացն տուգանս. որպէս զի բազում մարդիկ խիստ չոգան ի տուժի:

Եւ իբրև այսպէս յամենայն կողմանց հարեալ վատթարացաւ, անկաւ յախտ դժնդակս անդէն ի կապանսն: Ջեռաւ փոր նորա, և հարան և տրորեցան զօգք նորա, և քամեալ մզեցաւ թանձրամածութիւն նորա: Եռացին որդունք ընդ աչս նորա, և ի վայր սորեցին ընդ ռնգունս նորա. լեզուն

լսելիք նորա, և ծակոտեցան չարաչար շըրթունք նորա. լուծան ջիլք բազկաց նորա, և յետ կոյս կորացան կրկունք ոտից նորա։ Բղխեաց ի նմանէ հոտ մահու, և փախըստական եղեն ի նմանէ ձեռնասուն ծառայք նորա։ Լեզուն միայն կայր կենդանի ի բերան նորա, և ոչ գտաւ խոստովանութիւն ի շրթունս նորա։ Ճաշակեաց զմահ հեղձամղձուկ, և էջ ի դժոխս անհնարին դառնութեամբ։ Ոանհար եղեն նմա ամենայն սիրելիք նորա, և ոչ յագեցան տատիկ հարուածովք ամենայն թշնամիք նորա։

Եւ այն որ կամէրն թագաւոր լինել մատնութեամբ՝ Հայոց աշխարհին, և ոչ գերեզմանի նորա տեղի երևեցաւ ի նմին. քանզի իբրև զշուն մեռաւ և իբրև դէշ քարշեցաւ։

Ոչ յիշեցաւ անուն նորա ի մէջ որդոց. և ոչ մատեաւ յիշատակ նորա առաջի սուրբ սեղանոյն յեկեղեցւոջն։ Ոչ ինչ եթող չարիս՝ զոր ոչ գործեաց ի կեանս իւր, և ոչ ինչ մնաց ի մեծամեծ չարեաց՝ որ ոչ անցին ընդ նա ի մահուան նորա։

Գրեցաւ յիշատակարանս այս վասն նորա, առ ի կշտամբումն յանդիմանութեան մեղաց նորա. զի ամենայն՝ որ զայս լուեալ գիտասցէ, նզովս ի հետ արկցէ, և մի՛ լըցի ցանկացող գործոց նորա։

ԱՒԱՐՏԵՑԱՒ

ԵՒԹՆ ՑԵՂԱՆԱԿՔՆ

ԱՐՏԱՔՈՅ

ԵՒԹՆ ՑԵՂԱՆԱԿԻՆ

ՈՒԹԵՐՈՐԴ

ՎԱՍՆ ՉԱՐՉԱՐԱՆԱՑ

ՍՈՒՐԲ ՔԱՀԱՆԱՅԻՑՆ ԵՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ

Արդ ի վեշտասաներորդի ամի տէրութեանն նորին Թագաւորի՝ դարձեալ անդրէն խաղայր գնայր յաշխարհն Քուշանաց մեծաւ սրտմտութեամբ ի գործ պատերազմի: Եւ գնացեալ ի Վրկանէ, և եղեալ յԱպար աշխարհ, նովին կապանօք զնախարարսն և զքահանայսն հրամայեաց պահել ի դղեակ քաղաքին ի Նիւշապուհ. և զերկուս յերանելեացն ընդ իւր խաղացոյց: Ահ արկանէր ամենայն քրիստոնէութեանն ընդ որ անցանէր:

Իբրև զայն տեսանէր Հոն մի, որ էր յազգէ Թագաւորացն ի Խայլանդրաց աշխարհէն, Բէլ անուն, և ի ծածուկ խոնարհէր առ քրիստոնեայսն, և սիրով յօժարութեամբ ուսանէր ի նոցանէ զճշմարտութիւնն, և կամօք իւրովք նուաճեալ էր ընդ իշխանութեամբ Թագաւորին, և կարի յոյժ դառնանայր ի միտս իւր յորժամ տեսանէր չարչարեալ զսուրբսն: Եւ իբրև այլ ոչ ինչ էր ձեռնհաս, փախստական անկանէր առ արքայն Քուշանաց: Երթայր և պատմէր նմա զամենայն անցս չարչարանացն, զոր անցոյց Թագաւորն ընդ աշխարհն Հայոց. տեղեակ ևս առնէր զնա վասն խրամատութեանն պահակին Հոնաց. ցուցանէր և զերկպառակութիւն զօրացն, որ բազում ազգք բաժանեցան ի սիրոյ Թագաւորին. ազդէր նմա և զտրտունջ զԱրեաց աշխարհին:

Զայս իբրև լուաւ Թագաւորն Քուշանաց, ոչ ինչ երկմտութեամբ Թերանայր յառնէն, և ոչ կարծիք լրտեսի անկանէին ի սիրտս նորա: Քանզի սակաւ մի յառաջագոյն նորա լուեալ էր, դարձեալ իբրև ստուգեաց ի Բելայ զայն ևս եթէ խաղա-

ցեալ գայ ի վերայ աշխարհին Քուշանայ, փութացաւ վաղվաղակի զօր ժողովել, գունդ կազմել՝ հանել նմա ընդ առաջ հզօր ձեռամբ: Զի թէպէտ և ոչ կարէր յանդիման տալ պատերազմ ընդդէմ նորա, այլ ի վերջայս թեւոցն անկեալ՝ բազում հարուածս հասուցանէր ի վերայ զօրացն արքունի: Եւ այնպէս նեղեալ ըշտապէր՝ զի անձուկ լաշկարաւ փատախտարակ արարեալ՝ այսրէն դարձուցանէր, և ինքն ասպատակաւ զհետ մտեալ աւերէր զբազում գաւառս արքունի, և ողջանդամ անդրէն յերկիրն իւր դառնայր:

Եւ թագաւորն կրկին ետես եթէ անարգանօք և վատթարութեամբ դարձեալ եմ ի պատերազմէս, զեջաւ փոքր մի ի հպարտութենէն, և գիտաց եթէ յերկպառակութենէ զօրացն եղեն չարիքն ամենայն: Եւ առ մեծկել սրտին՝ չգիտէր թէ յո՞ թափէր զթոյնս դառնութեանն: Իսկ մեծ հազարապետն յայժ էր յերկիւղի, քանզի ինքն էր պատճառք ամենայն չարեացն որ գործեցան:

Սկսաւ բանս ի բերան դնել մոգպետին և մոգացն, որք մատուցեալ յանդիման ա-

ռէին ցթագաւորն. «Արքայ քաջ, մեք ի դենէ իսկ գիտեմք, զի ոչ ոք ի մարդկանէ կարէ կալ առաջի քոյոյ մեծի զօրութեանդ. այլ վասն քրիստոնէից — որ են ընդդէմ օրինաց մերոց — բարկացեալ են մեզ աստուածքն, զի մինչև ցայսօր կենդանի պահեցեր զնոսա»: Եւ յիշեցուցանէին և զնմա, որպէս նոքա ի բանսի անդ անիծանէին զքեզ: Եւ բազում և այլ հայհոյութիւնս խօսէին զսրբոցն, և զօր հանապազ զնոսա յաչաց հանէին, և զմիտս թագաւորին ածէին ի ցասումն բարկութեան. մինչև փութացաւ վաղվաղակի հեղուլ զարիւն անմեղացն:

Ետ հրաման վասն երկուցն որ անդէն ի կարաւանին առ իւրն էին — Սամուէլ և Աբրահամ — զի գաղտ կորուսցեն զնոսա: Իսկ որք էին ի դղեկ քաղաքին, հեռի էին ի կարաւանէն իբրև օթիւք հնգետասան: Հրամայեաց համբարակապետին, որում անունն էր Դենշապուհ, զի յառաջ քան զնա երթիցէ ի քաղաքն, ուր էին սուրբ քահանայքն Տեառն, և չարաչար տանջանօք իշխեսցէ դատել և հարցանել, և սրով վախճանել:

Այլ զնոսա մոգպետին յառաջագոյն— որում յանձն արարեալ էր—բազում անգամ աւելի քան զհրամանն արքունի չարչարեալ էր. քանզի իշխան զենպետ էր Ապար աշխարհին, և առաւել ջերմագոյն էր ի մոգութեանն. քան զբազում գիտունսն ևս տեղեակ էր զրադեշտական օրինացն: Նա և զոր մեծ պարծանս համարէին ըստ իւրեանց մոլորութեանն կարգին, Համակդեն անուն էր. զիտէր և զԱմպարտքաշն, ուսեալ էր և զԲոզպայլտն, ունէր և զՊալհաւիկն և զՊարսկադենն: Քանզի այս հինգ կեշտք են որ գրաւեալ ունին զամենայն օրէնս մոգութեանն. բայց արտաքոյ սոցա է մեւս ևս այլ վեցերորդ, զոր Պետմոգն կոչեն:

Թուէր ինձ անձին՝ եթէ կատարեալ իցէ ամենայն գիտութեամբ. հայէր ընդ երանելիսն, եթէ առ տգիտութեան մոլորեալ են ի մեծ գիտութենէս մերմէ: Եդ անօթի կարծիս ի մտի՝ անդադար չարչարել զնոսա, զի թերևս առ չժուժալ մարմնոյն նեղութեանց՝ լուայց ի նոցանէ բանս ինչ ողոքանաց: Վասն որոյ գայր և որոշեաց ի նախարարացն զքահանայսն, և հեռացոյց ի նոցանէ բացագոյն, և արկ զնոսա ի ներք-

նատուն մի գէճ խաւարչտին: Եւ հրամայէր վեց աւուր երկու քաշկէնս ժամէ ի ժամ, և գորակ և կէս ջուր. և ամենևին ոչ զոք թողոյր մտ երթալ ի դուրս բանտին:

Եւ իբրև աւուրս քառասուն այսու նեղէր զնոսա, և ոչ լուաւ ի նոցանէ բան թուլութեան, այլ ինն ած զմտաւ, որպէս թէ ոք յիւրոց ծառայիցն գաղտ եգիտ ինչ ի նոցանէ և ի ծածուկ տայցէ նոցա կերակուր: Ինքն երթեալ կնքէր զերդ և զդուռն բանդին, և զկարգեալ ռոճիկն տայր յիւր հաւատարիմն տանել նոցա. և արար զայս աւուրս հնգետասան:

Սակայն և այնպէս երանելիքն ոչ ինչ շտապեալ տաղնապեցան. այլ մեծաւ համբերութեամբ տանէին զձգնութիւնն, և անդադար սաղմոսիւք կային ի հանապազորդ պաշտամանն. և ի կատարել աղօթիցն զուարթագին զոհանալով, սակաւիկ մի հանգչէին ի գետնախշտի յանկողինսն:

Իսկ պահապանքն որ ի վերայ կապելոցն կային՝ յոյժ էին զարմացեալ ընդ առողջութիւն անհիւանդութեան նոցա, իբրև լսէին զանդադար հնչումն ձայնիցն: Վասն

այնորիկ պատմեցին յականջս մոգպետին և ասեն. «Ոչ են արքն այն լոկ առանց մեծի զօրութեան. զի եթէ պղնձի մարմինք ունէին նոքա, արդ լուծեալ էր ի գէճ խոնաւոյ անտի: Բազում ժամանակք են մեր՝ զի յանձն է մեզ պահպանութիւն բանտիս. ոչ յիշեմք՝ եթէ ի կապելոց ոք ամսօրեայ ժամանակ կեցեալ իցէ ի տանդ յայդմիկ: Արդ մեք ասեմք քեզ: եթէ առեր հրաման մահու նոցա և սպանանես՝ դու գիտես. ապա թէ ոչ, պահել յանձն արարաւ քեզ և ոչ գտանել վնասս՝ չարաչար վտանգ է կապելոցն: Նա և մեք զահի հարեալ եմք և յոյժ երկնչիմք, յորժամ տեսանեմք զայնպիսի անհնարին նեղութիւնսն»:

Եւ իբրև զայս լուաւ մոգպետն, յարուցեալ ինքնին երթայր ի մէջ գիշերին յերդ բանտին: Եւ հայեցեալ ի ներքս ընդ մութ գիշերոյն, այն ինչ լինէր նոցա ի պաշտամանէն հանգչել, և տեսանէր զանձն իւրաքանչիւր կապելոցն՝ զի իբրև զկանթեղ անշիջանելի վառեալ բորբոքէր: Զահի մեծի հարաւ, և ասէր ընդ միտս իւր. «Զի՞նչ է այս մեծ սքանչելիքս. աստուածք մեր ու-

րեմն եկեալ իջեալ են ի բանտս, և նոցա փառաւորութիւնն լուցեալ բորբոքի: Եւ եթէ նոքա առ ասա ոչ մերձենան, մարդոյ լոկ անհնարին է զայսպիսի պայծառութիւն լուսոյ գտանել: Իմ այսպէս խոհեալ էր վասն կեշտիս այսորիկ՝ եթէ առ յոյժ յիմարութեանն մոլորեալ են, և ստութեամբ կերպարանին ի յաչս տգէտ մարդկան. Թերևս և այս տեսիլ այնպէս ինչ երևեցաւ ինձ»:

Եւ ոչ կարէր համօրէն կալ ի վերայ իրացն երևման: Եւ մինչդեռ յայսմ մտաց խորհրդի էր, դարձեալ սուրբքն յիւրաքանչիւր խշտեկացն կանգնեցան կացին ի սովորական պաշտամանն: Յայնժամ ճըշմարտեալ գիտաց մոգպետն, եթէ ոչ այլ ընդ այլոյ տեսանէր՝ որ երևեցաւն նմա, այլ ի նոցունց յանձանց փայլէր լուսաւորութիւնն: Յայնժամ կրկին անգամ զահի հարաւ և ասէ. «Ո՞ւմ ի կապելոցն եղեւ այսպիսի յայտնութիւն. ես և ոչ զմի ոք ոչ գիտեմ, և ոչ լուեալ է իմ ի հարցն յառաջնոց»: Եւ քանզի անհնարին շարժեցաւ ի մեծ սքանչելեացն, և դողացին ամենայն մարմինքն, և թմբրեալ կիսամեռ լինէր ի

վերայ տանեացն մինչև յառաւօտն. և ի ծագել լուսոյն իբրև զբազմօրեայ հիւանդ յարուցեալ երԹայր ի վանս իւր, այլ և ոչ ումեք իշխեաց ամենևին պատմել զոր ինչ ետես:

Կոչեաց առ իւր զպահապանսն և ասէ ցնոսա. «ԵրԹայք հանէք զկապեալսն ի վերնատուն մի ցամաքագոյն, և անդ պահեցէք զնոսա զգուշուԹեամբ, որպէս և ասացէքն»: Մի ոմն ի դահճաց անտի իբրև լուաւ զհրամանս մոգպետին, փուԹով ընԹացեալ երԹայր, իբրև մեծ ինչ աւետիս տանէր նոցա: «Հրամայեաց ձեզ, ասէ, ելանել ի ցամաք վերնատուն մի. արիք վաղվաղակի, և մի հեղգայք, քանզի և մեք իսկ պաղատեցաք վասն ձերոյ տառապանացդ»:

Իսկ սուրբն Յովսէփ հեզաբար սկսաւ խօսել ընդ դահճապետին և ասէ. «ԵրԹ և ասա ցչխմար առաջնորդն ձեր. չէ լուեալ քո վասն հանդերձեալ դատաստանն Տեառն մերոյ և կամ վասն մերոյ հրաշակերտ շինուածոցն՝ որք մեզ կան պահին ի սկզբանէ պատրաստուԹեամբ, վասն որոյ դիւրաւ համբերեմք մեծի նեղուԹեանս առ

սէր այնր յուսոյ զոր տեսանեմք: Դու բարուք արարեր, զի արգահատեցեր մեծի նեղուԹեանս մարմնոյ. այլ ոչինչ եմք ձանձրացեալք իբրև զանաստուած ոք՝ որ չիք այլ ինչ յոյս ի միտս նորա քան որ երևինս: Այլ մեք առ սէր Քրիստոսին մերոյ՝ ընդ այս յոյժ եմք խնդացեալ. և կատարեալ պարգևս զսա իսկ համարիմք, զի ժամանակեայ վշտօքս զանժամանակ երանուԹիւնն ժառանգեսցուք:

«ԵԹէ շինուածոց լինեմք ցանկացեալք, ունիմք շինուածս յերկինս առանց մարմնաւոր ձեռագործի, որ ոչ երևին ձեր արքունիքդ առ նոքօք: Նոյնպէս և հանդերձից և փառաց և անախտ կերակրոց. զոր եԹէ ոք կամեսցի ասել ձեզ, չհանդարտէ լսել ձեր տկարուԹիւնդ. վասն զի կուրուԹեան հնուԹեամբն չտեսանէք և ոչ լսէք և ոչ իմանայք, յայն սակս զմեզ զօր և անիրաւ և առանց յանցանաց անողորմ գանէք: Այլ մեր Թագաւորն առատ է և բարերար, և բաց է դուռն արքայուԹեան նորա. եԹէ կամեսցի ոք դիմել՝ դիմեսցէ համարձակ. ի դարձելոց յապաշխարուԹիւն չնախանձի և ոչ ընդ ումեք երբէք:

«Բայց վասն դիւրութեանս որ դու հրամայեցեր առնել մեզ, էր մեր իշխանութիւն անդրէն յաշխարհին մերում չանկանել մեզ ի ձեռս թագաւորիդ. որպէս և այլքն՝ զի ապրեցան յայսպիսի փորձանաց. այլ որպէս կամօք և յօժարութեամբ եկաք, իբրև թէ գնայաք ընդ վիշտս վտանգիս, ոչ ինչ զանգիտեաք յայսպիսի ճգանց, այնպէս և կամիմք՝ զի և այլ ևս ծանրացուսցես ի վերայ մեր, մինչև քո չարութիւն կամացդ յագեսցի ի մեզ: Զի թէ Աստուածն մեր, որ է արարիչ երկնի և երկրի և ամենայն երևելեաց և աներևութից, և առ սէր իւրոյ բարերարութեանն խոնարհեցաւ առ ազգս մարդկան, և զգեցաւ մարմին չարչարելի, և անց ընդ ամենայն հանդէս առաքինութեան, և կատարեաց զամենայն գործ անսխալութեան, ի կամս իւր մատնեցաւ ի ձեռս խաչահանուացն, մահու մեռաւ և եդաւ ի գերեզմանի, և զօրութեամբ աստուածութեանն իւրոյ յարուցեալ երևեցաւ աշակերտացն և այլոց բազմաց. և վերացաւ առ Հայր իւր յերկինս, և նստաւ ընդ աջմէ Հայրենի աթոռոյն, և շնորհեաց մեզ

զօրութիւն երկնաւոր, զի ըստ նորա անմահութեանն՝ և մեք մերով մահկանացու մարմնովս կարիցեմք չարչարակից լինել անմահ մեծութեանն, և նա ոչ ևս իբրև զմահկանացու համարի զմեր մահն, այլ իբրև անմահակից հատուցանէ մեզ ընդ վարձս վաստակոց մերոց: Արդ փոքր համարիմք մեք զչարչարանս զայս առ սէր մխիթարչին զոր էարկ առ ազգս մարդկան»:

Իբրև լուաւ զայս ամենայն բանս մոգպետն ի դահճապետէ անտի, խռովեցաւ, պղտորեցաւ ի միտս իւր, և հատաւ քուն յաչաց նորա զբաղում գիշերս: Իսկ յաւուր միոջ յերեկուն պահուն յարուցեալ երթայր առ նոսա միայնիկ լռիկ, և ոչ զոք առնոյր ընդ իւր ի սպասաւորացն: Եւ իբրև եհաս ի դուրս տանն, հայէր ընդ ծակ մի ի ներքս և տեսանէր ըստ առաջին տեսլեանն. բայց նոքա ի քուն կային խաղաղիկ: Հեզաբար կարդաց յանուանէ զեպիսկոպոսն, քանզի քաջ իսկ գիտէր պարսկերէն: Ել ի դուրս և հարցանէր. «Ո՞վ ես դու:—Ես ինքն իսկ եմ, ասէ. կամիմ ի ներքս մտանել և տեսանել զձեզ»:

Եւ իբրև եմուտ ի մէջ սրբոցն, ոչ ևս երևէր նմա այլ նշանն. և պատմեաց նոցա զերկիցս երևումն սքանչելեացն: Նա պատասխանի Ղևոնդ երէցն և ասէ. «Աստուած, որ ասաց ի խաւարի լոյս ծագել, որ և ծագեաց և լուսաւորեաց իմաստութեամբ զամենայն արարածս, նոյն զօրութիւն և այսօր ծագեաց ի խաւարեալ միտս քո, և բացան աչք կուրացեալ ոգւոյդ, և տեսեր զանշիջանելի լոյս շնորհացն Աստուծոյ. փութա, մի՛ հեղգար. զուցէ դարձեալ կուրացեալ ընդ խաւար գնայցես»:

Եւ զայս իբրև ասաց, յոտն կացին ամենեքեան ասելով ի քառասներորդ երկրորդ սաղմոսէն. «Առաքեա, Տէր, զլոյս քո և զճշմարտութիւն քո, զի նոքա առաջնորդեսցեն և ածցեն զմեզ ի լեառն սուրբ և ի յարկս քո: Արդարև ճշմարտիւ, Տէր, առաջնորդեցեր և ածեր զմոլորեալս զայս յանանց ուրախութիւնդ և յանմերժելի հանգիստդ: Ահա նմանեալ է օրս այս սուրբ չարչարանացն քոց. որպէս ապրեցուցեր զմահապարտ աւազակն յերկրորդ մահուանէն, և նմա բացեր զաղխեալ

դուռն Եդեմայ, այսպէս զսա և զայս կորուսեալս. որ էր պատճառք մահու բազմաց, արդ արարեր զսա պատճառք կենաց մեզ և անձին իւրում: Գոհանամք զքէն, Տէր, գոհանամք և ձայնակիցք լինիմք սուրբ մարգարէին. Մի՛ մեզ Տէր, մի՛ մեզ, այլ անուան քո տուր փառս վասն ողորմութեան և ճշմարտութեան քո. զի մի՛ երբէք ասասցեն ի հեթանոսս, թէ ո՞ւր է Աստուած նոցա. որպէս և այսօր իսկ յայտնի եղև զօրութիւն քո մեծ ի մէջ ապարասան խաւարազգեստ ազգիս»:

Իսկ որ ձրին եգիտ զաստուածատուր շնորհսն, սկսաւ և նա առանձինն ասել. «Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց. Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ՞ դողացայց: Քանզի գիտեմ ճըշմարտիւ՝ եթէ բազում են այսուհետև թշնամիք իմ, և կամին մերձենալ և ուտել զմարմինս իմ. այլ դու, Տէր ամենայնի, եկիր վասն ամենեցուն կենաց, զի դարձցին և կեցցեն առաջի քոյոյ մարդասիրութեանդ: Մի՛ որոշեր զիս ի սուրբ գառանցս յորս խառնեցայ, զի մի՛ ըստ քո փարախդ արտաքս եղեալ՝ չար գազան դար-

ձեալ բեկանիցէ զնա: Մի՛ հայիր, Տէր, ի
բազմամեայ ամբարշտութիւնս իմ, զի մի՛
մոլորեալ ի ճշմարիտ կենացդ՝ զբազում
անդրէն ի կորուստ աշակերտեցի, այլ ո-
րոց եղէ պատճառ մահու՝ նոցին եղէց և
պատճառ կենաց: Սատանայ՝ որ ինև
երախտացեալ պարծէր ի մէջ մեծի կորս-
տականացս, ինև կորացեալ ամաչեսցէ ի
մէջ իւրոց աշակերտացն»:

Եւ զայս իբրև ասացին, նմին իսկ ե-
տուն կատարել զաղօթսն, և դադարեցին
նոքա. հանգերձ մինչև ի պահն երրորդ,
և այնպէս խաղաղացեալ կացին ի քուն
ամենեքեան մինչև ի ժամ առաւօտուն:

Իսկ նորա յոտն կացեալ, և ի քուն ոչ
մտանէր, այլ զձեռսն իւր ի վեր համբար-
ձեալ՝ կայր յաղօթս: Եւ մինչդեռ ընդ երդ
պշուցեալ հայէր յերկինս, յանկարծակի
տունն լի եղև լուսով. և երևեցան նմա
սանդուղք լուսեղէնք՝ որ կանգնեալ էր յերկ-
րէ ի յերկինս. և գունդք գունդք զօրաց
ելանէին ի վեր. և էր ամենեցուն տեսիլն
նոր և չքնաղ և ահաւոր և սքանչելի
իբրև զտեսիլ հրեշտակի: Ունէր և զթիւ
համարոյ ի միտս իւր զիւրաքանչիւր գնդի-

ցըն զոր տեսանէր. էր որ զհազարս, էր
որ զերեսուն և վեցից, էր որ զերկերիւ-
րոց և զերեքտասանից: Եւ այնպէս մօտա-
ցոյնս մերձենայր, մինչև ծանուցել նմա զե-
րիս ի նոցանէ, զՎարդան և զԱրտակ և
զԽորէն: Եւ ունէին ինն պսակ ի ձեռին.
խօսէին ընդ միմեանս և ասէին. «Ահա
եկն եհաս ժամ, զի և սոքա խառնեսցին
ի գունդս մեր. քանզի և մեք սոցա իսկ
ծնեալք, և առհաւատչեայ պտուղ սոցա
բերաք: Եւ որում ոչ են ծնեալք՝ եկն ե-
րևեցաւ և խառնեցաւ, և եղև իբրև զմի
ի զինուորացն Քրիստոսի»:

Այս երից անգամ երևեցաւ չքնաղ
տեսիլս առն երանելւոյ: Զարթոյց զաւր-
րն ի քնոյ անտի, և պատմեաց նոցա զա-
մենայն տեսիլն կարգաւ:

Իսկ նոքա յարուցեալ կացին յաղօթս
և ասէին. «Տէր Տէր մեր, զի՜ սքանչելի
է անուն քո յամենայն երկրի. համբար-
ձաւ մեծ վայելչութիւն քո ի վերոյ քան
զերկինս. ի բերանոյ մանկանց տղայոց ստն-
դիացաց հաստատեցեր զօրհնութիւն, զի
եղծցի թշնամին և հակառակորդն: Զի ոչ
հեռ է պատահեալ ասել, եթէ «Տեսից

զերկինս զգործս մատանց քոց», այլ թէ տեսից զքեզ Տէր երկնի և երկրի. որպէս երևեցար իսկ այսօր ի ձեռն սուրբ զօրականացն քոց հեռաւոր օտարիս, որ անցեալ էր ըստ անկարելութիւն կենաց իւրոց:

«Ահա դու, Տէր, ողորմութեամբ քով պսակեցեր զսիրելիս քո, և գթութեամբ քով եկեր ի խնդիր կորուսելոյս, դարձուցեր և խառնեցեր ի դասս ընտրելոց քոց: Ոչ միայն ետես սա զերկինս՝ զգործս մատանց քոց, այլ ետես զերկինս և զբնակիչս նորա, և մինչդեռ է յերկրի՝ խառնեցաւ ի զուարթս բիւրաւոր հրեշտակաց քոց: Ետես և զոգիս արդարոց կատարելոց, ետես և զնմանութիւն փառաց աներևոյթ պատրաստութեանցն, ետես և ի ձեռին նոցա զանշուշտ ապառնայն՝ որ հանդերձեալ պահի ի ձեռն Ճարտարապետին: Երանի սմա վասն սուրբ անձկանս, և երանի է մեզ վասն սորա մերձաւորութեանս առ մեզ. քանզի հաստատեալ գիտացաք սովաւ, եթէ որում այսպիսի սքանչելիք յայտնին՝ մեծ մասն ընկալաւ սա յանսպառ քոց բարութեանցդ: Անսպառ են

պարգևքն քո, Տէր, և տանց խնդրելոյ տաս ում և կամիս քոյով յորդ և աննախանձ առատութեամբդ: Եւ եթէ որ ոչն խնդրեն՝ չարգելուս ի նոցանէ, բաց մեզ, Տէր, զդրունս ողորմութեան քո, որ ի մանկութենէ մերմէ ցանկացեալ եմք բարեմասնութեան սրբոց քոց: Զնորավկայս զաստակերս քո բարեխօս առնեմք վասն անձանց մերոց. մի՛ ընկղմեսցի նաւ հաւատոց մերոյ ի մէջ ալէկոծեալ ծովու մեղաց»:

Եւ այսպէս յերկար կատարելով զաղօթսն, յորդ և առատ արտասուս հեղուին ի վերայ անձանց իւրեանց: Գութ ողորմաց արկանէին առաջի բարերարին՝ զի լուիցի լիցի ձայն պաղատանաց նոցա, և հաստատուն կացցեն ի վեշտս ծղանցն, զի մի՛ զրկեսցին ի ցանկալի պսակացն զոր ունէին սուրբքն ի ձեռս իւրեանց, որպէս և ազդեցաւ իսկ նոցա ի Հոգւոյն սրբոյ՝ զի մերձեալ էր ժամանակ կոչման նոցա. որպէս զի երթիցեն և աներկիւղ դադարեսցին ի կասկածելի ակնկալութենէն. որում համբերէին բազում տառապանօք, զի առհաւատչեաւ փոքու հասցեն երկնաւոր մե-

ծուլթեանն, որում ի վաղնջուց իսկ էին ցանկացեալք:

Եւ քանզի ինքն իսկ մոգպետեան իշխան էր աշխարհին, և նմա յանձն արարեալ էր գլխաւորեալ քաղաքին, վասն այնորիկ և համարձակութեամբ ընդ առաւօտն հանեալ տանէր յապարանսն իւր: Լուանայր և սրբէր զնոսա ի չարչարանաց բանտին, առնոյր զջուր լուացման սրբոցն և արկանէր զիւր մարմնովն: Ուղղէր ի տան իւրում աւազան, և ընդունէր ի նոցանէ զսուրբ մկրտութիւնն, հաղորդէր ի կենդանարար մարմնին և ի քաւիչ արիւնն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Բարձր բարբառով աղաղակէր և ասէր. «Մկրտութիւնս այս լիցի ինձ ի լուսաւորութիւն մեղաց իմոց, և ի ծնունդս նորոգութեան վերստին հոգւոյն սրբոյ, և ճաշակումն անմահ խորհրդոյս ի ժառանգութիւն երկնաւոր որդեգրութեանըն»: Դնէր և ըստ մարմնոյ առաջի նոցա սեղան կերակրոյ, և մխիթարութեան բաժակ մատուցանէր նոցա, և միաբանէր ընդ նոսա հացին օրհնութեան:

Այլ Թէոպէտ և ինքն եհաս յերկնաւոր բարիսն, և աներկեւղ էր ի մարդկանս

հարուածոց, սակայն վասն ընտանեացն յոյժ ունէր կասկած, զի մի՛ իբրեւ զնահատակքն մատնեսցին յիւր արքունի: Վասն այնորիկ ի ծածուկ կոչէր ի գիշերի և ընդ նախարարսն՝ որ ի նմին քաղաքի էին ի կապանս, և տանէր ծախս մեծամեծս: Եւ էին ամենեքեան ի մեծի խնդութեան վասըն սքանչելեացն որ երեւեցաւ նոցա: Ոչ յիշէին ամենեւին եթէ վիշտք ինչ անցեալ էին ընդ նոսա:

Բայց ի ժամ բազմականացն կարծիք իմն եղեն ի միտս սրբոցն վասն երիցումիոյ՝ որ էր ընդ նոսա ի սուրբ կապանսն. զի ի մէջ շինական մարդկան կեցեալ էր, և տգիտագոյն ևս էր ի գրոց մխիթարութենէ: Հրամայեցին ունել զգլուխ բազմականին. եւ պատասխանի երանելին և ասէ. «Զի՞նչ է այդ զոր դուքդ գործէք. և կամ յինէն զի՞ թաքուցանէք զծածուկս խորհրդոցդ: Ես քան զկրսերս ձեր խոնարհագոյն եմ, և քան զեւս փոքունս յաշակերտաց ձերոց տգիտագոյն եմ. զի՞արդ կարացից այդմ տանել: Այս իսկ մե՛ծ էր ինձ, զի սուրբ կապանաց ձերոց հաղորդեալ եմ այսօր: Եթէ արժանի համարիք ձերում

սեղանոյդ, կալարուք դուք զիւրաքանչիւր տեղի բազմականիդ, և հրամայեցէք ինձ զիմ տեղին»: Եւ բռնադատեաց մեծ եպիսկոպոսն Յովսէփ միաբանութեամբ ամենայն արքոյն, և ի վերոյ քան զամենեսեան բազմեցուցին զնա:

Եւ իբրև բոլորեցաւ ակումբ բազմականին, և հաղորդեցան ամենեքեան ի կերակուրն զուարթութեամբ, յոտն եկաց սուրբն Յովսէփ, և սկսաւ զուրախութեան նուագըն մատուցանել և ասել այսպէս.

«Ուրախ լերուք ամենեքեան ի Քրիստոս. քանզի վաղիւ այս ժամ իցէ՝ ահա մոռացեալ իցէ մեր զամենայն նեղութիւնս և չարչարանս զոր կրեցաք: Եւ փոխանակ սակաւ աշխատութեանս մերոյ՝ բազմապատիկ հանգիստ ընդունելոց եմք, և փոխանակ խաւարային արգելանի բանտիս՝ մտանելոց եմք յերկնից քաղաքն լուսաւոր, որոյ քաղաքի քաղաքապետ ինքն Քրիստոս է, և հանդիսապետ ասպարիսին՝ յորում նախ ինքն առաքինացաւ առնելով զնշան յաղթութեան: Եւ այսօր նոյն Տէր է որ յաջողէ մեզ զնոյն նշան ընդունելով ի փրկութիւն անձանց մերոց և ի

պարծանս մեծափառ սուրբ եկեղեցւոյ: Եւ զոր օրինակ տեսէք դուք զեղեալս զայս ի գլուխ բազմականիս մերոյ՝ այնպէս սա նախ ընդունելոց է վաղիւ զպսակն ի ձեռն կատարմանն իւրոյ: Զի ահաւասիկ եկն եհաս և մերձեցաւ առ մեզ Թշնամին կենաց մերոց և պսակիչ սուրբ չարչարանաց ծառայից Քրիստոսի»:

Զայս իբրև ասաց, լուաւ ի նմանէ բանս պնդութեան, որով յոյժ մխիթարեցան ամենեքեան:

Ասէ. «Ի սուրբ աղօթից ձերոց այսպէս արասցէ ինձ Քրիստոս, և կատարեսցէ զելս վախճանին իմոյ յաշխարհէս ըստ բանի քում: Եւ ահա ընդ ասելդ քո ազդումն եղև հոգւոյս իմոյ, և յիշեցի ես զմարդասիրութիւնն Քրիստոսի, որոյ և գալուստ իսկ նորա յաշխարհս վասն մեր մեղացն եղև: Գթասցի յիս որպէս և յաւազակն ի ժամ խաչին. զոր օրինակ նովաւ զդրունըս փակեալ դրախտին եբաց, և յառաջեցաւ լինել կարապետ այնոցիկ՝ որ անդրէն ի նոյն տեղի դառնալոց էին յուրախութիւն, արասցէ և զիս այսօր Տէր Յիսուս Քրիստոս սպասաւոր ձերում մեծաշուք գնդիդ:

«Աւանիկ վասն միոյ մեղաւորի որ դառնայ յապաշխարութիւն՝ անվախճան լինի ուրախութիւն հրեշտակաց յերկինս. որպէս զի գիտեն իսկ զկամս Տեառն իւրեանց: Քանզի վասն միոյ կորուսելոյ ոչխարին եկն ի խնդիր, վասն այնորիկ և նոքա խնդակիցք լինին վասն միոյ դարձելոյ յապաշխարութիւն: Թերևս վասն իմ եկեալ էր մեծ զօրավարն Հայոց բազում սուրբ ընկերակցօքն իւրովք. զպսակն վասն ձեր բերեալ էր, այլ զուրախութեան աւետիսն հասարակաց տայր: Նա առաւել ևս ընդ իս էին զարմացեալ. զի ոչ ճանաչէին զիս ի կեանս իւրեանց, ահա ի սուրբ մահն իւրեանց՝ կամէին զի և ես մասն ընկալայց ընդ երանելիսն:

«Աղաչեմ զձեզ, տեարք իմ և հարք, աղօթս արարէք ի վերայ անարժանութեան իմոյ, զի արժանի եղէց մեծի աւետեացն հասանել՝ որ յանսուտ ձերոյ բերանոցդ բարբառեցաւ ի լսելիս իմ: Արդ փութամ տեսանել զօրն, և յաւուր անդ զժամն նկեալ հասեալ ի վերայ մեր:

«Ե՞րբ իցէ զի ելից ի Թանձրաղանդաղ ձանձրալի մարմնոյս այսորիկ. Երբ իցէ զի

տեսից զքեզ Տէր Յիսուս. Երբ իցէ զի ողխոութիւնս իմ հասցէ ի կատարեալ զխոսութիւն: Օգնեա ինձ, Տէր, օգնեա ինձ, և կարկառեա զամենազօր աջդ յօգնականութիւն. զի ըստ խոստման բանիցս իմոց և գործք արդեամբք կատարեսցին ի վերայ իմ. և փառաւոր լեցի յիս ի մեղաւորս անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Զայս իբրև ասաց երանելին՝ յոտն կացին ի բազմականացն անդ, գոհանային ասելով. «փառք քեզ, Տէր, փառք քեզ Թագաւոր, զի ետուր մեզ կերակուր ուրախութեան. լցո զմեզ Հոգւովդ սրբով, զի գտցուք առաջի քո հաճոյք և մի՛ ամաչեսցուք, զի դու հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս իւր»:

Ի նմին ժամու եղև խորհուրդ մեծ ի մէջ նոցա, թէ զի՞նչ օրինակաւ կարասցեն ապրեցուցանել զմոգպետն, զի մի՛ լուեալ յարքունիսն՝ իբրև զհուր բորբոքեսցի ի վերայ մնացելոցն: Իբրև ոչ ինչ կարացին ի ժամուն վճարել, միաբանութեամբ աղօթս արարեալ յԱստուած ապաստան առնէին զկեանս առնն հաւատացելոյ:

Իսկ նախարարքն հրաժարեցին ի սրբոցն յորդառատ արտասուօք, և ողբալից ուրախութեամբ անկեալ յոտս նոցա աղաչէին մեծաւ պաղատանօք՝ յանձն առնել զնոսա Հոգւոյն սրբոյ. «Զի մի ոք ի մէնջ, ասեն, թուլասցեալ և ելեալ արտաքս ի հաւասար միաբանութենէս, կերակուր լիցի չարաբարոյ գազանին»:

Իսկ երանելիքն միաբան քաջալերէին զնոսա և ասէին. «Զօրացարուք, եղբարք, ի Տէր. մխիթարեցարուք ի մարդասիրութիւնն Աստուծոյ, որ ոչ թողու զձեզ որբս, և ոչ ի բացէ առնէ զողորմութիւնն իւր ի մէնջ հաւատամք ի Քրիստոս. բազում բարեխօսութիւնքն զոր ունիմք առ նա, ոչ շիջանի վառումն կանթեղաց ձերոց, և ոչ ուրախ լինի խաւարասէր թշնամին կենաց ձերոց: Այլ նոյն Տէր է որ զօրացոյց զառաջին նահատակն՝ խառնելով զնոսա ի գունդս հրեշտակաց իւրոց. նոյուն սուրբ ոգիք և ամենայն դասք արդարոց հայցեն ձեզ յօգնականութիւն համբերութեան, զի ընդ նոսին նոյունց պսակացն արժանի լինիջիք»:

Զայս խօսէին ընդ նոսա, և զգիշերն

ամենայն սաղմոսիւք ի գլուխ տանէին. իսկ ի ժամ առաւօտուն ասէին ամենեքեան. «Ծագեա, Տէր, զողորմութիւնս քո՝ ոյք ճանաչեն զքեզ, զարդարութիւնս քո՝ ոյք ուղիղ են սրտիւք: Մի եկեսցէ ի վերայ մեր ոտն ամբարտաւանից, և ձեռք մեղաւորաց մի՛ դողացուսցեն զմեզ: Անդ անկցին ամենեքեան որ գործեն զանօրէնութիւն, մերժեցան, և այլ մի՛ կարասցեն հաստատել»:

Եւ անդէն վաղվաղակի հասին դահիճքն ի դուռն բանտին, մտին ի ներքս և տեսին՝ զի որ յառաջ մոգպետն էր, և նմա իսկ յանձն արարեալ էր պահել զնոսա, նստէր ի մէջ նոցա և լսէր ի նոցանէ, նա և քաջալերէր ևս զնոսա չերկնչել ի մահուանէ: Իբրև տեսին զմեծ սքանչելիսն դահիճքն՝ յոյժ զարմացան ընդ իրսն, այլ ոչ ինչ իշխէին հարցանել ցնա. բայց չոգան և պատմեցին Դենշապհոյ, որում յանձն արարեալ էր զչարչարանս սրբոցն:

Իսկ նա իբրև լուաւ ի դահճացն արքունի, զահի մեծի հարաւ ի միտս իւր, թէ գուցէ և ինքն անձամբ ի ներքս լիցի, քանզի և ծանօթագոյն ևս էր առնն: Հր-

րամայեաց հանել ի բանտէ անտի զամենեսեան կապանօքն, և հեռացուցանէր ի քաղաքէ անտի երկոտասան պարսիկ հրամանաւ: Եւ ի ծածուկ խօսէր ընդ մոգպետին՝ եթէ զի՞նչ պատճառք իցեն զաւանցանաց նորա: Եւ պատասխանի այրն և ասէ ցնա. «Մի՛ խօսիր ընդ իս ի ծածուկ, և մի՛ լսեր զխորհուրդս լռեայ ի մէջ խաւարի, զի բացան առ քեզ իմ՛ սիրտ, քանզի տեսի զլոյսն երկնաւոր: Եթէ կամիս լինել խորհրդակից կենաց, հարց ցիս յանդիման, և պատմեմ քեզ. զի տեսի զմեծամեծսն Աստուծոյ»:

Եւ երբ լուաւ ի նմանէ զամենայն, և ստուգեաց ի սա վասն իւրոյ միաբանութեանն, եթէ ոչ քակել ի սորայն հաւատութենէ, ոչ իշխեաց ձեռն արկանել ի նա, թէպէտ և ունէր հրաման յարքունուստ: Այլ փութացաւ, և ինքն երթեալ պատմէր թագաւորին ի ծածուկ զամենայն որպէս զկարգ լուաւ ի նմանէ:

Եւ պատասխանի թագաւորն և ասէ ցԴենշապուհ. «Մ՛ ոք ամենեւին լուիցէ զայդ ի քէն, մանաւանդ վասն տեսլեանն մեծի որ երեւեալ է նմա. զի մի՛ ապէս

մարդիկ երկմտեալ՝ բաժանեսցին ի մեր հաստատուն օրինացս: Մինչ մեք զայս կամէաք հնազանդեցուցանել՝ թերեւս զօգիս գտցեն, իբրեւ նոցա ոչ ինչ կարացաք առնել, մեր որ վարդապետ օրինացդ էին՝ զկնի նոցա մոլորութեանն խոտորեցան»:

«Նա և այն եւս չար է մեզ քան զամենայն, զի ոչ զուգակցեալ ոք խոտորեցաւ ի նոցա օրէնսն, այլ այր մի համակդեն, երեւելի ընդ ամենայն վերին աշխարհըս: Եթէ փայքարիմք ընդ նմա, նա տեղեկագոյն է քան զամենայն վարդապետս աշխարհիս. զուցէ ի հիմանէ խարխարեալ աւերէ զօրէնս մեր: Եւ եթէ դատիմք զնա ընդ այլ չարագործն. նա և այնպէս հըռչակեալ երանէ համբաւ քրիստոնէութեան նորա, և մեծ անարգանք զկնի դենիս ձըգին: Եւ եթէ սովով ես փախճանեսցի, բազում են քրիստոնեայք ի կարաւանիս, ընդ ամենայն երկիր ցանեալ ցրուեսցեն զոսկերըս նորա: Սակաւիկ ինչ էին մեզ անարգանք առ ամենայն մարդիկս, ուր մեծարեալ պատուէին ոսկերք նածրացւոյդ. իսկ եթէ մոգացդ և մոգպետաց զնոյն պատիւ կրեսցեն, մեք մեզէն լինիցիմք քակիչք օրինացն մերոց:

«Այլ այժմ իմ է քեզ երդումն տո-ւեալ յանմահ գլխն. նախ զդառնացեալ ծերն կոչեա առաջի քո. եթէ հաւանեսցի սիրով, և զղջացեալ ապաշաւեսցէ զկախարդութիւնս նոցա, մեծարեսջիր զնա սիրով պատուով ըստ առաջին կարգին. և մի՛ ոք գիտասցէ զթշնամանս նորա ամենեւին: Ապա թէ ոչ հաւանեսցի, և ոչ կամեսցի անսալ բանից իմոց, յարուսջիր ի վերայ նորա բազում ամբաստանս յաշխարհէ անտի, զի վնասակար գտցի մերս արքունի. և աշխարհաւ փուրսիշն ի վերայ յարուսջիր, և չկօթակ արասջիր յայնկոյս քան զԿուրան և զՄակուրան. և անդ ընկեցեալ զնա ի վերայ մի, և ընկալցի ըզմահ թշուառութեան: Եւ զայլազգեանն փութանակի կործեա ի կենաց աշխարհիս, զի մի՛ զդրդեսցեն զօրէնս մերոյ աշխարհիս: Զի եթէ զճարտար մոգպետն այնպէս արագ աշակերտեցին, ոգէտ մարդիկ զիա՞րդ կարասցեն կալ առաջի նոցա պատիր խաբէութեանն»:

Արդ եւ՛ նոստ Դենշապուհ արտաքոյ բանակին յատենի, որպէս ասացաք, հեռի երկոտասան հրասախաւ: Հարցանէր

զմոգպետն և ասէր. «Իշխանութիւն ատիվան քո, ոչ միայն բանիւ հարցանել, այլ և ամենայն հարուածովք տանջանաց: Մինչև ձեռն արկեալ է իմ ի քեզ, ընկալ զմեծարանս և արհամարհեա զանարգանս, և խնայեա ի պատուական ալեւոդ: Թող անդր ի բաց զքրիստոնէութիւնդ՝ զոր ոչ ունէիր ի բնէ, և դարձիր անդրէն ի մոգութիւնն, որպէս զի վարդապետ էիր բազմաց»:

Եւ պատասխանի երանելին և ասէ. «Աղաչեմ զքեզ, տէր, որ յառաջ իբրև զհարազատ եղբայր համարեալ էիր յաչս իմ, և այսօր թշնամի կատարեալ. մի՛ ըստ առաջին սիրոյն զթար դու յիս, այլ կատարեա ի վերայ իմ զկամս չարութեան թագաւորին ձերոյ. և որպէս առեր իշխանութիւն ի վերայ իմ՝ դատեա զիս»:

Յայնժամ իբրև ետես Դենշապուհ՝ եթէ առ ոչինչ զպատուականն արքունի համարեցաւ, և ոչ ողոքանացն երեսս ինչ արար, և քան ի ծածուկ՝ յայտնի ևս կամէր զի խօսեսցի, կատարեաց ի վերայ նորա ըստ խրատուն արքունի: Եւ զաղտագողն ընկեցաւ ի հեռաւոր օտարութիւն.

որպէս զհարդ և ուսաւ ի վարդապետէն՝ և արար:

Եւ հրամայեաց ևս Դենշապհոյ երկուս ևս ընկերակիցս օգնականս յաւագ գործակալացն. զՏիրիկանն, որ էր մարզպետ արքունի, և զՄոմանն հանդերձապետ՝ ի ձեռանէ Մովպետան մովպետի:

Արդ երկոքեան նոքա խուրաքանչիւր ըսպասաւորօք առին զաւրբան յայնմ անպատէ, և փոխեցան նոյնչափ ևս հեռագոյն ի մեւս ևս դժնդակ տեղի ի նմին գիշերի: Եւ զոք ի կարաւանէ անտի ոչ թողին տեսանել, ոչ ի Հայոց և ոչ յամենայն քրիստոնէից, և ոչ բնաւ յարտաքին հեթանոսաց: Եւ սպասաւորքն որ էին ի վերայ կապելոցն անդէն ի քաղաքին, հրամայեցին պահել զգուշութեամբ, զի զհետըս նոցա մի՛ ոք գիտասցէ՝ ընդ որ տանիցեն ի մահու տեղի, մի՛ նոքա և մի՛ ամենեքին ոք ի մարդկանէ:

Բայց այր մի խուժիկ անուն ի զօրացն արքունի — որ ի ծածուկ ունէր զքրիստոնէութիւնն, և վճարեալ էր ի դասս դահճացն, և կայր ի սպասու օրապահացն հանդերձ գործիական տանջանարանօքն, եկն

եմուտ ի մէջ գիշերին և խառնեցաւ ի դասըս նախարարացն: Առաջին դասն ի միջնոյն կարծէր զնա, և միջինն երրորդին, և երեքեանն միմեանց համարէին զնա. և ոչ ոք ի նոցանէ եհարց՝ եթէ «Դու ո՞վ ես ընդ մեզ», ոչ ի տերանցն և ոչ ի սպասաւորացն:

Իբրև հասին ի տեղի անապատին՝ որ ամենեւին անբոյս էր ի դալարւոյ, և այնպէս էր ապառաժ դժնեայ՝ զի և ոչ նստելոյ անգամ տեղի գոյր անդ նոցա, իջին հեռագոյն նախարարքն երեքեան, և հրամայեցին դահճացն խրեանց կապել զոտս և զձեռս նոցա: Եւ արկին պարանս երկայնս յոտս նոցա, և երկու երկու ընկեցան և առին ի քարշ: Եւ այնպէս ձգեցին և ձգձգեցին ընդ ապառաժ տեղին քարշելով, զի ամենեւին խայծ ոչ մնաց ի մարմինս երանելեացն: Եւ ապա լուծին և ածին ի մի տեղի:

Եւ թուէր իմն նոցա այսպէս՝ եթէ կակղեցաք զխստութիւն նոցա, և հնազանդեցուցաք զմիտս ապստամբութեան նոցա. և արդ զինչ և խօսիցիմք՝ անսասցեն բանից մերոց, և առնիցեն զկամս թագա-

ւորին, և ապրեալ լեցին յանհնարին տանջանացն: Եւ զայն ոչ կարացին քաջ իմանալ՝ եթէ իբրև զքաջ զինուորս վառեցին զնոսա, և ի հրահանգս կրթութեան վարժեցին զնոսա, և իբրև զգազանս վայրենիս արիւնախանձս ուսուցին զնոսա: Եւ եթէ ունէին սակաւ ինչ կասկած յառաջագոյն, հայեցեալ նոցա ի չարաչար վէրս մարմնոյն իւրեանց՝ զառաջին երկեւղն ի բաց մերժեցին: Սկսան իբրև արբեալք անըղձայք զմիմեանց կլանել ի բանից պատասխանիս, և փութային իբր ծարաւիք յաղբեւր՝ եթէ ո՛ նախ վաղ զիւր արիւնն հեղցէ յերկիր:

Եւ մինչդեռ յայսմ պատրաստութեան էին սուրբքն, խօսել սկսաւ ընդ նոսա Դենշապուհ և ասէ. «Արքայ յղեաց զիս առ ձեզ. ամենայն աւեր աշխարհին Հայոց, ասէ, և կոտորածք զօրացն՝ որ հասին ի վերայ, ի ձէնջ եղեն վնասքն ամենայն. և բազում նախարարք՝ որ այժմ կան կապանօք չարչարեալ, վասն ձերոյ յամառութեանդ եղև այդ ամենայն: Այլ և արդ եթէ կամիք ինձ լսել՝ ասեմ ձեզ, որպէս եղերուք պատճառք ամենայն չարչարանաց

մահուն՝ այսօր լերուք պատճառք կենաց ձերոց: Եւ նախարարքն՝ որ կան ի կապանս, ի ձեռն ձեր է իշխանութիւն արձակել զնոսա. և աւեր աշխարհին ձերոյ ձեւք շինի, և բազումք որ վարեալ են ի գերութիւն՝ անդրէն դառնան:

«Ահա դուք ձերովին աչօքդ տեսէք այսօր, եթէ զօրավիգն այր տոհմիկ, զոր թագաւորն ինքնին յականէ յանուանէ ճանաչէր վասն մեծի գիտութեան օրինացս մերոց, և կատարեալ էր յամենայն ի դենիս և ամենայն մեծամեծաց սիրելի, և գրեթէ բոլոր աշխարհս խօսեալ էր ըզնմանէ. և վասն զի անարգեաց զդենի մազդեզն, և պատրեցաւ ի ձեր ախմար գիտութիւնդ, ոչինչ խնայեաց թագաւորն ի մեծ պատուի նորա, այլ իբրև զգերի մի զանաշխարհիկ չքօթակ արարեալ զնա յայնչափ օտարութիւն հեռաւոր, զի ընդ երթալն իսկ ոչ ժամանէ ի տեղի պատուհասին իւրոյ:

«Արդ եթէ ի բուն դայեկութիւնն վաւրն պատուական օրինացն ոչ խնայեաց ի նա, որչափ ևս առաւել ի ձեզ յօտարաշխարհիկդ, որ մահապարտ իսկ էք յիրս

արքունի: Եւ չիք ինչ ձեզ այլ հնար կենաց, բայց եթէ երկիր պագանիցէք արեգական, և կատարիցէք զկամս թագաւորին, որպէս և ուսոյց զմեզ մեծն Զրադաշտ: Եւ եթէ զայդ առնէք՝ ոչ միայն արձակիք ի կապանացդ և ապրիք ի մահուանէ, այլ և մեծամեծ պարգևօք յուղարկիք յաշխարհն ձեր»:

Յառաջ մատուցեալ Ղևոնդ երէց և թարգման կացոյց զՍահակ եպիսկոպոս. «Զիա՞րդ լու լիցուք, ասէ, երկդիմի հրամանացդ քոց. ահա զերկրպագութիւնդ նախ հասուր արեգական, և զկատարումն երկրպագութեան ի կամս թագաւորին ձգեցեր. մեծարեցեր զարեգակն՝ յառաջ ձայնելով զանուն նորա, և մեծացուցեր զթագաւորն աւելի քան զարեգակն. և յայտ արարեր՝ եթէ առանց կամաց իւրոց սպասաւորէ արեգակնն արարածոց, իսկ թագաւորն ի կամս ազատութեանն իւրոյ՝ զոր կամի աստուածացուցանէ, և զոր կամի ծառայեցուցանէ. և ինքն ի ճշմարտութեանն վերայ չև է հասեալ: Մի խօսիր ընդ մեզ իբրև ընդ տղայս, զի հասակաւ կատարեալ եմք, և գիտութեամբ ոչ եմք անտեղեակ: Ուսափ

սխալ դու, այսի տաց քեզ պատասխանի:

«Ապաքէն զմեզ եղիր պատճառս աւերածոյ աշխարհին մերոյ և հարուածոց զօրացն արքունի. մեր օրէնքն զմեզ այդպէս ոչ ուսուցանեն, այլ յոյժ պատուել հրամայեն զերկրաւոր թագաւորս, և սիրել զնոսա յամենայն զօրութենէ մերմէ, ոչ իբրև զմարդ ոք դուզնաքեայ ի մարդկանէ, այլ իբրև Աստուծոյ ճշմարտի կալ ի ծառայութեան. և եթէ զոկիմք ի նոցանէ, փոխանակ ընդ երկրաւորս զերկնիցն խոստացաւ մեզ զարքայութիւն: Եւ ոչ միայն զարբանեկութիւն հպատակութեան պարտիմք հարկանել նոցա, այլ և մահու չափ զանձինս ի վերայ դնել սիրոյ թագաւորին: Եւ որպէս յերկրի ոչ ունիմք իշխանութիւն փոխանակել զնա ընդ այլում տեառն, նոյնպէս և յերկինս չունիմք իշխանութիւն փոխանակել զճշմարիտ Աստուածն մեր ընդ այլում, որ չիք Աստուած բաց ի նմանէ:

«Բայց ասեմ քեզ՝ որում սակաւիկ մի տեղեկագոյն ես: Ո՞վ ի քաջ զօրականէն զկնի մտանիցէ ի պատերազմ. և եթէ զայս արասցէ, ոչ քաջ անուանի նա, այլ յոյժ վատ: Եւ կամ ո՞ վիմաստուն վաճառա-

կենաց զպատուական մարգարիտն փոխանակիցէ ընդ անարգ թրուշայի, բայց եթէ յիմարեալ իցէ ոգխութեամբ, որպէս և ձեր մոլորութեան առաջնորդքդ:

«Միայն դուք զմեզ ի բազում յառաքինեացն մերոց, և կամիս գողութեամբ աւերել զամուրս խորհրդոց մերոց. չեմք մեք միայն՝ որպէս և դուդ կարծես. չիք տեղի ունայն, ուր չիցէ Քրիստոս թագաւորն մեր. բայց միայն այնոքիկ են թափուր ի նմանէ՝ որ իբրև զքեզ և զչարադև իշխանն քո, որք ուրացեալ էք ի նմանէ: Զի և զինուորք աշխարհին մերոյ—որ աշակերտեալքն էին մեւք ի Քրիստոս—առ ոտն հարին զահագին հրամանս թագաւորին ձերոյ, և զմեծամեծ պարգևս առ ոչինչ համարեցան, և զհայրենի տէրութիւնն ի բաց կողոպտեցան, չխնայեցին ի կին և յորդիս և ի գանձս մարմնաւորս կենաց աշխարհիս: Նա և ոչ զարիւնն իւրեանց ածէին զմտաւ ինչ վասն սիրոյն Քրիստոսի, այլ զերկրպագուս արեգականն—որ ձեր վարդապետք էին—չարաչար հարուածովք սատակեցին զնոսա, և մեծամեծ չարիս հասուցին ի վերայ զօրացն ձե-

րոյ, և բազումք ի նոցանէ անկանէին ի նմին պատերազմի, և այլք մտանէին ի պէս պէս փորձութիւնս, և կէսքն ընկեցան ի հեռաւոր օտարութիւն, և ևս բազմագոյնք վարեցան ի գերութիւն: Եւ ամենեքին նոքա յառաջեցին քան զմեզ յարքայութիւնն Աստուծոյ, և խառնեալ են ի դունդս վերին հրեշտակացն, և ցնծան ի պատրաստեալ յուրախութիւնս, յոր հաւանեալ խառնեցաւ երանելի այրն զոր դու ասես չկօթակ արարի: Երանի տամ նմա, և երանի երկրին՝ ընդ որ նայն անցանիցէ, և տեղւոյն՝ ուր նայն վախճանեսցի. ոչ միայն զարքունեօք ձերովք անցանէ պատուականութեամբ, այլ և զերկնից լուսաւորօքդ՝ որում դուքդ երկիրպագանէքդ»:

Ետ պատասխանի Մոգաց հանդերձապետ և ասէ ցնոսա. «Աստուածքն բարերարք են, և երկայնմտութեամբ ջանան ընդ ազգի մարդկան, զի գիտասցեն և ծանիցեն զիւրեանց փոքրկութիւնն և զնոցա մեծութիւն, և վայելեսցեն ի պարգևս աշխարհիս, զոր տուեալ է յիշխանութիւն ի ձեռս թագաւորի, և ի բերանոյ նորա ելանեն հրամանս մահու և կենաց: Եւ ձեզ ոչ է

իշխանութիւն այդպէս ընդդիմանալ կամաց նոցա և ոչ առնուլ յանձն զերկրպագութիւն արեգական, որ ճառագայթիւք իւրովք լուսաւորէ զամենայն տիեզերս, և ջերմութեամբ իւրով հասուցանէ զկերակուր մարդկան և անասնոց. և վասն հասարակաչափ առատութեանն և անաչառ մատակարարութեանն անուանեցաւ Միհր աստուած, զի չէր ի նմա նենգութիւն և անիմաստութիւն. Վասն որոյ և մեք երկայնամիտ լինիմք ի վերայ տգիտութեան ձերոյ. քանզի չեմք մարդատեացք իբրև զգազանս շաղղակերս և արիւնարբուս: Խնայեցէք յանձինս ձեր, և մի' խառնէք զմեզ ակամայ յարիւնդ ձեր: Թողէք անդր զառաջին յանցանս ձեր, և զառաջիկայ իրս ուղղեցէք, զի և այլոցն վասն ձեր լիցի ողորմութիւն ի մեծ թագաւորէն»:

Առ այս ետ պատասխանի Սահակ եպիսկոպոս և ասէ. «Իբրև ուսեալ և յայտ խորատեալ՝ զգեղեցիկ հոգ յանձին ունիս շինութեան աշխարհի և փառաց թագաւորին. բայց զայս կարի տգիտաբար ուսացանես, զի աստուածս բազումս խոստովանիս և զմի կամս ոչ ասես ամենեցուն: Եթէ

մեհեքն առ միմեանս մարտուցեալ են՝ մեք խոնարհագոյնք քան զնոսա զիա՞րդ կարասցուք հաւանել բանից քոց: Միաբանեա զջուր և զկրակ, զի ուսցուք ի նոցանէ ըզխաղաղութիւն. կոչեա զարեգակն ի տուն որպէս կրակ, և եթէ նմա ոչ մարթի գալ՝ զի մի' աշխարհ ի խաւարի մնասցէ, յղեա զգա առ նա, զի ուսցի ի նմանէ զանկարօտութիւնն:

«Եւ եթէ մի է բնութիւն աստուածոյն քոյ, հաւասարեսցին առ միմեանս զուգութեամբ. լիցի անկիրակուր կրակ իբրև զարեգակն, և մի' խափանեսցին ծառայքն արքունի ի ծախս ռոճկաց սորա: Արդ մինչ անյագ ուտէ, և հանապազ մեռանի. և մինն որ չուտէ, առանց օգնոյ նուազի լոյս ճառագայթից իւրոց. ցրտանայ ձմերայնի, և սառուցանէ զամենայն բոյս դալար խոտոյ. տօթանայ յամարայնի, և հրակեզ առնէ զամենայն կենդանիս: Եւ որ ինքն յար ի փոփոխման կայ, ոչ կարէ հաստատուն կեանս ումեք շնորհել: Եւ քեզ ոչ կարեմ մեղադիր լինել, որոյ ոչ տեսեալ է զմեծ թագաւորն, պատուաւորացն մատուցանէ զերկրպագութիւն. իսկ եթէ դու զայս

ի հմուտ գիտնոցն արասցէ, վաղվաղակի մահ ի վերայ հրամայեն:

«Այլ վասն արեգական, եթէ կամիցիս ուսանել, զճշմարիտն ասացից քեզ: Մասն է նա աշխարհիս արարածոց, ի բաղում մասանց մի մասն որոշեալ է. կէսքն ի վերայ են քան զնա, և կէսքն ի ներքոյ նորա: Ոչ է նա առանձին սուրբ յատակ լուսով, այլ ի ձեռն օգոյն հրամանաւն Աստուծոյ տարածանէ զճառագայթս իւր, և հրայլին մասամբ ջեռուցանէ զամենայն գոյացեալս ի ներքոյ իւրոյ կայանին: Իսկ վերինքն ոչ ինչ մասն ունին ի նորա ճառագայթիցն. քանզի իբրև յաման ինչ արկեալ է զլոյսն ի գունդ նորա, և ի վայր կոյս հեղու ըն-րանացեալ՝ առ ի պէտս ներքնոյս վայելչութեան: Եւ զոր օրինակ նաւ մի թռուցեալ ի վերայ ծովային ջուրցն բազմութեանց, անզխութեամբ զնայ զուղևորութիւնն ի ձեռն հմուտ և ճարտար նաւապետին, այսպէս և արեգակն ի ձեռն կառավարին իւրոյ ունի զփոփոխմունս շրջանին իւրոյ տարևոր ժամանակին:

«Եւ որպէս այլ մասունք աշխարհիս հաստատեալ են վասն մեր կենացն, և

զնա իբրև զմի յայլոց մասանց տուեալ է մեզ յառաջնորդութիւն լուսոյ, որպէս զլուսին և զաստեղս և զօդս յարածուփս և զամպս անձրևաբերս. նոյնպէս և յերկրիս մասանց զծով և զգետս և զաղբեւրս և զամենայն պիտանացու ջուրս, նոյնպէս և զցամաքային ամենայն պիտոյիւք իւրովք: Աստուած՝ և զմի ոք ի սոցանէ չէ արժան անուանել. և եթէ ժըպրհիցի ոք ասել՝ զանձն տգիտաբար կորուսանէ, և աստուած անուանն մեծարելով զնոսա՝ նոքա ոչ ինչ օգտեցան: Մեծ իշխանութեան երկու թագաւորք ոչ լինին. և եթէ մարդ զայդ քեզ յանձն ոչ առնու, քանզի ես հեռի է յԱստուծոյ բնութենէն՝ այդպիսի կարգ շփոթեալ:

«Արդ եթէ կամիս ուսանել զճշմարիտն, քաղցրացո զպատնութիւն սրտիդ, և բաց զաչս մտացդ, և մի՛ յարթնութեան կուրութեամբ ընդ խաւար գնայցես. որ անկեալ ես ի խորխորատ. և զամենեսեան կամիս առ քեզ ձգել: Եւ եթէ քոյքն գան զկնի մոլար վարդապետութեանդ՝ որ ոչ տեսանեն և ոչ իմանան, մի՛ և զմեզ կարծեր զնոյնօրինակ. քանզի բաց են աչք

մտաց մերոց և սրատեսիլ եմք: Մարմնոյս
աչօք զարարածս տեսանեմք, և իմանամբ
զսա յայլմէ արարեալ. և ամենեքեան են
ընդ ապականութեամբ: Իսկ արարիչն ա-
մենեցուն աներևոյթ է ի մարմնաւոր աչաց,
այլ մտաց իմանի զօրութիւն նորա:

«Եւ վասն զի ետես զմեզ ի մեծի աղքա-
տութեան, և ողորմեցաւ մերում անու-
սումնութեանն, յորում և մեք երբև ըղ-
ձեզք երբեմն զերևելիս կարծէաք արարիչ
և գործէաք զամենայն անառակութիւնս,
վասն այնորիկ առ սէր իւր եկն մարմնա-
ցաւ ի մարդկանէ, և ուսոյց մեզ զանե-
րևոյթ աստուածութիւնն իւր: Այն զի
բարձրացոյց զինքն ի խաչն կախաղանի, և
զի մարդիկ զհետ լուսաւորացդ մոլորեցան,
մերկեաց յարեգակնէ զլոյս ճառագայթիցն
իւրոց, զի եղիցի խաւար սպասաւոր մարդ-
կութեան նորա. զի որ երբեմն զձեզ անար-
ժանք լինեն, մի տեսցեն զկեանս իւրեանց
ի մեծի անարգութեան: Որպէս և այսօր,
որ ոչ խոստովանի զխաչելեալն Աստուած՝
նոյն խաւար մածեալ է զոգւով և մարմ-
նով նորա. որպէս և դու իսկ այսօր ի
նմին խաւարի կաս, և զմեզ զես ես

չարչարեա: Պատրաստ եմք ըստ օրինակի
Տեառն մերոյ մեռանել. որպէս զեարդ և
կամիս կատարեա զկամս զաւնութեան քո:

Յայնժամ երբև հայեցաւ ի նոսա անօ-
րէնն Դենշապուհ, և ետես ի մեծի ուրա-
խութեան զուարթագին զամենեսեան, զի-
տաց եթէ ոչ գնան առ նոսա բանք ըս-
պառնալեաց և ողոքանաց: Հրամայեաց զմի
ոմն ի կրսերագունիցն յառաջ մատուցա-
նել, երէց մի Արշէն անուն, վասն որոյ
յառաջ կասկածն իսկ եղև սրբոցն: Կա-
պեցին զոտսն և զձեռսն, և մեծաւ ուժով
պրկեցին, մինչև ճարճատիւն հատու ա-
մենայն ջղացն. և այնպէս կայր մեծ ժա-
մս յանհնարին պրկոցն:

Երաց սուրբն զբերան իւր և ասէ. «Ա-
հա շրջեցան զինև շունք բազումք, և ժո-
ղովք չարաց պաշարեցին զիս. Ծակեցին
զոտս իմ և զձեռս իմ, և փոխանակ բե-
րանոյ իմոյ աղաղակեցին ամենայն ոսկերք
իմ: Լուր ինձ, Տէր, և լուր ձայնի իմում,
և ընկալ զոգի իմ ի ժողով սուրբ զօ-
րականին քո, որ երևեցաւ նորակերտ զաշ-
ակերտին քոյ: Ես որ կրսերս եմ յամե-
նեսեան, ողորմութիւն քո զթացեալ յա-
ռաջեցոյց զիս:

Եւ զայս իբրև ասաց, ոչ ևս կարէր բանալ զբերանն յանհնարին պրկոցաց գե–ղարանին։ Եւ անդէն փագփագակի դահճա–քըն հրամանաւ առեալ յերից նախարարա–ցըն՝ որով հատանել զպարանոց երանե–լոյն, և ընկեցին զմարմինն ի խորխորատ մի ցամաք։

Եւ անդէն ի տեղւոջն սկսաւ խօսել Դենշապուհ ընդ եպիսկոպոսին և ասէ. «Յորժամ եկի ես յաշխարհն Հայոց՝ ըզ–տարի մի և վեց ամիս եհաս շրջել ինձ անդ. ոչ յիշեմ ես ամենևին՝ եթէ բան մի տրտունջ յումեքէ լուայ վասն քո, նոյնպէս և առաւել վասն Յովսեփայ. զի դա իսկ էր իշխան ամենայն քրիստոնէից, և հաւատարիմ յամենայն իրս արքունի։ Նա և որ մարզպան աշխարհին լեալ էր յառաջ քան զիս երթալն՝ մեծապէս գոհ էր զսանէս զայսմանէ. և ես ինձէն աչօք իմովք տեսի, զի որպէս հայր հա–տատուն համարեալ էր ամենայն աշխար–հին, և անաչառութեամբ սիրէր զմեծա–մեծս և զփոքունս։

«Արդ փոխանակ ընդ ձեր՝ ես աղաչեմ զձեզ. խնայեցէք ի պատուական անձինս

ձեր, և մի մատնէք ի մահ չարչարանաց ըստ առաջնոյն կարգի, զոր տեսէք աչօք ձերովք։ Քանզի թէ ի դոյն միտս յամա–ռութեան կայք, և իմ եդեալ է ի մտի իմում բազում չարչարանօք կարճել ըզ–ձեզ ի կենաց ձերոց։ Ես գիտեմ, զի ի հրապոյր առնդ այդորիկ եկեալ էք դուք. քանզի ինքն ախտացեալ է մարմնով, և ձեռնարկութեամբ բժշկաց չէք գտեալ ա–ռողջութիւն. և հիւանդոտ կենօք ձանձ–րացեալ է, և փափագէ ի մահ քան ի կեանս»։

Առ այս ետ պատասխանի սուրբն Յով–սէփ և ասէ. «Գովութիւնդ՝ զոր ետուր դու նախ եպիսկոպոսիդ և ապա ինձ, յի–րաւի արարեր և ըստ կարգի պատուեցեր վասն ալեացդ. այդպէս իսկ արժան է։ Այլ ճշմարիտ ծառայից Աստուծոյ ոչ է օրէն դիմադարձ լինել երկրաւոր իշխանաց, և ոչ զոք ի ժողովրդոց տրտունջ առնել վա–սըն մարմնաւոր զօշաքաղութեան. այլ ցա–ծութեամբ և հեզութեամբ ուսուցանել զպատուիրանս Աստուծոյ, և առանց խար–դախ իմաստութեան խաղաղասէր լինել առ ամենեսեան, և անաչառ վարդապետու–

թեամբ առ մի Տէրն արարածոց առաջնորդել բոլորեցունց:

«Այլ վասն աւնս այսորիկ հրապուրանաց՝ զոր ասացեր, և զայդ ոչ ասեցեր, այլ կարի զճշմարիտն ասացեր: Զի ոչ երբէ զօտար ոք հրապուրէ զմեզ, և ոչ երբէ զպատրող ոք խաբեբայ մոլորեցուցանէ զմեզ, այլ յոյժ սիրէ: Քանզի մի է մայր մեր եկեղեցի՝ որ երկնեացն զմեզ, և մի է հայր մեր սուրբ Հոգին՝ որ ծնաւ զմեզ. զիա՞րդ համահարք և միոյ մօր որդիք երկպառակք լինիցին, և ոչ միաբանք: Որ քեզ թուին՝ թէ հրապոյրք իցեն, մեր ի տուէ և ի գիշերի զոյն խորհուրդ էր՝ զի անքակ ունիցիմք զկենաց միաբանութիւնս: Իսկ եթէ սա ձանձրացեալ իցէ ելանել յախտալից մարմնոյս, առաւե՛լ ևս մեք ամենեքեան. զի չէք ոք ամենեւին ի ծնունդս կանանց՝ որ ունիցի զմարմինս առանց ցաւոց չարչարանաց»:

Ետ պատասխանի Դենշապուհ և ասէ. «Զայդ ոչ գիտէք, որչափ երկայնամիտ լինիմ ես ի վերայ ձեր. այս ոչ հրամանաւ արքունի է այսչափ երկայնաբան լինել ընդ ձեզ պայքարաւ, այլ յիմմէ քաղցրութենէ թողացուցի ձեզ. զի չեմ երբէ զձեզ անագորոյն, զի անձանց ատելի էք և այլոց թշնամիք: Իմ զի աղ և հաց կերեալ է յաշխարհին ձերում, գութ և սէր ունիմ ընդ աշխարհն ձեր»:

Ետ պատասխանի Ղեւոնդ երէց և ասէ. «Որ առ արտաքինսն գութ և սէր ունի, զպատուիրանսն Աստուծոյ կատարէ, այլ պարտի և յիւր ոգիսն խնայել. զի չեմք անձանց տեարք, այլ է որ համարս խնդրէ ի մէնջ և վասն արտաքնոց և վասն ներքնոց: Այլ որ ասացեր՝ յինէն անսամ ձեզ և ոչ հրամանաւ թագաւորին, եթէ դուք սովոր էք անցանել զհրամանաւ թագաւորին ձերոյ, զայդ բարւոք առնէք, զի աւերիչ աշխարհի է և սատակիչ անմեղ մարդկան, բարեկամ սատանայի և թշնամի Աստուծոյ: Այլ մեք ոչ կարեմք անցանել զհրամանաւ մերոյ թագաւորին, և ոչ զանանց կեանսն մեր կարեմք փոխանակել ընդ ապականացու պատրանս աշխարհիս:

«Այլ վասն իմ զի ասացեր՝ չգտեալ զառողջութիւն ի բժշկաց, սիրէ զմահ քան զկեանս, այդ բանք ոչ այնոցիկ են որ տե-

սանեն զամենայն չարչարանս աշխարհիս: Ազէ ցածո զքեզ սակաւիկ մի ի զայրագին սրտմտութենէդ, և եկ զհետ ճշմարիտ բանից իմոց, և հայեաց կարգաւ ընդ իւրս աշխարհիս: Ո՞ որ ի մահկանացուացս ունի կեանս անտրտունջս. ո՞չ ահա ամենայն լի են ախտիւք, է որ ի ներքոյ և. է որ արտաքոյ. ցուրտ և տօթ, քաղց և ծարաւ և ամենայն աղքատութիւն կարօտութեան: Արտաքոյ՝ անիրաւութիւն, յափշտակութիւն, զէճ պղծութիւն անառակ յարձակմանց. ի ներքոյ՝ ամբարշտութիւն, ուրացութիւն, աղխտութիւն, անպարձ մոլորութիւն ի կամս որ ազատութենէն:

«Բայց դու որ զբժիշկս խոտեալ անարգեցեր, թէ չեք իմ ի նոցանէ գտեալ զառողջութիւն, չեն ինչ զարմանք. վասն զի մարդիկ են նոքա. է ցաւ որում զտանեն հնարս առողջութեան, և է որ ապստամբէ ի հնարից նոցա. վասն զի ամենեքեան եմք մահկանացուք, այն որ բժշկէն և որ բժշկին: Այլ երանի թէ և դուք լաւ բժշկական արուեստին բերէիք զնմանութիւն. զի ոչ փոքր է ճշմարտութիւն նոցա բժշկութեանն: Քանզի յորժամ տեսանեն

նոքա զոք հիւանդացեալ, ոչ յապաղեն երթալ առ նոսա, այլ փութացեալ հնարին մատուցանել զառողջութիւն: Մանաւանդ եթէ յարքունիս մի ոք ի սիրելեաց թագաւորին ախտանայցէ, և հասեալ ի մեծ հրապարակն՝ տեսանիցէ զբազմութիւն պատուաւորացն և զառողջութիւն գեղեցիկ երիտասարդացն, և ևս ի ներքս մատուցեալ ի սրահն արքունի, և անդ տեսանիցէ զամենայն սպասաւորացն զգենաղ և զքանչելի տեսիլն, ոչ ինչ զարմանայ ընդ հրաշակերտ տեսիլն: Նա և եթէ զահոյք ականակապք իցեն և համակ ոսկեղէնք՝ յ[illegible]ոց վերայ հիւանդն անկեալ դնիցի, չէ ինչ նմա փոյթ զայնմ ամենայնէ. այլ ի բաց հրամայէ առնուլ զոսկեհուռ վերարկուն, և ձեռն ի ներքս տարեալ՝ զննէ զամենայն մարմինն, եթէ ջե՞րմ իցէ բնութիւնն, և եթէ արիւն ի տեղւոջն հանդա՞րտ կայցէ, և կամ թէ լեարդն կակո՞ղ իցէ, և կամ թէ շարժք երակացն յարմա՞ր իցեն. և ըստ նմին զդարման բժշկութեանն առնիցէ՝ շնորհելով նմա զառողջութիւն:

«Իսկ արդ եթէ մարդկային բժշկու-

թիւնն այսպիսի գիտէ քամահել զամենայնիւ, և միայն զեւր արուեստն յառաջ մատուցեալ՝ զգործն կատարէ, ո՜րչափ ևս առաւել ձեզ արժան էր, որ զբոլոր աշխարհս ունիք յիշխանութեան մեծի, հոգ յանձին տանել՝ նախ զհոգւոյ բժշկել յամենայն ախտալից մոլորութեանց աշխարհիս, և մարմնովք իսկ կային ամենեքեան ձեզ ի ծառայութեան: Արդ այժմ զի դուք տկարացարուք, և զանմահ հոգիսդ մահկանացու արարէք յանչէջ հուր գեհենին, մարմնովդ՝ եթէ կամիք և եթէ ոչ կամիք՝ ախտացեալ էք յախտաւորութիւն անառողջութեան. և զմեզ նախատէք մարմնոյ ցաւովք, որ ոչ ի կամս մերոյ ազատութեան է, այլ որպէս դիպեցաւ ի բնութեանս մարմնոյ իւրաքանչիւր մարդոյ:

«Եւ Քրիստոս ճշմարիտ Աստուած կենդանարար՝ ի կամս իւրոյ բարերարութեան եղև բժիշկ հոգւոց և մարմնոց. և նախ ինքն ի ցաւս չարչարանաց իւրոց բժշկեաց զամենայն ազգս մարդկան: Եւ ևս խանդաղատագոյն զթացեալ, վերստին ծնընդեամբն ծնեալ զմեզ յառողջութիւն՝ անցաւս և անվէրս, և ի ծածուկ հարուա-

ծոց զհին ծակոտուածսն վիշապին ողջացոյց, և արար զմեզ անախտս և անարատ հոգւով և մարմնով, զի լիցուք բանակակից հրեշտակաց և զօրք երկնաւոր թագաւորին մերոյ: Եւ քո զայս ոչ գիտացեալ, և ոչ վայելեալ յերկնաւոր պարգևսն Աստուծոյ, և ոչ ևս այլ կամիս ուսանել ի մէնջ. այլ և զմեզ ևս վրիպեցուցանել կամիս, որում չէք հնար, և մի՛ այլ լիցի, և ոչ կարես իսկ առնել:

«Այլ վասն իմոյ ախտալից մարմնոյս ասացեր քեզ կարծառօտս: Խնդամ և ուրախ եմ յորժամ տեսանեմ զմարմինս իմ չարչարեալ. գիտեմ զի զօրանայ յիս առողջութիւն հոգւոյս իմոյ: Մանաւանդ զի ունիմ ինձ գրաւական զմեծ վարդապետն հեթանոսաց, որ ի ցաւս մարմնոյ անձին մխիթարէր, և ի կռփումն սատանայական մարմնոյ պարծէր, և ասէր. «Զի եթէ տնկակիցք եղաք նմանութեան մահու նորա, ո՜րչափ ևս առաւել լիցուք հաղորդք յարութեան նորա»: Այլ դու որ ունիս իշխանութիւն ի վերայ մեր, դատեա զմեզ ըստ չարութեան կամաց քոց: Չեմք ինչ զանգիտելոց յահագին յահաւոր սպառ-

նուէրացդ քոց, և ոչ երկիւղած ի դառն մահուանէն՝ զոր ածելոց ես ի վերայ մեր»:

Յայնժամ մեկուսացոյց սակաւիկ մի զե-րանելիսն ի միմեանց, և միայն ասէ ցսուրբ եպիսկոպոսն. «Գովութիւն զոր ետու քեզ յառաջ, ոչ խնայեր պատուոյ անձին քոյ: Յիշեցուցանեմ քեզ զչարիսն զոր գործե-ցեր դու, զի անձամբ զանձն քո արասցես մահապարտ: Արդարև դո՞ւ աւերեցեր զատ-րուշանն յՌշտունիս, և կամ զկրակն դո՞ւ սպաներ. նա և որպէս լուայ և ստու-գեցի, թէ և զմոգսն դու չարչարեցեր, և զպարս պաշտամանն դու տարար. արդ ե-թէ արդարև դու առեր, պատմեա ինձ»:

Եւ պատասխանի սուրբն և ասէ. «Ա՞րդ կամիս ուսանել զայդ յինէն՝ եթէ յառա-ջագոյն գիտէիր»:

Դենշապուհ ասէ. «Այլ է համբաւ, և այլ է ճշմարտութիւն»:

Եպիսկոպոսն ասէ. «Որպէս կարծեսդ՝ ասա ինձ»:

Դենշապուհ ասէ. «Իմ լուեալ էր՝ ե-թէ զամենայն վնասն յՌշտունիս դու ա-րարեր»:

Եպիսկոպոսն ասէ. «Եւ զի այդպէս հա-

կատարեալ ի վերայ հասեր, կրկին զի՞ հար-ցանես»:

Դենշապուհ ասէ. «Զճշմարիտն ի քէն կա-միմ ուսանել»:

Եպիսկոպոսն ասէ. «Ոչ զօգուտ կենաց քոց կամիս ուսանել յինէն, այլ որսան խոյ-ցանկան միտք քո»:

Դենշապուհ ասէ. «Չեմ զազան ոխ-նախանձ, այլ վրէժխնդիր եմ աստուածոցն անարգութեան»:

Եպիսկոպոսն ասէ. «Զտարերս համրս աստուածս անուանես, և զպատկերակիցս քո մարդիկ խողխողել կամիս. տալոց հա-տուցանելոց ես վրէժ թագաւորաւն քով յանկարծա առենին Աստուծոյ: Եւ զոր քո չար կամօքդ կամիս լսել յինէն, զայդ ես ասեմ քեզ: Զտունն արդարև ես աւերե-ցի, և զմոգսն չարչարեցի զանխ, և զկահ-պղծութեան որ ի տանն էր՝ ի ծովն ես ըն-կեցի: Այլ զկրակ ո՞վ կարէ սպանանել. քանզի ամենիմաստ արարիչն արարածոց հոգ խնամոց տարեալ յառաջագոյն՝ ան-մահս հաստատեաց զբնութիւն չորից նիւթոցս: Ադէ սպան դու զօդ՝ եթէ կարես, և կամ սպանանեա զհող՝ զի մի՛

բուսուցէ զդալարի, փողոտեա զգետ՝ զի մեռցի: Եթէ զայդ երեսին կարես առնել, ապա և զկրակ կարես սպանանել:

«Ապա եթէ ճարտարապետն մեր միաբանեաց զչորից տարերացդ զանքակութիւն, ահա և գտանի բնութիւն հրոյ ի քարինս և յերկաթս և յամենայն տարերս զննելիս, ընդէ՞ր ստութեամբ զրպարտես զնա՝ թէ դու զկրակ սպաներ: Աղէ դու սպան զջերմութիւն արեգական, զի ունի նա մասն հրոյ, և կամ տուր հրաման՝ զի մի՛ թափեսցի հուր յերկաթոյ: Մեռանի այն որ շնչէն և շարժի և գնայ և ուտէ և ըմպէ. ե՞րբ տեսեր դու զկրակ գնայուն կամ խօսուն կամ գիտուն: Արդ զոր կենդանի քո չէ տեսեալ՝ մեռեա՞լ խոստովանիս: Քանի՛ անթողլի է ամբարշտութիւնդ ձեր քան զամենայն հեթանոսաց, որ գիտնագոյնք են քան զձեզ. որ թէպէտ և ի ճշմարիտն Աստուծոյ մոլորեալ են, զանխօս տարերս աստուած ոչ խոստովանին: Արդ եթէ դու անգիտութեամբ կորնչելի ասես զբնութիւն հրոյ, ոչ առնուն քեզ յանձն արարածքս. քանզի խառն է դա յամենեցունց»:

Դենշապուհ ասէ. «Ոչ ինչ մտանեմ ես ընդ քեզ ի պայքար քննութեան վասն բնութեան արարածոցս. այլ խոստովանեա ինձ, եթէ դո՞ւ անցուցեր զկրակն՝ եթէ ոչ»:

Պատասխանի ետ երանելին և ասէ. «Որովհետև ոչ կամեցար լինել աշակերտ ճշմարտութեանն, ասացից զկամս հօրն քո սատանայի: Ես ինձէն մտի ի կրակատունն ձեր, և տեսի զի կային պաշտօնեայք ամբարշտութեանն մնոտի կարծեացն ձերոց. և կրակարանն լի հրով առաջի նոցա բորբոքեալ այրէր: Հարցի ցնոսա բանիւ և ոչ գանիւ, թէ զի՞նչ համարիք ի միտս ձեր զկրակ պաշտամանս այսորիկ: Նոքա պատասխանի և ասեն. Մեք ինչ ոչ գիտեմք. բայց այսչափ ինչ իմանամք, զի սովորութիւն է նախնեացն և հրամանն բուռն թագաւորին:

«Ասեմ դարձեալ ցնոսա. Եւ զբնութիւն կրակիդ զի՞նչ իմանայք. արարի՞չ կարծէք, թէ արարած: Ասեն միաբան ամենեքեան. Արարիչ մեք զդա ոչ գիտեմք, նա և ոչ հանգուցիչ աշխատելոց: Ձեռք մեր փապարեալ են ի կացնի, և ողունք

մեր տեսեալ են ի փայտակրի. աչք մեր գիջացեալ են արտասուօք ի կծութենէ ծըխոյ դորա, և երեսք մեր մրոտեալ են ի խոնաւութեանց թանձրութենէ նորին ծըխոյ: Եթէ շատ մատուցանեմք նմա զկերակուրն, յոյժ քաղցնու. և եթէ բնաւ չտամք, ամենևին անցանէ. և եթէ մօտ երթամք և երկիր պագանեմք, կիզու զմեզ. և եթէ ոչ երթամք մօտ ամենևին, մեխիր լինի: Մեր այդպէս հասեալ է ի վերայ բնութեան դորա:

«Ասեմ դարձեալ ցնոսա. իսկ լուեա՞լ է ձեր՝ եթէ ո՞վ ուսուցեալ է ձեզ զայդպիսի մոլորութիւն: Նոքա պատասխանի ետուն. Զի՞ ի լսելոյ հարցանես զմեզ, այլ հայեաց ընդ առաջիկայ լերդ. զի օրէնագիրքն մեր հողեալք մնաց միայն կուրացեալ են, այլ թագաւորն մեր մարմնով միով ակամբն կոյր է, այլ ոգւոյն բնաւ չեք իսկ աչք:

«Վասն այնորիկ և ես իբրև լուայ զայս ի մոգուցն, յոյժ ողորմեցայ. զի ազնուաթեամբ զարդարին խօսեցան: Սակայն են մի չարչարեցի զնոսա զանխ, և նոյն իսկ եսու զկրակն ի ջուրն ընկենուլ, և ասացի

այսպէս. Աստուածք որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն ի ներքոյ երկնից. և ապա զմոգսն ի բաց արձակեցի»:

Զայս ամենայն իբրև լուաւ Դենշապուհ ի բերանոյ սուրբ եպիսկոպոսին, անհնարին զահի հարաւ ի թշնամանաց թագաւորին և յանարգանաց դենին: Վասն որոյ և երկեաւ իսկ մատուցանել զնա ի ատենանս հարուածոց, թէ գուցէ այլ ևս մեծ անարգանս զթագաւորէն տացէ ասել յատենին, և ի նա ձգլցին կարծիք թշնամանացն, զի երկայնմտութեամբ պայքարեցաւ ընդ նոսա:

Եւ քանզի սուսեր ընդ մէջ ածեալ նստէր յատենի ահ արկանելով սրբոցն, գոչեաց իբրև զառեւծ զայրագին, և հանեալ զսուսերն՝ դադանարար յարձակեցաւ ի վերայ երանելեացն, և եհար եպիսկոպոսին զաջ ուսն, թեկամբն հետ և զձեռն ի վայր ընկէց: Եւ նորա յահեակ կողմն յերկիր անկեալ, և դարձեալ անդրէն պատապարէր, առնոյր զաջ ձեռն ի վեր. ապաղակեաց մեծաձայն և ասէ. «Ընկալ, Տէր, զկամաւոր պատարագս՝ որ յինէն զիս քեզ մատուցի բոլորովին, և խառնեա զիս ի գունդս սուրբ զինուորացն քոց»:

Դարձեալ քաջալերէր զընկերակիցսն իւր և ասէր. «Հա՛պա առաքինիք, եհաս ժամ կատարման մերոյ. խցէք զաչս մարմնոյ վայր մի, և այժմ տեսանէք զլոյսն մեր Քրիստոս»: Եւ թաւալելով ընդ արիւնն անձինն իւրոյ ասէր. «Օրհնեցի՛ց զՏէր յամենայն ժամ, հանապազ օրհնութիւն նորա ի բերան իմ: Ի Տէր պարծեսցի անձն իմ, լուիցեն հեզք և ուրախ եղիցին»: Եւ ասելով զաղմոս զայս կատարէր մինչև ցայս տեղի. «Բազում նեղութիւնք են արդարոց. յամենայնէ փրկէ զնոսա Տէր և պահէ զամենայն ոսկերս նոցա»:

Եւ մինչդեռ կայր յուժի մարմնոյն սակաւիկ մի, իւրովք աչօք իսկ հայեցեալ՝ տեսանէր յերկնից եկեալ զունդս բազում հրեշտակաց և վեց պսակ ի ձեռին հրեշտակապետին: Դարձեալ և լսէր ևս բարբառ ի վերուստ, որ ասէր. «Քաջալերեցարուք, սիրելիք իմ. զի ահա մօտ այսք ըդվշտալի կեանսդ, և հասէք երանելի պսակացդ՝ որ ձերով ճարտարութեամբդ կազմեցէք. առէք դիք յիւրաքանչիւր գլուխ: Զի նիւթ պատրաստական ի ձէնջ հիւթեցաւ, իսկ ճշմարտութիւն գործոյդ յամենասուրբ ձեռացն Քրիստոսի կազմեցաւ. զոր ի սպասաւորաց այտի իսկ ընկալեալ՝ ընդ Ստեփանոսի լինիք պսակակիցս»: Նա և զայն ևս քաջապէս տեսանէր, զի դեռ ևս շողայր սուրն ի վերայ պարանոցի երանելեացն:

Զոր երբև ետես սուրբն Ղևոնդ, եթէ ոչ ևս զմի մի կամին հարցանել և դատել, այլ միանգամայն հրաման եղև մահու, ասէ ցերանելին Յովսէփ. «Մատիր, յառաջեա ընդդէմ սրոյն, զի դու աստիճանաւ ի վեր ես քան զամենեսեան»: Եւ զայս իբրև ասաց, կարգեցան կացին մի ըստ միոջէ. և առ ճեպ տագնապի ստիպելոյ դահճացն՝ միանգամայն հատին ընկեցին զպարանոցս երանելեացն առաջի սուրբ եպիսկոպոսին. և նորա ընդ հանել ոգւոյն աղաղակեաց և ասէ. «Տէր Յիսուս, ընկալ զոգիս մեր ամենեցուն, և խառնեա զմեզ ի գունդս սիրելեացն քոց»: Եւ միանգամայն կատարեցան ամենեքեան ի նմին տեղւոջ:

Եւ եթէ զմոգպետն ևս՝ որ հաւատաց ի Քրիստոս՝ կամիցիս ընդ նոսա ի համար արկանել, թուով են եւթն. թող զեր-

կուսն եւս որ ի Վարդէսն կատարեցան, և մեւս եպիսկոպոսն ԹԱԹԻԿ անուն յասորեստանի: Բայց անդէն ի տեղւոջն վեցեքին, որոց անուանքն են այսոքիկ.

ՍԱՀԱԿ եպիսկոպոս յՌշտունեաց.

Սուրբն ՅՈՎՍԷՓ ի Վայոց ձորոյ՝ ի գեղջէ Հողոցմանց.

ՂԵՒՈՆԴ երէց ի Վանանդայ՝ ի գեղջէ Իջաւանից.

ՄՈՒՇԷ երէց յԱղբակոյ.

ԱՐՇԷՆ երէց ի Բագրեւանդայ՝ ի գեղջէ յԵղեգեկայ.

ՔԱՋԱՋ սարկաւագ՝ ուստի եպիսկոպոսն էր Ռշտունեաց:

Իսկ երանելի ՄՈԳՊԵՏՆ ի Նիւշապուհ քաղաքէ.

ՍԱՄՈՒԷԼ երէց յԱյրարատոյ՝ ի գեղջէ յԱրածոյ.

ԱԲՐԱՀԱՄ սարկաւագ ի նմին գեղջէ:

Արդ զկեց զայս սուրբս յանապատին ուր կատարեցին, Դենշապուհ, մոգպետն և ջնիկանն և մայպետն անդէն ի տեղւոջն պահապանս ընտրեցին յիւրաքանչիւր սպասաւորացն, և պահել հրամայեցին զմարմինս երանելեացն ցաւուրս տասն կամ եւս

աւելի, մինչև կարաւան արքունի անցեալ գնայցէ. զի մի՛ պղծեալքն եկեալ բառնայցեն զոսկերս զոցա, և բաշխեալ սփռեսցեն ընդ աշխարհս ամենայն, յոր և մարդիկ եւս առաւել յորդորեալ մոլորեսցին զկնի նաճարացւոց աղանդին:

Իսկ խուժիկն, զոր յառաջագոյն ասացաք, զինու հանդերձ Թեայր անդէն ընդ պահապանսն, որպէս զմի ի նոցանէ, այր լի իմաստութեամբ և կատարեալ աստուածային գիտութեամբ, սպասէր և զէտակն ունէր՝ եթէ որով օրինակաւ հնարս գտցէ զոսկերս սրբոցն զողանալ ի նոցանէ:

Եւ իբրև աւուրք երեք անցին ի վերայ, արհաւիրք մեծ անկանէին ի վերայ ամենեցուն, և իբրև թմբրեալ և կիսամեռք անյարիրք անկեալ դնէին զերիս աւուրսն: Իսկ ի չորրորդում աւուրն՝ երկուք ի պահապանացն չարաչար լլկեցան ի դիւէ: Դարձեալ հասարակ գիշերաւ չափ՝ ձայնք ահեղք հնչէին, և Թնդիւնք որոտաձայնք ի ներքուստ՝ որպէս դղրդումն զետնաշարժի. երկիրն դողայր ի ներքոյ նոցա, և շողիւնք սուսերաց փայլատակունս արձակէին շուրջ զնոքօք: Եւ զամենեսեան զգլխակունսն կու-

գնեալ տեսանէին, և զնոյն բանս ատենին ահագինս բարբառէին ի լսելիս նոցա. մինչև խուճապել նոցա ընդ միմեանս, դեռ ևս զերեարս սատակէին: Եւ այսպէս տագնապեալք և ցնորեալք, մինչև այր զընկեր ի փախուստ չգիտէր ընդ որ երթայր: Եւ եկեալ պատմէին մեծաւ զարմացմամբ զամենայն անցս չարչարանացն զոր կրեցին:

Ի խորհուրդ մտին նախարարքն երեքեան, և սկսան զարմանալով ասել ցմիմեանս. «Զի՞նչ գործեսցուք, զի՞նչ արասցուք վասն անքնին աղանդոյն քրիստոնէից. քանզի մինչդեռ կենդանի էին, զարմանալի էր կեանք նոցա. ընչատեացք էին իբրև զանկարօտս, որբասէրք էին իբրև զանմարմինս, անաչառք էին իբրև զարդարադատս, աներկեւղք էին իբրև զանմահս: Եթէ զայս ամենայն ասեմք իբրև զոգիտաց և իբրև զյանդգնելոց, իսկ զայն զի՞ առնիցեմք՝ զի ցաւոտք ամենայն ի կարաւանի աստ նոքօք առողջանան: Եւ կամ որ մեծս է քան զայդ ամենայն, ո՞ր ուրուք դի կանգնեալ երևեցաւ ի կենդանեաց, կամ բարբառ բանից ոք լուաւ ի նմանէ:

«Զի սուտ չեն մեր սպասաւորքն. մեր մեզէն իսկ հասեալ է ի վերայ ստուգութեան սոցա: Եւ եթէ կամեցեալ էր սոցա մարմնաւոր ինչ ապահովութիւն ի ներքս խառնել, սակաւ մի ակնարկէին քրիստոնէից ի կարաւանիս, զկշեռ իւրաքանչիւր մարմնոց նոցա ոսկի առնուին: Դարձեալ և արքդ, որ ի դիւէ չարչարեցան, զի յայնժամ ցաւոտք չէին՝ և մեք գիտեմք. յայտ է եթէ այսօր նշան մեծ երևեցաւ: Եթէ լուռ լինիմք այսպէս, մեզ և անձանց մերոց կասկած իսկ է. և եթէ տանիմք զդոսա առաջի թագաւորին, լսելով նորա ի դոցանէ զայդ ամենայն մեծամեծ սքանչելիս, գուցէ և օրինացս մերոց քակտումն ինչ հասանիցէ»:

Ետ պատասխանի մոգպետն և ասէ ցնոսա. «Ո՞չ զիս ոստիկան արարին ի վերայ ձեր երկոցունցդ. զի՞ այդչափ նեղեալ տագնապիք յանձինս ձեր. դուք զգործ ձեր կատարեցէք, և զհրամանն արքունի ի գլուխ տարայք: Արդ եթէ համբաւդ այդ յայտնեսցի, և հարցափորձ ինչ լինիցին առաջի արքային, այդ խնդիր մեր մոգաց է. դուք անհոգ լերուք, և մի՛ ինչ ածէք

զմտաւ: Եւ եթէ զարհուրեցայք ինչ յոգիս ձեր, փաղագոյն առաւօտուցն ի գարբթիր եկայք· զի փաղեւ անդ Մովսիսեան մովսես ուսու՝ յաղէ· և նոյն համձեալ հաւանեցուսցէ զմիտս ձեր»:

Իսկ խուժիկն իբրև լուաւ զայս ամենայն, և գիտաց՝ եթէ փոյթ ինչ ոչ է նոցա յայնմ՚նեաէ սուրբ սպանելոցն, փութացաւ վաղվաղակի էառ տասն այր, որոց դշամի զինէր զքրիստոնէութեանն, և հանեալ ի տեղին՝ չէն եգիտ զամենեսեան: Եւ քանզի կապեալ ունէր տակաւին ի նոցուն ի դահճացն, դարձեալ փոխեցին անտի զսուրբսն յայլ տեղի բացագոյն իբրև երկու հրասախօք: Եւ իբրև յանհոգս եղեն, սրբեցին կազմեցին զոսկերս երանելեացն· բերին ի բանակն և ունէին ի ծածուկ· և առ տակաւ տակաւ յայտնեցին նախ զօրականին Հայոց, և ապա բազում քրիստոնէիցն որ էին ի կարաւանին: Եւ զառաջին պատուընծայն մատուցանէին կապեալ նախարարացն· և անդէն վաղվաղակի արձակեցան նոքա ի կապանաց իւրեանց, և սպառնալիք մահուանն անցին զնոքօք, և հրովարտակք թողութեան առաքեցան յաշխարհն Հայոց:

Արդ երանելի այս խուժիկս, որ արժանի եղեւ ի ծածուկ սպասաւոր լինել սրբոցն, որ ինչ ի մահուանէն և այսր առաջաւ դատակնիք վճռիս այսորիկ՝ սա երկրորդեաց մեզ զամենայն կարգաւ. զչարաչար քարշումն, և զհարց և զփորձ դատաւորացն, և զիւրաքանչիւր անձանց սրբոցն զպատասխանիսն, և զկատարումն մահուան նոցա, և զահագին արհաւիրսն որ ի վերայ պահապանացն անկաւ, և զհեծեծումն քրիստոնէութեան՝ նախարարացն երեցունց, և զամփոփումն սուրբ ոսկերաց նոցա ոչ խառն ի խուռն ի մի վայր ժողովելով, այլ զմի մի ի նոցանէ, ուրոյն ի վեց տապանս ժողովէր, և զանուանս իւրաքանչիւր ուսեալ և ի վերայ տապանացն նշանակեալ էր: Եւ ըզկապանսն երկաթիս ընդ իւրաքանչիւր ոսկերսն եդեալ էր, քանզի դահճացն ի բաց ընկեցեալ էր· որպէս և զհանդերձս զիւրաքանչիւր տապանակի նշանակեալ էր:

Եւ կատարեցան սոքա վեցեքեան սուրբ և ցանկալի մահուամբն իւրեանց որ օր քսան և հինգ էր հրոտից ամսոյ՝ ի մեծ անապատին յԱպար աշխարհի ի սահմանս Նիւշապուհ քաղաքի:

ՎԱՍՆ

ԽՈՍՏՈՎԱՆՈՂԱՑՆ ՀԱՑՈՑ

ԽՈՐԵՆԱՑ ԵՒ ԱԲՐԱՀԱՄՈՒ

Իսկ աշակերտք երանելեացն ի կապանս կային ի ներքս ի քաղաքին. եկն դահճապետ մի արքունի և եհան զնոսա ի քաղաքէ անտի արտաքս:

Եհան ի նմին քաղաքէ ասորեստանեայս քրիստոնեայս արս հինգ, քանզի և նոքա ի կապանս էին վասն անուանն Քրիստոսի. եհարց զնոսա բանիւք, և ոչ հաւանեցան երկիր պագանել արեգական: Չարչարեաց զնոսա զանիւ, և նոքա ևս առաւել ի նոյն միտս պնդեցան. կորեաց զնոցա ունչս և զականջս, և ետ տանել յԱսորեստան, զի կացցեն ի մշակութեան արքունի: Երթային մեծաւ յօժարութեամբ, իբրև այն՝ թէ մեծ պարգևս գտեալ ի թագաւորէն:

Արդ եկն դարձեալ նոյն դահճապետն

առ աշակերտս սուրբ սպանելոցն, ընտրեաց երկուս ի նոցանէ որ համեստագոյնք էին, առեալ մեկուսի յայլոցն և ասէ ցնոսա. «Զի՞նչ անուանք են ձեր»:

Ետ պատասխանի մին և ասէ. «Առ ի ծնողաց ինձ Խորէն, և դմա Աբրահամ. իսկ ըստ շնորհատուր կարգիս՝ ծառայք Քրիստոսի եմք, և աշակերտք երանելեացն զոր սպանէք»:

Ետ պատասխանի դահճապետն և ասէ ցնոսա. «Իսկ արդ զի՞նչ գործ է ձեր, և կամ բնաւ ո՞ր իսկ ածեալ է զձեզ այսր»:

Առ այս ետ պատասխանի Աբրահամ և ասէ ցնոսա. «Զայդ ձեզ ի վարդապետաց մերոց արժան էր ուսանել. զի ոչ դուզնաքեայք ոք էին նոքա, այլ ունէին ստացուածս հայրենիս ըստ արժան բաւականին, ըստ նմին և ազատաւորս, էր որ իբրև զմեզ, և էր որ լաւագոյն քան զմեզ. որոց սնուցեալ և ուսուցեալն էր, ընդ նոսա եմք եկեալ: Քանզի և պատուէր իսկ ունիմք յաստուածատուր օրինացն մերոց՝ սիրել զնոսա իբրև զսուրբ ծնողս, և պատիւ տանել նոցա իբրև հոգևոր տերանց»:

Ցասեաւ դահճապետն և ասէ. «Իբրև

զանխրատ և զանկրկլիւղ ստամբակս խօսիս: Մինչդեռ ի խաղաղութեան և յաշխարհի էաք, բարիոք էր. յորժամ զրուահ եղեն նոքա յիրս արքունի և մահապարտ գտան ըստ գործոց իւրեանց, ձեզ չէր արժան ամենեւին մօտ երթալ առ նոսա: Ո՞չ տեսանէք ի մեծ կարաւանիս. յորժամ ոք ի պատուաւորացն ի գլխաւորջն արքունի լինիցի, ոգոյ հանդերձ ազանի, և գտանել որոշեալ ի բացէ նստի միայնիկ, և ամենեւին հուպ ոչ ոք իշխէ երթալ առ նոսա: Եւ դու այդպէս իբրև զանյանցն աշակերտ պարծելով խօսիս»:

Առ այս ետ պատասխանի Խորէն և ասէ. «Ոչ ձեր կարգդ անիրաւ է և ոչ մերս ստութեամբ. նախարարն յանցաւոր՝ ուստի զպարգեւն գտեալ էր, այնպէս պտրտէր նմա հպատակլինել, զի ի պատուոյն վերայ և այլ ևս պարգեւս մեծամեծս գտանէր ի նմանէ: Արդ փոխանակ զի զոյն չարար, ձախողակի յետս ընդդէմքն պատահեաց նմա: Եւ մեր վարդապետքն եթէ առ Աստուած յանցուցեալ էին, և կամ առ թագաւորն մեղուցեալ ինչ էին, նոյն օրինակ և մեք առ նոսա առնէաք. ոչ յաշխարհի մօտ եր-

թայաք, և ոչ ի տար աշխարհ այսր զհետ նոցա գնայաք: Բայց քանզի առ երկոսին կողմանսն արդարութեամբ կեցեալ են, և դուք զուր տարապարտուց սպանէք զնոսա, մեք արդ ևս առաւել ապաստաւորեմք սուրբ ոսկերաց նոցա»:

Ասէ ցնա Դահճապետն. «Ես յառաջագոյն խոկ ասացի՝ եթէ կարի ստամբակ ոմն ես դու. ահա յայտ եղեւ առաւելն, եթէ յամենայն վնաս նոցա խառն էք դուք»:

Աբրահամ ասէ. «Յո՞ր վնաս»:

Դահճապետն ասէ. «Առաջին ի մահ մատուցն, ապա և յայլս ամենայն»:

Աբրահամ ասէ. «Այդ ոչ միայն ի մէնջ է, այլ ըստ կարգի և ձերոց օրինացդ. թագաւորք ձեզ տան հրաման, և դուք ի ձեռն ձերոց ապաստաւորացդ գործէք»:

Դահճապետն ասէ. «Ի Միհր աստուած երդուեալ իմ. խստագոյն ևս խօսիս քան զվարդապետսն քո. յայտ է եթէ վնասակարագոյնք ևս էք դուք: Արդ ոչ է հնար ձեզ ապրել ի մահուանէ, բայց եթէ երկիր պագանէք արեգական, և կատարիցէք զկամս օրինաց մերոց»:

Խորէն ասէ. «Յայժմ իբրև զմարդ չա-

բախօսէիր, և արդ իբրև զշուն անպիտան ընդ վայր հաչես: Եթէ գոյր արեգական ականջք, դու տայիր նմա թշնամանս դընել. արդ նա բնութեամբ անզգայ է, և դու չարութեամբ անզգայագոյն քան զնա: Ցե՞մ տեսեր զմեզ պակասագոյն քան ըզհարսն մեր. մի՛ բանիւք զփորձ առնուլ կամիս զմեր, այլ հանդէս արա քում չարութեանդ և մերում բարութեանս, և ամաչեցեալ գտանի հայրն քո սատանայ, ոչ միայն ի մէնջ՝ որ կատարելագոյնքս եմք, այլ և որ կարի փոքրիկն թուի քեզ՝ նա դիցէ վէրս սաստիկս յոգիս և մարմինըս քո»:

Զայս իբրև լուաւ դահճապետն, սըրտմտեալ բարկացաւ ի վերայ նոցա: Ետ քարշել չարագոյն քան զառաջինն. և այնչափ սաստիկ քարշեցին, մինչև բազմաց կարծիք եղեն՝ թէ մեռան:

Իսկ իբրև ժամք երեք ի վերայ անցին, դարձեալ խօսել սկսան երկոքեանն և ասեն. «Փոքր համարիմք զանարգանս զայս և առ ոչինչ զցաւս մարմնոյս առ մեծ սէրըն Աստուծոյ, որով կատարեցան հարքն մեր հոգևորք: Հապա մի՛ դլար և մի՛ դա-

դարեր, այլ զոր ինչ առ նոսայն արարեր՝ զնոյն և առ մեզ կատարեա: Եթէ չարագոյն թուին քեզ գործքն նոցա, կրկին և զմերս համարեսջիր. զի նոքա բանիւք հըրամայէին, և մեք գործովք զարդիւնսն կատարէաք»: Յայնժամ ևս առաւել զայրագնեցաւ ի վերայ նոցա, և հրամայեաց զմահու գան հարկանել: Եւ առ մի մի ի նոցանէ փոխեցաւ վեց վեց այր ի դահճացն: Եւ մինչդեռ կիսամեռք յերկիր անկեալ դնէին, հրամայեաց զերկոցունց ականջս մօտ կտրել: Եւ այնպէս բրեցին՝ որպէս թէ չիցէ լեալ ի տեղւոջն:

Զարթեան որպէս ի քնոյ ի սաստիկ հարուածոցն, սկսան աղաչելով պաղատանս մատուցանել, և ասեն. «Աղաչեմք զքեզ, քաջ զինուոր թագաւորին. կամ կատարեա զմեզ իբրև զհարսն մեր մահուամբ, և կամ արա զպատուհաս ըստ օրինակի վերջնոցս: Զի ահա լսելիք մեր առողջացան զանխտաւորութիւն երկնաւոր, իսկ հոտոտելիքս դեռ ևս աստէն ի տեղւոջ կան յանցս չարչարանաց. մի՛ կիսապարգև առներ զմեզ յերկնից բարութենէն: Սրբեցեր զմարմինս մեր քարշելով, և զլսելիս մեր

կորելով. որբեա և զունգունս մեր հատանելով. քանզի որչափ աղեղս առնես ընդ մեզ երկրաւորաւս, զեղեցկագոյնս առնես զմեզ երկնաւորաւն»:

Եւ պատասխանի հեզութեամբ դահճապետն և ասէ. «Եթէ և այլ յամեմ ես առ ձեզ մօտ կալով, կարծեմ՝ եթէ և աշակերտէք զիս ի ձեր յամառութիւնդ: Զի ահա արդ և զխորհուրդս արքունի ի վեր հանեմ ձեզ: Ցայդ վայր եղև հրամանն պատուհասից ձերոց, և ի վերայ դորին պատուհասի՝ երթալ ձեզ յԱսորեստան, և լինել ձեզ մշակ յարքունիս. զի որ ընդ ձեզ հայեսցի՝ մի՛ ի դմին յամառութեան պնդեսցի ընդդէմ հրամանաց թագաւորին»:

Ասեն ցնա երանելիքն. «Դու զմեր երկիրս կիսագործ թողեր. մեք յարքունի երկիրն կէս մարմնովք մերովք ոչ վաստակեմք»:

Իբրև զայս լուաւ դահճապետն, աղաչեաց զգլխաւորսն որ տանէին զնոսա, և ասէ. «Միայն աստի դուք առէք գնացէք, և հասեալ յԱսորեստան՝ ուր կամ իւրեանց է և շրջեսցին»:

Այս են Հայոց խոստովանողքն, որ ըզխեղութիւնն և զչարչարանս խնդութեամբ ընկալան յանձինս իւրեանց: Եւ վասն զի վրիպեցին ի սուրբ մահուանէն, սգով և տրտմութեամբ երթային զերկայնութիւն ճանապարհին: Ոչ ծանր թուէին նոցա կապանք ոտիցն և ձեռացն, իբրև զայն՝ թէ ընդէ՞ր ոչ եղաք արժանի հաւասարել ընդ քաջ նահատակսն:

Եւ իբրև տարան հասուցին զնոսա յերկիրն Բաբելացւոց, ի գաւառ մի զոր Շահուղն անուանեն, թէպէտ և էին յարքունի պատուհասին, սակայն և յայս և դադա մեծապէս ընկալեալ եղեն ի բնակչաց աշխարհին: Սակայն երանելիքն և յայնմ յոյժ տրտմագին էին, իբր այն՝ եթէ սակաւ վաստակեցաք և մեծապէս հանգչիմք. և հանապազ ի նմին զեղջի կային:

Եւ անդէն թեակոխէին տեսանել ըզսուրբ կապանան նախարարացն, լինել ըսպասաւոր մարմնաւոր պիտոյից նոցա: Իմացուցին զայս մեծամեծաց աշխարհին, որք էին ի նմին սուրբ ուխտի քրիստոնէութեանն: Եւ հաւանեալ ամենեցուն մեծամեծաց և փոքունց՝ ազգ առնել ամե-

նայն երկրին, զի հաճոյ թուեսցի ամենե-
ցուն՝ ի ձեռն մարմնաւոր պիտոյից կցորդ
լինել սուրբ կապելոցն ի հեռաւոր օտարու-
թեանն:

Եւ այսպէս ամ յամէ ժողովէին՝ ըստ
իւրաքանչիւր կարի մարդկանն, ոմն սակաւ
և ոմն շատ, որ զինչ և ի ձեռս պատրաս-
տութիւն լինէր, եթէ դրամոց և եթէ դա-
հեկանաց, ժողովէին կազմէին տային յե-
րանելեան՝ տանել նոցա: Եւ այսպէս յար-
քանեկութեան կային՝ մինչև տասն ամն
լցաւ ապաստաւորութեանն:

Եւ վասն զի յոյժ խստագոյնս պահէին
ի ջերմոջ աշխարհին, և անդադար էին ի
ճանապարհորդութեանն ընդ նոյն Շահուպ,
ընդ Մեշոյն և ընդ Բաշկար և ընդ ամե-
նայն Ասորեստան և Խուժաստան, սաստիկ
տապով հարեալ ի խորշակէ մեռանէր սուր-
բըն Խորէն, և աւանդեալ լինէր ի բնակ-
չաց աշխարհին ընդ սուրբ վկայսն:

Իսկ երանելին Աբրահամ կայր ի նմին
աս...քինութեան անդադար. և զամենայն
տուրս հաւատացելոցն շրջէր ժողովէր և
տանէր ի մեծ հեռաստանն, և ինքն մա-
տակարարէր ըստ իւրաքանչիւր կարօտու-

թեան: Եւ այնպէս յերկարեցաւ մինչև յեր-
կոտասաներորդ ամն պատժաւորացն, մինչև
աղաչել զնա միաբան ամենեցուն, զի հա-
ւանեսցի երթալ յաշխարհն Հայոց. զի ընդ
մտանել նորա առ նոսա՝ ի նմա տեսցեն և
զքաջ նահատակսն որք կատարեցան սրով,
ի նմա տեսցեն և զսուրբ կապանս չարչա-
րանացն:

Եւ յորժամ մարտիրոսք և խոստովա-
նողք և կապեալք նովաւ տեսանէին, նո-
վաւ օրհնէի աշխարհն ամենայն, նովաւ
օրհնէին և տղայք նոցա յաճումն, նովաւ
զգաստանան երիտասարդք նոցա ի սրբու-
թիւն, նովաւ համեստանան ծերք նոցա
յիմաստութիւն: Նովաւ ուսանէին իշխանք
նոցա զմարդասիրութիւն, նովաւ անկանի
զութ յԱստուծոյ ի սիրտ թագաւորին՝
չլինել և խաղաղութիւն առնել բոլոր աշ-
խարհին: Նովաւ եկեղեցիքն պարծին իբ-
րև քաջ և կատարեալ զինուոր, նովաւ
վկայարանքն զարդարին, նովաւ և վկայ-
քըն ցնծացեալ բերկրին: Նովաւ և դաշ-
տըն Աւարայրի պայծառացեալ ծաղկալից
լինի, ոչ անձրևաբեր ամպոց, այլ ի սուրբ
և յարիւնաբուխ վկայից ցանեալ և

ցրուեալք սպիտակութիւնք սուրբ ոսկերացն: Յորժամ կոխեսցեն ամենավատակ ոտք խոստովանողին գլխատարած տեղիս պատերազմին, յորժամ կենդանի մարտիրոս ընդ նա շրջեսցի, կենդանի առ կենդանիս երթեալ՝ ամենայն աշխարհին կրկին լինի կենդանութիւնն:

«Գիտեմք, ասեն, յորժամ տեսցեն ըզսա ամենայն միայնակեացք աշխարհին Հայոց, սովաւ յիշեսցեն զհօվուր զունդս պատերազմողացն, որ փոխանակ մեր, ասեն, եառուն զանձինս ի մահ, և հեղին զարիւնս իւրեանց ի հաշտութեան պատարագ Աստուծոյ: Սովաւ յիշէն սուրբ քահանայքն, որք խողխողեցան յօտարութեանս և ցածուցին զսրտմտութիւն բարկութեան թագաւորին: Սովաւ թերևս զի զմեր կապանս յիշեսցեն, և աղօթս առնելով խնդրեսցեն յԱստուծոյ զի վերադարձ լիցի մեզ անդրէն ի հայրենի երկիրն մեր:

«Քանզի յոյժ անձկացեալ եմք՝ ոչ միայն ըստ մարմնոյ կարօտութեան, այլ առաւել տեսանել զսուրբ եկեղեցիսն մեր և զսրբասէր պաշտօնեայսն մեր, զոր ի նմա կարգեալ հաստատեցաք: Եւ եթէ միւսով

յաջողեսցէ մեզ Աստուած երթալ և ընուլ զկարօտութիւն մնացելոցն, գիտեմք զի և մեզ բանայ Աստուած զդուռն ողորմութեան իւրոյ՝ ընդ նոյն ճանապարհ երթալ, ընդ որ ոտք սրբոյս կարապետեցին»:

Զայս խորհուրդ խորհելով աստուածաշնորհ նախարարացն, մեծաւ թախանձանօք ածէին զխոստովանողն ի հաւանութիւն: Եւ վասն զի ոչ էր սովոր երբէք բարւոյն ընդդէմ դառնալ, ըստ առաջին սովորութեան և յայսմ վայրի փութացաւ վաղվաղակի կատարել զհրամանն զմիաբան հաւանեցելոցն յաստուածային առաքինութիւնն: Եկն եմուտ յաշխարհն Հայոց:

Փութացան և եկին ընդ առաջ նորա վաղվաղակի արք և կանայք, մեծամեծք և փոքունք, և ամենայն բազմութիւն ազատաց և շինականաց: Անկանէին և փարէին զոտիւք և զձեռօք առաջի սրբոյն և ասէին. «Օրհնեալ Տէր Աստուած ի բարձունս, որ առաքեաց մեզ հրեշտակ յերկնից՝ բերել մեզ աւետիս յարութեան, զի լինիցիմք ժառանգք արքայութեան: Զի ահա ի քեզ կերպարանեալ տեսանեմք զա-

մենեսեան զհրաժարեալսն յուսով յարու-թեամբ, և զկապեալսն ակնկալութեամբ արձակելոյ: Ի քեզ տեսանեմք և զաշխար-հիս շինութիւն խաղաղութեամբ. քև ե-կեղեցիքն մեր ցնծացեալ բերկրին, և քև սուրբ վկայքն մեր անդադար լցին մեզ ի բարեխօսութիւն առ Աստուած: Օրհնեա՛ զմեզ, սուրբ հայր մեր. դու ես բերան հանգուցելոցն, խօսեաց ընդ մեզ յայտնի օրհնութեամբ, զի յոգիս մեր լուիցուք ի ծածուկ զօրհնութիւնս սրբոցն:

«Հորդեցեր ճանապարհ այնոցիկ՝ որ անձկացեալ էին գալ յերկիր իւրեանց. խնդրեա յԱստուծոյ զի առէպ եկեսցեն ըզ-հետ սուրբ կարապետիդ: Եւ որպէս հոր-դեցեր զարգելեալ ճանապարհ երկրի, բաց և յերկինս զդուռն աղօթից մերոց, զի և մեր մեղաւորաց մտցեն պատարագք առա-ջի Աստուծոյ ի բարեխօսութիւն նոցին կա-պելոց. և մինչդեռ եմք յեղանելի մարմ-նոյս, որպէս տեսաք զքո երանելի սրբու-թիւնդ, տեսցուք և զսիրելի անձկալսն մեր, որ ի բազում ժամանակաց հարեալ և պաշարեալ եմք յոգիս և մարմինս մեր: Արդ հաւատամք յանսուտ յոյսն, զի որ-

պէս լցեալ կատարեցաւ ի քեզ տեսիլս ի սուրբ սէր քո, այսպէս և ընդ մօտոյ ու-նիմք տեսանել զճշմարիտ վկայսն Քրիս-տոսի, որ հանապազ խանդակաթ եմք ի տեսիլս երկնաւոր դիմոյ նոցա»:

Բայց երանելի խոստովանողն, թէպէտ և այսպէս սիրով ընկալեալ եղև յամենայն աշխարհէն, ոչ ինչ կամեցաւ ամենևին մերձենալ առ ոք ըստ մարմնոյ կարօտու-թեան. այլ ընտրեաց իւր տեղի մի զատ յամենայն բազմամբոխ ժողովրդոց, և ա-ռաքինի եղբարբք երիւք կատարեաց զկեա-նս իւր մեծաւ ճգնութեամբ:

Զոր եթէ կամիցի ոք ի կարգ արկա-նել, դժուարաւ կարասցէ առնուլ զչափ առաքինութեան նորա: Զի եթէ զպահու-թիւնն ասիցես, իբրև զկանթեղ անշէջ կայր զամենայն գիշերս. և եթէ զսակա-ւապխութիւնս կերակրոցն, համարեաց՝ եթէ զանկերակուր հրեշտակացն բերէր զնմանութիւն: Եթէ զհեզութիւն ցածու-թեանն կամիցիս ասել, ոչ զոք ի կենդա-նեաց կարիցես գտանել նման նմա. և ե-թէ զանընչասիրութիւնն կամիցիս ասել, դարձեալ զոր օրինակ չգտանի մեռեալ ի

կարասի, զնոյն օրինակ ճշմարտութեամբ և առ երանելին խմասջեր:

Անկապական ձայնիւ հանապազորդեալ էր ի պաշտաման, և անհատ աղօթիւք միշտ ընդ Աստուծոյ ի բարձունս խօսէր: Այլ եղև նա անհամելոց, և խթան ընդոստուցիչ ամենայն հեղգացելոց: Դրաբովեցաւ նովաւ ագահութիւն, և կարի յոյժ ամաչեաց նովաւ շուայտութիւն որկորամոլութեան: Առողջութիւն եղև նա աշխարհիս Հայոց, և բազում վիրաւորք ի ծածուկ նովաւ գտին զառողջութիւն: Եղև նա վարդապետ կատարեալ վարդապետաց իւրոց, և սուրբ հայր խրատատու հարանց իւրոց: Ի լուր համբաւոյ նորա իմաստնացան այլոք, և ի տեսիլ մեծաւորութեան նորա զգաստացան լկտիք: Բնակեալ էր ըստ մարմնոյ ի նեղ խցիկն, և ահ սրբութեան նորա արկեալ էր զհեռաւորօք և զմերձաւորօք: Զարհուրեցան դևք և փախեան ի նմանէ, իջին հրեշտակք և բնակեալ էին զնովաւ:

Յոյժ երանի եսուն վասն նորա աշխարհին Հայոց, և բազում բարբարոսք փութացան տեսանել զնա մարմնով: Սիրելի եղև նա սիրելեացն Աստուծոյ, և զբաղում ի թշնամեաց ճշմարտութեանն ած ի հաւանութիւն սուրբ սիրոյ: Սկիզբն արար առաքինութեանն անդստին ի տղայ տիոց իւրոց, և նովին առաքինութեամբ կատարեցաւ ի վախճան կենաց իւրոց: Որպէս ոչ խառնեցաւ ի կարգս սուրբ ամուսնութեան աշխարհիս, այսպէս չեմուտ ընդ մարմնաւոր պիտոյիւք ամենայն ապականացու իրաց աշխարհիս: Եւ եթէ պարտ է պարզաբար ասել, որպէս փոխանակեաց զպէտս մարմնոյ ընդ պիտանացու հոգևոր իրաց, այսպէս փոխադրեալ եղև յերկրէ ի յերկինս:

ԱՆՈՒԱՆՔ ՆԱԽԱՐԱՐԱՑՆ

Որք կամօք յօժարութեամբ վասն սիրոյն Քրիստոսի ետուն զանձինս ի կապանս արքունի։

Յազգէն Սիւնեաց երկու եղբարք ԲԱԲԳԷՆ և ԲԱԿՈՒՐ.

Յազգէն Արծրունեաց ՆԵՐՇԱՊՈՒՀ և ՇԱԽԱՍՊ և ՇՆԳԻՆ և ՄԵՀՐՈՒԺԱՆ և ՊԱՐԳԵՒ և ՏԱՃԱՏ.

Յազգէն Մամիկոնէից ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ և ՀԱՄԱԶԱՍՊ և ԱՐՏԱԽԱԶԴ և ՄՈՒՇԵՂ.

Յազգէն կամսարականաց ԱՐՇԱՒԻՐ և ԹԱԹ, ՎԱՐԶ, ՆԵՐՍԵՀ և ԱՇՈՏ.

Յազգէն Ամատունեաց ՎԱՀԱՆ և ԱՌԱՆՁԱՐ և ԱՌՆԱԿ.

Յազգէն Գնունեաց ԱՏՈՄ.

Յազգէն Դիմաքսենից ԹԱԹՈՒԼ և ՍԱՏՈՅ, երկու ևս այլովք ընկերօք.

Յազգէն Անձևացեաց ՇՄԱՒՈՆ և ՋՈՒԱՐԷՆ և ԱՌԱԽԱՆ.

Յազգէն Առաւեղենից ՓԱՊԱԿ և ՎԱՐԱԶԴԷՆ և ԴԱՏ.

ՅԱրծրունեաց տոհմէն ԱՊՐՍԱՄ.

Ի տոհմէն Մանդակունեաց ՍԱՀԱԿ և ՓԱՐՍՄԱՆ.

Յազգէն Տաշրացեաց ՎՐԷՆ.

ՅՌափսոնեան տանէն ԲԱԲԻԿ և ՅՈՀԱՆ։

Այս երեսուն և հինգ արք, են որ յաւագ նախարարացն, և են որ ի կրսերագունիցն, սակայն ամենեքեան ըստ մարմնոյ են նախարարազունք, իսկ ըստ հոգևոր առաքինութեանն ամենեքեան երկնային քաղաքացիք։ Եւ բազում ևս այլ ազատ մարդիկ. են որ յարքունի տանէ, և են որ ի տանէ նախարարացն իսկ նոցուն, նիզակակիցք և մարտակիցք քաջ նահատակացն։ Եւ ամենեքին սոքա կամօք մատնեցան ի սուրբ կապանս չարչարանացն։

Այլ մեք առ այժմ ոչ ընդ այս եմք զարմացեալ միայն՝ զի կամօք չոգան մտին ի փորձութիւնն, այլ առաւել ընդ այն եմք սքանչացեալ, զի մարդիկ փափուկ իբրև զնոսա՝ ընդարձակասուն բնակիչք ձիւնեղէն լերանց՝ եղեն բնակիչք խորշակաբեր դաշտաց։ Որ զօրէն ազատ երէոյ շրջէին ի մէջ ծաղկաբեր լերանց, ընկեցան ի բոցակէզ աշխարհն արևելից կապեալ ոտիւք և կա-

պեալ ձեռօք: Հաց նեղութեան և ջուր կարօտանաց, խաւարարգել ի տուէ և անլոյս ի գիշերի, անվերարկուք և անանկողինք, գաղտնաբար գետնախշտիք լինէին զինն ամ և զվեց ամիս: Եւ այնպէս մեծաւ խնդութեամբ տանէին զնեղութիւնն, զի ամենեքին ոչ ոք տրտունջ հայհոյութեան ի բերանոյ նոցա լուաւ, այլ յորդառատ գոհացողութիւն ըստ նմանութեան բարեկեցիկ մարդկան, որ են յաստուածպաշտութեան:

Եւ մինչդեռ էին յայնպիսի նեղութեան, կարծիք եղեն ի միտս թագաւորին՝ թէ առ յոյժ վշտին ձանձրացեալ են դառնութեան կենօքն իւրեանց: Յղեաց առ նոսա զմեծ Հազարապետն և ասէ. «Գոնեայ յայսմ հետէ զգաստացայք յանձինս ձեր, և մի՛ կայք ի նոյն յամառութեան. երկիր պագէք արեգական, և արձակիք ի չարաչար կապանացդ, և ունիք անդրէն զիւրաքանչիւր հայրենի կեանս ձեր»:

Ետուն պատասխանի երանելիքն և ասեն. «Այդ փո՞րձ ինչ եկեալ հարցանես զմեզ, եթէ արդարև թագաւորն իսկ յղեաց զքեզ»: Երդուաւ Հազարապետն և ասէ.

«Զեք այդր բան աւելի կամ պակաս՝ որ ոչ ի բերանոյ նորա ելեալ է»: Ասեն ցնա անդրէն. «Որք միանգամ աշակերտեալ են ճշմարտութեանն, ոչ երբէք փոխին ի նմանէ. այլ որ ենն՝ նոյն կան: Միթէ յայնժամ առ չիմանա՞լ ինչ պնդեցաք, և այսօր նեղութիւնս իմաստնացո՞յց ինչ զմեզ. ոչ այնպէս: Այլ զղջումն մտաց մերոց այս է, եթէ ընդէ՞ր ընդ առաջինն չկատարեցաք զկեանս մեր: Բայց արդ աղաչեմք զքեզ և քեւ զթագաւորն ձեր, մի՛ այլ վասն այդպիսի իրաց հարցանէք ցմեզ. այլ զինչ եդեալ է ի մտի ձերում վասն մեր՝ կատարեցէք»:

Իբրև լուաւ զայս մեծ Հազարապետն, յոյժ զովեաց ի միտս իւր զպնդութիւն հաստատութեան նոցա. և յայսմ հետէ սկսաւ արկանել սէր ընդ նոսա՝ իբրև ընդ սիրելիս Աստուծոյ: Եւ բազում բանիւք ողոքանօք ածէր զթագաւորն ի հաւանութիւն, զի թողութիւն արասցէ նոցա ի կապանացն իւրեանց: Զի թէպէտ և փոխեցաւ նա ի գործոյ Հազարապետութեանն արքունի, և ի բազում իրս գտաւ վնասակար, ինքն իսկ յանձն իւր կրթէր զաւեր

աշխարհին Հայոց. վասն որոյ և մեծաւ անարգանօք յուղարկեցաւ ի տունն իւր, սակայն զկապելոցն ոչ երբէք չարախօս կամէր լինել մինչև ցօր վախճանի կենաց իւրոց:

Իսկ յերանելեացն բազումք ի նոցանէ որ մանկագոյնքն էին՝ ուսան զդպրութիւն հայրենի աշխարհին իւրեանց, և եղեւ նոցա այն կերակուր հոգւոր, որով զանձինս քաջալերէին և զընկերսն մխիթարէին: Եւ այնպէս զմայլեցան ի միտս և յոգիս իւրեանց, զի և որ ծերագոյնքն էին ի նոցանէ՝ փափկացան մատաղացան մանկացան: Զի թէպէտ և դպրութեան ժամանակքն անցեալ էին, սակայն բազում սաղմոս ի բերան առեալ՝ հոգւոր երգակից լինէին մատաղերամ բազմութեան մանկտւոյն:

Եւ այնպէս բարձրացուցանէին զպաշտօնն սրբութեան, մինչև ոմանք ի դառն դահճացն՝ մեծապէս քաղցրութիւն անկանէր ընդ լսելիս նոցա, և որչափ ի ձեռս իւրեանց էր՝ արտաքոյ արքունի հրամանին դիւրութիւն առնէին նոցա, և սէր խնամոյ ունէին առ ամենեսեան, և բազում անգամ զմարմնաւոր պէտս նոցա լնուին

նոքա: Մանաւանդ զի նշանք ևս բժշկութեան յԱստուծոյ յաջողեալ լինէր ի ձեռս նոցա. որպէս զի բազումք ի դիւահարաց սրբեցան ի նմին քաղաքի՝ ուր կապեալքն կային: Իբրև ոչ ոք գոյր առ նոսա քահանայ, դիմէին առ նոսա հիւանդք և ախտաժետք քաղաքին, և ընդունէին ի նոցանէ զիւրաքանչիւր ցաւոց զառողջութիւն:

Նա և որ մեծ իշխանն էր աշխարհին, զոր և Հարևշղոմ Շապուհ անուանէին, և նմա իսկ յանձն էին ամենայն պատժաւորքն, մեծապէս գութ սիրոյ էարկ առ ամենեսեան: Ցծերս ի նոցանէ առ հարս ունէր, և զմանկագոյնս ի նոցանէ իբրև զսիրելի որդիս գգուէր: Բազում անգամ գրեաց և եցոյց յարքունիս զվիշտ նեղութեան կապելոցն, և զառն առն իւրաքանչիւր զբարս ազնուականութեանն ցուցանէր նոցա. առաջի մեծամեծացն տառապէր ջանայր ազգի ազգի հնարիւք, մինչև բազում բարեխօսիւք ածին ի հաւան զթագաւորն: Հրամայեաց լուծանել զկապանս նոցա, և բառնալ ի նոցանէ զսուգ պատուհասին, և ագանել նոցա հանդերձ զօրէն նախարարութեանն. կարգեաց նոցա

ուժին. և զպատրաստութիւն սպառազինութեանն հրամայեաց յարքունուստ: Գրեաց և յանձն արար մեծ սպարապետին, զի ընդ զօրս արքունի երթիցեն ի գործ պատերազմի:

Եւ իբրև այս այսպէս կարգեցաւ, և կազմեցաւ նոր հրաման թագաւորին, ի բազում տեղիս՝ ուր և հասին՝ առաւելեալ գտան ի գործ արութեան, մինչև գովութեան հրովարտակ վասն նոցա ի դուռն տային: Որպէս զի քաղցրացաւ իսկ մտաց թագաւորին, հրամայեաց զամենեսեան ածել զառաջեաւ: Եկին և յանդիման եղեն Յազկերտի արքայից արքային: Ետես զնոսա զուարթութեամբ, խօսեցաւ ընդ նոսա բանիւք խաղաղութեամբ, և խոստացաւ տալ նոցա զիւրաքանչիւր իշխանութիւն ըստ կարգի հայրենի պատուոյն, և արձակել զնոսա յաշխարհն օրինօք քրիստոնէութեանն, յորոյ վերայ և մեծապէս էին չարչարեալ:

Եւ մինչդեռ անդէն մեծաւ խնդութեամբ շրջէին ի կարաւանին առաջի թագաւորին, ի նմին ժամանակի հասանէր վախճան կենաց թագաւորին՝ յիննևտասներորդ ամի թագաւորութեանն իւրոյ: Եւ ընդ հակառակս եղեալ երկու որդիք նորա ի վերայ տէրութեանն կռուէին. սաստկանայր գործ դառնութեան պատերազմին զերկուս ամս:

Եւ մինչդեռ նոքա յայնմ խռովութեան էին, ապստամբեաց և Աղուանից արքայն. վասն զի քեռորդի էր նոցա, և ըստ կարգի հայրենի հաւատոցն՝ քրիստոնեայ էր յառաջ, և Յազկերտ արքայից արքայ բռնի մոգ արար: Եւ նորա գտեալ ժամանակ անձինն պարապոյ, հարկեցաւ զանձն ի մահ դնել. լաւ համարեցաւ մեռանել ի պատերազմի, քան ուրացութեամբ ունել զթագաւորութիւնն: Վասն այսր ամենայնի յապաղումն եղև արձակելոյն նոցա յաշխարհն:

Իսկ կրտսեր որդւոյն Յազկերտի դայեակն, Ռահամ անուն ի Միհրան տոհմէն, թէպէտ և ետես զգունդն Արեաց ընդ երկուս բաժանեալ, սակայն կիսովն գազանաբար յարձակեցաւ ի վերայ երէց որդւոյ թագաւորին. հար, սատակեաց զգունդն, և ձերբակալ արարեալ զորդի թագաւորին՝ անդէն ի տեղւոջն հրամայէր սպանանել:

Եւ զմնացեալ զօրսն ածէր հաւանեցուցանէր, և առնէր միաբանութիւն ամենայն Արեաց գնդին. և թագաւորեցուցանէր զիւր սանն, որում անուն էր Պերոզ:

Զի թէպէտ և Արեաց աշխարհին առնէր մեծապէս խաղաղութիւն, սակայն Աղուանից արքայն ոչ կամէր նուաճել անդրէն ի ծառայութիւն. այլ խրամատեաց զպահակն Ճորայ, և անցոյց յայս կոյս զզօրսն Մասքթաց. միաբանեաց զմետասան թագաւորս զլեռնորդեայսն, և ընդդէմ եկաց պատերազմաւ Արեաց գնդին, և բազում վնաս արար զօրացն արքունի: Թէպէտ և երկիցս և երիցս ետուն հրովարտակ աղաչանաց, ոչ ինչ կարացին ածել զայրն ի հաւանութիւն. այլ զրով և պատգամաւ յանդիմանէր զնոսա՝ վասն զուր աւերածի աշխարհին Հայոց: Յիշեցուցանէր նոցա զմահ նախարարացն և զչարչարանս կապելոցն: «Ի վերայ այնչափ արեան և վտանգաց, փոխանակ կեանս առնելոյ՝ զարև հատէք, ասէր: Լաւ լիցի ինձ, ասէ, զնոցա չարչարանսն յանձն իմ առնուլ, քան թողուլ զքրիստոնէութիւնն»:

Եւ իբրև տեսին, թէ ոչ բռնութեամբ

և ոչ սիրով կարացաք ածել ի հաւանութիւն, զանձս սաստիկս ետուն տանել յաշխարհն Խայլանդրաց, բացին զդրունս Ալանաց և հանին զունդ բազում ի Հոնաց, և կռուեցան տարի մի ընդ Աղուանից արքային: Թէպէտ և թօթափեցան և ցրուեցան զօրքն իւր ի նմանէ, սակայն զնա ոչ կարացին հնազանդել. այլ և հարուածք ևս մեծամեծք հասին ի վերայ նոցա, էր որ կռուով և էր որ ախտիւ չարչարանօք: Եւ յայնչափ ժամանակս ընդերկարել պաշարմանն, մեծ կէս աշխարհին աւերեցաւ, այլ ոչ ոք ի նմանէ երկմտեալ բաժանեցաւ:

Յղեաց առ նա դարձեալ թագաւորն Պարսից. «Զքոյրդ իմ, ասէ, և զքեռորդիդ ի բաց տուր ածել, զի ի բնէ մոգք էին և դու քրիստոնեայ արարեր, և աշխարհդ քեզ լիցի»: Իսկ սքանչելի այրն ոչ ի տէրութեանն վերայ կռուէր, այլ յաստուածպաշտութեանն: Զմայրն և զկինն ետ տանել, և զաշխարհն բովանդակ ի բաց եթող. և ինքն զաւետարանն առ և յաշխարհէն ի բաց կամէր գնալ:

Զայս իբրև լուաւ թագաւորն, կարի

զեղջ և ապաշաւ անկանէր ի միտս նորա, և զամենայն վնասս իւրացն զհարբն իւրով արկանէր: Անսուտ երդումն կնքէր և տայր տանել առ նա, եթէ յաշխարհէդ միայն մի՛ գնար, և զինչ ասես առնեմ: Խնդրեաց զմանկութեան սեպհականն, զոր հօր իւրոյ շնորհեալ էր նմա ի տղայութեանն Հազար երդ. առ զայն ի Թագաւորէն, և նստաւ ի նմա միայնակեցօք հանդերձ: Եւ այնպէս հանապազորդեաց զինքն յաստուածային պաշտամանն, զի և չյիշէր ամենևին թէ և թագաւոր լեալ իցէ յառաջ:

Եւ այս ամենայն յերկար խռովութիւնք, որ եղեն մինչև ի հինգերորդ ամն Պերոզի արքայից արքայի, պատճառք եղեն չարձակելոյ նախարարացն Հայոց. այլ ուռճկաւ և ի տաճար մտանել յարքունիս մեծապէս առատացոյց քան զամաց սովորութիւնն:

Եւ ի նմին հինգերորդ ամին զբազմաց նոցա անդրէն զկեանս շնորհեաց, և այլոցն առ յոյսն խոստացաւ՝ յամն վեցերորդ միանգամայն արձակել զամենեսեան կենօք և պատուով:

Բայց ի տեղի այսր ինձ դարձեալ գալ պիտի:

Իսկ կանայք երանելի առաքինեացն և կապելոցն և անկելոցն ի պատերազմին՝ ընդ ամենայն աշխարհն Հայոց համօրէն համարել ես ոչ կարեմ. զի բազում այն են զոր ոչ գիտեմ, քան թէ գիտիցեմ: Զի հինգ հարիւրով չափ յականէ յանուանէ ճանաչեմ. ոչ միայն որ ազատագոյնքն էին, այլ զբազումս ի կրսերագունաց անտի:

Ամենեքեան միահամուռ զերկնաւոր նախանձ բերելով, ոչ ինչ ընդհատ երևեցան յայնցանէ՝ որ ոչ ճաշակեցին զաշխարհ: Քանզի եթէ ազատագոյնք էին, և եթէ մանկագոյնք, զմի առաքինութիւն հաւատոյ զգեցան: Ոչ ինչ յիշեցին ամենևին զանուն փափկութեան մայրենի ազատութեանն՝ այլ իբրև մարդք՝ որ վշտամբերք լեալ իցեն անդստին ի շինական սովորութեանցն տանջելով վարեալ զկեանս աշխարհիս, անդրագոյնք ևս քան զնոսա յանձն առին զհամբերութիւն վշտաց:

Ոչ միայն յոգւոյն մխիթարեալ կային առ աներևոյթ զօրութիւն յուսոյն յաւիտենից, այլ և մարմնոյ նեղութեամբք առաւել ևս բարձին զբեռն ծանրութեան: Զի թէպէտ և ունէին զիւրաքանչիւր ձեռ-

նասուն սպասաւորս, ոչ ոք երևէր ի նո-
ցանէ՝ թէ որ տիկինն իցէ և կամ որ նա-
ժիշտն. մի հանդերձ էր հասարակաց, և
միապէս գետնախշտիք երկոքեան: Ոչ ոք
ումեք անկողնարկ լինէր. քանզի և չճա-
նաչէին իսկ զխոտեղէնսն ընտրել ի մի-
մեանց. մի գոյն թխութեան փսիայիցն,
և մի գոյն սևութեան մնարից բարձիցն:

Ոչ գոյր նոցա համեմ խահամօքք ա-
նուշարար առանձինն, և ոչ հացարարք
որոշեալ ի պէտս սպասու ըստ ազատաց
կարգի, այլ հասարակաց էր: Շաբաթա-
մուտն ըստ կարգի միայնակեցաց, որ յա-
նապատի բնակեալ են: Ոչ ոք ումեք ջուր
ի ձեռս արկանէր, և ոչ կրասերք աւագաց
զաստառակս մատուցանէին. չանկաւ օշ-
նան ի ձեռս փափկասուն կանանց, և ոչ
մատուցաւ կաղ ի զուարթութիւն խրա-
խութեան: Ջեղան առաջի սուրբ սկտեղք,
և ոչ անկան բաժակակալք յուրախու-
թիւն. չեկաց ուրուք նոցա նուիրակ առ-
դուրս, և ոչ կոչեցան պատուականք յա-
րանց ի տաճարս նոցա. չկիշեցան նոցա՝
թէ զուցէ ոք ամենևին ի բնակասնունց
դայեկաց և կամ բնաւ ի սիրելի հարա-
զատաց:

Փոշոտեցան և ծխոտեցան սրահակք և
սրսկապանք նորեկ հարսանց, և սարդի-
ոստայնք ձգեցան ի սենեակս առագաստաց
նոցա. կործանեցան բարձրագահք տաճա-
րաց նոցա, և խանգարեցան սպասք երա-
խանաց նոցա. անկան կործանեցան ա-
պարանք նոցա, և տապալեալ աւերեցան
ամուրք ապաստանի նոցա: Չորացան աղա-
ղեցան բուրաստանք ծաղկոցաց նոցա, և
տաշտախիլ եղեն որթք գինեբեր այգեաց
նոցա:

Աչօք իւրեանց տեսին զյափշտակու-
թիւն արարոց իւրեանց, և ականջօք իւ-
րեանց լուան զչարչարանս վշտից սիրելեաց
իւրեանց. առան զանձք իւրեանց յարքու-
նիս, և ոչ մնացին ամենևին զարդք երե-
սաց իւրեանց:

Տիկնայք փափկասունք Հայոց աշխար-
հին, որ գրգեալք և գգուեալք էին յիւ-
րաքանչիւր բաստեռունս և ի գահաւորակս,
հանապազ բոկ և հետի երթային ի տու-
նըս աղօթից, անձանձրոյթ խնդրեալ ուխ-
տիւք՝ զի համբերել կարասցեն մեծի նե-
ղութեանն: Որ ի մանկութենէ իւրեանց
սնեալ էին ուղղովք զուարակաց և ամ-

ձովք էրէոյ, խոտաբուտ կենօք իբրև ըղ-վայրենիս ընդունէին զկերակուրն մեծաւ խնդութեամբ, և ոչ յիշէին ամենևին զսովորական փափկութիւնն: Սևացեալ ներ-կան մորթք մարմնոյ նոցա. վասն զի ցե-րեկ արևակէզք էին և զամենայն գիշեր-այն գետնաբնակք:

Սաղմոսք էին մշտնջենաւորք՝ մրմունջք ի բերանս նոցա, և մխիթարութիւնք կա-տարեալք ընթերցուածք մարգարէիցն: Միա-բանեցին երկու երկու իբրև ամոլք հա-ւանք և հաւասարք՝ ուղիղ տանելով զա-կօսն արքայութեան, զի առանց վրիպելոյ հասցեն ի նաւահանգիստն խաղաղութեան:

Մոռացան զկանացի տկարութիւն, և եղեն արուք առաքինիք ի հոգևոր պա-տերազմին. մարտ եդեալ կռուեցան ընդ մեղսն կարևորս, հատին կտրեցին և ըն-կեցին զմահաբեր արմատս նորա: Միա-մտութեամբ յաղթեցին խորամանկութեան, և սուրբ սիրով լուացին զկապուտակ ներ-կուածս նախանձուն. հատին զարմատս ագահութեան, և չորացան մահաբեր պը-տուղք ոստոց նոցա: Խոնարհութեամբ կռ-փեցին զամբարտաւանութիւն, և նովին

խոնարհութեամբ հասին երկնաւոր բարձ-րութեանն: Աղօթիւք բացին զփակեալ դրունս երկնից, և սուրբ խնդրուածովք իջուցին զհրեշտակս ի փրկութիւն. լուան աւետիս ի հեռաստանէ, և փառաւորեցին զԱստուած ի բարձունս:

Այրք որ ի նոսա էին՝ եղեն վերստին հարսունք առաքինութեան, և բարձին յանձանց զնախատինս այրութեանն: Իսկ կանայք կապելոցն կամօք կապեցին զմարմ-նաւոր ցանկութիւնս, և եղեն կցորդ չար-չարանաց սուրբ կապելոցն. ի կեանս իւ-րեանց նմանեցին քաջ նահատակացն մա-հուամբ, և ի հեռաստանէ եղեն վարդա-պետք մխիթարիչք բանտարգելեացն: Մա-տամբք իւրեանց վաստակեցին և կերակրե-ցան, և զկարգեալ ռոճիկ նոցա յարքու-նուստ՝ ամ յամէ թոշակ առնէին և տա-յին տանել նոցա ի մխիթարութիւն: Ա-նարիւն ճպռանց նմանեցին, որ երգոյն քաղցրութեամբ առանց կերակրանաց կեան, և կենդանի են միայն զօդն ծծելով, զան-մարմնոցն բերեն զնմանութիւն:

Բազում ձմերաց հալեցան սառնամա-նիք. եհաս գարուն և եկին նորեկ ծիծե-

ռունք. տեսլին և խնդացին կենցաղասէր մարդիկ, և նոքա ոչ երբէք կարացին տեսանել զանձկալեսն իւրեանց: Ծաղիկք զարնանայինք յիշատակեցին զպսակասէր ամուսինս նոցա, և աչք իւրեանց կարօտացան տեսանել զցանկալի գեղ երեսաց նոցա: Սպառեցան բարակք որսականք, և խցեալ կուրացան արշաւանք որսորդաց: Բնագրօք յիշատակեցան նոքա, և ոչ մի տօնք տարեկանաց ոչ ածին զնոսա ի հեռաստանէ. ի ճաշակատեղս նոցա հայեցան և արտասուեցին, և յամենայն յատեանս յիշեցին զանուանս նոցա: Բազում արձանք կանգնեալ էին յանուն նոցա, և անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա:

Եւ իբրև այնպէս յամենայն կողմանց ալէկոծ լինէին միտք նոցա, ոչ ինչ կասեալ թուլացան յերկնաւոր առաքինութենէն: Արտաքնոցն երևէին իբրև այրիք սգաւորք և չարչարեալք, և յոգիս իւրեանց զարդարեալք և մխիթարեալք երկնաւոր սիրով:

Ու ես սովորեցին հարցանել զեկեալ դք ի հեռաստանէ, եթէ երբ լինիցի մեզ տեսանել զսիրելիսն մեր. այլ այն էին իղձք

աղօթից նոցա առ Աստուած եթէ որպէս սկսանն՝ քաջութեամբ ի նմին կատարեսցեն լի երկնաւոր սիրովն:

Եւ մեք և նոքա հասարակ ժառանգեսցուք զքաղաքամայրն բարեաց, և հասցուք խոստացելոց սիրելեացն Աստուծոյ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր:

ՎԵՐՋ

ՀԱՆՐԱՅԻՆ ... ГОС. ПУБЛ. БИБЛИОТ... ՍՌ-Арм-ССР ... ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0356717